ՎԼԱԴԻՄԻՐ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ



# ՈՒՐՎԱԳԻԾ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

## X-XIV ԴԴ.

1154348
008(479.25) + 947.925

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՎԼԱԴԻՄԻՐ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

# ՈՒՐՎԱԳԻԾ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ (X-XIV ԴԴ.)

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2016

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀՏԴ 94 (479.25):008
ԳՄԴ 63.3(5Հ)+71
Բ 358

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ գիտահրատարակչական խորհրդի և
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշումներով

Պատասխանատու խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
Վիգեն Ղազարյան

Բարխուդարյան Վ.
Բ 358 Ուրվագիծ միջնադարյան հայկական մշակույթի պատմության (X-XIV դդ.) – Եր.: «Գիտություն» հրատ., 2016 – 232 էջ:

Աշխատությունը նվիրված է զարգացած միջնադարի հայոց մշակույթի պատմությանը, որը պատմական այս փուլում հասավ ամենաբարձր մակարդակի: Պատմաբանի մոտեցմամբ ցույց է տրվում մշակույթի ընդհանուր զարգացման աստիճանը և ոչ թե դրա առանձին ճյուղերի առանձնահատուկ կողմերը, յուրահատկությունները, որոնց ուսումնասիրությամբ զբաղվում են արվեստաբանները:

Հայոց մշակույթի տեղն ու դերը միջազգային չափանիշներով գնահատելու համար զուգահեռներ են անցկացվում տարբեր երկրների քաղաքակրթական համանման երևույթների հետ:

Հասցեագրվում է պատմաբաններին, արվեստաբաններին և ընթերցող լայն հանրությանը:

ՀՏԴ 94 (479.25):008
ԳՄԴ 63.3(5Հ)+71

ISBN 978-5-8080-1204-2
© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2016

# ԱՌԱՋԱԲԱՆ

Պատմության քառուղիներում տարբեր ժողովուրդների գոյության ընթացքը պայմանավորված է լինում բազմաթիվ գործոններով: Դրանց մեջ, սակայն, վճռական է մշակույթը, որը տվյալ ժողովրդի քաղաքակրթական առաջադիմության, բարձր մակարդակի հասնելու, նրա հոգեմտավոր կարողությունների դրսևորումն է: Պատմական զարգացման որևէ փուլում այս կամ այն ժողովրդի մշակութային ձեռքբերումները, այդ բնագավառում ունեցած կուտակումները հիմք են ստեղծում, խթանող ազդակ հանդիսանում հետագա զարգացման համար:

Հայ ժողովրդի պարագայում մշակույթի նշանակությունն ավելի ընդգրկուն է և ավելի ծանրակշիռ: Մենք պարտավոր ենք պատմական մեր հիշողության մեջ ամուր պահպանել այն պարագան, որ մշակութալուսավորական ազգային ստեղծագործ հատկանիշների շնորհիվ ենք ի զորու եղել պատվար կանգնելու, կուլ չգնալու հզոր ու ռազմատենչ հարևաններին, պահպանելու ազգային ինքնությունն ու նկարագիրը: Մի էական հանգամանք, որն անհրաժեշտ է դարձնում ամենայն ուշադրությամբ և համակողմանի հետազոտել մշակույթի պատմության հիմնահարցերը:

Միջնադարյան հայկական մշակույթն այս պատմափուլում հասավ վերելքի ամենաբարձր աստիճանին: Արդարացի չէր լինի, եթե դրա ուսումնասիրությունը դիտարկվեր որպես բավարար ուշադրության չարժանացած բնագավառի:

Վիթխարի գործ է կատարվել դարաշրջանի մշակույթի առանձին բնագավառների մասնագիտական հետազոտման ուղղությամբ: Հայոց պատմությանը և մշակույթին նվիրված ընդհանրացնող ուսումնասիրություններում մեծ տեղ է հատկացվել և կարևոր նշանակություն տրվել հասուն միջնադարի հիմնահարցերին: Մշակույթի տարբեր բնագավառների մասնագետները ներկայացրել են իրենց զբաղեցնող արվեստի այս կամ այն ճյուղը: Ընդհանրացնող բազմահատորներում տարբեր հեղինակների կողմից կատարված մասնագիտական ուսումնասիրությունները շարվել են կողք կողքի: Նման մոտեցման հետևանքով ակամա ինչ-որ չափով ստվերվել են մշակույթի առանձին ճյուղերի միջև

եղած աղերսները, դրանց փոխադարձ կապն ու փոխներգործությունը: Հայտնի է, որ սերտ կապեր գոյություն ունեին արվեստի ճյուղերի միջև, և դրանցից մեկի առաջադիմությունը խթան է հանդիսացել մյուսի համար: Արհեստագործությունը նպաստում էր կիրառական արվեստի, գրչության արվեստը խթանում էր կրթության, իսկ վերջինս՝ գիտության առաջընթացը: Այդ փոխազդեցությունները նույնպես որոշակի ազդակ դարձան մշակույթի զարգացման համար:

Դրանից զատ այս դարաշրջանի մշակույթը, որպես կանոն, չի դիտարկվել համաշխարհային քաղաքակրթության ընդհանուր շղթայի մեջ:

Ուրիշ խոսքով, կարծում ենք, պահանջ է զգացվում ոչ թե մշակույթի առանձին բնագավառներն ուսումնասիրելու, որ հեռու է մեր նպատակներից, այլ կատարված վիթխարի աշխատանքները, առկա ուսումնասիրությունները նկատի առնելով և դրանց վրա հենվելով, պատմաբանի հայացքով բնութագրելու դարաշրջանի պատմամշակութային կյանքի զարգացման աստիճանը, հնարավորինս վեր հանելու դրանց օրինաչափությունները, ներկայացնելու մշակութաքաղաքակրթական ընդհանուր պատկերը: Կարծում ենք՝ այդ անհրաժեշտ է, մանավանդ որ ավագ սերնդի անվանի հայագետների հետաքրքրությունները բևեռված են եղել հիմնականում վաղ միջնադարի վրա:

* * *

Այս հիմնախնդրով զբաղվելու իմ հետաքրքրությունը երկար ճանապարհ է անցել: Տակավին ասպիրանտական ուսուցման տարիներին զբաղվում էի Հայաստանի IX-XI դարերի՝ Բագրատունյաց ժամանակաշրջանի հողատիրության հարցերով: Սակայն թեկնածուական ատենախոսության պաշտպանությունից հետո (1955 թ.) հանգամանքների բերումով հեռացա այդ ոլորտից և սկսեցի զբաղվել միանգամայն այլ հարցերով: Այդուհանդերձ, անցած տասնամյակների ընթացքում զարգացած միջնադարի հիմնահարցերից չկարողացա լիովին հեռանալ: Իմ մտավոր ներաշխարհում, գիտակցված թե ենթագիտակցորեն, այդ դարաշրջանի հիմնահարցերը տարբեր առիթներով առկայծում էին և ակամայից մնում հետաքրքրություններիս ընդհանուր ոլոր-

տում: Առիթը բաց չէի թողնում ծանոթանալու այդ ուղղությամբ հրապարակվող գիտական գրականությանը: Ատինճանաբար հասունանում էր այն միտքը, որ ավելորդ չէր լինի այդ ժամանակաշրջանի պատմամշակութային կյանքին անդրադառնալը: Սակայն մինչ այժմ այս մտայնությունն իրականություն դարձնելու ուղղությամբ քայլեր չեմ ձեռնարկել, եթե բացառենք դպրոցական դասագրքի սահմաններում այդ հիմնահարցը ներկայացնելը:

Ի վերջո մեծ հապաղումով և առաջացած տարիքում ձեռնամուխ եղա պատմաբանի տեսանկյունով դիտարկելու Հայաստանի զարգացած միջնադարի մշակութային կյանքի գլխավոր հիմնահարցերը: Հույժ աշխատատար և խիստ պատասխանատու նախաձեռնություն է: Բավական է թեկուզ նշել, որ մեկ հեղինակի հնարավորությունները բավարար չեն կարող լինել հիմնավոր ծանոթանալու հենց միայն ստեղծված ծով գրականությանը: Այդուհանդերձ, հենվելով հրապարակում եղած հետազոտությունների վրա, համարձակություն ունեցա նման փորձ կատարելու:

Հայաստանի՝ մեզ հետաքրքրող, հինգ դար ընդգրկող պատմական փուլի ամբողջական պատկերը ներկայացնելու համար անդրադարձել ենք մշակույթի հնարավոր բոլոր գլխավոր դրսևորումներին՝ գեղարվեստական գրականությանը, կրթությանը, արվեստին, հասարակական և բնական գիտություններին: Ուսումնասիրության բնույթը թելադրում է տեսադաշտից դուրս թողնել առանձին հարցերի նեղ մասնագիտական քննարկումները, պարզունակ ներկայացված և մեր մոտեցման տեսանկյունից էական նշանակություն չունեցող աշխատությունները, օգտագործել հիմնարար ուսումնասիրությունները, հենվել ճանաչման արժանացած տեսակետների վրա:

Մշակույթի յուրաքանչյուր բնագավառ ունի բազմաբնույթ սկզբնաղբյուրներ, հարակից կամ օժանդակ գիտությունների համակարգ, որոնց, թեկուզ թռուցիկ, պարտավոր է ծանոթ լինել ուսումնասիրողը: Պատկերացում կազմելու նպատակով անդրադառնանք հասարակական գիտություններից պատմությանը: Պատմագիտությունը լիարժեք ներկայացնելու համար ուսումնասիրողը, բացի ժամանակակից պատմիչների գործերից, հնագիտական և ազգագրական հետազոտություններից, պարտավոր է

ծանոթ լինել սկզբնաղբյուրային բնույթ ունեցող հետևյալ հարակից մասնագիտություններին՝ վիմագրությանը, ձեռագրերի հիշատակարաններին, մանր ժամանակագրություններին, թղթերին կամ նամակներին, վարքագրություններին, առակներին, ճառերին ու քարոզներին:

Համանման իրավիճակ գոյություն ունի նաև մյուս բնագավառներում: Թեմայի ընդգրկուն մեծ ծավալը, դրա հետ առնչված դժվարությունները կասկած չեն թողնում, որ աշխատության մեջ անխուսափելի կլինեն բացթողումները և այլ թերություններ: Նման կարգի դիտողությունները կընդունվեն շնորհակալությամբ: Դրանով հանդերձ հեղինակն իրեն հատուցված կհամարի, եթե աշխատությունը հետաքրքրություն շարժի և ինչ-որ չափով խթան հանդիսանա հայ ստեղծագործական մտքի միջնադարյան փայլատակումների ըստ արժանվույն վերհանմանն ու հասարակությանը, այդ թվում նաև միջազգային հանրությանը ներկայացնելու գործին:

# ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՐԵՆ

## Ուրվագիծ զարգացած միջնադարի (X-XIV դդ.) տնտեսական–քաղաքական կյանքի

Ուսումնասիրության նյութ դարձած զարգացած միջնադարի պատմության առաջին փուլը երկրի անկախության խաղաղ զարգացման ժամանակաշրջան էր: Բագրատունյաց թագավորության մեկուկես դարի (885-1045 թթ.) շինարարական, ստեղծագործական աշխատանքները խաթարվեցին դրան հաջորդող սելջուկների, ապա մոնղոլների ավերիչ արշավանքների և շուրջ երեքհարյուրամյա նրանց տիրապետության հետևանքով:

Ինչպիսի՞ պայմաններ էին ստեղծված մշակույթի պահպանման, զարգացման համար, ի՞նչ գործոններ էին խթանում կամ խոչընդոտում ստեղծագործական կյանքը:

Այս և հարակից բազմաթիվ այլ հարցերի խորքերը թափանցելու, դրանց ազդեցությունը հասկանալու համար հարկ է թեկուզ համառոտակի ծանոթանալ Հայաստանում ստեղծված քաղաքական և տնտեսական միջավայրին, մշակույթի զարգացման պայմաններին:

Համառ ու հետևողական պայքարի և միջազգային նպաստավոր պայմանների շնորհիվ Հայաստանը IX դարի վերջերին (885 թ.) թոթափեց արաբական ծանր տիրապետությունը և ստեղծեց ազգային իր պետականությունը: Այդ շրջանից էլ Հայաստանում սկսվեց միջնադարի պատմության երկրորդ փուլը՝ զարգացած միջնադարը: Մինչև XI դարի կեսերը տևած անկախության, խաղաղ աշխատանքի պայմաններում երկիրը մեծ առաջադիմություն ապրեց: Նախ՝ վերափոխվեց ու զարգացավ տնտեսական կյանքն իր բոլոր դրսևորումներով:

Բարեփոխումներ կատարվեցին ամենից առաջ արտադրության հիմնական միջոցի՝ հողագործության կամ երկրագործության մեջ: Մեծ փոփոխություններ կատարվեցին հողատիրության և հողամշակության բնագավառներում:

Իշխանական տները, ազատագրվելով արաբական տիրա-

պետության կաշկանդող ու կազմալուծող քաղաքականության ծանրությունից, ընդարձակում էին իրենց կալվածքները, դարձնում դրանք ժառանգական սեփականություն: Աստիճանաբար ձևավորվում է ավատատիրական խոշոր հողատիրությունը: Այն իրականանում էր ինչպես տարբեր եղանակներով նոր տարածքներ ձեռք բերելու, այնպես էլ լքված ու խոպան հողերը մշակելի դարձնելու միջոցով: Արաբական տիրապետության օրոք տիրապետող պայմանական հողատիրությունն աստիճանաբար վերափոխվում, իր տեղը զիջում էր հայ իշխանական տների ժառանգական սեփականությանը: Հայ իշխանները տնտեսապես, ռազմապես ամրապնդվում, զորեղանում էին և ինքնուրույն հանդես գալու հնարավորություններ էին ստանում: Այդ գործընթացը, որն սկսվել էր արաբական տիրապետության վերջին շրջանում, իր ավարտին հասավ անկախության ժամանակ՝ X դարում: Ճորտատիրական և օտարազգի կապանքներից ազատ երկրի տեր դարձած հայ շինականը, համախմբված գյուղական համայնքներում, շենացնում էր երկիրը:

Ցամաքային կլիմա ունեցող Հայաստանի երկրագործությունը չէր կարող գոյատևել, առավել ևս առաջադիմել առանց ոռոգման: Մատենագիրները և վիմական արձանագրությունները տեղեկություններ են պահպանել երկրի տարբեր մասերում առուներն ու ջրամբարները մաքրելու, վերանորոգելու, նորերը կառուցելու և հողատարածքները ջրարբի դարձնելու վերաբերյալ: Ոռոգելի տարածքների ընդարձակման շնորհիվ բարձրանում էր բերքատվությունը, զարգանում՝ այգեգործությունը, ընդարձակվում՝ գյուղատնտեսական նոր կուլտուրաների յուղատու բույսերի մշակումը: Ժամանակակից պատմիչները մեծ գովեստով են խոսում տնտեսության մեջ կատարվող տեղաշարժերի մասին: Հովհաննես Դրասխանակերտցին գրում է. «...հերկեցին հերկս արտաքոյ փշոց... տնկեցին այգիս և արմատացուցին բուրաստանս ծիթենեաց և պարտիզաց»[1]:

Ստեփանոս Տարոնացին, խոսելով Սմբատ Ա-ի և նրա հոր ժամանակ երկրի խաղաղ աշխատանքների մասին, գրում է. «Յաւուրս սորա և յիշխանութեան հետ հւրոյ էր շինութիւն և խաղա-

---

[1] Պատմութիւն Յովհաննու կաթողիկոսի, Երուսաղեմ, 1867, էջ 250:

ղութիւն յաշխարհիս Հայոց ըստ մարգարէութեանն՝ հանգչել իւրաքանչիւր ուրուք ընդ որթով իւրով և ընդ թզենեաւ: Եւ այսպէս ազարակաց աւանացեալ և աւանաց քաղաքացեալ բազմամարդութեամբ և ընչէղութեամբ, մինչև հովուաց և անդէորդաց մետաքսեայս զգենով պատմուճան»[2]:

Երկրագործության ընդհանուր վերելքի պայմաններում կատարելագործվում են հողագործական տեխնիկան և հողամշակման եղանակները: Հայտնի է, որ հնուց ի վեր հողը հերկել են արորով: IX դարից սկսած՝ հողամշակման տեխնիկայի մեջ հայտնվում է գութանը: Մի շարք տեղերում (Անի, Դվին, Զվարթնոց) գտնվել են ծանր գութանի խոփեր: Գութանի օգտագործումը հնարավորություն է տվել խորությամբ հերկելու հողը, դյուրին դարձնելու վարելու հնարավորությունները, ընդարձակելու հողատարածքները: Այս ժամանակաշրջանում է սկսել կիրառվել հողի մշակման եռադաշտային համակարգը: Հողերի մի մասում ցանք է արվում, մյուս մասում՝ ցել, իսկ երրորդ մասը թողնվում է հանգստանալու, որը մեծապես նպաստում է բերքատվության բարձրացմանը: Աղբյուրներում տեղեկություններ են պահպանվել հողերը պարարտացնելու, մոլախոտերից մաքրելու, սերմացուի և տնկիների ընտրություն կատարելու մասին: Ընդարձակվում է ծիթատու և թելատու բույսերի՝ բամբակի, կտավատի, քունջութի, կանեփի, շերամի մշակումը: Բազմանում և լայն տարածում են գտնում ծիթհանները, խաղողի հնձանները, ջրաղացները, որոնք մինչ այդ հազվադեպ էին հիշատակվում աղբյուրներում: Միայն Անի քաղաքի տարածքում կային 19 ծիթհաններ[3]:

Զարգացում ապրեց գյուղատնտեսության մյուս հիմնական ճյուղը՝ անասնապահությունը: Հայաստանի հյութալի արոտներով հարուստ լեռնային և նախալեռնային շրջանները նպաստավոր էին անասնապահության զարգացման համար: Տարածված էր ինչպես խոշոր, այնպես էլ մանր եղջերավոր անասնապահությունը: Հայաստանում բուծվող ձիերը լավ համբավ ունեին, նրանց մասին դրվատանքով են խոսում արաբ հեղինակները:

---

[2] Ստեփանոսի Տարոնեցւոյ Ասողկան, Պատմութիւն Տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 161:
[3] И. Орбели, Краткий путеводитель по городам Ани, СПБ, 1910, стр. 43.

Արաբ մի հեղինակ նշում է, որ Աիմադ իբն վաղքի Իսպահանին, որը երկար ժամանակ ապրել է Արմինիայում. «...չի տեսել ավելի հարուստ և անասունների թվով ավելի նշանակալից մի երկիր, քան Արմինիան»[4]:

Անկախությունը և խաղաղ պայմանները շահավետ էին հատկապես հայ եկեղեցու համար: Նա ազատագրվեց արաբական տիրապետության կրոնական հալածանքներից, հետապնդումներից: Դավանանքի ազատությունից զատ, հայ եկեղեցին օգտվեց տնտեսական կյանքում կատարվող վերափոխումներից: Այս նույն ժամանակաշրջանում ձևավորվեց նաև վանական խոշոր հողատիրությունը:

Անկախության շրջանում հիմնադրվում են բազմաթիվ վանքեր, հաճախ բնակավայրերից հեռու, ամայի տարածություններում: Այդ վանքերը ձեռք էին բերում ընդարձակ հողատարածքներ, անշարժ հարստություն՝ ջրաղացներ, ձիթհաններ, հյուրատներ, բնակելի տներ և այլ ունեցվածք: Միայն Բագրատունիների տիրույթներում հիմնադրվել էին Կեչառիսը, Այրիվանքը, Յավուց քառը, Դպրեվանքը, Խծկոնքը, Մարմարաշենը և այլ հոգևոր կենտրոններ: Աշոտ Ողորմած թագավորի կինը՝ Խոսրովանուշը, 966 թվին հիմնադրեց Սանահինի, իսկ 976-ին՝ Յաղպատի վանքերը, որոնք ստացան ընդարձակ կալվածքներ և ուրիշ անշարժ հարստություն:

Վանական համալիրների հողային տարածքները գոյանում էին ոչ այնքան նոր տարածքներ յուրացնելու, գնելու, որքան նվիրատվության միջոցով: Ստեփանոս Օրբելյանը վկայում է, որ Տաթևի վանքապատկան գյուղերից երկուսը գնել էին դրամով, հինգը վանքին նվիրել էր Սմբատ Ա թագավորը, իսկ 15 գյուղ՝ այլ իշխաններ ու իշխանուհիներ: Յարյուրավոր գյուղեր վանքին տասանորդ էին վճարում:

Այսպիսով, խոշոր ժառանգական հողատիրությունը ձևավորվեց, իրականություն դարձավ[5]: Այդ գործընթացը ոչ թե նա-

---

[4] Տե՛ս Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Յայաստանում IX-XIII դարերում, I, Երևան, 1958, էջ 47-48:

[5] Տե՛ս Վ. Բարխուդարյան, Ֆեոդալական հողատիրությունը Յայաստանում 9-11-րդ դարերում, Երևան, 1955 (ատենախոսության սեղմագիր):

խարարական նախկին կարգի վերականգնում էր, այլ մի նոր երևույթ էր միջնադարյան Հայաստանում, որը կատարվում էր երկրի հասարակական-տնտեսական զարգացման ավելի բարձր մակարդակի պայմաններում: Ժառանգական հողատիրության վրա ձևավորված խոշոր, ինչպես և համեմատաբար մանր իշխանությունները շատ կարևոր առաքելություն ունեցան ոչ միայն անկախության, այլև դրան հաջորդող սելջուկ-մոնղոլական տիրապետության ժամանակաշրջաններում, ազգային ոգին կենսունակ պահելու, մշակութային արժեքները պահպանելու և զարգացնելու գործում:

* * *

Լուրջ առաջընթաց ապրեց արտադրության մյուս հիմնական բնագավառը՝ արհեստագործությունը:

Արհեստները միշտ էլ եղել են հայ բնակչության կարևոր զբաղմունքներից: Վաղ միջնադարում արհեստով զբաղվում էին գյուղերում: Այն կտրված չէր երկրագործությունից: Հայ շինականը հողագործական աշխատանքներից ազատ ամիսներին զբաղվում էր արհեստով: Արհեստը տնայնագործական բնույթ էր կրում և բավարարում էր տվյալ գերդաստանի կամ լավագույն դեպքում գյուղական համայնքի պահանջները: Ուրիշ խոսքով, բնատնտեսական բնույթ ունենալով՝ արհեստը ապրանքային արտադրության մակարդակի չէր հասել:

Զարգացած միջնադարում արհեստների հասարակական դերը մեծացավ, այն սկսեց բարեփոխիչ նշանակություն ստանալ: Դրա հիմնական պայմանը եղավ աշխատանքի հասարակական բաժանումը, արհեստի առանձնանալը երկրագործությունից: Վերածվելով արտադրության առանձին, ինքնուրույն ճյուղի՝ արհեստագործությունը ձեռք բերեց տնտեսական խոշոր նշանակություն:

Արհեստագործության զարգացման հետևանքով սկսեցին լայնորեն օգտագործել Հայաստանի բնական հարստությունները: Երկրի ընդերքից հանվում էին երկաթ, պղինձ, կապար, ոսկի, արծաթ, աղ, ծծումբ և այլ նյութեր, որոնք հումք էին արհեստների համար:

Արհեստագործության առաջադիմության և կատարելագործման ցուցանիշ է մայր արհեստների աստիճանական տրոհումը նոր, ինքնուրույն ճյուղերի: Արտադրության այդ ճյուղերից լայն կիրառություն ուներ մետաղագործությունը, որը տալիս էր երկրագործության մեջ և արհեստներում օգտագործվող գործիքների մեծ մասը: Մետաղագործական հիմնական արհեստներից էին դարբնությունը, պղնձագործությունը և ոսկերչությունը: Արհեստների այս ճյուղերը զարգացած միջնադարում կատարելագործվեցին, դրանից զատ առաջացան նոր ճյուղեր, ինչպես զինագործությունը և այլն:

Լայն տարածում գտած արհեստներից էին մանածագործությունը, կաշեգործությունը, փայտամշակումը, քարագործությունը, կավագործությունը, ապակեգործությունը, գորգագործությունը, գրքի և գրչության հետ կապված արհեստները: Գոյություն ունեին նաև այլ բազմատեսակ արհեստներ:

Հետագայում՝ XII–XIII դարերում, ավելի շոշափելի է դառնում արհեստագործության առաջընթացը: Այն կատարվում է աշխատանքի հասարակական բաժանման, գյուղից քաղաքի անջատման գործընթացի խորացման, ապրանքափոխանակման աճի շնորհիվ: Կատարելագործվում են արհեստների աշխատանքային գործիքները, նոր որակ է ստանում արտադրանքը: Մետաղագործության մեջ կատարելագործվեց կաղապարի մեջ մետաղի ձուլումը, ինչպես և մետաղների կռելը, դրոշմելը, տարբեր մետաղներից զանազան գույների համաձուլվածքներ ստանալը, մետաղյա իրերի ոսկեզօծումը: Մանածագործության մեջ տարածում գտավ գործվածքները դրոշմազարդելու եղանակը, որի շնորհիվ ստացվում էին տարբեր ձևերի և գույների, ինչպես և բազմագույն զարդերով գործվածքներ: Կավագործության մեջ կիրառվեց դրոշմազարդումը: Ապակեգործության մեջ տարածում գտավ տարբեր գույների ապակի ստանալը և այլն[6]:

Արհեստագործության զարգացման բարձր աստիճանը հատկանշվում է նաև արհեստի տարբեր ճյուղերն առանձին ընկերությունների, եղբայրությունների կամ համքարությունների մեջ համախմբվելու հանգամանքով: Մեզ են հասել Երզնկայի եղ-

---

[6] Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, Երևան, 1976, էջ 187-201, 558-562:

բայրության 1280 թ. կանոնները, որը կրոնական բնույթ ունեցող երիտասարդական կազմակերպություն էր, բայց իր կանոններով հար և նման էր արհեստավորական համքարություններին[7]: Համքարությունների ներքին կարգն ու սովորությունները պահպանվում էին հատուկ մշակված կանոններով: Համքարությունը կամ եղբայրությունը ստանձնում էր դժբախտության մեջ հայտնված կամ հիվանդ անդամի հոգսերը, խստորեն հետևում ընկերության անդամների վարք ու բարքին, վարպետների ու աշակերտների կանոնակարգված հարաբերություններին և բազմաթիվ այլ խնդիրների: Ընկերության անդամներն ապրում և աշխատում էին համախմբված՝ զբաղեցնելով քաղաքի առանձին փողոցներ կամ թաղեր: Վիմական արձանագրություններում (XIII դար) հիշատակվում են Անիում այդպիսի փողոց-թաղամասեր՝ «Սարաճ փողոց» (թամբագործների փողոց), «Գտակ կարող թաղ», «Կոշկակարոց», «Դարբնափողոց», «Նալբնդնոց»[8]:

Այսպիսով, ուսումնասիրվող պատմափուլում արհեստագործությունը վերելք ապրեց, զարգացման նոր փուլ թևակոխեց: Մի կողմից կատարելագործվելով՝ խոր մասնագիտացում ստացավ, մյուս կողմից բարձրացավ արտադրության այս ճյուղի հասարակական-տնտեսական դերը՝ խթան դառնալով միջնադարյան քաղաքների առաջացմանը և առևտրական հարաբերությունների զարգացմանը:

* * *

Տնտեսության տարբեր ճյուղերի՝ երկրագործության, հատկապես արհեստագործության առաջադիմելը հող նախապատրաստեց առևտրի զարգացման համար: Որոշակի առաջադիմություն ունեցան տնտեսության այս ճյուղի երկու ձևերը՝ ներքին և արտաքին առևտուրը:

Ներքին առևտուրը խարսխված էր գյուղի և քաղաքի միջև կատարվող ապրանքափոխանակության վրա: Գյուղատնտեսական մթերքների միայն փոքր մասն էր շուկա հանվում, բայց ա-

---

[7] Տես Լևոն Խաչիկյան, 1280 թ. Երզնկայում կազմակերպված «եղբայրությունը», ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» հասարակական գիտություններ, 1951, N 12:

[8] «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, էջ 564:

տիճանաբար աճում էր քաղաք տարվող ապրանքների քանակը, և գյուղը կապվում էր քաղաքի հետ: Գյուղացին, քաղաքում իրացնելով իր մթերքները, ձեռք էր բերում իրեն անհրաժեշտ արհեստագործական արտադրանք և դրամ: Քաղաքներում շարունակում էին զբաղվել երկրագործությամբ, սակայն մեծ քաղաքների բնակիչները գործ էին ունենում նաև շուկայի հետ: Նման քաղաքներում կային մի քանի շուկաներ, որտեղ վաճառվում էին ամենատարբեր տեսակի ապրանքներ: Կիրակի օրերին կազմակերպվում էր տոնավաճառ, որտեղ ավելի շատ գյուղատնտեսական և արհեստավորական արտադրանք էր շուկա հանվում: Այդուհանդերձ առևտուրն արդեն հիմնականում կատարվում էր քաղաքներում, այստեղի շուկաներում և արհեստավորական փողոցաշարքերում:

Քաղաքի շուկաներում առևտուրը վերահսկում էր հատուկ պաշտոնյան՝ մուհթասիբը: Հասարակության հիմնական սոցիալական շերտերի (գյուղացի, արհեստավոր, ավատատեր) կողքին առաջ էր գալիս քաղաքաբնակ մի խավ, որը զբաղվում էր միայն առևտրով: Շահաբեր այդ գործը իրենց հիմնական զբաղմունքն էին համարում մանր ու խոշոր վաճառականները: Հետևաբար արդեն սկսվել էր աշխատանքի հասարակական նոր բաժանումը՝ առևտրի անջատումն արտադրությունից: Մի երևույթ, որը զարգացում ապրեց և իր որոշակի դրսևորումը գտավ հետագայում՝ XII–XIII դարերում: Բագրատունյաց ժամանակաշրջանում աշխատանքի այդ բաժանումը նոր էր ծիլեր արձակում, մանր արտադրողն ինքն էր հիմնականում վաճառում իր արտադրանքը:

Հուժկու զարգացում ունեցավ և մեծ չափերով ծավալվեց արտաքին առևտուրը: Ավատատիրական հասարակության առաջընթացը, տնտեսության բոլոր ճյուղերի վերելքը պայմաններ ստեղծեցին միջազգային առևտրի զարգացման համար: Հայաստանը Եվրոպայից մինչև Չինաստան ձգվող միջազգային տարանցիկ առևտրի մի օղակն էր: Նրա դերը նշանակալից էր Արևելքում կատարվող միջազգային առևտրում: Լինելով չեզոք երկիր, ինչպես նշում է Հ. Մանանդյանը, հարմար վայր էր իրար թշնամի արաբական և բյուզանդական երկրներից եկող քարավանների համար:

Առևտրական կարևոր ուղիներից մեկը Հայաստանի հյուսիսային մասով՝ Անի-Կարս-Կարին-Արծն երթուղով մտնում էր Փոքր Ասիա, այստեղից էլ՝ արևմուտք: Արծնի վրայով անցնող մյուս ճյուղն ուղղվում էր դեպի Սև ծովի հարավային ափերը: Հյուսիսային մայրուղին Դվինից և Անիից անցնում էր Պարտավ-Դերբենդ և ապա հյուսիս: Հարավային մայրուղին Վանա լճի ափերով Մանազկերտի, Խլաթի, Բաղեշի վրայով անցնում էր դեպի Միջագետք[9]:

Հայաստանը միջազգային առևտրին մասնակցում էր նաև սեփական արտադրանքով: Արտահանվող կարևոր ապրանքներից էր աղը, որը տարվում էր հիմնականում Միջագետք՝ Իրաքի հացթուխներին վաճառելու: Հայաստանի ներկերը, հատկապես նշանավոր որդան կարմիրը, ինչպես և Վանա լճի տառեխ ձուկը, լավ սպառվում էր միջազգային շուկաներում: Քաջ հայտնի էին Հայաստանից արտահանվող ձիերը, ջորիները, հայկական գորգերը և գործվածքները: Արտահանվում էին նաև մետաղ և մետաղից պատրաստված իրեր ու հանքանյութեր:

Հայաստանը միջազգային առևտրին մասնակցում էր նաև որպես դրսից ներմուծվող ապրանքներ ընդունող: Տարբեր երկրներից բերվում էին գործվածքեղեն, հաճախ ապակի, պերճանքի առարկաներ, դեղորայք և այլ ապրանքներ: Այդ շրջանի պատմիչ Մատթեոս Ուռհայեցին վկայում է, որ X դարի վերջերին Անիի Մայր տաճարի համար Հնդկաստանից բավականաչափ թանկ գնով բերվել էր բյուրեղյա շքեղ ջահ[10]: Հյուսիսի հետ կատարվող առևտրի գլխավոր կենտրոնը Դերբենդն էր, որտեղ մեծ թվով քրիստոնյա վաճառականներ կային, և վաճառվում էին գերազանցապես ռուսական ապրանքներ, մորթեղեն:

Քարավանային առևտուրը կապված էր դժվարությունների հետ: Երկրից երկիր անցնելու համար պարտավոր էին մաքս վճարել, քարավանները հաճախ ենթարկվում էին հարձակումների, կողոպուտի: Առևտրի այդ ձևին նպաստելու և անվտանգությունն ա-

---

9 Տես А. Манандян, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Ереван, 1954, стр. 233-237.

10 Մատթեոսի Ուռհայեցւոյ ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 149:

պահովելու համար նրանց կցում էին զինված ջոկատներ, ճանապարհների հանգույցներում կառուցում էին իջևանատներ:

Սելջուկյան տիրապետության շրջանում լուրջ վնասներ կրելուց հետո XII դարից սկսվում է քաղաքների նոր վերելք, որը պայմանավորված էր ապրանքային արտադրության և առևտրի աշխուժացմամբ: Աստիճանաբար երկրագործական ու անասնապահական ապրանքներն ավելի լայն չափերով դառնում էին առուծախի առարկա: Այդ ամենի շնորհիվ ընդարձակվեց դրամական շրջանառությունը, որն առաջ բերեց նոր երևույթներ: Վաճառողների դերում, եթե առաջվա նման հանդես էին գալիս գերազանցապես ավատատերերը, ապա որպես գնողներ զգալի տեղ էին զբաղեցնում խոշոր վաճառականներն ու վաշխառուները: Դրամ և հարստություն կուտակելը սովորական միջոց էր դարձել վաշխառուների համար:

XIII դարում խոշոր դրամատեր և վաշխառուներից էր անեցի Տիգրան Հոնենցը, որը ձեռք էր բերել մեծ թվով կալվածքներ, գյուղեր, ջրաղացներ, ձիթհաններ, տներ և այլ անշարժ ունեցվածք: Նման մեծահարուստներից էր Ումեկը, անեցի Ավետենց Սահմադինը և ուրիշներ: Այս ամենը վկայում է, որ զարգացած միջնադարում երկրի հասարակական-տնտեսական կյանքում տեղի էին ունենում նշանակալի փոփոխություններ, առաջընթաց:

* * *

Հայաստանում միջնադարը վերելքի բարձրագույն փուլը բնակոխելու որոշիչ հատկանիշներից է քաղաքների առաջացումը: Հին Հայաստանում նույնպես կային բազմաթիվ նշանավոր քաղաքներ՝ Արտաշատ, Տիգրանակերտ, Արմավիր, Դվին և այլն: Նրանք թագավորանիստ կենտրոններ էին, երբ զրկվում էին այդ իրավասությունից, կորցնում էին քաղաքի իրենց նշանակությունը, վերածվում բերդ-ամրոցի, ավանի:

Միջնադարյան քաղաքներն առաջացան տնտեսական հիմքի վրա, որը հետևանք էր տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման: Այդ քաղաքները սերտորեն կապված էին գյուղատնտեսության հետ, սակայն դրանք գերազանցապես առևտրաարհեստավորական հիմքի վրա բարձրացած կենտրոններ էին: Որքան

բուռն էր արհեստների և առևտրի զարգացումը, այնքան արագ և ծավալուն էր քաղաքների առաջացումը: Հայաստանի զարգացած միջնադարի քաղաքների պատմությունն ուսումնասիրող Բ. Առաքելյանի կարծիքով X–XI դարերում քաղաքների թիվը անցնում էր 40-ից[11]: Միայն հյուսիսային մայրուղու վրա էին գտնվում նշանավոր քաղաքներ Դվինը, Անին, Կարսը, Կարինը, Արծնը, Երզնկան, իսկ հարավային մայրուղու վրա՝ Վանը, Բերկրին, Արճեշը, Մանազկերտը, Խլաթը, Բաղեշը, Նփրկերտը:

Այդ քաղաքներից պեղումների միջոցով լավ ուսումնասիրվել են Դվինը և հատկապես Անին: Ինչպես հայտնի է, Ն. Յա. Մառը 1892-1893 թթ. ձեռնարկեց Անիի պեղումները և երկար ընդմիջումից հետո՝ 1904 թ., վերսկսելով՝ շարունակեց մինչև 1917 թիվը: Պեղումներին մասնակցում էին հետագայում անվանի գիտնականներ Ն. Ադոնցը, Հ. Օրբելին, Թ. Թորամանյանը, Գր. Ղափանցյանը և ուրիշներ: Անին վաղ միջնադարում ամրոց էր, IX դարում դարձել էր գյուղաքաղաք, իսկ X դարի առաջին կեսին արդեն քաղաք էր: Այն, 961 թ. Բագրատունյաց թագավորության մայրաքաղաք դառնալով, արագորեն առաջադիմեց:

Այսպիսով, Հայաստանի անկախությունը, երկրի տնտեսության մեջ կատարվող առաջընթաց վերափոխումները, միջնադարյան քաղաքների առաջացումն ու զարգացումը հատկանշում էին, որ երկիրը թևակոխել է մի նոր աստիճան, զարգացած միջնադարի փուլը: Բնական է, որ տնտեսական զարգացումը չէր կարող իր ազդեցությունը չունենալ մշակութային կյանքի վրա: Իրավի, տնտեսական կյանքի զարգացումը խթանեց, և նրան զուգահեռ հայ մշակույթը սկսեց բուռն վերելք ապրել:

Միջազգային ռազմաքաղաքական իրադարձությունները եկան խաթարելու անկախ Հայաստանի բնականոն զարգացման ընթացքը:

* * *

Բագրատունյաց թագավորության անկումով ավարտվեց խաղաղ շինարարության ու ազատ ստեղծագործության ժամանակաշրջանը: Սկսվեցին դարեր տևող, արհավիրքներով լեցուն,

[11] Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դդ., էջ 123:



ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

օտարերկրյա արշավանքներն ու նրանց ծանր տիրապետության պատմափուլը: Բյուզանդական կայսրությունը, որը հետևողականորեն մասնատում էր երկիրը, 1045 թ. գրավեց Անին և վերջ տվեց Հայաստանի անկախությանը: Նա իր անհեռատես քաղաքականությամբ դուռ բացեց Արևելքից եկող թուրք-թաթարական քոչվոր ցեղերի համար, որը հետագայում կործանարար էր լինելու նաև իր համար:

Անիի անկումից մի քանի տարի հետո՝ XI դարի կեսերին, սկսվեցին թափառական կյանք վարող, խաշնարած սելջուկ թուրքերի արշավանքները: Նրանց առաջին խոշոր ներխուժումը տեղի ունեցավ 1048 թվին, որտեղ բյուզանդական զորքը պարտություն կրեց: Նրանք մտան առևտրական հարուստ քաղաք Արծնը, բնակչությանը կոտորեցին, թալանեցին և մեծ ավարով ու գերիներով վերադարձան: 1054 թ. Տուղրիլ բեկի արշավանքներից մեծապես տուժեցին Հայաստանի հարավային ու արևմտյան շրջանները: Նրանք իրենց հարձակումների ժամանակ ոչ միայն կողոպտում էին երկրի հարստությունը, այլև կոտորում բնակչությանը, հրդեհում, ոչնչացնում ամեն ինչ: 1064 թ. Ալփ-Ասլանը մեծ զորքով ավերումներ կատարեց Այսրկովկասում, այդ թվում նաև Հայաստանի հյուսիսային և կենտրոնական շրջաններում: Նա գրավեց Անին, կողոպուտի և ավերածությունների ենթարկեց: Հայկական իշխանությունները կամ հնազանդվում էին պահեղ թշնամուն, կամ բնակչությունը հեռանում էր արևմուտք:

1071 թ. Մանազկերտի՝ բախտորոշ նշանակություն ունեցող ճակատամարտում Բյուզանդիան պարտվեց, և աստիճանաբար սելջուկյան տիրապետության տակ անցավ ողջ Փոքր Ասիան:

Սելջուկյան հսկայածավալ պետության մեջ մտնող երկրները ավերված, կողոպտված էին, այդ իրավիճակում տնտեսությունը չէր կարող գոյատևել: Մելիք շահը (1072-1092) երկրի տնտեսությունը բարվոքելու հնարավորություն տվեց: Ամենուրեք բարեկարգման աշխատանքներ սկսվեցին, որի շնորհիվ երկրամասի մյուս ժողովուրդների և հայերի դրությունը որոշ չափով թեթևացավ: Սակայն նրա մահից հետո սելջուկյան աշխարհակալ տերությունը սկսեց քայքայվել: Ստեղծվեցին բազմաթիվ ամիրայություններ, որոնց ներքին ընդհարումներից տուժում էր Հայաս-

տանը: Սելջուկյան իշխանություններից զորեղ էր Ատրպատականի կամ Առանի կուսակալությունը՝ Գանձակ կենտրոնով: Հզոր էին նաև Դվինում հաստատված Շեդադյանները: Սեբաստիայում և շրջակայքում իշխում էր Դանիշմանական տոհմը, իսկ Խլաթի և Մանազկերտի տարածքներում հաստատվել էին Շահարմենները[12]:

Սելջուկ թուրքական տիրապետության քայքայման շրջանում նշված ամիրայություններ հետ շարունակում էին գոյատևել հայկական որոշ իշխանություններ: Դրանցից նշանավոր էին Կյուրիկյան թագավորությունը՝ Լոռի կենտրոնով, Կապանի Սյունյաց թագավորությունը, Սասունի Թոռնիկյանները, Արցախի կամ Խաչենի իշխանությունները և հայկական իշխանությունների մնացորդները Ոշտունիքում, Մոկքում[13]:

Հայաստանը ինչ-որ չափով պատնեշ էր Վրաստանի համար: Սելջուկների ներքին ընդհարումներից օգտվելով՝ Գեորգի թագավորը ազատագրվեց նրանց տիրապետությունից և սկսեց միավորել վրացական հողերը: Նրա հաջորդ Դավիթ թագավորը (1089-1125) ոչ միայն կասեցրեց թուրքերի առաջխաղացումը, այլև կարողացավ տեր դառնալ գրեթե ամբողջ Անդրկովկասին: Նա բազմաթիվ հաղթանակներ տարավ սելջուկ ամիրայությունների դեմ, 1122 թ. ազատագրեց Տփղիսը, հաջորդ տարում անեցիների խնդրանքով գրավեց Անին: Ռազմական հաջողություններին զուգահեռ նա վերաշինում էր ավերված երկիրը, շնորհիվ դրա արժանացավ Շինարար պատվանվան: Նա կարողանում էր Անդրկովկասի ուժերը միավորել սելջուկների դեմ պայքարում: Վրաստանի հետ համագործակցելը հայերին անհրաժեշտ էր՝ սելջուկյան լուծը թոթափելու համար, իսկ վրացիներին՝ վրաց-սելջուկյան պայքարում գերակայության հասնելու համար հավատարիմ դաշնակից ունենալ: Չնայած երկու ժողովուրդների եկեղեցիների դավանական ուղղվածության տարբերությանը՝ Դավիթ Շինարարն աջակցություն էր ցույց տալիս նաև հայ եկեղեցուն: Հայության նկատմամբ ուներ հոգատար վերաբերմունք[14]: Նրա

---

[12] Հ. Մանանդյան, Երկեր, հ. Գ, Երևան, 1977, էջ 83-91:
[13] Նույն տեղում, էջ 80-82: .
[14] Նույն տեղում, էջ 95:

հաջորդների՝ Դեմետրեի (1125-1156) և Գեորգի Գ-ի ժամանակ Վրաստանը պահպանում էր իշխող դիրքը:

Վրաստանն ավելի հզորացավ, իր ծաղկման շրջանն ապրեց Թամար թագուհու (1184-1213) օրոք: 1185 թ. նա Սարգիս Զաքարյանին նշանակեց վրացական բանակի գլխավոր հրամանատար, որին մի քանի տարի անց փոխարինեց ավագ որդին՝ Զաքարեն, իսկ կրտսերը՝ Իվանեն, զբաղեցնում էր բարձր պետական պաշտոն: Զաքարեի գլխավորությամբ վրաց-հայկական զորքերն ազատագրեցին Հայաստանի մեծագույն մասը, որը որպես անձնական տիրույթ Թամար թագուհին հանձնեց Զաքարյան եղբայրներին[15]: Զաքարեին էին ենթարկվում Շիրակը, Անիի թագավորության տարածքները, Իվանեին՝ Այրարատյան նահանգի մի մասը, Սևանի շրջակայքը: Նրանց տիրապետության տակ գտնվող նահանգներում ձևավորվեցին իշխանական տներ: Արագածոտն գավառում հիմնվեց Վաչուտյանների իշխանությունը, Շիրակում՝ Պահլավունիների, Վայոց ձորում՝ Օրբելյանների, այդտեղ և հարակից տարածքներում՝ Խաղբակյան կամ Պռոշյան իշխանությունը: Զաքարյանների քույր Դոփը ամուսնացել էր տեղացի իշխան Հասանի հետ, և Արցախում հաստատվել էր Դոփյանների իշխանությունը[16]: Փաստորեն վերականգնվել էր Հայաստանի ինքնուրույնությունը:

Զաքարյան շրջանը, ցավոք, տևական չեղավ, գոյատևեց ընդամենը կես դար: Դրան հաջորդեցին սելջուկ թուրքերից ավելի դաժան, նույնպես քոչվոր-թափառական՝ մոնղոլ-թաթարական ցեղերի արշավանքները ու նրանց ծանր տիրապետությունը: 1236 թ. տեղի ունեցավ մոնղոլների կողմից Հայաստանի և Վրաստանի գրավումը: Չարմաղան Նոյինը (զորահրամանատարը) գրավում է Լոռի բերդաքաղաքը, ապա Դմանիսը, Շամշուլդեն, Տփղիսը, Անին, թալանում և կոտորում բնակչությանը: Կարսը անձնատուր է լինում, սակայն այստեղ էլ բնակչությունը գերվում կամ կոտորածների է ենթարկվում: Նույնն է կատարվում նաև Սյունիքում, Արցախում[17]:

---

[15] Նույն տեղում, էջ 110:
[16] Նույն տեղում, էջ 162-166:
[17] Նույն տեղում, էջ 215-216:

Մոնղոլները Ղազան խանի ժամանակ (1295-1304) Իրանում մահմեդականություն ընդունեցին: Նա հանդուրժողական վերաբերմունք ուներ քրիստոնյաների նկատմամբ, բայց նրա հաջորդները անցան կրոնական հալածանքների: Չարմաղանին փոխարինեց Բաչու Նոյինը, որը գրավեց Կարինը, բնակչությանը մատնեց սրի ու կողոպուտի: Նրանց ձեռքն ընկան ահագին քանակությամբ ձեռագրեր, որոնք քրիստոնյաները գնում էին և նվիրում վանքերին: Հաջորդ տարում նա գրավեց Երզնկան, Կեսարիան, Սեբաստիան, Տևրիկը և բնակչությանը կողոպուտի և ավերածության ենթարկեց[18]: Մեծ Հայքի Եկեղյաց գավառի Երզնկա քաղաքի՝ XIII դարում գրված ձեռագրերից մեկի հիշատակարանում ասվում է. «...Այլազգիք մահմեդականք ասպատակեցին ի գաւառն ի քառասուներորդացն պահոցն յերկրորդ շաբթուն, և բազում քրիստոնեայս՝ եկեղեցական և աշխարհականաց նահատակեցին և յանխնա և անողորմ սրակոտոր արարին և գայլսն գերի վարեցին և սաստիկ անհնարին ահ և երկեղ և տագնապ և խռովութիւն եղև բնակչայ քաղաքին: Եւ որպէս յոլովք ցրուեցան ի քաղաքացիացն ընդ ամենայն կողմանս, նոյնպէս և մեք մազապուրծ եղեալ բազում տառապանաւք և աշխատութեամբ դիմեալ յԱրևելից կողմն»[19]:

XIV դարում գրված ձեռագրի մի ընդօրինակող մոնղոլների մասին գրում է. «...և ի գերութիւն վարեն զբազում գաւառս, և բազում և անիրաւ հարկապահանջութեամբ դատեն զամենեսեան, և այլ բազում չարիս լինի ի ժամանակիս մերում, զոր ոչ է կար մի ըստ միոջէ պատմել, կամ ընդ գրով արկանել: Իսկ մեք ոչ ունելով հանգիստ, այսր անդր շրջելով և փախստական լինելով, էաք որպէս գառնիս ի մէջ գայլոց...»[20]:

Վտանգի տակ էր Կիլիկիան: Հեթում թագավորը մեկնեց Մանգու խանի մոտ, պայմանագրեր կնքեց և ապահովեց երկրի անվտանգությունը:

---

[18] Տե՛ս Կ. Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 279-280:

[19] Տե՛ս Կոստանդին Երզնկացի, Տաղեր, աշխատասիրությամբ Արմենուհի Սրապյանի, Երևան, 1962, էջ 12:

[20] Լ. Խաչիկյան, XIV դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 325:

Հայաստանը և Վրաստանը սկզբնական 20 տարիներին (1236-1256) գտնվում էին Չինգիզ խանի, իսկ 1256-1344 թթ. Հուլավյանների կամ իլխանության տիրապետության տակ: Մոնղոլ խաները, տեղերում առանձին իշխանություններին պաշտոնապես ճանաչելով, խոչընդոտում էին Վրաստանի միավորումը: Մոնղոլական ավագանին կարևորություն էր տալիս առևտրին: Աշխույժ գործում էր առևտրի հարավային ուղին, որի վրա գտնվող քաղաքները՝ Արճեշը, Մանազկերտը, Խլաթը, զարգացան, իսկ հյուսիսում գտնվող Դվինը, Անին, Կարսը կորցրել էին նախկին նշանակությունը: Բազմաբնույթ հարկերի հետևանքով ծանր էր բնակչության վիճակը, հետադիմում էր երկիրը, ծայր էր առել արտագաղթը: 1340-ական թվականների սկզբին մոնղոլական մեծ պետությունը վերջնականապես քայքայվեց:

Մոնղոլական պետության վերացման շրջանում, թեկուզև թուլացած, շարունակում էին գոյատևել հայկական իշխանությունները, Շիրակում և Անիում իշխում էին Զաքարե ամիրսպասալարի որդու՝ Շահնշահի Ա-ի ժառանգները, Արագածոտն գավառում Վաչուտյաններն էին: Վայոց ձորում և Սյունիքում Օրբելյաններն ու Պռոշյաններն էին, իսկ Գեղարքունիքում և Խաչենում՝ Դոփյանները: Մոնղոլներից հետո Հայաստանում իշխում էին Ջելայիրները: Նրանց ժամանակ ևս ներքին երկպառակությունների ու կռիվների պատճառով տուժում էր Հայաստանը:

Սելջուկների հետ Անդրկովկաս էին եկել և տարածվել նաև թուրքական ցեղերը: Նրանցից մեկի առաջնորդը՝ էրթողուլը գնաց արևմտյան Փոքր Ասիա և սելջուկներից խնդրեց ու ստացավ բյուզանդական Բիթանիայի սահմանի մոտ տարածք: XIII դարի՝ վերջերին, երբ Իկոնիայի սուլթանությունը քայքայվեց, էրթողուլի որդին՝ Օսմանը, իշխեց այդ կողմերում (1299-1326) և ընդարձակելով իր տարածքները՝ հիմք դրեց Օսմանյան պետության: Այդ նույն դարաշրջանում Բայազետ Ա-ի (1389-1402) օրոք այդ տերությունը դարձավ հզոր պետություն[21]:

Հայաստանի ու հայ ժողովրդի համար XIV դարի վերջին քառորդը եղավ ավելի մռայլ ու դժնդակ մի ժամանակաշրջան, քան անգամ սելջուկների ու մոնղոլների տիրապետությունն էր:

---

[21] Հ. Մանանդյան, նույն տեղում, էջ 349-350:

Մոնղոլների անկման ժամանակ Չինգիզ խանի որդու՝ Չաղաթայի սերունդն էր իշխում: Լանկ Թամուրը, դառնալով Չաղաթայի աննշան մի գործիչ, կարողացավ տասը տարվա ընթացքում վերականգնել Չաղաթայի հզոր պետությունը: Նա 1386 թ. արշավեց Անդրկովկաս, գրավեց Հայաստանի շատ բնակավայրեր, գերեց կամ ոչնչացրեց բնակչությանը: Նույնը կատարեց նաև Տփղիսը գրավելուց հետո: Հաջորդ տարում մեծ ավերածությունների ենթարկվեց Սյունիքը: Պաշարեց և գրավեց Վանը, որտեղ բնակչությանը գահավեժ ցած էր նետում, որոնցից վերջինները, ինչպես նշում է պատմիչ Թ. Մեծոփեցին, չէին մահանում մահացածների մեծ կույտի վրա ընկնելով: Լանկ Թեմուրի երկու տարվա արշավանքներից հետո երկրում համատարած սով սկսվեց: 1394 թ. արշավանքի ժամանակ ավերեց Կարսը, Բարձր Հայքի բնակավայրերը, իսկ մի քանի տարի անց մտավ Վրաստան, ավերածություններ կատարեց, գերեց 60 հազար մարդ, որոնց թվում քիչ չէին հայերը[22]: Նա 1402 թ. վճռական ճակատամարտում պարտության մատնեց Օսմանյան Թուրքիային և գերեց սուլթան Բայազետ Ա-ին:

Լանկ Թամուրը ստեղծեց հսկայածավալ մի տերություն, որը Չինաստանից ձգվում էր մինչև Եգիպտոս, մինչև Փոքր Ասիա: Նա պատրաստվում էր գրավել նաև Չինաստանը, բայց 1405 թ. ճանապարհին մահացավ: Նրա շուրջ քսան տարվա արշավանքներն այնքան ծանր հետևանքներ թողեցին ամբողջ գրաված երկրներում, որ երկար ժամանակ մնացին անդարմանելի:

Հետաքրքիր է իմանալ, թե ինչպես են ներկայացնում իրավիճակը Հայաստանում օտար հեղինակները: Իսպանիայի թագավորի դեսպան Կլավիխոն 1404 թ. մեկնել է Սամարղանդ՝ Լանկ Թամուրի մոտ: Նա անցել և վերադարձել է Հայաստանի վրայով:

Նկարագրելով Հայաստանում տեսած ավերածությունների հետքերը՝ Կլավիխոն գրում է. « Այնպես որ, խալմները եկել և գրավել էին ամբողջ Հայաստանը, որովհետև երբ նրանք տիրապետել էին քաղաքներին, մահացրել էին մեծամասամբ քրիստոնյա հայերին, որոնք բնիկներ էին, և նրանցից հետո նրանց տեղը

---

[22] Նույն տեղում, էջ 368:

գրավել են»[23]: Լանկ Թամուրից հետո իրավիճակն ըստ էության չբարվոքվեց, շարունակվեցին ավերածությունները Հայաստանում XV դարում իշխող թուրքական կարա-կոյունլու և հատկապես ակ-կոյունլու ցեղերի կողմից:

Ահա պատմական այս միջավայրում ու այս պայմաններում էր, որ գոյատևեց և վիթխարի առաջընթաց ապրեց հայկական մշակույթը:

Այժմ ծանոթանանք հայ ժողովրդի ստեղծագործ աշխատանքի արդյունքներին՝ Հայաստանի անկախության խաղաղ աշխատանքի և օտարի երեքհարյուրամյա ավերիչ արշավանքների և ծանր տիրապետության ժամանակաշրջանում:

[23] Նույն տեղում, էջ 374:

# ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ

# ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

## I. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԵՐՈՍԱԿԱՆ ԷՊՈՍԸ

Ժողովրդական վեպը, դյուցազնավեպը կամ էպոսը մարմնավորում է տվյալ ժողովրդին առանձնահատուկ, նրա բնորոշ հատկությունները: Ժողովրդի ապրումները, նրա ձգտումներն արտահայտող նման ստեղծագործությունները մշակվում են երկար ժամանակ, դարերի ընթացքում, բայց վերջնական ձևավորում են ստանում ժողովրդի ինքնության, ինքնագիտակցության բարձրացման որոշակի աստիճանում: Ինչպես հայտնի է, Պատմահայր Մովսես Խորենացին հայ ժողովրդի հետ առնչվող բազմաթիվ առասպելներ է հիշատակում, որոնք սակայն տակավին ժողովրդական էպոս դառնալու մակարդակի չեն հասնում: Հայ իրականության մեջ ժողովրդական էպոսը ծնունդ առավ զարգացած միջնադարի շեմին՝ ժողովրդի քաղաքական ակտիվության, լուսավորական շարժման վերելքի պայմաններում: Մյուս ժողովուրդների ազգային դյուցազնավեպերը նույնպես առաջացել են հասուն ավատատիրության այդ նույն դարաշրջանում[24]:

1939 թվին նշվեց «Սասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյակը: Դրանով նկատի էր առնվում ժողովրդավեպի վերջնական ձևավորման համար ազդակ հանդիսացող պատմական իրադարձությունը՝ IX դարում արաբների դեմ մղած պայքարը: Երկրամասի կառավարիչ արաբ ոստիկան Յուսուֆը, հայկական շրջաններում ավերածություններ կատարելով, վերահաս ձմռան պատճառով բանակ է դնում Մուշում, սպասում գարնանը: Սասունցիները ան-

[24] Ֆիննական «Կալեվալա», ղրղզական «Մանաս» էպոսները ձևավորվել են IX–X դարերում, բյուզանդական «Դիգենիս Ակրիտասը»՝ X–XI դարերում, «Երգ Ռոլանդի մասին» ֆրանսիականը՝ X– XII դդ., իսպանական «Երգ իմ Սիդի մասին» և ռուսական «Ասք Իգորի գնդի մասին»՝ XII դարում, իսկ գերմանական «Նիբելունգների երգը»՝ XIII դարի սկզբին և այլն:

սպասելի հարձակվում, ջարդում են արաբական զորաջոկատը, ազատում գերվածներին, սպանում եկեղեցու գմբեթում թաքնված Յուսուֆին: Դյուցազնավեպը սկզբնավորվել է Սասունում, բայց աստիճանաբար տարածվել է ամբողջ ժողովրդի մեջ և դարձել համազգային: Այն ներառել է անցյալի առասպելական պատումները, սկսած Հայկի և Բելի պայքարից, այսինքն՝ հայ ժողովրդի առաջացման, բռնակալ իշխանությունների դեմ պայքարի ժամանակաշրջանից:

«Սասնա ծռերը» բաղկացած է չորս ճյուղից: Սանասարն ու Բաղդասարը Սասնա դյուցազնական տոհմի նախնիներն են: Հաջորդը Մեծ Մհերն է, ապա նրա ժառանգ Դավիթը, իսկ չորրորդ ճյուղը Դավթի որդի Փոքր Մհերն է: Բոլոր չորս սերունդները գործել են անառիկ Սասունում, պայքարել այլադավան բռնակալների դեմ և մշտապես հաղթանակի հասել: Նրանք կապված են ժառանգական սերվածությամբ և այլ ընդհանրություններով, որով հերոսավեպի չորս ճյուղերի միասնություն է ստեղծվում, դառնում մի ամբողջական վիպերգություն:

Հայ ժողովրդի վաղնջական առասպելները փոխակերպված ձևով հիմք են դարձել հայկական էպոսի առաջին ճյուղի համար: Քրիստոսի ծննդից առաջ՝ 7-րդ դարում, Ասորեստանի Սինեքերիմ (Սենեքերիմ) թագավորի որդիները՝ Սանասարը և Աբամելեքը, սպանում են իրենց հորը և փախչում Արարատյան երկիր: Այդ պատումների վրա հետագայում ավելացել է Բաղդադի խալիֆայության ժամանակի իրադարձությունների ազդեցությունը[25]:

«Սասնա ծռեր» էպոսի չորս սերունդների մեջ առանցքային դեմքը Դավիթն է: Նա է վիպերգության չորս ճյուղերի հիմնական գաղափարի մարմնավորողը: Նա է ամենից ամուր կապված էպոսի հիմքում դրված պատմական իրադրությանը: Նրա սխրագործությունները արտացոլող պատումները տիրապետող են դյուցազնավեպի բոլոր տարբերակներում: Հետևաբար պատմավեպը Սասունցի Դավիթ անվանելը միանգամայն ընդունելի է և լիովին պատճառաբանված: Հայկական էպոսը չի վերաբերում հայ ժողովրդի պատմության մի դրվագի, ինչպես տեսնում ենք ուրիշ ժողովուրդների համանման ստեղծագործություններում:

[25] Տե՛ս «Սասունցի Դավիթ», Երևան, 1981, Ս. Հարությունյանի առաջաբանը:

Այսպես օրինակ, ֆրանսիական վիպերգության խոշորագույն հուշարձանն է «Ռոլանդի երգը»: Այն համաեվրոպական հնչեղություն է ստացել և համարվում է միջնադարյան պոեզիայի գագաթնակետերից մեկը: Ռոլանդը արիության, ճշմարտության հաղթանակի, իր անձնական հաղթանակի, անշահախնդիր սխրագործությունների ծարավ է: Նրան օտար են եսասիրությունը, դաժանությունը, ագահությունը: Նա իր կյանքը զոհաբերում է իր հայրենիքի՝ սիրելի Ֆրանսիայի համար: Ասպետական խիզախ վարքագծի, հավատարմության, հայրենիքի սիրո գեղարվեստական մշակման բարձրարժեք կոթող լինելով հանդերձ՝ այն նվիրված է Ֆրանսիայի պատմության միայն մի դրվագի, որն ընդհանրացնում և արտահայտում է դարաշրջանի բնորոշ ոգին[26]:

Իսպանիայում յոթամյա հաղթանակներից հետո Ֆրանսիա վերադարձող Կարլոս Մեծի բանակի վերջապահ գունդը Պիրենեյան լեռնաշղթայի կիրճում շրջապատվում է մավրերի կողմից: Վերջապահ գունդը գլխավորում էր արքայի սիրելի, քաջակորով կոմս Ռոլանդը: Նրա ասպետական արժանապատվությունը թույլ չի տալիս և կտրուկ մերժում է իրենց զորքին՝ ֆրանսիական բանակին օգնության կանչելու առաջարկները: Փոքրաքանակ իր ասպետների հետ խիզախորեն մարտնչում, մեծ կորուստներ է պատճառում անթիվ-անհամար մավրերին, բայց ի վերջո ֆրանսիական զորագունդը ընկնում է անհավասար մարտում: Ռոլանդի մահվան պատճառ է դառնում իր խորթ հոր՝ Գանելոնի դավաճանությունը: Ֆրանսիական զոհերի վրեժը առնում է Կարլոս արքան՝ ոչնչացնելով մավրերի բանակը և պատժելով դավաճան Գանելոնին:

Ռոլանդը անվախ, խիզախ, ազնիվ, մեծահոգի ասպետ է: Նա դառնում է իսկական ժողովրդական հերոս, թեպետև պարտվում է, բայց մեծ փառքի է արժանանում:

Հայկական էպոսը հայ ժողովրդի ամբողջ պատմության խտացումն է հնագույն ժամանակաշրջանից սկսած մինչև զարգացած միջնադարը ներառյալ:

---

[26] Տե՛ս Песень о Роланде- М. Л. 1964: Песнь о Роланде (коронование Людовика) Москва, 1976. «Ռոլանդի երգը», Երևան, 1995, թարգմանությունը և առաջաբանը Յ. Բախչինյանի:

Հայ գրական շրջանները, ինչպես նշում է Կ. Սասունին, երկար ժամանակ անտարբեր մնացին ազգային վեպի հանդեպ: Դրա նշանակությունն առաջինը խոր և ընդհանրացած ընկալեց Հովհաննես Թումանյանը, ում շնորհիվ հայ մտավոր շրջանները հասու դարձան դյուցազնավեպի խորհրդին[27]: Թումանյանը էպոսը դիտում է որպես հնագույն ժամանակներից, Հայկ Նահապետից սկսած՝ ժողովրդի մտածումների, ձգտումների, երազանքների արտահայտություն: Երկար դարեր բանահյուսությունն է եղել ժողովրդական մտքի միակ ասպարեզը: Հազարամյակների ընթացքում ժողովուրդն է սերնդից սերունդ մշակել Դավթի կերպարը, նրա մեջ դրել իր լավագույն զգացումները, ձգտումները, իղձերն ու նպատակները: Հետևաբար, եզրակացնում է Մեծ Լոռեցին, միևնույն ժողովուրդը երկու էպոս ունենալ չի կարող[28]:

Որոշ հեղինակներ շեշտում են էպոսի հերոսների նախատիպերի առկայությունը: Դավիթը իշխանաց իշխան Բագրատ Բագրատունու որդի Դավիթն է, Քեռի Թորոսը՝ իշխան Թեոդորոս Ռշտունին է և այլն: Հ. Թումանյանը, Հ. Օրբելին և ուրիշներ մերժում են էպոսի հերոսների նկատմամբ նման մոտեցումները[29]: Նախատիպեր կարող են լինել, սակայն Սասունցի Դավիթը հայ ժողովրդի ազգային ոգին մարմնավորող անհատ է: Դավթի կերպարում մարմնավորվել են իրեն ծնող ժողովրդի ազգային հատկանիշները: Սասունցի Դավիթը հայ ժողովրդի ողջ պատմության ընդհանրացումն է: Հայ ժողովուրդը անկախ ու ազատ ապրելու անպարտելի ուժը, մարդկային իր խոհերն ու ձգտումները մարմնավորել է ժողովրդական էպոսում, մասնավորապես Դավթի կերպարի մեջ:

Հարկ է նշել, որ բոլոր ժողովուրդների էպոսներն իրար հետ ունեն շատ ընդհանուր գծեր: Նրանցում տվյալ ժողովրդի շահերն արտահայտող հերոսները չար ուժերի դեմ պայքարում մշտապես հաղթանակ են տանում: Հերոսները ծնունդ են առնում բնության

---

[27] Տե՛ս «Սասունցի Դավիթ», շարահյուսեց՝ Կ. Սասունի (հայ ժողովրդի դյուցազնավեպ), Բեյրութ, 1947, էջ 9-10:

[28] Տե՛ս Մ. Ջանփոլադյան, Թումանյանը և հայ ժողովրդական էպոսը, Երևան, 1969:

[29] Տե՛ս «Սասունցի Դավիթ», Երևան, 1939, Հ. Օրբելու առաջաբանը: Հ. Օրբելի, Հայկական հերոսական էպոսը, Երևան, 1956:

երևույթներից՝ աղբյուրի ջրից, խնձորից, արևի լույսից, անձրևից և այլն: Դյուցազուն մանուկներն աճում են ոչ թե տարիների կամ ամիսների, այլ ժամերի ընթացքում: Նրանք անասելի մեծ ուժի տեր են և սխրանքներ են գործում շատ երիտասարդ տարիքում՝ պատանեկության շրջանում: Մեծ ուշադրություն է դարձվում դյուցազունների զենքին ու նժույգին: Նժույգը հանդես է գալիս որպես իր տիրոջ կախարդական օգնականը: Անհրաժեշտության պարագայում քնից արթնացնում է տիրոջը, զգուշացնում վերահաս վտանգի մասին: Էպոսներն ավարտվում են արդարության, բարության հաղթանակով[30]: Ընդհանուր այդ երեվույթները հատուկ են նաև հայկական էպոսին: Սանասարը և Բաղդասարը ծնվում են աղբյուրի զուլալ ջրից: Դավիթն ուժ ու կորով է ստանում այդ նույն աղբյուրի ջրից: Կ. Վ. Տրևերը ցույց է տալիս, որ ինչպես հունական էպոսի Անթեոսը ուժ է ստանում հողին շփվելով, այնպես էլ «Սասունցի Դավթի» հերոսները զորություն են ստանում ջրից, հղիանում էին ջրով[31]:

Այդ ամենով հանդերձ գոյություն ունեն սակայն այնպիսի ակնառու հատկանիշներ, որոնք դրսևորվել են հատկապես «Սասունցի Դավիթ» վիպերգում:

Դրանք համամարդկային արժեքների հատկանիշներ են, որոնք ձևավորվել, մշակվել են դարերի ընթացքում և բնորոշ են հայ ժողովրդին: Հայկական էպոսում առաջին հերթին արժևորվում է բարիքներ ստեղծող արդար աշխատանքը: Աշխատանքը՝ որպես կյանքի կենսունակության աղբյուր, տեսնում ենք դյուցազնավեպի բոլոր ճյուղերում: Սանասարի և Բաղդասարի կողմից Սասնա բերդի կառուցումը, Դավթի կողմից հոր կառուցած Մարութա վանքի վերականգնումը, Փոքր Մհերի կամրջաշինությունը: Դավթին տեսնում ենք գութանի ու գութանավորների հետ: Դավիթը, հյուրասիրվելով գութանավորների մոտ, սպառում է նրանց մեկ շաբաթվա սննդի պաշարը, որի պատճառով ստեղծվում է դժվարին կացություն: Դավիթը նրանց ազատում է հոգսից՝

30 Տե՛ս Жирмунский, Народный героический эпос, М-Л, 1962, էջ 12-24:

31 Տե՛ս К. В. Тревер, Водный Антей армянского эпоса - Давид Сасунский, Ереван, 1939, էջ 135-139:

վեց օրվա վարը մի քանի ժամում կատարելով[32]: Մարդու գոյատևման կարևոր նախապայմաններից մեկը հացն է, որը ստացվում է երկրագործի ծանր աշխատանքի միջոցով: Աշխատանքը, գութանը ներկայանում են իբրև գոյության հիմք, իբրև առատության աղբյուր, այն ընդհանուր հարգանքի ու մեծարման է արժանանում: Պատահական չէ, որ հնուց եկող ավանդությամբ հայ ժողովրդի բանահյուսության մեջ աշխատանքին ձոնված երգերի մեծ մասը կազմել են գութանին, վարուցանքին, բերքահավաքին նվիրված երգերը[33]:

Դյուցազնավեպում ժողովուրդը կյանքի իմաստը տեսնում է խաղաղ աշխատանքի մեջ: Ատելությամբ է վերաբերվում թալանով, կողոպուտով ապրողների նկատմամբ: Այլ խոսքով՝ արդար աշխատանքով, սեփական քրտինքով հաց վաստակելը ներկայանում է որպես սկզբունք, որպես միակ ընդունելի միջոց:

Հայկական էպոսում լայն տեղ է տրվում հնից ժառանգած, հայ ժողովրդի համար ավանդություն դարձած, կյանքի երևույթներին, դարերի ընթացքում ձևավորված, նրան հարազատ դարձած, նրա կենցաղի մեջ մտած և ազգային սովորություն դարձած մարդկային հատկանիշներին: Դրանցից են ընտանիքի մեծի նկատմամբ խոր հարգանք ունենալը, նրան ենթարկվելը: Անչափահաս ժառանգի՝ հորեղբոր, մորեղբոր կողմից խնամվելը, ապա

---

[32] «Դավիթ լսեց, ասաց,- ինչ տի վարիք:
Ասին,-Այ, էդա դաշտ:
Ասաց,- դուք էստեղ քիչ մի նստեք,
Ես կելնեմ, էն վեց ավուր գութան
Մեկ ժամվա մեջ կանեմ:
Էդ ասելով Դավիթ էլավ,
Յոթ գութան կապեց իրարաց, ծին նստավ
Ու քաշեց զգութաններ:
Մեկ տաս փաք գնաց, էկավ,
Դաշտը մի տեղ սեվցուց:
Մշակներ ասին – էդ քո շնորհք չէ,
Քո ծիու շնորհքն է:
Էն ժամանակ Դավիթ իջավ ծիուց,
Դավիթն բնատեն առավ ծեռ,
Ու ինք վարե՜ց, վարե՜ց, արտ պրծավ:
(«Սասունցի Դավիթ», Երևան, 1981, էջ 258):
[33] Տես Գրիգոր Գրիգորյան, Հայ ժողովրդի հերոսական էպոսը, Երևան, 1960, էջ 199-217:

նրա հովանավոր, խորհրդատու դառնալը: Փորձով իմաստնացած մեծահասակ մարդկանց խորհուրդները լսելը: Դավիթը քանիցս ականջալուր է լինում կորեկի արտի տեր պառավ հայ կնոջ խորհուրդներին և մշտապես հաջողության է հասնում: Նա, երբ անխնա կոտորում էր Մսրա Մելիքի զորքին, յոթ տղաների հետ կռվի դաշտ բերված գլխաքաց արար ծերունին խնդրանքով դիմում է Դավթին և դադարեցնել է տալիս սպանդը[34]:

«Սասունցի Դավիթ» էպոսի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ նրա հերոսները թշնամու դեմ մենակ են հանդես գալիս: Մյուս ժողովուրդների էպոսների հերոսները, որպես կանոն, զորքով են կռվի մեջ մտնում:

Հայկական դյուցազնավեպում դավաճանություն չենք տեսնում: Պատմական անցյալում Հայաստանում առանձին նախարարների, իշխանների կողմից նման դեպքեր եղել են, բայց քանի որ դավաճանությունն ընդհանուր առմամբ անհարիր է հայ ժողովրդի ոգուն, էպոսում տեղ չի գտել:

---

[34] «Դավիթ, մեռնեմ քեզի,
Ականջ արա, ծիդ դադրեցրու,
Գամ քեզի խոսք տասեմ:
Ինչ տասես ինծ հալվոր, - հարցուց Դավիթ:
Դավիթ, - ասաց, - մեռնեմ քո արևուն.
Չէ՞ որ էնոնք էլ մարդ են, իսան են.
Ինչի՞ կը կոտորես, ինչի՞ կը սպանես.
Չէ՞ էդոնք էլ երեխաներ ունեն,
Տուն ու կնիկ ունեն:
Էնուց սպանես՝ ճժերու մեղք կընկնի քո վիզ:
Աղքատ ու խեղճ մարդ են էդոնք.
Որը իր մոր մեկուճարն է,
Որը նոր պսակված տըղա,
Որը իր օջախի սունն է,
Որը հանգած տան ճրագ.
Մըսրա Մելիքն է քո դուշման
Գնա իր հետ կռիվ արա:
Էդտեղ Դավիթ խղճավորվավ,
Զորք ջարդել վերջացուց
Դարձավ ասաց, Հալվոր
Աղեկ խոսք ասացիր
Ես քո ասած տանեմ»
(տե՛ս «Սասունցի Դավիթ», Երևան, 1981, էջ 231-232):

Տարբեր ժողովուրդների էպոսներում կինը հաճախ դավաճանի կամ դատապարտելի արարքների հեղինակ է հանդես գալիս: «Սասունցի Դավիթ» էպոսում ընդհակառակը կինը ներկայանում է անձնազոհ մարդասիրությամբ: Ծովինարը տեսնելով, որ խալիֆի հարսնացու դառնալուն համաձայնություն չտալով՝ երկիրն ավերվելու է, ժողովուրդը՝ կոտորվելու, գնում է ինքնազոհության:

Նա ասում է. «-Վոր յես են կռապաշտ թագավոր չունեմ,
Ջամեն տի սպանի իմ պատճառով,
Աղեկն են ե, յես երթամ,
Ուրիշ մարդու թող բան չըլնի:
Յես մենակ մեռնիմ իմ հոր թեյեն.
Յես մենակ ջան եմ, երթամ, կորսըվիմ,
Քանց մեր Հայաստան երկիր ավերի,
են հազար հազար հոգիք կորուսանին:
Դարձավ ասաց.- Հայրիկ, ինձ տուր ենոր»[35]:

Հայ կինը էպոսի հերոսների նման ու նրանց կողքին հայրենասիրության, ժողովրդավարության վառ օրինակ է տալիս:

«Սասունցի Դավիթ» էպոսը ամբողջովին ժողովրդական է ոչ միայն ժողովրդի կենցաղը, վարքն ու բարքն արտահայտելով, ոչ միայն նրա համար, որ կենսունակ ապրում է ժողովրդի բանավոր պատմության մեջ: Էպոսը, ինչպես ճիշտ նկատել է Հ. Օրբելին, ժողովրդական է, քանի որ նրա հերոսների աշխարհայեցողությունն անխզելիորեն կապված է բուն ժողովրդի հետ: «Այս էպոսը ժողովրդական է,- գրում է Հ. Օրբելին,- ժողովրդական է ոչ միայն նրա համար, որ ապրում է ժողովրդական զանգվածների մեջ և պատմվում նրանց բերանով, ոչ միայն նրա համար, որ մինչև վերջին ժամանակներս, մինչև մեր օրերը, ապրում է ժողովրդի բանավոր պատմության մեջ, ոչ միայն նրա համար, որ նրա լեզուն բոլոր վարիանտներում ժողովրդական լեզու է, հին կամ նոր հայերեն գրական լեզվի կազմությանն ու բառապաշարին օտար: Էպոսը ժողովրդական է նախ և առաջ նրա համար, որ նրա հերոս-

---

[35] «Սասունցի Դավիթ», Հայկական ժողովրդական էպոս, կազմեցին՝ Աբեղյան Մանուկ, Աբով Գևորգ, Ղանալանյան Արամ, Երևան, 1939, էջ 10:

ների ամբողջ աշխարհայեցողությունն անխզելիորեն կապված է բուն ժողովրդական ներքնախավերի հետ...

Չնայած իրենց արիության, իրենց ուժին, իրենց սխրագործություններին, որոնք շարունակ կատարվում են ժողովրդի բարիքի համար, ավելի ճիշտ՝ հենց այդ հատկությունների շնորհիվ հերոսներից ոչ մեկն ամենափոքր չափով անգամ իր հնարավորություններից ոչինչ չի քաղում իրեն համար, շրջապատող միջավայրում ինչ որ հատուկ իրավունքներ ձեռք բերելու համար, իշխանության նշույլ անգամ գրավելու համար, ըստ իր կամքի տնօրինելու համար այն հողը, որ նրանք պատրաստ են ոռոգելու իրենց արյունով»[36]:

Հայկական էպոսի հերոսները դուրս են եկել ժողովրդի միջից և մշտապես կապված են մնացել նրա հետ: Նրանց բարքերը, սովորությունները հասարակ մարդկանց, ժողովրդի կենցաղն է: Ժողովրդի հետ սերտորեն առնչված, պարզ ու միամիտ, բայց մշտապես արդարամիտ լինելով՝ միաժամանակ դրսևորում են ազնվականին հատուկ արժանապատիվ կեցվածք: Դավիթը համաձայնվում է, որ հարվածելու իրավունքից առաջինն օգտվի Մսրա Մելիքը, երեք զարկից հետո, երբ հերթը հասնում է Դավթին, կրծքով իրեն սնած կնոջ խնդրանքով առաջին զարկը նվիրում է նրան: Երկրորդ զարկը՝ Մելիքի քրոջը, որի ծնկներին էր մեծացել ինքը: Օգտվում է միայն վերջին զարկի իրավունքից:

Հայ հերոսներն արդարամիտ ու ազնիվ են իրենց բոլոր արարքներում: Դավիթը Մսրա Մելիքի զորքի վրա հանկարծակի չի հարձակվում, զգուշացնում է, որ նրանք պատրաստվեն կռվի: Նա բարձրանում է սարի գլուխը և կանչում.

«Ով քնած է՝ արթուն կացեք,
Ով արթուն է՝ ձիեր թամբեք,
Ով թամբել է՝ զենքեր կապեք,
Ով կապել է՝ էլեք հեծեք,
Չասեք Դավիթ գող-գող եկավ,
Գող-գող գնաց»[37]:

---

[36] Տե՛ս «Սասունցի Դավիթ», Երևան, 1939. Հ. Օրբելու առաջաբանը, էջ XVIII:
[37] «Սասունցի Դավիթ», Երևան, 1981, էջ 230:

ժողովրդական վիպերգությունները, ինչպես նշում է Ռ. Թումանյանը, որքան էլ ազգային լինեն, համամարդկային շատ գծեր ունեն: Հայկական էպոսում բավականաչափ ցայտուն է արտահայտվել այդ հանգամանքը[38]: Ազատության գաղափարն էպոսում սահման չի ճանաչում, չի պարփակվում իր ժողովրդի շրջանակներով, այլ հնչում է որպես համընդհանուր գաղափար, դառնում սրբություն: Ահա դրա մեկ օրինակը: Դավիթը քանդում է հոր որսատեղի պարիսպները և ազատություն է տալիս անգամ որսի կենդանիներին:

Ժողովուրդների համերաշխության գաղափարը կարմիր թելի նման անցնում է ամբողջ դյուցազներգության միջով: Մսրա Մելիքի սպանությունից հետո Դավիթը նրա զորքին որևէ պահանջ չի առաջադրում, ոչ էլ հալածում է, այլ խաղաղ կյանքով ապրելու հորդոր է անում: Նա դիմում է թշնամու զորքին հետևյալ խոսքերով.

«Ամենքիդ իրավունք կըտամ,
Ուր տեղեն էկեր եք՝ էլեք, գնացեք ձեր տեղ:
Էլեք, գնացեք ու ձեր տներ նստեք...
Հանդարտ կացեք,
Մեկ էլ չելնեք ու գաք վեր Սասնա»[39]:

Բայց Ֆրանկը (Հռոմի Պապը, խաչակրաց առաջին արշավանքի արձագանքն է), երբ սուրհանդակի միջոցով հայտնում է պատերազմ սկսելու, Սասունն ավերելու մասին, Խանդութ խանումը Դավթի անունից պատասխանում է, թե մենք քեզ ո՛չ ճանաչում ենք և ո՛չ էլ որևէ վնաս ենք տվել, ինչու ես կռիվ սկսում, բայց եթե պատերազմելու ես, մենք պատրաստ ենք[40]:

---

[38] Տես Մ. Զանփոլադյանի նշված աշխատությունը, էջ 181-191:
[39] «Սասունցի Դավիթ», Երևան, 1981, էջ 242:
[40] «Մենք քեզ զաքար մի չենք տվի,
Մենք քե չենք ճանչնա,
Մենք քե ի՞նչ եք արե,
Որ կըգաս մեր վերա կռիվ:
Մենք քո անունը չենք լսե,
Քո դավին մեզ հետ ի՞նչե»,
Ապա ավելացնում է. «Որ դու կըգաս մենակ մի գա
Չես կարի Դավթի վրա,
Ուրիշ թագավոր էլքե բեր մեր վերա
Թող էն գա, օգնի քե»:

Ահա սա է հայոց պատմավեպի, ասել է թե հայ ժողովրդի իդեալը: Կովի դաշտում քաջակորով, հակառակորդի շարքային զորայինների նկատմամբ ոչ թե թշնամանք, հալածանք, այլ մարդասիրական վերաբերմունք:

Էպոսում չկա կրոնական անհանդուրժողականություն, թեպետև կռիվը այլադավան օտարերկրացու դեմ է: Թշնամու դեմ պայքարը ոչ թե դավանանքի, այլ նրա հարկային ծանր բեռը թոթափելու, ազատ ապրելու համար է: Կրոնական տարբեր դավանանքներին որևէ նշանակություն չի տրվում:

Մսրա Մելիքի մայրը, երբ փորձում է նրան հաշտեցնել Դավիթի հետ, նրանց միջև հետևյալ խոսակցությունն է գնում.

«Մելիքն ասաց,- Մարե, ես արաբ եմ,
Դավիթ հայ է. էն ո՞նց կըլնի ինձի աղբեր:
Մելիք,- ասաց Իսմիլ խաթուն,-
է, քո խելք չի՞ կըտրի:
Շատեր՝ արաբ ու հայ, կըլնեն աղբեր.
Մեկ-մեկի տուն կերթան
Ու իրար շատ կ'օգնեն[41]:

«Սասունցի Դավիթ» էպոսը հայ ժողովրդի՝ օտար բռնակալության դեմ դարավոր պայքարը ներկայացնող աշխարհի էպիկական ստեղծագործությունների լավագույն հուշարձաններից է: Լայն ընդգրկումով, կառուցվածքի ամբողջականությամբ, ժողովրդավարությամբ, ազգային ոգին համակողմանիորեն արտահայտելու հատկանիշներով առանձնանում է շատ ժողովուրդների դյուցազնավեպերից: Հայկական էպոսի նշված հատկանիշները համամարդկային բնույթ ունեն, որոնք ձևավորվել, մշակվել են դարերի ընթացքում և բնորոշ են հայ ժողովրդին:

---

Բապ Ֆրանկի զորքի վրա, երբ Դավիթը հարձակվում է, և նրանք սկսում են փախչել, կանչում է. «է, մի փախեք, էլ չեմ սպանի
Ինձի ձեր թագավոր նշանց տվեք»: Թագավորին վերացնելուց հետո հորդորում է զինվորներին.
«Քանի դեռ ժիր եք, կռիվ մի երթա»:
Այսինքն, քանի կենդանի եք, խաղաղ մնացեք:
(«Սասունցի Դավիթ», Բիբլիոգրաֆիա, կազմեցին Մ. Բաբայանը և Ս. Միքայելյանը, Երևան, 1939, ներածությունը՝ Մ. Աբեղյանի, էջ LXXII):
[41] «Սասունցի Դավիթ», Երևան, 1981, էջ 210:

Մեծ անուն վաստակած երգ Ռոլանդի մասին ֆրանսիական էպոսի մասին վերևում ասվեց: Այն ասպետական բարքերի չգերազանցված գործ լինելով հանդերձ վերաբերվում է Ֆրանսիայի միջնադարյան պատմության միայն մի դրվագի:

Մասնագետները (Ն. Աղոնց, Հ. Օրբելի, Հ. Բարթիկյան) գտնում են, որ հայկական միջավայրին մերձավոր է բյուզանդական «Դիգենիս Ակրիտաս» էպոսը, որն առաջացել է Կապադովկիայում նույնպես արաբների դեմ պայքարի հենքի վրա, միևնույն դարաշրջանում: Վասիլի Դիգենիսը բյուզանդական նշանավոր ամիրայի զավակ էր: Նա բացառիկ ուժի տեր, պարտություն չիմացող, բարի, նուրբ հոգու տեր անձնավորություն էր: Ամուսնանում է Արևելյան Կապադովկիայի ստրատեգի գեղեցկուհի աղջկա՝ Եվդոկիայի հետ: Նրանք երջանիկ ապրում էին Եփրատի ափին՝ սահմանի վրա, որտեղ Դիգենիսը պատժում էր հարձակում կատարող ավազակներին: Նա երիտասարդ հասակում հիվանդանում է, մահից առաջ սիրելի կնոջը պատվիրում իրենից հետո ամուսնանալ: Եվդոկիան մեծ վշտից մահանում է հենց սիրեցյալի գրկում[42]: Շոթա Ռուսթավելու «Վագրենավորը» ստեղծվել է XII դարում՝ Վրաստանի հզորացման տարիներին՝ Թամար թագուհու ժամանակ: Դյուցազնավեպում արտահայտվել է XII դարի Վրաստանի հասարակական-քաղաքական կացությունը: Բանաստեղծն անհաշտ պայքարի է կոչում ընդդեմ չարի ու բռնության:

Համաեվրոպական հնչեղություն ունի գերմանական ազգային էպոսը՝ «Նիբելունգների երգը»: Այն առաջացել է XIII դարի սկզբներին, երբ Արևմուտքում ծաղկում էր ասպետական պոեզիան: էպոսի հիմքում ընկած է ժողովուրդների մեծ տեղաշարժերի պատմությունը: Նրանում հատուկ ուրվագծվում է V դարում Աթիլլայի գլխավորությամբ հոների կողմից բուրգունդական պետության կործանումը: Հոների անվանի առաջնորդն ամուսնա-

---

[42] Տե՛ս З. В. Удальцова, Византийская культура, Москва, 1988, стр. 145-149. Հ. Բարթիկյան , «Դիգենիս Ակրիտաս» էպոսը և Հարավային Հայաստանի նվաճումը Բյուզանդիայի կողմից (Հայ-բյուզանդական հետազոտություններ, հ. 1, Երևան, 2002, էջ 219-227):

նում է բուրգունդական թագուհու՝ Կրիմհիլդայի հետ: Վիպերգությունը Նիբելունգներ է կոչվել գանձերի տեր թզուկների անունով:

Պոեմի մյուս շերտը Կրիմհիլդայի վրիժառությունն է, արյունահեղ կռիվներն են և նրա ողբերգական վախճանը: Նիբելունգների գանձին տիրանալու համար դավաճանություն, սպանություններ են կատարվում: Այն ամբողջական, ավարտուն բարձրարժեք գեղարվեստական գործ է[43]:

«Ասք Իգորի գնդի մասին» XII դարի պոեմում իշխան Իգոր Սվյատոսլավիչը պոլովցիներից պաշտպանում է ռուսական տարածքները և պարտության մատնում թշնամիներին: Թուրքական ջոկատի դավաճանության պատճառով երկրորդ ճակատամարտում ռուսները պարտվում են, իսկ Իգորը՝ գերվում: Նա փախչում է գերությունից և հասնում իր երկիրը՝ հարազատ Դոն: «Ասքում» քարոզվում է պետության միասնության գաղափարը: Նրանում արտացոլվել են ռուս ժողովրդի հոգեկան աշխարհը, նրա ձգտումները, ընտանեկան, կենցաղային հարաբերությունները[44]: Այդուհանդերձ այս վիպերգությունը ևս նվիրված է պատմական մի իրադարձության:

Հայկական էպոսը հայ ժողովրդի դարավոր ազատագրական պայքարի գեղարվեստական ընդհանրացումն է: Այնքան, որքան այդ պայքարը եղել է շարունակական, հայկական պատմավեպն էլ մշտապես նորացվել, համալրվել է և մնացել թարմ ու կենդանի:

«Սասունցի Դավիթ» էպոսը ձևավորվեց զարգացած միջնադարում: Դա ինքնին խոսուն փաստ է: Գրականության, արվեստի, մշակույթի բոլոր բնագավառներում վերելք ապրող այդ դարաշրջանը բնական է, որ իր ազդեցությունն է ունեցել պատմավեպի վրա: Էպոսում մեծ տեղ է տրվում կանանց, որոնք հանդես են գալիս արժանապատիվ կեցվածքով: Ազատ սիրո գաղափարն է քարոզվում նրանում: Սիրո, գեղեցկության ազատ արծարծումները,

---

43 Песнь о Нибелунгах, Ленинград, 1972. Хоислер А., Германский эпос и сказание о Нибелунгах, Москва, 1960. «Նիբելունգների երգը», գերմանական ազգային էպոս. աշխատասիրությամբ՝ Արա Առաքելյանի, Երևան, 2007:

44 Տե՛ս Ղ. Այվազյան, Ռուս հին գրականության մեծագույն հուշարձանը (ՊԲՀ, 1985, N 3):

որոնք բնորոշ են դարաշրջանի գեղարվեստական գրականության, իրենց արտացոլումն են գտել պատմավեպում:

Աշխարհիկ մտածողության որոշակի դրսևորումը, որ նկատվում է զարգացած միջնադարի գրականության ու արվեստի մեջ, ուժգին ու լիաքոք է արտահայտվել էպոսում[45]:

Պատմության հոլովույթում օտարերկրյա հզոր ուժերը հաճախ ավերել են երկիրը, ոչնչացրել պատմական հուշարձանները, հոգևոր և աշխարհիկ շինությունները, բայց չեն կարողացել ընկճել հայ ժողովրդի ազատության ձգտող կենդանի ոգին: Սա է «Սասունցի Դավիթ» հերոսական էպոսի հիմնական գաղափարը, նրա էությունը:

Էպոսում այնքան բնական և հմտորեն են ընդհանրացված հայ ժողովրդի պայքարը, նրա մարդասիրական ձգտումներն ու իղձերը, արդար ու խաղաղ, խղճի մտոք ապրելու հատկությունները, ազատությունը, ազնվությունը, վեհանձնությունը, այլ խոսքով նրա ազգային ինքնությունը, որ հազար տարուց ավելի է՝ չի իջնում ժողովրդի շուրթերից, նրա հիշողությունից, այլ լիցք է հաղորդում նրան իր մաքառումների ընթացքում: Որքան էլ փոփոխվել են հասարակարգերը, քաղաքակրթվել է ժողովուրդը, միջնադարից եկող հայ դյուցազնական էպոսը մնացել է ժողովրդի հոգեբանությանը հարազատ:

---

[45] Տե՛ս Հ. Ժամկոչյան, XII–XIII դդ. ազդեցությունը «Սասունցի Դավիթ» էպոսի վարիանտներում: («Սասունցի Դավիթ», Երևան, 1939, հոդվածների ժողովածուում):

## II. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

### 1.ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

ժողովրդական ստեղծագործությունը՝ էպոսը, թերևս հայրենները, նպաստում են գեղարվեստական գրականության զարգացման համար: Բնական է, որ Գրիգոր Նարեկացու ստեղծագործություններում լայնորեն օգտագործված է ժողովրդական բանահյուսությունը, հայրենների չափը, որոնք առհասարակ ստեղծագործելու հարուստ ակունք են:

Գրիգոր Նարեկացին ապրել և ստեղծագործել է X դարի երկրորդ կեսին Վասպուրական նահանգի Ռշտունիք գավառի Նարեկ գյուղի համանուն վանքում: Նա ծնվել է X դարի 40-ական թվականների վերջին կամ 50-ականների սկզբին, թերևս ավելի ընդունելի ժամանակը 951 թվականն է, իսկ մահացել է XI դարի սկզբին՝ 1003 թվին: Նա ծնվել ու հասակ է առել հոգևորականի, գրասեր մտավորական Խոսրով Անձևացու ընտանիքում: Ուներ երկու եղբայր՝ Հովհաննեսը և Սահակը, որոնցից մտավոր ոլորտում գործակցել և գովեստով է արտահայտվել Հովհաննեսի՝ ավագ եղբոր մասին: Նրանց ընտանիքն աչքի էր ընկնում և վայելում էր աշխարհիկ և հոգևոր բարձրագույն իշխանավորների հովանավորությունը:

Նարեկա վանքը կառուցվել է 930-ական թվականների վերջերին: Այստեղ հոգեմտավոր կյանքի ձևավորման ու զարգացման ընթացքը համընկնում էր հայկական անկախ պետականության քաղաքական, տնտեսական և մշակութային վերելքի հետ, որը և ստեղծագործական ընդհանուր բարենպաստ պայմաններ էր ընձեռում: Նարեկի և մյուս վանական դպրոցների արգասավոր գործունեությանը նպաստեց նաև այն պարագան, որ Ռոմանոս Ա. Լակապենոս կայսրի օրոք Բյուզանդիայում ծայր առան հայ հոգևորականության հալածանքները, որոնց հետևանքով հոգևորականության ներհոսք սկսվեց դեպի Հայաստան: Նրանցից շատերը հմուտ էին հելլենական գիտության, կրթության ու արվեստների մեջ և խթանեցին տեսական մտքի առաջադիմությունը: Նրանք

նպաստեցին թարգմանական գրականության ծավալմանը, հայկական միջավայր ներմուծելուն, այլ խոսքով՝ գիտատեսական խաչասերումներին[46]: Տեղում՝ Նարեկյան վանքում, դպրոցն ուներ գրադարան-մատենադարան, այլ խոսքով՝ ստեղծագործական աշխատանքի համար հարմարավետ պայմաններ: Նարեկյան դպրոցը գոյատևեց մինչև XI դարի 20-ական թվականները՝ մինչև Վասպուրականի թագավորության վերացումը 1021 թ.: Անանիա Նարեկացու Նարեկա վանքի առաջնորդության ժամանակ խոսրով Անձևացին իր երկու զավակներին հանձնում է նրա խնամակալությանը:

Ուսումնասիրողները Գրիգոր Նարեկացու ստեղծագործությունների գրական ակունքներին անդրադառնալու ժամանակ, որպես կանոն, նրան առնչել են նախորդ դարաշրջանի, վաղ միջնադարի գրական ժառանգության հետ: Նարեկացու ապրած ժամանակաշրջանի ու միջավայրի, Նարեկյան դպրոցի ու նրա առաջնորդ Անանիա Նարեկացու մասին բավարարվել են շատ համառոտ, հաճախ թռուցիկ ակնարկներով: Գիտաստեղծագործական իր կյանքը գերազանցապես Գրիգոր Նարեկացու ժառանգության ուսումնասիրությանը նվիրած բանասեր Հրաչյա Թամրազյանը հատուկ հետազոտել և առանձին մենագրություններ է նվիրել այդ հիմնահարցին[47]: Նա հանգամանորեն անդրադառնում է Նարեկյան դպրոցի երեք նշանավոր գործիչների՝ Խոսրով Անձևացու, Անանիա և Գրիգոր Նարեկացիների ստեղծագործություններին:

Անձևացու գրական ժառանգության մեջ կարևոր է «Մեկնութիւն ժամակարգութեան» աշխատությունը, որը կրթական ձեռնարկ է: Նա փորձում է բացահայտել արարողապաշտության, աղոթքների և սաղմոսների ներքին իմաստը: Հավատացյալների համար առաջնային է համարում Սուրբ գրքի և հոգևոր այլ գործերի ընթերցանությունը, ուսումնասիրությունը և մեկնաբանությու-

[46] Տե՛ս Հրաչյա Թամրազյան, Սուրբ Գրիգոր Նարեկացու կյանքը, Երևան, 2003, էջ 26-27:

[47] Տե՛ս Հրաչյա Թամրազյան, Անանիա Նարեկացի. կյանքը և մատենագրությունը, Երևան, 1986, Նարեկյան դպրոցը, Երևան, 1999, Գրիգոր Նարեկացին և նեոպլատոնականությունը, Երևան, 2004, Գրիգոր Նարեկացին և Կիլիկիայի բանաստեղծական արվեստի դպրոցը, Երևան, 2007:

նը: Անձնացին «Առ վասն եկեղեցականս» խրատում, մերժելով օտարամոլությունը, ընդգծում է հայոց լեզվի, հայ գրի նշանակությունը[48]:

Խրատելու մեթոդով, խրատաբանությամբ հեղինակն ընթերցողին է հասցնում անհրաժեշտ գիտելիքները: Խրատական գործերում նա քննարկում է քրիստոնեական բարոյագիտական նորմերը և անհրաժեշտ է համարում դրանց պահպանումը: Անձեվացին «Մեկնութիւն ժամակարգութեան» երկի մեջ և առանձին խրատներում քննում է կենցաղավարության, բարոյական մաքրագործության խնդիրները: Նրա ուշադրության կենտրոնում է մարդը՝ իր հուզաշխարհով: Դրանից նա անցում է կատարում դեպի հոգևոր արվեստը՝ սաղմոսներն ու աղոթքները[49]: Անձևացու բարոյագիտական հայացքներն ու աղոթքի տեսությունը վկայում են, որ նա իր դավանած սկզբունքներով հարում էր արևելաքրիստոնեական միստիկայի բարոյագործնական ուղղությանը, որը զարգացավ Անանիա և Գրիգոր Նարեկացիների երկերում[50]:

Ռ. Թամրազյանն առավել մանրախույզ հետազոտում է Անանիա Նարեկացու կյանքն ու գործը՝ լիարժեք բացահայտելու այն միջավայրն ու պայմանները, որում աճել, ստեղծագործել է Գրիգոր Նարեկացին: Նարեկյան դպրոցի գործիչները սերտորեն համագործակցում էին: Դրանում թերևս նշանակություն ուներ նաև այն հանգամանքը, որ բարեկամական կապերով կապված էին իրար հետ: Անանիա Նարեկացին Գրիգոր Նարեկացու մոր հորեղբոր որդին էր:

Նարեկա վանքը դարձել էր մատենագիտական, աստվածաբանական-փիլիսոփայական, գիտական-ստեղծագործական արգասավոր կյանքով ապրող մի կենտրոն: Վանքի և նրա դպրոցի առաջնորդն ընդունված անուն էր որպես աստվածաբան, մատենագիր, բանաստեղծ, երաժիշտ, լայն մտահորիզոնի տեր գործիչ: Նա մեծ համարում ուներ մտավոր կյանքում[51]: Նարեկյան դպրոցի գիտակրթական համակարգի հիմքում ընկած էր նորպլատոն-

---

[48] Տե՛ս Հրաչյա Թամրազյան, Նարեկյան դպրոցը, էջ 43-47:
[49] Նույն տեղում, էջ 79:
[50] Նույն տեղում, էջ 91:
[51] Նույն տեղում, էջ 33, 329-330:

նական փիլիսոփայությունը իր քրիստոնեացված և աշխարհիկ շերտերով: Նրանք ծանոթ էին նախորդ դարաշրջանի հայ գիտական մտքի, հունաբան դպրոցի ներկայացուցիչների (Դավիթ Անհաղթ, Դավիթ Քերական, Ստեփանոս Սյունեցի, Անանիա Շիրակացի) գործերին: Օգտագործել են նաև անտիկ հեղինակների (Պլատոն, Արիստոտել և ուրիշներ) աշխատությունները: Ա. Նարեկացու խրատները լայն տարածում են գտել, դրանցում հարուստ նյութեր կան վանական կենցաղավարության, բարոյագիտական միստիկայի ու նրա առանձնահատկությունների մասին: Այդուհանդերձ, խրատաշարքում գլխավորը մարդու մաքրման, փրկության խորհուրդն է: Նրա այդ գործերում երևան են գալիս հեղինակի վերաբերմունքը լեզվի ու պատկերավոր մտածողության վերաբերյալ[52]: Ա. Նարեկացին քաղկեդոնիկ ուսմունքի դեմ մաքառող նշանավոր տեսաբաններից էր: Այդ խնդրին է նվիրված նրա «Յաւատարմատոն» երկը: Նրա նշանավոր գործերից է «Յականառութիւն ընդդէմ թոնդրակեցւոց» աշխատությունը, որը հոգևոր շրջաններում գիտական լայն համարում ուներ: Նա խրատական բազմաթիվ աշխատությունների հեղինակ է: Իր հայացքներով, բարոյագիտական սկզբունքներով արևելաքրիստոնեական միստիկայի ներկայացուցիչ է: Գնահատելի է Անանիա Նարեկացու կողմից անտիկ հեղինակների տեսական ժառանգությունը նորովի, իր ժամանակի պահանջների ոգով օգտագործումը: Նա ձգտել է հոգևոր ժանրեր ներմուծել աշխարհիկ արվեստի սկզբունքները:

Նարեկյան դպրոցը կարևոր մի օղակ է եղել նախորդ դարերի աշխարհիկ մտքի ժառանգության պահպանումը և հաջորդ սերունդներին փոխանցելը իրականացնելու հարցում[53]: Նա սկիզբ է դրել բանաստեղծական արվեստի մի դպրոցի, որը կոչված էր նոր ընթացք տալու հայ հոգևոր պոեզիայի առաջընթացին: Նարեկյան դպրոցի այս երկու նշանավոր դեմքերը՝ Անանիա և Գրի-

---

[52] Տե՛ս Յ.Յ. Թամրազյան, Անանիա Նարեկացի, էջ 223-244: Ա. Նարեկացու «Գիր խոստովանութեան» աշխատանքը հայտնաբերել է Գալուստ Տեր – Մկրտչյանը և 1892 թ. հրատարակել «Արարատ» ամսագրում, ապա տպագրվել է նրա հայագիտական ուսումնասիրություններում (տե՛ս Գ. Տեր – Մկրտչյան, Յայագիտական ուսումնասիրություններ, գիրք Ա, Երևան, 1979, էջ 224-234):

[53] Նույն տեղում, էջ 333:

գոր Նարեկացիները, ստեղծագործական կապերի մեջ են եղել: Հ. Թամրազյանը համոզիչ լուսաբանում է ստեղծագործական այն մթնոլորտը, այն միջավայրը, որը չէր կարող իր որոշակի ազդեցությունը չունենալ Գրիգոր Նարեկացու վրա: Նա մի շարք վկայությունների հիման վրա գալիս է այն հետևության, որ Գր. Նարեկացու մեծանուն գործի՝ «Մատյան ողբերգության» ստեղծման գաղափարն առնչվում է Անանիա Նարեկացու անվան հետ: Վերջինս ստեղծագործել է մինչև X դարի 90 – ական թվականները, իսկ աշակերտը՝ Գր. Նարեկացին՝ մինչև 1003 թվականը: Նշանակում է, որ ուսուցիչն ու աշակերտը շուրջ մեկ ու կես տասնամյակ համատեղ ստեղծագործական կյանք են ունեցել: Ա. Նարեկացու մահից հետո նրան փոխարինել և վարդապետարանը գլխավորել է Գրիգոր Նարեկացին: Նշանակում է, որ «Մատյան ողբերգության» գործի հեղինակը չի եղել մեկուսի ստեղծագործող, իր խոսքերով ասած «կղզիացած հանճար»[54]:

Հոգեմտավոր սնունդ ստանալով Նարեկյան դպրոցի պարարտ միջավայրում, Գրիգոր Նարեկացին հուժկու թռիչքով հետևում թողեց այդ դպրոցը և ստեղծեց դարակազմիկ արժեքներ: Նրանից մեզ են հասել գանձեր, տաղեր, մեկնություններ, ներբողներ և «Մատեան ողբերգութեան» ստեղծագործությունը:

Նա հայ գրականության մեջ նոր դարագլուխ է բացում իր տաղերով և հատկապես «Մատեան ողբերգութեան» պոեմով: «Այն հանճարեղ բանաստեղծը,- գրում է Հրանտ Թամրազյանը – որ «Մատյանով...» ու տաղերով նոր լիցք է հաղորդել միջնադարյան աշխարհիկ պոեզիային, ստեղծել է նաև գրական-քննադատական հայացքների ուրույն համակարգ՝ կապված գրական նոր շարժման ու փործի հետ: Նա հաղթահարել է բազում արգելքներ ու քարացած ավանդներ, հայտնել շատ խոր ու նոր մտքեր, ո-

---

[54] Նույն տեղում, էջ 329: Անվանի բանասեր Պ. Խաչատրյանը «Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը» (Ս. Էջմիածին, 1996 թ.) ուսումնասիրության ամփոփման մեջ նշում է. «Նարեկացին չի ապրել ներփակ, իրականությունից կտրված ու մեկուսացած կյանքով» (էջ 380): Նա այդ կարծիքին է հանգում Նարեկացու կյանքի ու գործի մատենագրական քննարկման միջոցով: Հ. Թամրազյանը, ինչպես տեսանք, նման եզրակացության է հանգում Նարեկյան դպրոցի պատմության, այն միջավայրի ու մթնոլորտի բացահայտման միջոցով, որում ձևավորվել ու աճել է Գր. Նարեկացին:

րոնք չէին կարող ծնվել սոսկ տարերային ոգևորությունից: Նարեկացին նաև մտահոգ էր, խոհական մարդ, լավ գիտեր և՛ ուրիշների փորձը, և՛ սեփական ճանապարհի խորհուրդը: Այստեղ փորձի ու տաղանդի հետ խոշոր դեր է խաղացել նաև գրական կրթությունը»[55]: Նարեկացին իր տաղերում, ինչպես ճիշտ նկատել է բանասեր Մ. Մկրյանը, արտահայտել է ժողովրդի վարքն ու բարքը, արժևորել է բնությունը, մարդուն, նրա ապրումներն ու աշխատանքը: Բնության պաշտամունքը բանաստեղծորեն լավագույնս արտահայտվել է «Վարդավառի տաղում».

Գոհար վարդն վառ առեալ
ի վեհից վարսիցն արփենից:
Ի վեր ի վերայ վարսից
ծաւալէր ծաղիկ ծովային:
Ի համատարած ծովէն
պղպջէր գոյնն այն ծաղկին,
Երփին երփնունակ ծաղկին
շողշողէր պտուղն ի ճղին[56]:

Տաղերը, որոնք նոր ու թարմ շունչ են բերում հայ պոեզիային, բանաստեղծաերաժշտական ստեղծագործություններ են, նրանց մասին խոսք կլինի հետագա էջերում՝ երաժշտության բաժնում:

«Մատեան ողբերգութեան» 95 գլխից կազմված պոեմը Նարեկացին ամբողջությամբ նվիրել է համամարդկային գաղափարների: Եվ ինչպես նկատել է Արշակ Չոպանյանը, արծարծվում են զգացմունքի անենայն անկեղծությունը և մտքի անկաշկանդ անկախությունը[57]: Ամբողջ պոեմը շնչում է այդ երկու կարևոր հատկանիշներով: Նա կարողացել է մարդուն ներկայացնել լայն ընդգրկումով ու ամբողջ խորությամբ՝ իր ամենամարդկային, ամենախորունկ ու նուրբ ծալքերով, իր ապրումների, խոհերի, հակասությունների ալեկոծությունների մեջ: Այլ խոսքով, ինչպես իրավամբ շեշտում է Հրանտ Թամրազյանը, Նարեկացին իր ծավա-

---

[55] Հրանտ Թամրազյան , Երկեր, Ա, Երևան, 2006, էջ 420:
[56] Տե՛ս Մ. Մկրյան, Գրիգոր Նարեկացի, Երևան, 1955, էջ 144-145:
[57] Տե՛ս Արշակ Չոպանեան, Դեմքեր, Փարիզ, 1924, էջ 23:

լուն պոեմի կենտրոնական հերոս է դարձնում երկրային մարդուն[58]:

Նույն միտքն է արտահայտում Մարտիրոս Սարյանը՝ արվեստագետի հայացքով դիտարկելով Նարեկացու ստեղծագործությունը: Մշակույթի հիմնահարցերի մասին շատ խոր և ընդգրկուն դիտարկումներ ունեցող մեծ արվեստագետը, որը հենվում և սնվում էր երկրի բնական ակունքներից, միջնադարյան Հայաստանի արվեստի հարցերին անդրադառնալով, գրում է. «Հիշենք Գրիգոր Նարեկացուն: Ուզում է աստծո հետ միանալ՝ հողից չկտրվելով, հողին կառչելով: Հանճարի նրա պոռթկումը և մտքի թռիչքը, աստծուն միանալու նրա ձգտումը հողեղեն, գերագույն իմաստով հողեղեն հալոցք, հողեղեն խորհուրդ ունեն: Աստծո հանդեպ նրա հավատն ու սերը հողեղեն մղումներով են հագեցած»[59]:

Նարեկացին ձգտում է հասնել, միանալ Աստծուն, բայց մարդը ապրում է բնական աշխարհում, որը նրան անդադար հանցանքների է մղում: Հետևաբար Աստծուն հասնելու համար նա պետք է հոգեպես մաքրվի, գործած բազմապիսի մեղքերի համար թողություն հայցի: Ներման հասնելու համար մարդը պետք է ապաշխարի, աղոթի, իր զգացումները բացահայտի, խարազանի, մերկացնի իրեն: Նարեկացուն թվում, թե որքան ձգտում է մոտենալ Աստծուն, այնքան նա հեռանում է, ինչքան Աստված հեռանում է իրենից, այնքան սաստկանում է նրան հասնելու տենչը: Այստեղից ծայր է առնում միստիկ ողբերգությունը: Նարեկացին, ինչպես նաև Նարեկյան դպրոցի մյուս դեմքերը, միստիկ էին: Միստիցիզմը կամ խորհրդապաշտությունը ներառում է հոգու՝ որպես բացարձակ էության գոյության գաղափարը:

Նա սարսափում է Աստծու անաչառ դատաստանից, քանի որ Աստծուն ամեն ինչ հայտնի է, նրանից գաղտնիք պահել հնարավոր չէ: Սակայն սեփական մեղքերի անմնադաժան խոստովանության միջոցով ծագում է փրկվելու հույսը: Մարդու մեղքերը քանի որ անթիվ-անհամար են, և մի մեղքից ծնվում է մեկ ուրիշը,

---

[58] Տե՛ս Հրանտ Թամրազյան, Երկեր, Ա, էջ 400:
[59] Տե՛ս Մարտիրոս Սարյան, Արվեստի մասին, կազմեցին՝ Վ. Հ. Մաքևոսյան, Յու. Գ. Խաչատրյան, Երևան, 1986, էջ 162:

մարդու վիճակը դառնում է հուսահատական: Այդ վիճակից դուրս գալու միակ ելքը ինքնախարազանումը թողնելը և հույսի ու սիրո ուղիով Աստծուն միանալն է: Դրան հասնելուն կարող է օժանդակել Քրիստոսը, սակայն պետք է հավատ ունենալ, որը մարդուն կարող է մոտեցնել Աստծուն:

Յավատի միջոցով Աստծու հետ հարաբերվելու վստահություն է առաջանում, բայց բանաստեղծի լավատեսությունը երկար չի տևում: Նա կրկին անդրադառնում է իր մեղքերին, մեծացնում է նրանց չափը, համակում է նրան կասկածը՝ իր ապաշխարանքը տե՞ղ է հասել, թե՞ ոչ: Արդյոք Աստծո համար ընդունելի՞ է եղել իր ապաշխարանքը: Բանաստեղծը սկսում է հրապարակ հանել նոր մեղքեր, որոնք նախկին մեղքերից ավելի ծանր են: Ինքնախարազանման ու հուսահատության այդ ծանր պահին նա դիմում է Աստվածածնին, որը նրա մեջ ամրապնդում է փրկվելու հավատը:

Պոեմի վերջում հեղինակը գալիս է այն համոզման, որ իր ապրումները տվել են իրենց արդյունքը, որ ինքը վերջապես ազատվել է բոլոր մեղքերից:

Նարեկացու պոեմի առանցքն է կազմում հակադրությունների անվերջ պայքարը: Նրա ներքին աշխարհի ալեկոծությունը գալիս է հենց երկու հակադիր կողմերի անընդհատ պայքարից: Ինչպես տեղին նշել է գրականագետ Ժենյա Քալանթարյանը, Նարեկացու պոեմում մարդը հոգով ձգտում է դեպի բարոյապես մաքուր, անարատ կյանք, դեպի սրբություն, բայց ինքն ապրում է նյութական կյանքի բազմերանգ պահանջների թելադրանքով: Այս երկու բևեռային հակասությունների անվերջ պայքարի մեջ է մարդը:

«Մատյանը,- գրում է Ժ. Քալանթարյանը,- արտացոլում է ալեկոծ հոգու հավերժական պայքարը: Մարդը հոգով ձգտում է դեպի սրբությունը, անարատը, իդեալը, դեպի Աստված ու նրա խորհուրդները, բայց մարմինն ապրում է աշխարհիկ կյանքով, նյութական ցանկություններով, և այս երկու բևեռների միջև մար-

դը հավերժորեն պատեպատ է խփվում: Մարդու թշնամին իր ներսում է, նա է հոգու և մարմնի դրդիչը»[60]:

Մարդը իր սրտում ամբարել է չարը և բարին, սևը և սպիտակը, լույսը և ստվերը և հանդես է գալիս այն ամենի դեմ, որը ստորացնում է մարդու մեջ մարդուն:

Նա Աստծուն աղոթում է Ադամի ադամորդիների բոլոր մեղքերից փրկության համար:

Նարեկացին հանդես է գալիս որպես միջնորդ Աստծու և մարդու միջև: Նրա մոտ ինքնախարազանումը սահման չունի: Արատներից մաքրվելու, ապաշխարելու միջոցով նա ձգտում է նրան, որ մարդը լինվին մաքրվի մեղքերից և ձուլվի Աստծու հետ: Մարդը, միանալով Աստծու հետ, չի կորցնում իր անձը, ինքնությունը՝ մարդը Աստծու մեջ և Աստված ինքը՝ մարդու մեջ: Նարեկացու մաքրված հոգին ձգտում է անմահության: Նա սիրում է կյանքը, նա ջանում է ջնջել Աստծո ամենասիրելի արարածի՝ մարդու և Աստծո միջև եղած տարբերությունը, հավատում է մարդու աստվածացմանը: Նա տառապում է իրական աշխարհի երևույթները ճանաչելու, վերջնական ճշմարտության հասնելու համար, բայց և հասկանում է, որ անհնար է դրան հասնել:

Նարեկացու ողբերգությունը գալիս է մարդու և կյանքի նկատմամբ ունեցած ջերմ սիրուց: Մարդկային արատներն ընդգծելով՝ նա ընթերցողի մեջ առաջացնում է դրա հակադիր կողմը՝ դրականի պատկերացումը: Նարեկացին այնպիսի խնդիրների է անդրադառնում, որոնք ընդհանուր, համամարդկային են և չեն առնչվում որոշակի մարդուն կամ որևէ ժողովրդի: Սակայն նա այնքան առատորեն է օգտագործում ժողովրդական բանահյուսությունը, հեթանոսական շրջանից սկսած, որ պոեմը լիովին դառնում է ազգային: Չէ՞ որ ողբը, ողբերգությունը հնուց ի վեր եղել է ժողովրդական բանահյուսության կարևոր բաղադրիչներից մեկը: Նա գեղեցիկ պատկերներ է ստեղծում իրական կյանքից վերցրած համեմատություններով, փոխաբերություններով: Ամբողջ պոեմը շնչում է երկրային մարմիններից, կենդանական աշխարհից, տիեզերքից վերցրած նկարագրություններով, քանի

---

[60] Ժենյա Քալանթարյան, Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմի և սաղմոսների առնչությունները, Ս. Էջմիածին, 1997, էջ 37:

որ մարդ Աստծուն կարող է ճանաչել նրա ստեղծած արարածներով (Պողոս առաքյալ):

Նարեկացին ջանում է այնպես անել, որ Աստված լսի իրեն և կատարի իր ցանկությունները: Ինքը հասնի իր հանգրվանին լիովին մաքրված, բերքով առատ ու երջանիկ: Ուստի նա չպետք է իրեն խանգարի, այլ պետք է հաշվի նստի իր հետ, քանի որ նա Աստված է, մարդասեր է, գթասեր է, խնամող է:

Նարեկացին մեծ նշանակություն էր տալիս խոսքին, որը աստվածային ներշնչանքի արդյունք է համարում: Այն ժամանակվա գրաբարը, ինչպես ճիշտ նկատում է Մ. Մկրյանը, չէր կարող արտահայտել նրա մտքերի ողջ նրբությունները, երանգները: Նա ինքն է պատկերավոր խոսքով հանդես գալիս, օգտագործում շատ անսովոր արտահայտություններ, օրինակ՝ խոսքի պատկեր, խոսքի լռություն, շնորհված ձիրք, անխզելի կապ, անզիջելի պատճառ, հիացման տեսիլ, անչափելի խորություն և այլն: Նույն ձևով օգտագործում է խոսուն բառեր՝ «ինքնաբուն բարի», «անմերձենալի», «անհմանալի», «անճանաչելի», «անորոնելի» և այլն: Նա իր արվեստը համարում է լեզվի զորության արվեստ, իսկ խոսքը կամ բանը Հիսուսն է, աստվածային ներշնչանքի ակունքը:

Նա ստեղծում է պատկերներ, որոնք որակական որոշակի խտացումներ ունեն, «ամենափայլ ճառագայթներ», «անապական անձրև», «արփիացնող ցող», «աղքատասեր պաշտպան», «աննահանջելի հրաման», «անխարդախ ընթացք», «անգայթակղելի ելք», «անխարդախ պատիվ» և այլն:

Հայ շատ բանասերներ են անդրադարձել Գր. Նարեկացու ստեղծագործություններին և տվել ուշագրավ բնութագրումներ:

«Եվ իրոք,- գրում է Մ. Մկրյանը,- Նարեկացու պոետիկական կուլտուրան այնպիսի վիթխարի մեծություն ու բարձրություն ունի, որ նայողը գլխապտույտ է ունենում. նրա բանաստեղծական արտահայտչական ձևերն ու միջոցներն անհաշիվ են ու անսպառ, անսահման բազմազան են ու աներևակայելի չափով գունագեղ, իսկ նրա բառարանը հայ բոլոր գրողների բառարան-

ների ամենահարուստն է»[61]: Նրա լեզուն հարուստ է, պատկերավոր ու ճկուն:

Այսպիսով, Նարեկացին իր ծավալուն պոեմի կենտրոնական հերոս է դարձնում երկրային իր հոգեկան ապրումները՝ ողջ հակասական բարդություններով: Բանաստեղծն իր տաղանդի ուժով ընկալում է բոլոր քրիստոնյաների ցավերն ու երազանքները: Նա իր անձնականի միջոցով ի հայտ է բերում օրինաչափություններ, արտահայտում համամարդկային երևույթներ:

Բանաստեղծի համար նեղ էին տիրապետող, դոգմայի ուժ ձեռք բերած, գրական կանոնները, և նա ճեղքեց այդ կապանքները:

«Գրական փորձի ընթացքում,- գրում է Հրանտ Թամրազյանը,- հանճարը, իրեն նեղ զգալով տեսական հայտնի կաղապարների մեջ, դուրս է եկել մեծ հայտնագործությունների ուղին: Իրար են միացել հանճարեղ բանաստեղծը, փիլիսոփան և մտածողը, որի շնորհիվ ծնվել ու ձևավորվել են նոր դարաշրջանի գեղարվեստական մտածողության սկզբունքները՝ ուշագրավ նաև համաշխարհային գրական մտքի զարգացման առումով»[62]:

Եվ ապա անդրադառնալով Նարեկացու բերած նորությանը՝ նշում է. «Ամենից առաջ ինքնին նորություն էր, որ սրբերի ու Աստծո մասին գրված, կաղապարված ոտանավորների փոխարեն նա ուշադրություն է հրավիրում մարդկանց արատների ու գործերի արտացոլման վրա՝ վերածնելով հեռավոր նախորդների աշխարհիկ ավանդները: Բայց նա առաջ է գնում՝ հենց իր գրքի օրինակի վրա ցայտուն ընդգծելով ոչ միայն արտաքին անցքերի ու գործերի, այլև հատկապես մարդկային հոգու բարդ շարժման արտացոլման, մարդու ներքին բնության հետազոտության, անդունդների խորությունը չափելու և ի հայտ բերելու խնդիրը, որն ամենաբարդն ու ամենաէականն է արվեստի մեջ»[63]:

«Մատյանը» հավերժական արժեք ունեցող գործ է՝ գրված բոլոր քրիստոնյաների, գալիք սերունդների, համայն մարդկության համար:

---

[61] Մ. Մկրյան, նույն տեղում, էջ 214:
[62] Հրանտ Թամրազյան, նույն տեղում, էջ 421:
[63] Նույն տեղում, էջ 438-439:

«Մատեան ողբերգութեան» ամբողջ պոեմը անկեղծ ու անկաշկանդ զրույց է Աստծու հետ մարդկանց բազում ու բազմապիսի մեղքերից ազատագրվելու, նրանց փիլիսոփայաաստվածաբանական մոտեցմամբ բարոյապես կատարելագործելու: Այդ մասին ընդգրկունն ու խորաթափանց է ասել մեծ բանաստեղծ ու մտածող Յովհաննես Թումանյանը: Խոսելով Խաչատուր Աբովյանի արձանի բացման առիթով՝ առաջարկում է. «Սրա նման մի կրթող էլ կա, որ թերևս մի օր հայությունը կբարձրացնի Վանա ծովի ափերին, Նարեկա ժայռերի վրա, որ նա էլ երկնքին պատմի, «ի խորոց սրտի» աստուծո հետ խոսի ու դեպի վեր ուղղի «Ձայն հառաչանաց հեծութեան սրտի ողբոց աղաղակի»... Եվ կատարյալ կլինի: Թող լսեն և՛ երկինքը, և՛ երկիրը: Եվ պետք է լսել, որովհետև այստեղ արդեն հայի լեզուն չի, որ խոսում է, բերանը չի, որ պատմում է, կրակված սիրտն է, որ այրվում է երկիրը բռնած, տանջված հոգին է, որ մռնչում է մինչև երկինք»[64]:

Հետաքրքիր է իմանալ, թե ինչ չափանիշներով են Նարեկացու ստեղծագործությունը գնահատում օտարազգի մասնագետները: «Մատեան ողբերգութեանը» համաշխարհային չափանիշներով արժևորելու հայ մասնագետների տեսակետներին նրանք համերաշխո՞ւմ են, թե՞ ոչ:

Նարեկացու աշխատությանը բազմիցս անդրադարձած ռուս նշանավոր բանասեր Ս. Ս. Ավերինցևը հետևյալ բնութագիրն է տալիս. «...Поет написал для всех людей и на все времена. Именно она веками жила в памяти народа и будет жить во всемирной памяти культуры»[65]. Այդ նույն միտքը նա արտահայտել է նաև մեկ այլ առիթով[66]:

Ռուս նշանավոր բանաստեղծ-գրականագետ Վ. Ռոգովը Նարեկացու մասին գրել է. «Եթե հայ ժողովուրդը իր հոգու բան-

---

[64] Յովհաննես Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. վեցերորդ, Երևան, 1994, էջ 265-266: Յատկանշական է, որ տարբեր դարաշրջանների գեղարվեստի հայ հանճարները՝ Գրիգոր Նարեկացին, Խաչատուր Աբովյանը և Յովհաննես Թումանյանը, մի ընդգծված ընդհանրություն են ունեցել: Նրանք իրենց ստեղծագործություններում մշտապես հենվել և առատորեն օգտագործել են ժողովրդական բանահյուսությունը:

[65] Книга скорбных песнопении, Москва, 1988, с. 15.

[66] Տե՛ս С. Аверинцев, Роскошь узора и глубины сердца, Поэзия Гр. Нарекаци („Литературная Армения, 1986, N 1, с. 53").

կարծեք ոսկեսփյուռներից կարողանար ներկայացնել միայն այս կերտվածքը, ապա այդ դեպքում էլ անգամ նրա համար ապահովված կլիներ ամենապատվավոր տեղերից մեկը համաշխարհային մշակույթի պանթեոնում»[67]:

Ռուս նշանավոր բանաստեղծ Միխայիլ Դուդինը Նարեկացուն համարում է ճշմարտության էությանը ձգտող հանճարեղ պոետ. «... նույնիսկ,- գրում է նա,- կրոնական անխախտ դոգմաները, տարբեր կողմերից իմաստավորվելով հանճարի քննախույզ բանականությամբ, օրինականացված քարացածությունից վեր են ածվում ելք փնտրող մտքի կենդանի տրոփյունի»[68]:

Ռուս քննադատ Լև Օզերովը ուշագրավ դիտարկում է կատարում. «Նարեկացու ինքնաճանաչումը,- գրում է նա,- փիլիսոփայի ուժի և խորության է հասնում, իր ժամանակից շատ առաջ է անցնում: Դանթեից երեք և Շեքսպիրից վեց դար առաջ նա մարդու հոգուն պատկերացնում է տվել իր մասին, որ չի տեղավորվում ո՛չ դժոխքում, ո՛չ դրախտում»[69]:

Ֆրանսիացի նշանավոր հայագետ Ժան Պիեռ Մահեն նույնպես համաշխարհային գրականության համատեքստում խորապես ուսումնասիրել և շատ բարձր է գնահատել Նարեկացու անմահ երկը և այն թարգմանել ֆրանսերենի:

Գրիգոր Նարեկացին մեծ ազդեցություն է թողել միջնադարյան հայ գրականության վրա: Հատկանշական է, որ նա ոչ միայն լայն ճանաչում գտավ, այլև տակավին XII դարում դասվեց սրբերի շարքում: Նա նոր հորիզոններ բացեց գրական մտքի համար: Նարեկացու տաղերը և հատկապես «Մատեան ողբերգութեան» նոր լիցք են հաղորդել միջնադարյան պոեզիային, մեծապես նպաստել գրականության հետագա զարգացմանը: Նրա համար նեղ էին կյանքի կոչված և տիրապետող դարձած գրական կա-

---

[67] В. Рогов, "Золотое слово, со слезами смешанное| (в книге, Нарекаци, Ереван, 1974, с. 90).

[68] Միխայիլ Դուդին, Ճշմարտության որոնման տառապանքը («Գրական թերթ», 1978, 3 մարտի):

[69] Лев Озеров, Поэзия души скорбящей („Книга скорбных песнопений Григора Нарекаци, М. 1985, с. 12»). Նարեկացուն ռուսական մտավոր միջավայրին ծանոթացնելու գործում մեծ է գրականագետ Լևոն Մկրտչյանի վաստակը:

նոնները, նա ճեղքեց դոգմայի ուժ ձեռք բերած այդ կապանքները և հայտնաբերեց նոր սկզբունքներ, օրինաչափություններ:

Բանասեր Մ. Մկրյանը հանգամանորեն բացահայտել է միջնադարյան, անգամ նոր շրջանի հայ պոեզիայի վրա Նարեկացու ունեցած ազդեցությունները: Ներսես Շնորհալու «Ողբ Եդեսիոյ» պոեմի վրա իշխում է Նարեկացու ոգին: Նրա ստեղծագործությունների մի քանի գծեր շարունակել ու զարգացրել են Ֆրիկը, Կոստանդին Երզնկացին: Ֆրիկը, շարունակելով նրա սոցիալական ու քաղաքական մոտիվները, հեռանում է միստիցիզմից և հանգում անգամ աստծո գաղափարի հերքմանը: Կ. Երզնկացին, ներշնչված լինելով Նարեկացուց, ավելի բարձր աստիճանի հասցրեց բնապաշտությունը, հիմք դրեց սիրո քնարերգության: Թլկուրանցին, Գրիգորիս Աղթամարցին իրենց սիրո երգերով գնում էին Նարեկացու բացած ուղիով[70]:

Մ. Մկրյանը գտնում է, որ Նարեկացու ստեղծագործությունների նկատմամբ հետաքրքրությունը շարունակվեց նաև նոր շրջանում: Ղանճարեղ պոետի ազդեցության շունչը նա տեսնում է Խ. Աբովյանի, Հ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Վ. Տերյանի, Մեծարենցի, Վարուժանի, Սիամանթոյի և մյուս մեծերի գործերում: Թումանյանը «Աղթամար» լեգենդում առաջին տողը սկսում է Նարեկացուց վերցրած «ծիծաղախիտ» բառով և այլն[71]:

[70] Տե՛ս Մ. Մկրյան, Գրիգոր Նարեկացի, Երևան, 1955, էջ 261-267:
[71] Նույն տեղում, էջ 272-298:

## 2. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ XII–XIV ԴԱՐԵՐՈՒՄ

Գրիգոր Նարեկացու ժամանակաշրջանին հաջորդող XI դարը գրականության առումով արգասավոր չէր, կարելի է ասել անպտուղ էր: Հայաստանի անկախության վերացումը և սելջուկյան տիրապետության հաստատումը հնարավորություն չէին ընձեռում գրականության բնականոն ընթացքը շարունակելու համար:

Այդ դարի մեծագույն գործիչներից էր Գրիգոր Մագիստրոս Պահլավունին (990-ական - 1058), որը փիլիսոփա, բանաստեղծ, մանկավարժ, քաղաքագետ, զորավար, վարչական գործիչ էր: Նա բազմակողմանի գիտելիքների տեր, մեծ հեղինակություն ունեցող անձնավորություն էր ոչ միայն Հայաստանում, այլև Բյուզանդիայում: Մագիստրոսը քաջածանոթ էր հայկական և համաշխարհային գիտության ու գրականության նվաճումներին: Նա կարևոր նշանակություն էր տալիս համաշխարհային գիտության, գրականության նվաճումներին և հայ մշակույթի համար դրանց թարգմանությանը: Հայ մտավոր կյանքի, առհասարակ հայ իրականությանը հասու դարձնելու միտումով հունարենից թարգմանում էր բժշկական, քերականական, ճարտասանական, փիլիսոփայական գրքեր, այդ թվում՝ Պլատոնի, Արիստոտելի երկերը, էվկլիդեսի երկրաչափությունը:

Անտիկ աշխարհի քաղաքակրթության հետ մեկտեղ մեծ հետաքրքրություն ուներ հայրենի գիտության ու արվեստի նկատմամբ: Հիմնավորապես ծանոթ էր Մ. Խորենացու, Ա. Շիրակացու գործերին: Մագիստրոսն իր «թղթերում» կամ նամակներում բանաստեղծությունը համարում էր հոգևոր սնունդ, որը դաստիարակչական, հայրենասիրական վիթխարի դեր է կատարում:

«Բոլոր ուսյալ աշխարհականների մեջ,- գրում է Մանուկ Աբեղյանը,- առանձնապես փայլում է այս Պահլավունի իշխանը, մեր վաղ վերածնության շրջանի լավագույն ներկայացուցիչը, իսկական լուսավորական գործիչ: Նա ոչ միայն ուրիշներին հորդորել է գիտությամբ պարապելու և դպրոց ունենալու, այլև ինքը շարունակ և անխոնջ հետևել է դրան»[72]:

---

[72] Տե՛ս Մանուկ Աբեղյան, Երկեր, հ. Դ, Երևան, 1970, էջ 37:

Գրիգոր Մագիստրոսը բազմաբովանդակ իր գործունեությամբ լուսավորական, գիտակրթական արգասավոր գործունեություն ունեցավ: «... հայցեմ իքէն զավանդութիւնն մեր ոչ մոռանալ երբէք և զփոյթ սիրոյն առ Քրիստոս Աստուած մեր և զլոյս ճրագի նախնւոյն մերոյ ոչ շիջուցանել...»[73]:

Զաքարյանների իշխանության խաղաղ պայմաններում՝ XII դարում, գրականությունը զարգացման բնականոն հունի մեջ մտավ, լայն թափ առավ, որին լիցք էր հաղորդում նաև Գր. Նարեկացու ժառանգությունը: Բանասեր Պողոս Խաչատրյանը ցույց տվեց, որ Գրիգոր Նարեկացու ստեղծագործությունների առաջին հայտնաբերումը և արժևորումը կատարվել է բուն Հայաստանից դուրս՝ Կիլիկյան Հայաստանում, Ներսես Լամբրոնացու, Ներսես Շնորհալու և Գրիգոր Տղայի կողմից[74]: Այս հիմնահարցին հանգամանորեն անդրադարձավ Հրաչյա Թամրազյանը: Փոխառնելով Գր. Նարեկացու ստեղծագործության նորարարական ուղղվածությունը Կիլիկիայում հայ պոեզիան ժամանակի պահանջների ոգուն համապատասխան առաջ մղեցին, զարգացումների ուղիով տարան: Կիլիկիայի մտավոր կյանքի հիշյալ եռյակը այնպես տարածեց Նարեկացու ժառանգությունը, որ XII դարի երկրորդ կեսին նա արդեն մեծ բանաստեղծի ու փիլիսոփայի համբավ ուներ: Նարեկացու ստեղծագործությունները էական դեր են կատարել ոչ միայն Կիլիկիայի, այլև Անիի միջնադարյան խոշոր դպրոցների գիտակրթական համակարգերի ձևավորման ու զարգացման գործում:

Ներսես Լամբրոնացին (1153-1198) աշակերտել է Ներսես Շնորհալուն և Գրիգոր Տղային: Գրել է բանաստեղծություններ, արձակ գործեր, մեկնություններ, զբաղվել թարգմանությամբ, մանկավարժությամբ: Նրա «Գովեստ ներբողականը» (Գովեստ Ներբողական պատմագրական բանիւ յաղագս վարուց Մեծի հայրապետին տէառն Ներսիսի Կլայեցւոյ Հայոց կաթողիկոսի...) նվիրված է Ն. Շնորհալու կյանքին ու գործունեությանը: Հանգա-

---

[73] Տե՛ս Գրիգոր Մագիստրոսի թղթերը (բնագիրն առաջաբանով և ծանոթագրություններով առաջին անգամ ի լույս ընծայեց Կ. Կոստանյանց), Ալեքսանդրապոլ, 1910, էջ 236 (այսուհետ՝ Գրիգոր Մագիստրոսի թղթերը):

[74] Տե՛ս Պողոս Խաչատրյան, Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, Ս. Էջմիածին, 1996, էջ 160:

մանորեն անդրադառնում է հատկապես «Ողբ Եդեսիոյ» ստեղծագործությանը: Նա ոչ միայն գնահատում է Շնորհալու մեծ վաստակը, այլ նաև վեր է հանում նրա գործերի խրատական, դաստիարակչական նշանակությունը[75]:

Գրիգոր Տղան (1130-1193) նույնպես օժտված հասարակական գործիչ էր, բանաստեղծ, բազմաբնույթ տաղերի հեղինակ: Նրա ստեղծագործություններն աչքի են ընկնում փիլիսոփայական - հայեցողական ուղղվածությամբ[76]: Նրա կաթողիկոսության տարիներին Լևոն իշխանը խիզախ քայլերով ամրապնդում էր Կիլիկյան Հայաստանի պետականությունը: Գրիգոր Տղան «Ողբ Երուսաղեմի» պոեմում դրվատում է Կիլիկիայի հզորացումը և Լևոն իշխանի սխրանքները: Նրա ստեղծագործությունների վրա որոշակի է Գ. Նարեկացու ազդեցությունը:

Ներսես Շնորհալու (1100-1173) վրա Գրիգոր Նարեկացու ազդեցությունը որոշակի է: Նա ձգտել է պահպանել Նարեկացուց սկիզբ առած, նրանից եկող բանաստեղծության հիմնական հատկանիշները: Սակայն նա ոչ միայն յուրացրել է Նարեկացու ավանդները, այլև մշակել ու հարստացրել: Նրանց ընդհանրության հիմքում ընկած է համանման աշխարհընկալումը: Բանաստեղծությունը, ըստ նրանց, այնպիսի ստեղծագործություն է, որով մարդը հարաբերվում է աստծու հետ[77]: Շնորհալին նույնպես մարդուն բնութագրում է երկու կողմից, տարբերակում մարդու ներքին՝ հոգևոր կյանքը արտաքին՝ մարմնական կյանքից, առաջնությունը տալով հոգևորին:

Այս դարաշրջանում՝ XII դարում, գրականությունը մտնում է զարգացման նոր փուլ, որը բնութագրվում է աշխարհիկացմամբ: Գրականությունը մերձենում է կյանքին, արձագանքում նրա կենսական խնդիրներին: Գրականությունը, արվեստը կյանքին մերձեցնելը այս պատմափուլը (XII-XIV դդ.) բնութագրող առանձնահատուկ գծերից է: Դրա առաջնահերթ արտահայտիչը եղավ Ներսես Շնորհալին: Նա արվեստի իմաստը, գեղեցկությունը տես-

---

[75] Տե՛ս Գր. Հակոբյան, Ներսես Լամբրոնացի, Երևան, 1971:
[76] Տե՛ս Գրիգոր Տղա, Բանաստեղծություններ և պոեմներ, աշխատասիրությամբ՝ Ա. Շ. Մնացականյանի, Երևան, 1972:
[77] Հրաչյա Թամրազյան, Գրիգոր Նարեկացին և Կիլիկիայի բանաստեղծական արվեստի դպրոցը, Երևան, 2007, էջ 102:

նում էր բնական լինելու, կյանքի առաջադրած պահանջներին բավարարություն տալու մեջ[78]:

Նա բազմաժանր ստեղծագործող էր, բացի կոթողային «Յիսուս Որդի» և «Ողբ Եդեսիոյ» աշխատություններից, գրեց բազում շարականներ, տաղեր, գանձեր, երգեր: Նրա ժողովրդական բառ ու բանով գրված հարյուրավոր հանելուկներն արտացոլում էին առօրյա կյանքի երևույթները և նպաստ բերում աշխարհականացման գործընթացին: «Ողբ Եդեսիոյ» պոեմում կործանված Եդեսիայով խորհրդանշում է Յայաստանի կործանված քաղաքների, գյուղերի, որդեկորույս մայրերի գաղափարը[79]:

Դժվար է պատկերացում կազմել մեր հոգևոր երգերի կարևոր մի բնագավառի՝ շարականների մասին՝ առանց Շնորհալու ստեղծագործություններին անդրադառնալու: Շարականների նյութը նա վերցրել է ոչ միայն Կտակարաններից, այլև հայ իրականությունից, իրական կյանքից: Աշխարհիկ բնույթի շարականներով Շնորհալին արձագանքում էր առաջադիմական գաղափարների: Նա հայրենասիրական մեծ պաթոսով ու ջերմ զգացումով երգեր է ձոնել Գրիգոր Լուսավորչի ու Սահակ Պարթևի, Տրդատ թագավորի, Վարդանանց և Ղևոնդյանց հիշատակներին: Շնորհալին երգ-բանաստեղծություններում սքանչելի պատկերներով փառաբանել է լույսն ու արևը: Նրա հոգևոր երգերում է առաջին անգամ տեղ գտնում կինը[80]: Արտահայտելով կրոնական, արևելաքրիստոնեական ընդհանուր գաղափարներ՝ Շնորհալին՝ որպես մեծ հայրենասեր, միշտապես ամուր կանգնած է եղել հայրենի հողի վրա:

Յասուն ավատատիրության պատմափուլում իր զարգացման գագաթնակետին հասավ ժողովրդական բանաստեղծության մի նոր ժանր, որը նույնպես նպաստ էր բերում գրականությունը կյանքին մոտեցնելուն. դրանք հայրեններն էին: Յայրենները ժողովրդական մտածողությամբ ու խոսակցական լեզվով գրական ուրույն մի բնագավառ են զբաղեցնում: Դրանք գուսանաժողովր-

---

[78] Տե՛ս Վ. Նալբանդյան, Միջնադարի մեծ բանաստեղծն ու մտածողը (Ներսես Շնորհալի, հոդվածների ժողովածու, Երևան, 1977, էջ 14-15):
[79] Տե՛ս Ա. Մնացականյան, Միջնադարյան հայ պոեզիայի աշխարհականացումը և Ներսես Շնորհալին, նույն ժողովածուն, էջ 40-48:
[80] Տե՛ս Գր. Յակոբյան, Շնորհալին և հայոց երգը, նշված ժողովածուում, էջ 122-138:

դական ծագում և սիրո, պանդխտության, խրատական բովանդակություն ունեն: Հայրենները, ինչպես բնորոշում է Աս. Մնացականյանը, ստեղծվել են փոքր ծավալով, մեծ արվեստով և հիմնականում աշխարհիկ թեմաներով.

- Ատ վո՞վ է երդիկս եկեր,
Որ օտար հողըն կու սողայ.
Թե իմն ես՝ նա վար արի,
Թե օտար ծաղիկ՝ նա գընա՛.
Ո՛չ բուկն եմ՝ ի վար գալու,
Ո՛չ օտար ծաղիկ՝ գընալու.
Եկեր եմ ի քո սիրուտ,
Ո՛չ գալու եմ, ո՛չ գնալու[81]:

Հայրենները ժողովրդի ազնիվ ու բարի ընկալումների, ժողովրդի հավաքական մտածողության դրսևորումներ են:

Հասուն միջնադարի պատմափուլում գրականության առաջադիմությունը հանգեցրեց էական նշանակության մի նոր ժանրի՝ առակագրության առաջացմանը, նրա ծնունդին: Առակ, ինչպես նշել են ուսումնասիրողները (Հ. Բախչինյան և ուրիշներ), նշանակում է աչքի առաջ (առ-ակն), աչքի տեսածը: Առակներում աշխույժ, կենդանի խոսքով, վառ ու հուզիչ ձևով արտահայտվել են ժողովրդի նիստուկացը, հայկական կյանքի կենդանի պատկերները, որոնք բարոյախրատական ուղղվածություն ունեն: Բնության երևույթների, կենդանական, բուսական աշխարհի մասին առակներն այլաբանորեն արտահայտել են իրական կյանքի երևույթները: Դրանով գրականությունը նկատելիորեն ազատագրվում է հին, իր դարն ապրած թեմաներից և իր հայացքն ուղղում մասնավորապես դեպի իրական կյանքի վերարտադրում: Գրականության աշխարհականացման սկսված ուղին արտահայտվեց նաև առակագրության երևան գալով:

Այս ասպարեզում մեծ է Մխիթար Գոշի ավանդը: Լայն հետաքրքրությունների տեր անվանի մտավորականը հայ իրականության մեջ եղավ առակագրության հիմնադիրը: Նա դարձավ X-XII դարերի գրական մտքի ժառանգորդը, V դարի ավանդների շարունակողը: Մ. Գոշը լավ գիտեր, որ գրականությունը, նրա բո-

[81] «Հայրեններ», աշխատասիրությամբ՝ Ա. Ճ. Մնացականյանի, Երևան, 1995, էջ 44:

լոր ժանրերը ի վերջո կոչված են ծառայելու ճշմարտությունն ի հայտ բերելուն: Նա անդրադառնում է աշխարհիկ բովանդակության այնպիսի հարցերի, որոնք կարևոր են հասարակության դաստիարակության համար: Առակագրությունը ներառվում է գեղարվեստական գրականության այն ոլորտի մեջ, որը կրթական ու դաստիարակչական գործառնություն էր կատարում[82]: Գոշի նշանաբանն է եղել. «Ոչինչ պատուական, քան հասարակաց օգուտն»:

Նա ժամանակի մտայնությունն էր արտահայտում, երբ առակներում քարոզում էր հնազանդ լինել իշխաններին, որոնք կարգված են Աստծո կողմից: «Խրատէ առակս զքրքմնջող սպասաւորս,- գրում է հեղինակը առակի բացատրությունում,- որք շաք կարծեն զինքեացն քան զտերանցն զոր առնուն, այլ ունեալք յիմաստնոց գիտեն՝ զի սակաւ է ինքեացն»[83]: Համակապես օտար նվաճողներին դիմակայելու համար պաշտպանում էր ազգային եկեղեցու շահերը, նրա միասնությունը: Նա միաժամանակ սոցիալական համերաշխության միտում ուներ և հորդորում էր իշխողներին չափավոր լինել իրենց գործունեության մեջ[84]: Հույժ կարևոր էր համարում պայքարը խարդախությունների, շահամոլության, ամեն տեսակ անարդարությունների դեմ: Գոշի առակներում իրենց արտացոլումն են գտնում երկրային կյանքի, առօրյա երևույթների բազմատեսակ դրսևորումները:

Առակագրությունն ավելի խորացավ Վարդան Այգեկցու ստեղծագործություններում: Նա օգտվեց ժողովրդական բանահյուսությունից, ժողովրդի կողմից ստեղծված առակներից և, շարունակելով Մխիթար Գոշին, նրա հետ ստեղծեց գեղարվեստական արծակի այս նոր տեսակը: Այգեկցին ըստ ամենայնի հասկանում էր սրամիտ առակների ներգործուն, զորեղ ուժը և անխնա խարազանում էր ընչաքաղցությունը, ուժ գործադրելը, կաշառակերությունը, բարոյական անկումը: Դրան հակառակ գովերգում էր ազնիվ աշխատանքը, արդարությունը: Մարդկային այդ հարաբե-

---

[82] Տե՛ս Հրանտ Թամրազյան, Երկեր, Ա, էջ 590-591:

[83] Մխիթար Գոշ, Առակներ. տեքստը և ներածությունը՝ էմ. Պիվազյանի, Երևան, 1951, էջ 86:

[84] Նույն տեղում, էջ 114:

րությունններին են նվիրված «Եզը և ձին», «Ջրաղացը և եկեղեցին», «Իշխանը և այրի կինը», «Յալալ մարդը», «Այծեր և գայլեր», «Առյուծ և աղվես», «Այրի կին և որդի» և բազմաթիվ այլ առակներ: Նրա առակներում մարդկանց առօրյան, հասարակական հարաբերությունները, իրենց մանրամասներով ներառվում են գրական այս ժանրի մեջ, և դրանց միջոցով բացահայտվում են կյանքի խոցելի կողմերը: Վարդան Այգեկցու առակները գեղարվեստական բարձր արժեք ունեն և իրենց նպաստն են բերում հայ միջնադարյան արձակին: Նրա շնորհիվ վերջնականապես ձևավորվեց ազգային առակագրության ժանրը, որը ճյուղավորվելով վերածում էր մանրապատումների, զրույցների:

«Այգեկցին քարոզը մատչելի դարձնելու համար,- գրում է Ակսել Բակունցը,- լիաբուռն օգտվել է ժամանակի ժողովրդական բանահյուսությունից, վերամշակել է այն ըստ իր նպատակադրման և այսպիսով գրի են առնվել բազմաթիվ անգիր զրույցներ: Առակախառն քարոզների հետ գրականության մեջ խուժել է առակը և մանրավեպը, իսկ վերջիններս իրենց հետ բերել են նաև ժողովրդական լեզու և ոճ, և այսպիսով սկսել է ձևավորվել միջնադարյան հայ «աշխարհիկ» արձակը»[85]:

Միջնադարյան արձակի մեջ առակներն ավարտուն ստեղծագործություններ են իրենց կուռ կառուցվածքով: Ինչպես ցույց են տվել ուսումնասիրությունները, Մխիթար Գոշն ու Վարդան Այգեկցին եղան հայկական գեղարվեստական արձակի մի նոր ժանրի՝ առակագրության ստեղծողները:

Յասուն միջնադարի այս փուլում գեղարվեստական գրականության մեջ ժողովրդական բանավոր ստեղծագործությունը դրսևորվել է վերը նշվածներից բացի նաև այլ ձևերով: Գեղարվեստական արձակի մեջ առասպելների, հեքիաթների, վարքագրությունների կողքին կարևոր էին զրույցները, որոնցում նույնպես արտացոլվում էին իրական կյանքի երևույթները: Զրույցները կարող էին լինել իրապատում, առասպելական, խրատական, նկարագրական և այլն: XII-XIII դարերում հայ գրականության

---

[85] Վարդան Այգեկցի, Աղվեսագիրք, Երևան, 1995, Ա. Բակունցի առաջաբանը, էջ XIII-XIV:

մեջ գերիշխող են եղել պատմական, իսկ XIII-XIV դարերում՝ բարոյախրատական զրույցները:

Գրական մյուս ժանրերից աստիճանաբար անկախանում են զրույցները, և խորանում է նրանց աշխարհիականացումը[86]:

Արվեստի և պոեզիայի հարցում նոր խոսք ասաց Հովհաննես սարկավագ Իմաստասերը: «Բան իմաստութեան» չափածո երկում, որը երկխոսություն է բանաստեղծի և Սարեկ հավքի միջև, հանգում է այն հետևության, որ պոեզիան մարդկանց որոնումների, ապրումների, անդուլ աշխատանքի արդյունք է: Սարկավագը հակվում է դեպի բնությունը, ցանկանում սովորել նրանից: Փաստորեն սկսվում են նոր տեսակետներ ձևավորվել պոեզիայի ակունքների, նրա ծագման մասին: Դրանով նա որոշակի հարվածներ էր հասցնում տիրապետող եկեղեցական դոգմաներին[87]:

Այս դարաշրջանում են երևան գալիս նաև գրական ստեղծագործության մեկ այլ ժանր՝ երգ-բանաստեղծությունները՝ կաֆաները: Կաֆաները լինում են նկարագրական, իմաստասիրական և երևան են գալիս նույնպես առանց հեղինակի[88]:

Ժողովրդի բանավոր ստեղծագործությունների մեջ կարևոր են նաև տարածում գտած զուսանական երգերը: Դրանք ունեին վիպական դյուցազնական, պատմական, կենցաղային բովանդակություն:

Տեղաշարժեր են կատարվում նաև հայոց լեզվի մեջ: X դարից սկսած՝ ծնունդ է առնում միջին հայերենը: Կիլիկիայում պետական լեզու դարձած միջին հայերենը գրաբարից լրիվ չէր առանձնացել, սակայն ավելի մատչելի էր ու համապատասխանում էր ժամանակի պահանջներին: Միջնադարի գործիչները ձգտում էին գրել ժողովրդական լեզվով, որ հասկանալի լինի բոլորին: Հովհաննես Երզնկացին նշում է, թե ինքը աշխարհիկ է գրել, որ հասկանալի լինի ընթերցողներին: Մխիթար Հերացին «Ջերմանց

[86] Տե՛ս Արմենուհի Սրապյան, Հայ միջնադարյան զրույցներ, Երևան, 1969: Էջեր հայ միջնադարյան գեղարվեստական արձակի, խմբագրությունը և առաջաբանը՝ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1957:
[87] Տե՛ս Женя Калантарян, История армянской литературно – теоретической мысли V-XIX веков, Ереван, 2015, стр. 76-82.
[88] Տե՛ս Հ. Ա. Սիմոնյան, Հայ միջնադարյան կաֆաներ (X-XVI), Երևան, 1975:

Մխիթարություն» նշանավոր աշխատությունը գրել է ժամանակի խոսակցական լեզվով, «գեղջուկ և արձակ բարբառով, զի դիւրահաս լիցի ամենայն ընթերցողաց»:

Այս դարաշրջանի ականառու դեմքերից էր Հովհաննես Երզնկացին (Պլուզը) (1230-1293). նա ծնվել է Եկեղյաց գավառի Երզնկա քաղաքում, որն արվեստի ու գրականության նշանավոր կենտրոն էր: Նա երկար ճանապարհորդություն է կատարել, մեկնել է Երուսաղեմ, այնտեղից անցել Կիլիկիա, ապա Թիֆլիս, Հաղպատ, Սանահին և իր ծննդավայր Երզնկա, որտեղ մնում է մինչև կյանքի վերջը: Երզնկացին աշակերտել է Վարդան Արևելցուն, յուրացրել մեծ Հայքի գիտության նվաճումները: Նա լայն հետաքրքրություններ ու գիտելիքներ ուներ բնության և մարդու մասին: Շնորհիվ դրա հմտորեն անդրադարձել է տիեզերագիտությանը, քերականությանը, մանկավարժությանը, մարդու ֆիզիոլոգիական կազմությանը, նրա հինգ զգայարաններին, ուղեղի կառուցվածքին: Միջնադարի շատ մտածողների, այդ թվում և բանաստեղծների, զբաղեցրել է հոգու և մարմնի փոխհարաբերությունների հարցը: Նրանց գերակշիռ մասը, հոգուն առաջնություն տալով, հետին պլան են մղել, մեռցրել են մարմինը: Երզնկացին չի մեռցնում մարմինը, ընդհակառակը հոգին կապում է մարմնի գոյության հետ[89]:

Գ. Զահուկյանը, խոսելով Հ. Երզնկացու տարաբնույթ գիտելիքների մասին, նշում է քերականությունը, փիլիսոփայությունը, պատմությունը, ճարտասանությունը, երաժշտությունը, բժշկությունը[90]:

Երզնկացու աշխատությունների մեջ նշանակալի են քերականության մասին նրա մեկնությունները, որոնք ստեղծվել են նախորդ հեղինակների աշխատությունների հիման վրա: Ն. Ադոնցը նրա քերականությունը համարում է՝ մինչ այդ քերականության բնագավառում կատարված աշխատանքների հանրագումարը: Նա առաջ էր քաշում բոլորին հասկանալի լեզվի հարցը, բայց

---

[89] Տե՛ս Արմենուհի Սրապյան, Հովհաննես Երզնկացի, Երևան, 1958, էջ 119:

[90] Տե՛ս Գ. Զահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, 1954, էջ 261:

գտնում էր, թե գրաբարից չպետք է շեղվել այն աստիճան, որ լեզուն իջնի բարբառի մակարդակի[91]:

Հ. Երզնկացին նաև նշանավոր մանկավարժ էր: Երեխայի դաստիարակությունը ճիշտ կազմակերպելու համար մշակել էր հատուկ մեթոդներ, որոնցում նկատի էր առել մանուկ հասակի հետ կապված հոգեբանական առանձնահատկությունները:

Հայտնի է, որ Հայաստանում առաջին համքարությունը 1280 թ. Երզնկայում կազմակերպված եղբայրությունն է: Այն եղել է քաղաքի առևտրաարհեստավորական շերտերի, երիտասարդության կազմակերպությունը: Երզնկացին մասնակցել է այդ եղբայրության աշխատանքներին և գրել նրա կանոնները[92]: Նա իրական մոտեցում ուներ կրթության ու դաստիարակության, գիտության և ուսման հարցերին: Երզնկացին գտնում էր, որ բանաստեղծը մարդկանց բերում է գեղեցիկը, օգտակարն ու խրատականը: Մարդուն դիտում էր խոր ու բազմակողմանի, համեմատում բնության հետ, համարում մի փոքր աշխարհ:

Հ. Երզնկացին, բազմաբնույթ ու ծանրակշիռ գիտելիքների տեր լինելով հանդերձ, անվանի ու մեծ է որպես բանաստեղծ՝ տաղերի, շարականների, ողբերի, մեղեդիների հեղինակ: Նրա ստեղծագործությունների մեջ գերակշռում են խոհախրատական բանաստեղծությունները: Այս բնույթի բանաստեղծությունը նոր երևույթ էր XIII դարի պոեզիայում և բնորոշ այդ դարաշրջանի գրեթե բոլոր բանաստեղծներին: Ուսուցողական այդ պոեզիայի սաղմերը կային Ն. Շնորհալու ստեղծագործություններում: Երզնկացին ստեղծում է խոհախրատական, բարոյակրթական քնարերգության մի նոր տեսակ: Նրա նպատակն է եղել կրթել, դաստիարակել ժողովրդին, հատկապես մատաղ սերնդին: Իր բանաստեղծությունները, խրատներն ու քարոզներն ուղղել է այն բանին, որ մարդիկ ստախոս չլինեն, գողություն չանեն, հարգեն ու լսեն տարեցներին, ծնողներին, չդավաճանեն, առաքինի վարք ունենան:

Աշխարհիկ բնույթի պոեզիայում ուշագրավ է XV դ. բանաստեղծ Հովհաննես Թլկուրանցու «Այս ինչ կրակ է զիս այրեց» բա-

---

[91] Տե՛ս Ա. Սրապյան, նույն տեղում, էջ 67:
[92] Նույն տեղում, էջ 72:

նաստեղծությունը, որը նվիրված է տերտերի տղայի և մոլլայի աղջկա սիրուն: Առաջին անգամ է հայ պոեզիայում ցույց տրվում սիրո ամենազոր, անհաղթահարելի ուժը[93], որ չի ճանաչում ոչ կրոնական և ոչ էլ ազգային սահմաններ: Նա գրել է շարականներ, որոնք հաճախ երգվել են հայոց եկեղեցիներում: Դրանցից են Գրիգոր Լուսավորչին և Սահակ Պարթևին նվիրված շարականը, որը սկսվում է «լերինք ամենայն այսօր գնծացեք» սկզբնատողով[94]:

Իրական կյանքին մերձենալու գեղարվեստական գրականության միտումներն ակնառու են դառնում Պլուզին հաջորդող հայրենակցի՝ Կոստանդին Երզնկացու ստեղծագործություններում: Վերջինս, ապրելով XIII դարի երկրորդ կեսին և XIV-ի սկզբներին, նույնպես ականատես է եղել մոնղոլական տիրապետության աղետալի հետևանքներին: Այդուհանդերձ կարողացել է այդ մթնոլորտից վերանալ այն աստիճան, որ պեսիմիստական տրամադրությունները տիրապետող չդարձան նրա ստեղծագործություններում: Նրա պոեզիայի մեջ տիրապետող են դառնում մարդը, բնությունը՝ իր ամբողջ գեղեցկությամբ.

Յեզ որոտայ ամպ ցօղաբեր,
Կամար կապի յերկինս ի վեր,
Յոսէ յերկիր ահեղ գետեր.
Յաւսար զերկիր են արբուցել:
Ահեղ գոչեն գետերտ յոլով,
Յորդ՝ ի լերունքտ ի վայր գալով,
Գան ման ի ման ծաւալելով,
Սիրով ի ծովն երես դրդել[95]:

Կ. Երզնկացին լիովին հաղթահարել է միստիցիզմը և ստեղծել գեղեցկության, սիրո մասին ընթերցողին հուզող գործեր: Նա երգում է կնոջ, գարնան գեղեցկությունը, «Ահա եղև պայծառ գարուն» բանաստեղծությունը և մյուս գործերը բնության զարթոնքն

---

[93] Տե՛ս նույն տեղում, էջ 114:
[94] Տե՛ս նույն տեղում, էջ 117: Սեպուհ լեռը զվարճանում է և ուրախանում նույնիսկ ավելի, քան Մասիսը և հպարտ է այն գիտակցությամբ, որ ինքն է եղել Լուսավորչի կյանքի վերջին տարիների հանգրվանն ու հանգստարանը:
[95] Կոստանդին Երզնկացի, Տաղեր, աշխատասիրությամբ՝ Արմենուհի Սրապյանի, Երևան, 1962, էջ 118:

ազդարարող երգեր են: Կ. Երզնկացին հաճախ է պատկերել գարունը՝ իր բազմերանգ գույներով, սակայն բոլորից գեղեցիկն իր նրբությամբ համարում է գարնանային առավոտը, այգաբացը: Գարնան գեղեցկությունը նա համադրում, միաձուլում է սիրո հմայքի հետ: Համայն բնության շարժիչ ուժ է տեսնում սիրո մեջ: Սերն է համարում այն հիմնական գործոնը, որը մարդուն կապում է կյանքի հետ, առանց սիրո չկա կյանք.

«Թե ինձ կյանք կամ խնդություն
Բաժին կայ ի դուռն ի սիրուն,
Մեկ սրահու սէրն ի սրտէ
Թող լինի ինձ յառաւօտուն:
Թե հոգի տալ կու պիտի,
կամ թե հոգի հանել մարդուն,
Նա յօժար եմ ես հոգով՝
Չհոգիս փոխան տալ իմ սիրուն»[96]:

Բանասեր Արմենուհի Սրապյանը լավ է բնութագրել պոետի սիրո ու գեղեցկության ստեղծագործական աշխարհը: «Կոստանդին Երզնկացին բնության ու սիրո այն առաջին տաղերգուն է,- գրում է նա,- որ բանաստեղծական խոսքի անկրկնելի վարպետությամբ ու զգացողությամբ երգում է աշխարհը՝ ծառ ու ծաղիկ, վարդ ու բլբուլ, լույս և արև, սեր և ուրախություն, կին և գինի: Նրա տաղերը հայ միջնադարյան աշխարհիկ պոեզիայի գարունն են, այն գարունը, որ լիովին մտնում է իր իրավունքների մեջ և ողջ բնությունը ողողում լույսով ու արևով»[97]:

Երզնկացու՝ գարնան զարթոնքին նվիրված տաղին ծանոթանալով՝ Վալերի Բրյուսովը զուգահեռներ է անցկացնում դրա և Արևմտյան Եվրոպայի նույն դարաշրջանի պոեզիայի միջև և գտնում, որ այդ պոեմը պատիվ կբերեր Եվրոպայի ամեն մի գրականության, որը ոչինչ չուներ նրան հակադրելու: Նա գրում է. «По стилю по энергии стиха и языка поэма сделала бы честь любой литературе Западной Европы того века, и Европе даже нечего было ей противопоставить[98].

---

96 Նույն տեղում, էջ 126:
97 Նույն տեղում, էջ 34-35:
98 В. Брюсов, Поэзия Армении, Москва, 1916, стр. 50.

Ֆրիկը (1236-1310) մեզ հետաքրքրող դարաշրջանի անվանի բանաստեղծներից է: Նա եղել է նյութական հարուստ միջոցների տեր, բայց դրանցից զրկվել է մոնղոլների կատարած ավերածությունների հետևանքով և ընկել ծայրաստիճան աղքատության մեջ: Իր անձնական կյանքի կտրուկ փոփոխությունները, կատարված ողբերգությունը դարձնում է ստեղծագործության նյութ: Նրա բանաստեղծությունների ոգին է դառնում անսահման ատելությունը հանդեպ մոնղոլ բռնակալների: Նրա ստեղծագործությունների մեջ զգալի տեղ են գրավում հուսահատական, պեսիմիստական գործերը: Սակայն, ինչպես տեղին նկատում է Աշոտ Հովհաննիսյանը, Ֆրիկի ստեղծագործությունները իրենց անձնական հոգևոր ապրումների նեղ շրջանակներից վերանում են ընթուստությամբ տոգորված ընդհանուր սոցիոլոգիական բողոքի[99]: Նա ժողովրդի ձայնով բողոք է հնչեցնում սոցիալական անարդարության դեմ և դառնում բանաստեղծության այդ ուղղության կամ այդ ժանրի հիմնադիրը.

Մէկն ի պապանց պարոնորդի,
Մէկն ի հարանց մուրող լինի,
Մէկին հազար ձի ու ջորի,
Մէկին ոչ ուլ մի, ոչ մաքի:
Մէկին հազար դեկան ոսկի,
Մէկին ոչ փող մի պղնձի...

Ֆրիկը եղել է հայ դպրությանը տեղյակ, գրագետ անձնավորություն: Նրա ստեղծագործություններն ունեն նաև խրատական քարոզի բնույթ: Նա զրույց է բացում մարդկանց հետ աշխարհի, Աստծու մասին: Եվ հուսով էր, որ իր բանաստեղծությունները կաշխուժացնեն մարդկանց միտքն ու հոգին: Գրել է պարզ ու հստակ, որ իր խոսքը հասնի մարդկանց, ժողովրդին: Մաքրագործվելու, մեղքերից ազատվելու ձգտումը, որը Նարեկացու, ինչպես և նրա հետևորդ Շնորհալու ստեղծագործությունների առանցքն է կազմում, բնորոշ է նաև Ֆրիկին: Երկրային կյանքում ամեն ինչ վաստակել է մեղք գործելով, այդ մեղքերից ազատվե-

---

[99] Տե՛ս Աշոտ Հովհաննիսյան, Ֆրիկը պատմաքննական լույսի տակ, Երևան, 1955, էջ 58-59:

լու համար գթություն էր հայցում Աստծուց: Աշխարհի անարդար դրվածքի համար նա վրդովվում էր, վիճում Աստծու հետ:

Նա յուրահատուկ մոտեցում ուներ միջնադարյան մտածողներին տնականորեն զբաղեցնող, հոգու և մարմնի հարաբերության հարցում՝ գտնելով, որ անհրաժեշտ է դեռ երկար մտորել որևէ մեկին նախապատվություն տալու հարցում:

Հասուն միջնադարում գրական կյանքի ոլորտում հայտնի էին նաև Մխիթար Այրիվանեցին, Խաչատուր Կեչառեցին, որը խմբագրել է Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը, Հովհաննես Թլկուրանցին, Առաքել Բաղիշեցին և ուրիշներ, որոնք իրենց ստեղծագործություններում տարբեր ձևերով և ուժգնությամբ նույնպես արտահայտել են ժամանակաշրջանի ոգին:

# ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ

# ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

## I. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի անկախության վերականգնումը, տնտեսության հուժկու վերելքը պայմաններ ստեղծեցին և մեծապես խթանեցին մշակույթի զարգացմանը իր բոլոր դրսևորումներով:

Բագրատունիների տիրապետության ժամանակաշրջանից սկսած և ամբողջ հասուն կամ զարգացած միջնադարում վերելք ապրեց կրթությունը: Հայաստանում կազմակերպվում էին երկու կարգի ուսումնական կենտրոններ, ավանդաբար եկող տարրական և բարձր տիպի դպրոցներ: Վերջինս նորություն էր հայ կյանքում:

Տարրական դպրոցները փաստորեն երկու կարգի էին՝ հասարակական և մասնավոր: Հասարակական էին այն դպրոցները, որոնք պահպանվում էին եկեղեցու և պետության միջոցներով: Այդպիսի դպրոցներ կային բազմաթիվ բնակավայրերում, այդ թվում՝ Անիում, Կարսում և այլուր: Աշակերտները ստանում էին տարրական գիտելիքներ թվաբանությունից, սովորում էին գրել-կարդալ: Մասնավոր դպրոցներում ուսուցանում էին եկեղեցական պարզունակ գիտելիքներ պատարագի, ժամասացության մասին: Աշակերտը, դպրոցն ավարտելով, կարող էր կարդալ Աստվածաշունչը, երգել շարականներ: Այս կարգի դպրոցները կազմակերպվում էին հոգևորականների կողմից: Տարրական երկու կարգի դպրոցներում ուսումը տևում էր երեք-չորս տարի, սովորում էին 12-13 տարեկան հասակի երեխաները[100]:

Բարձրագույն դպրոցները կամ ուսումնական հաստատութ-

---

[100] Տես Լ. Խաչերյան, Հայագիր դպրության ուսումնագիտական կենտրոնները, դպրոցները, դպրեվանքերը, վարդապետարանները, ճեմարանները, ակադեմիաները և համալսարանները Միջնադարյան Հայաստանում և Կիլիկիայում (V-XVI դդ.), Լիզպոն, 1998, էջ 127-128:

յունները՝ վարդապետարանները, հայ դպրության նշանավոր կենտրոններ էին: Ուսումնասիրվող ժամանակաշրջանի վանքերը երկու բնույթի գործառնություն էին իրականացնում: Վանքերի մի մասը զբաղվում էր զուտ կրոնական գործառնությամբ՝ քարոզով, բարեգործությամբ, հիվանդների, ծերերի խնամքով և այլն: Վանքերի մյուս մասի համար կրոնական ծիսակատարությունների կողքին հիմնականն ու էականը գիտակրթական գործունեությունն էր: Այդպիսի վանքերում կային վարդապետարաններ, որոնք փաստորեն բարձրագույն դպրոցներ էին՝ ուսուցման որոշակի մշակված ծրագրերով:

Վարդապետարաններն ամենևին չէին առնչվում եկեղեցական նվիրապետության աստիճանակարգի վարդապետ կոչման հետ: Վարդապետարանները գիտակրթական կենտրոններ էին, որն ավարտելով՝ սաները ստանում էին վարդապետական աստիճան, իսկ դա համարվում էր գրագիտության, գիտնականության բարձր տիտղոս: Ոչ միայն սովորական վարդապետները, անգամ եպիսկոպոսներն էին ստանում վարդապետական աստիճան: Ուսումնական այդ կենտրոնները գլխավորում էին ժամանակի նշանավոր գիտնականները: Նրանք անվանվում էին վարդապետներ, րաբունապետեր, ուսուցչապետեր, դպրապետեր: Վարդապետարաններ կային Անիում, Արգինայում, Կարսում, Կամրջաձորում, Սանահինում, Հաղպատում, Երզնկայում, Նարեկում, Սկևռայում, Սսում և այլուր:

Բագրատունյաց Հայաստանի մայրաքաղաք Անիում անվանի գիտնական, ուսուցչապետ Գրիգոր Մագիստրոսի կազմակերպած ճեմարանի մասին տեղեկություններ չեն պահպանվել: Կցկտուր վկայություններ կան նրա մտավոր գործունեության մասին Սանահինում, Բջնիում, Տարոնի Սուրբ Կարապետ վանքում: Նկատի առնելով նրա գիտական մեծ պաշարը՝ պետք է կարծել, որ Անիի ուսումնական կենտրոնն իր բարձրության վրա է եղել: Մատթեոս Ուռհայեցին հաղորդում է, որ Գրիգոր Մագիստրոսը մեծ գիտելիքների տեր անձնավորություն էր, Կոստանդնուպոլսում բանավիճել է Բյուզանդիայի գիտնականների հետ և բոլորին զարմացրել իր իմացություններով: Նա հիմնավորել է «յոթ ազատ

արվեստների» ուսուցման անհրաժեշտությունը՝ «եռյակ» և «քառյակ» բաժանումներով[101]:

Անիի վարդապետարանը Հովհաննես Իմաստասերի շնորհիվ ծաղկում ապրեց XII դարում: Նա համակարգեց վարդապետարանի ուսումնական ծրագրերը, կազմեց հանձնարարելի գրքերի ցանկը, որը հայտնի է «Սարկավագյան մատենացանկ» անունով: Դրանում Հին ու Նոր Կտակարաններից և առհասարակ աստվածաբանությունից բացի ընդգրկված էին փիլիսոփայություն, ճարտասանություն, քերականության վերաբերյալ աշխատություններ: Քերականությունը նա համարում էր գիտության բանալին:

Հովհաննես Իմաստասերն անձամբ դասավանդում էր տոմարագիտություն, որը վարդապետարանի ուսումնական ծրագրերի մի մասն էր կազմում: Նա կազմել է վարդապետարանի սաների համար մաթեմատիկայի ձեռագիր դասագիրք՝ «Յաղագս անկիւնաւոր թուոց» խորագրով: Հովհաննես Իմաստասերը գիտաուսումնական ծրագրերի հիմքում դրեց փորձաքննական մեթոդը:

Անիի վարդապետարանը տվել է բազմաթիվ շրջանավարտներ, որոնք մտավոր-քարոզչական աշխատանքի են մեկնել Հայաստանի տարբեր գավառներ: Անիի ուսումնագիտական կենտրոնի րաբունապետերը ոչ միայն թարգմանել, այլև հեղինակել են պատմագիտական, քերականական, փիլիսոփայական և այլ երկեր[102]:

Անիի մերձակայքում նշանավոր էր Արգինայի վարդապետարանը, որը մեծ համբավ ունեցող ուսումնագիտական կենտրոն էր: Պատմիչներ Ստեփանոս Տարոնացին (Ասողիկ), Մատթեոս Ուռհայեցին մեծ գովեստով են խոսում Արգինայի վարդապետարանի մասին:

Կարսի վարդապետարանում ուսուցանվել են աստվածաբանություն, փիլիսոփայություն, ճարտասանություն, քերականություն, տոմարագիտություն, երաժշտություն, աստղաբաշխություն և երկրաչափություն: Այստեղի վարդապետարանի սանե-

---

[101] Նույն տեղում, էջ 386-422:
[102] Նույն տեղում, էջ 499-530:

րից էր Գագիկ Ա թագավորը (990—1020 թթ.), որին Մատթեոս Ուռհայեցին բնութագրում է որպես հմուտ փիլիսոփա և լավագույն ճարտասան: Այս վարդապետարանը գործել է միայն XI դարում:

Վարդապետարաններն ուսումնականի հետ դարձել էին գրական-գիտական կյանքի հիմնական կենտրոններ: Դրանցում կատարում էին թարգմանություններ, գրում կամ արտագրում ձեռագրեր, մեկնություններ կատարում, մեծապես խթանում ստեղծագործական աշխատանքները: Այդ առումով ուշագրավ է Վասպուրականի Ռշտունյաց գավառի Նարեկա վանքի գիտաուսումնական կենտրոնը, որը գործել է X դարի երկրորդ կեսին: Երեք նշանավոր դեմքերի մտավոր գործունեությունը լուսաբանելու միջոցով Յրաչյա Թամրազյանը բացահայտում է նրանց խոր և ընդգրկուն ստեղծագործությունների ամբողջ պատկերը: Նշանավոր դեմքեր էին Անանիա Նարեկացին, Խոսրով Անձևացին և Գրիգոր Նարեկացին:

Նարեկա վանքի դպրոցի հիմնադիր Անանիա Նարեկացին լայն մտահորիզոնի տեր մանկավարժ, փիլիսոփա, աստվածաբան, եկեղեցական նշանավոր գործիչ էր: Նա Անիի և Կիլիկիայի դպրոցներից բացի մեծ ազդեցություն է թողել ժամանակի մտավոր կյանքի վրա: Անանիա Նարեկացին, ինչպես և իր գործակիցները, խոր իմացություն են հանդես բերել ժամանակի գիտության բոլոր բնագավառներում:

Նրանք ծանոթ էին նախորդ դարաշրջանի հայ գիտական մտքի, հունաբան դպրոցի ներկայացուցիչների (Դավիթ Անհաղթ, Դավիթ Քերական, Ստեփանոս Սյունեցի, Անանիա Շիրակացի) գործերին: Օգտագործվել են նաև անտիկ հեղինակների (Պլատոն, Արիստոտել և ուրիշներ) աշխատությունները: Նարեկյան դպրոցի ձևավորման ու զարգացման մեջ մեծ ազդեցություն են թողել հատկապես Դիոնիսիոս Արեոպագացուն վերագրվող երկերը: Անանիա Նարեկացու խրատները լայն տարածում են գտել, դրանցում հարուստ նյութ կա վանական կենցաղավարության, բարոյագիտության միստիկայի ու նրա առանձնահատկությունների մասին: Այդուհանդերձ խրատաշարքում գլխավորը մարդու մաքրման, փրկության խորհուրդն է: Նրա այդ գործերում երևան է

գալիս հեղինակի վերաբերմունքը լեզվի ու պատկերավոր մտածողության նկատմամբ:

Խոսրով Անձևացու (Գրիգոր Նարեկացու հոր) գրական ժառանգության մեջ կարևոր տեղ է գրավում «Մեկնութիւն ժամակարգութեան» աշխատությունը, որը եղել է կրթական ձեռնարկ և որոշակի ազդեցություն է թողել Նարեկյան դպրոցի ձևավորման և զարգացման ընթացքի վրա: Մեծ է եղել այդ աշխատության հոգևոր-կրթական նշանակությունը: Նա ձգտում է հավատացյալների մեջ սեր արթնացնել գրի ու գրականության նկատմամբ: Խոսրով Անձևացու համար առաջնային են եղել Ս. Գրքի և հոգևոր գործերի ընթերցանությունը, ուսումնասիրումը, վերծանությունը և մեկնաբանությունը: Խրատաբանության հեղինակը տեղ է հասցնում անհրաժեշտ գիտելիքները: Նա, մերժելով օտարամոլությունը, ընդգծում է հայոց լեզվի, հայ գրի նշանակությունը:

Նարեկյան դպրոցի շուրջ կեսդարյա խաչասերումների, կուտակումների, ստեղծագործական ձեռքբերումների ծնունդ էր Գրիգոր Նարեկացին: Հենց միայն այդ իրողությունից կարելի է հետևեցնել, որ այդ վանքը բանասիրական, մատենագրական զորեղ կենտրոն է եղել: Անանիա Նարեկացու մահից հետո նրան փոխարինել և վարդապետարանը գլխավորել է Գրիգոր Նարեկացին:

Գիտական այդպիսի միջավայրի վարդապետարանը չէր կարող բարձր որակավորում չունենալ, իսկ նրա սաները պատշաճ գիտելիքներ չստանային: «Պահպանված աշխատությունների շնորհիվ,- գրում է Հրաչյա Թամրազյանը,- ուրվագծվում է Նարեկյան դպրոցի գիտակրթական համակարգը, որը համապատասխանում է միջնադարյան բարձրագույն դպրոցների մակարդակին: Այստեղ դասավանդվում էին «յոթ ազատ արվեստները», հատուկ ուշադրություն էր դարձվում «արտաքին» գիտելիքների վրա»[103]:

Գիտությունը և ուսուցումը համատեղվում էին նաև Հայաստանի մյուս վարդապետարաններում, որտեղ ստեղծագործում

---

[103] Հրաչյա Թամրազյան, Գրիգոր Նարեկացին և Կիլիկիայի բանաստեղծական արվեստի դպրոցը, Երևան, 2007, էջ 42:

էին նույնպես ժամանակի անվանի դեմքերը: Այդ վարդապետարանների և նրանց ուսուցչապետերի գործունեության մասին, ցավոք, շատ սակավ տեղեկություններ են պահպանվել:

Նշանավոր է եղել Սանահինի մտավոր կենտրոնը, որը գոյատևել է դարեր շարունակ: Ժամանակակիցները գիտակրթական այդ օջախը բնութագրում են որպես բարձր աստիճանի հասած «մեծահռչակ» հաստատություն:

Դասընթացներն անց են կացվել «Մագիստրոսի ճեմարան» կոչված քարե նստարաններ ունեցող կամարակապ գեղեցիկ շենքում: Գրիգոր Մագիստրոսն այստեղ դասախոսություններ է կարդացել, ինչի համար էլ դահլիճը և շենքը կոչվել են իր անունով: Սանահինի կրթական այդ կենտրոնը հովանավորում էին Աշոտ 3-րդ թագավորը և կինը՝ Խոսրովանուշը, որտեղ թաղված էին իրենց ազգական Կյուրիկյանները: Սանահինում դասավանդել են աստվածաբանություն, քերականություն, տոմարագիտություն, երաժշտություն և այլ առարկաներ: Սանահինում և Հաղպատում հոգևորականների հետ սաների թիվը հասնում էր 500-ի[104]:

Սանահինում XII դարում ուսուցչապետ էր Գրիգոր Տուտեորդին, որը ճանաչված հեղինակություն էր նաև Կիլիկիայի կաթողիկոսարանում և արքունիքում: XIII դարում ուսուցչապետերի մեջ նշանավոր դեմք էր Աբասի որդի Գրիգորը: Նա տվեց բազմաթիվ երկերի մատենագրական տեսությունը, դրանց ստեղծման հակիրճ պատմությունը, որը բանասիրության մեջ հայտնի է «Պատճառաց գիրք» անունով: Այս աշխատությունն աստվածաբանության, եկեղեցու հայրերի գործունեության, փիլիսոփայության, քերականության, ճարտասանության վերաբերյալ ներածական բնույթ ունեցող աշխատություն է: «Պատճառաց գիրքը» դասագրքի դեր է կատարել բարձրագույն դպրոցների համար[105]: Սանահինը հայ դպրության մեջ իր ավանդն է թողել որպես «գրչության արվեստի» կենտրոն, որտեղ բազմաթիվ ձեռագրեր են արտագրվել, բազմացվել:

Հաղպատի ուսումնագիտական հաստատությունը նշանավոր է եղել ամբողջ երեք դար՝ XI–XIII դարերում: Հաղպատում

---

[104] «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, Երևան, 1976, էջ 314:
[105] Նույն տեղում, էջ 790-791:

ծավալվել են մատենագրական-գիտական բեղուն աշխատանքներ: Գիտակրթական այս հաստատությունը տվել է հայ մատենագրության մի շարք անվանի դեմքեր: Հատկանշական է, որ մշակութային այս կենտրոնը ձեռագրական աղբյուրներում անվանվել է «մայրաքաղաք»: Հայ դպրության միջնադարյան ամենահարուստ գրադարան-մատենադարաններից մեկը Հաղպատինն է եղել[106]:

Հաղպատում մեծ ավանդ ունի մեծանուն գիտնական Հովհաննես Իմաստասերը (Հովհաննես սարկավագ վարդապետ), որը իր գործունեությամբ մտավոր այդ կենտրոնը զարգացման գագաթնակետին հասցրեց: Մեծ է նրա ներդրումը իմաստասիրության, տոմարագիտության մեջ: Գարեգին Հովսեփյանը նրա աշակերտների մեջ հիշատակում է Երեմիայի, Անձրևիկի, Խաչատուրի, Գրիգորի, Հովհաննեսի և Սամվել Անեցու անունները: Նա Հաղպատը դիտում է որպես գրչության դպրոցի կենտրոն և պատմում է, որ այստեղ ստեղծագործական այնպիսի կյանք կար, վարդապետների և աշակերտների այնպիսի բազմություն, որ պետք է ծաղկեր նաև գրչության արվեստը[107]: Հովհաննես Իմաստասերը հարաբերվում էր այդ կենտրոնում գործող լուսավորիչ, իրավաբան Դավիթ Ալավկա որդու, Դավիթ Քոբայրեցու և ուրիշների հետ:

Դավիթ Քոբայրեցին անվանի ուսուցիչ էր, պարապում էր «Պատճառաց գրքով», նա մասնակցել է Զաքարիա սպասալարի Լոռիի (1204 թ.) և Անիի (1205 թ.) ժողովներին: Նշանավոր է եղել Վարդան Հաղպատեցին, որը մեկնել է Կիլիկիա՝ Ներսես Շնորհալու մոտ, հմտացել ասորերենի և հունարենի մեջ: Շնորհալու մահից հետո մեկնում է Հաղպատ և գործում այստեղ: Իր աշակերտ Խաչատուրը բարձր է գնահատում նրա ծառայությունը[108]:

Միջնադարյան Հայաստանի բարձրագույն դպրոցների մեջ նշանավոր էր մասնավորապես Գլաձորի համալսարանը: Այդ վարդապետության հիմնադիրն է Ներսես Մշեցին: Նա Խոր Վիրա-

---

[106] Նույն տեղում, էջ 315:

[107] Գ. Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի ու մշակույթի պատմության, պր. Ե, Երուսաղեմ, 1935, էջ 68-70:

[108] Ա. Ալպոյաջյան, Պատմություն հայ դպրոցի, հ. Ա, Գահիրե, 1946, էջ 233-234:

պի վարդապետության ուսուցչապետ Վարդան Արևելցու սանն էր: Իր նախնական կրթությունը ստացել էր Մշո Առաքելոց կամ Ս. Ղազարի վանքում, ապա մեկնել (1266 թ.) Խոր Վիրապ՝ գիտելիքները խորացնելու, որտեղ էլ ստացել էր վարդապետական աստիճան[109]: Վարդան Արևելցու մահից հետո նա (1271 թ.) փոխարինում է ուսուցչապետին, ապա դպրոցը տեղափոխում Տարոնի Առաքելոց վանքը, որտեղ գործում է շուրջ մեկ տասնամյակ: Մինչև 1281 թ. Ներսես Մշեցու վարդապետությունը, Մշո Առաքելոց վանքում էր, իսկ հաջորդ տարում, հալածվելով քրդերից, անցնում է Վայոց ձոր[110]:

«Զաքարյանների շրջանում և նրանց շնորհիվ,- գրում է մեծանուն պատմաբան Նիկողայոս Ադոնցը,- երևան են գալիս մի քանի իշխանական գերդաստաններ, որոնք հաջողում են խոհուն քաղաքականությամբ մեղմել ահարկու բռնակալությունը և ստեղծել տանելի պայմաններ՝ խաղաղ աշխատանքի համար: Պռոշյան, Օրբելյան, Դոփյան, Ջալալյան, Վաչուտյան և այլ տոհմերը լուսաշող աստղերն են հայ մտքի երկնակամարում, որոնք առաջնորդում են աշխարհաշեն և մտացի ուժերը»[111]: Ինչպես հայտնի է, Թամար թագուհու օրոք (1184-1213 թթ.) հայ-վրացական զորքը Զաքարե և Իվանե Զաքարյանների գլխավորությամբ XII դարի վերջին սելջուկ թուրքերից ազատագրում է Վրաստանի և Հայաստանի տարածքները: Զաքարյան եղբայրները ազատագրված տարածքներից հատկացնում էին իրենց զորահրամանատարներին, Լիպարիտ Օրբելյանը ստանում է Սյունիքը, իսկ Վասակ Խաղբակյանը կամ Պռոշյանը՝ Վայոց ձորի մի մասը: Այս իշխանական տները և տասներկու թեմերի հոգևոր առաջնորդ,

---

[109] Տե՛ս Լ. Գ. Խաչերյան, Գլաձորի համալսարանը հայ մանկավարժական մտքի մեջ (XIII-XIV դդ.), Երևան, 1973, էջ 19-20:

[110] Տե՛ս Ս. Արևշատյան, Ա. Մաթևոսյան, Գլաձորի համալսարանը միջնադարյան Հայաստանի լուսավորության կենտրոն, Երևան, 1984, էջ 11-12:

[111] Գ. Կաթողիկոս Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ, Անթիլիաս-Լիբանան, 1969, էջ 462: Գ. Հովսեփյանի «Հոգևոր կենտրոններ և Գլաձորի բարձր դպրոցը» ուսումնասիրությունը ներկայացվում է «Թարգմանչաց-Դուրյան» մրցանակի: Մրցանակի հանձնախումբը աշխատությունը կարծիքի է ուղարկում Նիկողայոս Ադոնցին, որը 1936 թ. դեկտեմբերին տալիս է դրական գրախոսություն: Ն. Ադոնցի կարծիքը տպագրվել է Գ. Հովսեփյանի «Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ» գրքում (էջ 462-466):

կաթողիկոսի կողմից Սյունյաց մետրոպոլիտ հաստատված Ստեփանոս Օրբելյանը հովանավորում էին Գլաձորի համալսարանը: Նրանք, վասալական կախման մեջ լինելով մոնղոլներից, կարողացել էին որոշ ինքնավար իրավունքներ ձեռք բերել: Ստ. Օրբելյանն իր լիազորությունները և եկեղեցու կալվածքները վերականգնելու համար երեք անգամ մեկնել է մոնղոլ խաների նստավայրը և վերադարձել դրական արդյունքներով[112]:

Մի վայրում, եթե գիտաուսումնական գործընթացը կազմակերպելու կամ շարունակելու համար օտար տիրապետության պայմաններում անապաստ կամ անհնարին իրավիճակ էր ստեղծվում, լուսավորության գործի նվիրյալները, այդ թվում՝ վարդապետարանների ավարտող, վարդապետի աստիճան ստացող սաները թողնում հեռանում էին լեռներով պատսպարված համեմատաբար խաղաղ մի անկյուն և այստեղ շարունակում կամ սկսում կրթական գործը: Ն. Ադոնցը նշում է Զաքարյանների շրջանում հայ իշխանական տների գոյության մասին, հարկ է հավելել, որ ոչ միայն Զաքարյանների շրջանում, այլև հետագա դարերում, թեկուզ և թուլացած, հայ իշխանական որոշ տներ պահպանվում էին երկրի տարբեր վայրերում: Նրանք, որպես կանոն, հովանավորում էին գիտակրթական, առհասարակ մշակութային ձեռնարկումները: Ուսումնակրթական այդ ջանքերի շնորհիվ է, որ սելջուկյան, ապա մոնղոլական տիրապետության դժվարին պայմաններում ոչ միայն չխաթարվեց, այլև ավելի մեծ թափ առավ վարդապետական ուսուցումը:

1282 թ. Ներսես Մշեցին իր դպրոցը հիմնում է Վայոց ձորի Աղբերց վանքում, որը հետագայում անվանվում է Գլաձորի վանք, իսկ վարդապետությունը՝ Գլաձորի համալսարան[113]: Նա մշակեց դպրոցի ուսուցման ծրագիր, որի մեջ ընդգրկված էին աստվածաբանություն, քերականություն, մատենագրություն, փիլիսոփայություն, երաժշտություն և այլ առարկաներ: Տարբեր տեղերից

---

[112] Լ. Խաչերյան, Գլաձորի համալսարանը..., էջ 76:

[113] Ս. Արևշատյան, Ա. Մաթևոսյան, նշվ. աշխ., էջ 12: Լ. Խաչերյանը նշում է, որ Վայոց ձորի Աղբերց վանքում հաստատվել էին քրդերից հալածված երիտասարդներ, որոնք եկել էին Մշո Գլաձորի վանքից: Նրանք էլ 1291 թ. Աղբերց վանքը վերանվանեցին Գլաձորի վանք (Լ. Խաչերյան, Գլաձորի համալսարանը, էջ 45):

հավաքագրեց խոստումնալից աշակերտներ: Ուսումնագիտական կենտրոնն ապահովեց լավ դասախոսներով: Նրանցից էին իր աշակերտ և Սասունից իր հետ եկած Եսայի Նչեցին, Դավիթ Սասնեցին և ուրիշներ: Ներսես Մշեցին արդյունավետ աշխատանքներ կատարեց ոչ այնքան մատենագրության ոլորտում, որքան վարժ ու հմուտ սաներ պատրաստելով[114]: Նա Եսայի Նչեցուն ձեռնադրում է վարդապետ և կարգում փոխարինող: Իր մահից հետո (1284 թ.) Նչեցին դառնում է ուսումնարանի ուսուցչապետ և մեծ բարձունքի է հասցնում գիտակրթական այդ կենտրոնը: Գլաձորի համալսարանի հռչակը տարածվում է ամբողջ Հայաստանում: Ժամանակակիցները այն «երկրորդ Աթենք» են համարել: XIII դ. մի ձեռագրում գրիչը հայտնում է.

Որոյ եկեալ յայս գաւառի,
Որում անուն Վայոց ձոր կոչի,
Հունց ի շիրիմըն Սիւնեցի
Ի յ Աղբերդ վանս մենաստանի,
Յերկրորդ Աթէնս պանծալի,
Առ ոտս մեր Ներսէսի,
Եւ րաբունեաց վարժապետի...[115]

Գլաձորի ուսումնակրթական կենտրոնը ժամանակակիցները և հայագետ ուսումնասիրողները համարել են համալսարան: Նրանցից են Կյուրեղ Րաբունապետը, նշանավոր մատենագիր Հովհան Քռնեցին, անվանի պատմիչ Ստեփանոս Օրբելյանը, ինչպես նաև ականավոր հայագետ Ղևոնդ Ալիշանը և ուրիշներ[116]:

Համալսարանի ուսումնական ծրագիրը եղել է «յոթ ազատ արվեստների» կամ յոթ իմաստասիրական առարկաների յուրացումը, ինչպես նաև որոշ այլ գրքերի ուսումնասիրությունը: Գլաձորում ու նրա ավանդները շարունակող և զարգացնող Տաթևի ուսումնագիտական կենտրոնում ուսուցանում էին միջնադարյան համալսարաններում ընդունված աշխարհիկ ու հոգևոր կրթությանը նվիրված առարկաների մի ամբողջ համակարգ:

---

[114] Լ. Խաչերյան, Գլաձորի համալսարանը..., էջ 35:
[115] Յ. Տաշյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանի Մխիթարյանց, Վիեննա, 1895, էջ 1039:
[116] Լ. Խաչերյան, Գլաձորի համալսարանը..., էջ 56, 58, Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 133:

Բարձրագույն դպրոցներում կամ վարդապետարաններում հիմնական դասընթացը եղել է աստվածաբանությունը, Հին և Նոր Կտակարանների յուրացումը: Նույնն է եղել նաև եվրոպական երկրների միջնադարյան համալսարաններում: Հայաստանում ձեռագրերի ստեղծման, արտագրության, դրանցով ուսուցանելու գործնական պահանջի թելադրանքով էական տեղ էր տրվում բանասիրությանը:

«Յոթ ազատ արվեստները» կամ գիտության յոթ ճյուղերը բաժանվում էին երկու մասի, եռյակ՝ քերականություն, ճարտասանություն ու տրամաբանություն, և քառյակ՝ թվաբանություն, երկրաչափություն, աստղաբաշխություն ու երաժշտություն: Եռյակն ընդգրկում էր հասարակական գիտությունների ոլորտը, իսկ քառյակը՝ բնական կամ ճշգրիտ գիտությունները:

Եռյակ ուսուցման առաջին անհրաժեշտ առարկան քերականությունն էր: Դրանով գիտելիքներ էին տրվում ոչ միայն լեզվի առանձնահատկությունների, օրինաչափությունների, այլ նաև գրականության տեսության, արվեստի, իմաստասիրության, ճարտասանության, երաժշտության վերաբերյալ: Այդ պատճառով քերականությունը հաճախ դիտվում էր որպես նախապատրաստական առարկա և որպես ուսումնական հիմնական առարկա դրված է եղել ինչպես եվրոպական, այնպես էլ Հայաստանի միջնադարյան համալսարանների ուսուցման ծրագրերի հիմքում: Գլաձորում հատկապես առաջ մղվեց քերականական միտքը: Նրա սաներից Հովհաննես Ծործորեցին, Հովհաննես Քռնեցին դպրոցներ հիմնեցին իրենց ծննդավայրերում և շարունակեցին ու խորացրին Գլաձորի ավանդները[117]:

Համալսարանում այս առարկան ուսուցանվում էր հիմնականում Եսայի Նչեցու «Վերլուծություն քերականության» աշխատությամբ: Անվանի հայագետ Գ. Հովսեփյանը համալսարանի րաբունապետի գործունեությունը երեք մասի է բաժանում՝ դպրոցական, եկեղեցական և մատենագրական – գիտական: Նչեցին աղբյուրները և գրականությունն օգտագործելու մեծ հմտություն ուներ: Գ. Հովսեփյանը ծանրակշիռ աշխատություն է համարում Եզեկիելի մեկնությունը, որը նա գրել է 1302 թ. Ստ. Օրբելյանի

[117] Ս. Արևշատյան, Մ. Մաթևոսյան, նշվ. աշխ., էջ 29:

պատկերով: Նչեցու այդ գործը նշանավոր է առատ աղբյուրների օգտագործմամբ, որոնց մեջ հիմնականը եղել է Կյուրեղ Ալեքսանդրացին: Նա օգտվել է այնպիսի աղբյուրներից (Որոգինես, Յիպոլիտ և ուրիշներ), որոնց բնագրերը կորած են:

Նչեցու երկրորդ ծավալուն աշխատությունը քերականությունն է, որը նույնպես ստեղծվել է՝ հիմնվելով նախորդ հեղինակների գործերի վրա: Նա օգտվել է Յովհաննես Երզնկացու՝ 1281 թ. Կիլիկիայում դասախոսած աշխատությունից: Նչեցու աշխատության մեջ էականը քարոզն է: Նա տիրապետում էր հունարենին: Լ. Խաչերյանը գտնում է, որ հայ քերականագիտությունը արգասավորվել է հունական միջավայրից, սակայն այն ձևավորվել ու զարգացել է՝ սնվելով հայկական դպրության ակունքներից[118]:

Եռյակ ուսուցման երկրորդ առարկան ճարտասանությունը կամ հռետորությունն էր, որը միաժամանակ անհրաժեշտ գիտելիքներ էր տալիս գրական ստեղծագործության, ոճաբանության, գեղագիտության վերաբերյալ: Այս առարկան սովորեցնում էր ճառ, քարոզ, պաշտոնական ուղերձներ, նամակներ գրելու արվեստը: Յռետորությունն այն զենքն էր, որով իր ազդեցությունն էր տարածում եկեղեցին, ընդդիմանում բոլոր հերձվածներին ու թշնամական հոսանքներին: Ճարտասանությանը պատշաճ տեղ էր հատկացվում հենց նրանով, որ «Գիրք Պիտոյից»-ը քանիցս ընդօրինակվել է Գլաձորի համալսարանում: Այն ոչ միայն պերճախոսության, այլև համոզելու արվեստն էր: Այդ առումով ճարտասանը մեծ պատրաստություն, լայն մտահորիզոն ունեցող անձնավորություն պետք է լիներ:

Երրորդ առարկայի՝ տրամաբանության կամ դիալեկտիկայի ուսուցման համար օգտագործվում էին Արիստոտելի, Պորփյուրի և Դավիթ Անհաղթի երկերը: Այս բնագավառում Նչեցու գործը շարունակեց ու խորացրեց Յովհան Որոտնեցին, որը գրեց մի քանի աշխատություններ ու առարկայի դասավանդումն ավելի բարձր

---

[118] Լ. Խաչերյան, Գլաձորի համալսարանը..., էջ 112: Այս նույն դարաշրջանի բարձրագույն դպրոցներում ավանդվող առարկաների մեկնաբանմանն անդրադարձել են նաև արվեստաբանները (տես Արա Յակոբյան, Բաղեշի Ամիրդոլլու համալսարանը և կերպարվեստը այդ կրթարանում. XVII դար, Երևան, 2012, էջ 18-24:)

ատիճանի վրա դրեց իր վերահաստատած Որոտանի և Տաթևի համալսարաններում: Նա օգտագործեց Արևմտյան Եվրոպայում ստեղծված տրամաբանական երկասիրությունները, որոնց թարգմանությունները կատարվել էին Քռնայի դպրոցում: Հովհաննես Քռնեցին՝ Եսայի Նչեցու աշակերտը, դավանանքի հարցում շեղվեց իր ուսուցչի ուղուց, կաթոլիկություն ընդունեց, երբ իր հրավերով Մարաղայից եկավ կաթոլիկ քարոզիչ Բարդուղիմեոս Բոլոնյացին: Այդուհանդերձ, գիտության բնագավառում շարունակեց Գլաձորի ավանդները և որոշակի ներդրում ունեցավ գիտության ասպարեզում[119]:

Եռյակ գիտություններին տիրապետելուց հետո ուսանողները կարող էին խորանալ փիլիսոփայական երկերի ուսումնասիրության մեջ: Այստեղ որպես հիմնական դասագիրք օգտագործում էին Դավիթ Անհաղթի «Սահմանք իմաստասիրութեան» և Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» աշխատությունները, Փիլոն Ալեքսանդրացու, Արիստոտելի, Պորփյուրի երկերը:

Քառյակ ուսուցումը սկսվում էր թվաբանությունից, և որպես դասագիրք օգտագործվում էր Անանիա Շիրակացու «Քրոնիկոնը»: Երկրաչափությունը ուսուցանվում էր աշխարհագրությանը զուգահեռ՝ Անանիա Շիրակացու և Վարդան Արևելցու ձեռնարկներով:

Բարձրագույն կրթություն ստանալու համար Հայաստանի տարբեր վայրերից, Կիլիկիայից Գլաձորի ճանապարհն էին բռնում շատ – շատերը: Սովորողների ընդհանուր քանակը հասնում էր մինչև 363-ի[120]: Նրանց զգալի մասը, ավարտելով համալսարանը և վարդապետական աստիճան ստանալով, երկրի տարբեր մասերում հիմնել են վարդապետարաններ: Այլ խոսքով, Գլաձորի համալսարանը և նրա շառավիղներն ավելի քան մեկուկես դար գիտակրթական, լուսավորական, հասարակական լայն գործունեություն ծավալեցին[121]: Այսպես, Մխիթար Սասնեցին հաստատվում է Քաջբերունի գավառի Մեծոփա վանքում: Նչեցու

---

[119] Գ. Հովսեփյան, Խաղբակյանք..., էջ 284:
[120] Տե՛ս Ա. Մովսիսյան, Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության (V-XV դարեր), Երևան, 1958, էջ 176:
[121] Ս. Արևշատյան, Ա. Մաթևոսյան, նշվ. աշխ., էջ 41:

հանձնարարությամբ պայքարում է միարարների դեմ: Կողքա վանքի դպրոցում էր Մատթեոս Սլիճեցին, որը քահանայություն էր ստացել Կիլիկիայի Սլիճի վանքում: Առաքել Հաղպատեցին ղեկավարում էր Տփղիսի դպրոցը, Կիրակոս Երզնկացին հայրենի գավառում րաբունապետ էր: Սալմաստի դպրոցի րաբունապետը Ավագն էր, իսկ Թեղենիքի դպրոցում՝ Մկրտիչ Թեղենացին: Հովհաննես Քռնեցին Քռնայում, Հովհաննես Ծործորեցին Ծործորի վանքում, Ներսես Տարոնացին Տարոնի Առաքելոց վանքում ուսուցչապետեր էին[122]: Գլաձորի հետ էր կապված գրիչ, մանրանկարիչ, ճարտարապետ մեծանուն Մոմիկը, ում վերջին գործը եղավ Նորավանքի երկհարկ դամբարան – եկեղեցին:

Եսայի Նչեցու մահից հետո (1338 թ.) մարում է Գլաձորի համալսարանը, որը կապված էր Պռոշյանների և մյուս իշխանական տներին հալածելու մոնղոլական պետության նոր քաղաքականության հետ: Երկրորդ ուսուցչապետ Տիրատուր Կիլիկեցին, որը եկել էր Կիլիկիայի Սկևռայի վանքից, թողնում է Գլաձորը և վարդապետությունը ու հաստատվում Վայոց ձորի Հերմոնի վանքում: Այս վանքի համալսարանի աչքի ընկնող սաներից էին Գրիգորը, Կիրակոսը և Հովհան Որոտնեցին, որը վարդապետական աստիճան էր ստացել Տիրատուր Կիլիկեցուց[123]: Որոտնեցին սկզբում կարգվում է Տիրատուրի օգնական, իսկ 1356 թ. որպես համալսարանի րաբունապետ փոխարինում նրան:

Որոտնեցու համալսարանը Տաթևում և Որոտնավանքում մնում է մինչև 1384 թ.՝ թուրքերի կողմից Որոտանի գրավումը: Դրանից հետո Որոտնեցին տեղից տեղ է փոխադրվում և երկու տարի հետո մահանում է: Նրան փոխարինում է Գրիգոր Տաթևացին: Վերջինս 1373 թ. վարդապետության աստիճան է ստանում ու Տաթևում ուսումնամանկավարժական, մատենագիտական, հասարակական լայն գործունեություն ծավալում: 1408 թ. նա տեղափոխվում է Մեծոփա վանք և այնտեղ հիմնում գրչության բարձր տիպի դպրոց: 1409 թ. Տաթևացին Երևանի Անանիա Առաքյալի վանքում վարդապետական աստիճան է տալիս քաջբերունցի իր 10 աշակերտներին: Նրանք Տաթևի համալսարանի

---

[122] Նույն տեղում, էջ 44-45:
[123] Գ. Հովսեփյան, Խաղբակյանք..., էջ 295-296:

վերջին շրջանավարտներն էին: Րաբունապետ Գրիգոր Տաթևացին մահանում է 1410 թ.: Նրա աշակերտներից Թովմա Մեծոփեցին ղեկավարում էր տեղի բարձրագույն դպրոցը, իսկ Յովհաննես Հերմոնեցին Հերմոնի դպրոցը: Տաթևացու այս երկու աշակերտները կատարեցին իրենց ուսուցչի ցանկությունը. ամենայն հայոց կաթողիկոսությունը վերահաստատեցին իր օրինական տեղում՝ Վաղարշապատի Ս. Էջմիածնի վանքում[124]:

Նկատենք, որ Գլաձորի համալսարանը Եսայի Նչեցու գլխավորությամբ Սյունյաց եպիսկոպոսության հետ դարձավ Յռոմի պապից եկող կաթոլիկության տարածման դեմ պայքարի հիմնական կենտրոնը:

Վարդապետարաններում ուսանում էին գերազանցապես քահանայական աստիճան ունեցողները: Քահանայական ուսուցումը տևում էր 3 տարի, իսկ վարդապետական աստիճան ստանալու համար սահմանվում էր 7-8 տարի: Շրջանավարտը պարտավոր էր քննություններ հանձնել անցած դասընթացից: Դրանից զատ նա ավարտաճառ էր ներկայացնում, որի պաշտպանությունը կատարվում էր հրապարակավ, հատուկ հանձնախմբի միջոցով[125]: Պատահում էր, որ ուսանողը չէր բավարարվում տվյալ վարդապետարանի ուսուցման մակարդակով և իր գիտելիքները հարստացնելու նպատակով գնում էր այլ վարդապետարաններ: Կիրակոս Գանձակեցին պատմում է, որ Մխիթար Գոշը, որն ուսանել էր Յովհաննես Տաուշեցու մոտ և չէր բավարարվել ստացած գիտելիքներով, երկար ճանապարհ է կտրել Արևելյան Յայաստանից հասնելով Կիլիկիա: Նա Սև լեռան հռչակավոր վարդապետարանում հարստացնում է իր գիտելիքները թաքցնելով վարդապետական աստիճան ունենալու հանգամանքը. «Կացեալ առ սմա Մխիթարայ և այլս ոմանս, էառ նա զանուն վարդապետական: Եւ այնու ո՛չ շատացաւ, այլ՝ չոգաւ նա յարևմուտս

[124] Ս. Արևշատյան, Ա. Մաթևոսյան, նշվ. աշխ., էջ 51:

[125] Լ. Խաչիկյանը պարզել է, որ Գլաձորի համալսարանի ուսանողները ներկայացրել են ավարտաճառեր: Նա Ս. Մաշտոցի անվ. Մատենադարանի 631 ձեռագրում հայտնաբերել է 8-10 էջից բաղկացած տասից ավելի ավարտաճառեր, որոնք մասնագետները համարել էին քարոզներ (տե՛ս Լ. Խաչիկյան, Գլաձորի համալսարանը և նրա սաների ավարտական ատենախոսությունները, Պետական համալսարանի գիտական աշխատություններ, հ. 23, 1946, էջ 434):

կոյս յաշխարհն, որ կոչի Սեաւ լեռն, առ վարդապետսն որք էին անդ ուսուցիչք, և զայն ինչ ի վեր ոչ հանեալ, թէ իցե նորա առեալ, զայն պատիւ, այլ բազում ինչ օգտեալ ի նոցանէ, եկն նա ի Կարնոյ քաղաք»[126]:

Գլածորը եզակի չէր ամբողջ Հայաստանում: Բագրատունյաց շրջանից սկսած՝ գիտակրթական ծավալուն շարժում էր սկսվել: Մտավոր այդ շարժումը, XII դարում նոր թափ առնելով, առավել ուժգին դրսևորվեց: Դրա նախաձեռնողներն էին ժամանակի գրասեր դեմքերը, գերազանցապես հոգևորականները, ովքեր որպես կանոն ունեին տեղի իշխանական տների և բնակչության աջակցությունն ու հովանավորությունը: Խոսելով վարդապետարանների մասին՝ Ն. Ադոնցը գրում է. «Բարեպաշտ մարդիկ, այր թե կին, իշխանաւոր թէ համեստ աշխատաւոր, չեն զլանում իրենց նուէրները մեծ հաստատութեանց, գիտենալով, որ այն տեղ են կռում հայ ժողովրդի գոյութեան հիմ՝ բարոյական հիմքերը»[127]:

Գիտալուսավորական այդ կենտրոններում ուսուցման գործընթացն ընթանում էր երկու ուղղությամբ: Հիմնվում էին վարդապետարաններ, որտեղ, ինչպես նշվեց, բարձրագույն դպրոցի եռյակ կամ քառյակ ծրագրերով, կամ այդ առարկաների մի մասով կազմակերպվում էր ուսուցումը, որն ավարտելով՝ սաները ստանում էին վարդապետական աստիճան: Ուսուցման մյուս, նույնպես տարածված ձևն այն էր, երբ մեկ կամ մի քանի երիտասարդներ հմուտ մասնագետների մոտ տարիներով մասնագիտանում էին ձեռագրական գործի մեջ, ուսումնասիրում, արտագրում ձեռագրեր, մատենագրի պատրաստություն ստանում:

Նոր Գետիկի կամ Գոշավանքի վարդապետարանը XII-XIII դարերում արգասավոր էր գործում: Մխիթար Գոշը Կիլիկիայից վերադարձել էր Կարին և իր վարդապետարանը նախապես հիմնել էր այնտեղ, ապա փոխադրվել Գանձակ: Այստեղ ևս հարմարավետ չէր, ուստի տեղափոխվում է Գետիկի վանքի մերձակա Տանձուտ ձորը, որտեղ հիմնում է Գետիկի վարդապետարանը, ո-

---

[126] Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, աշխատասիրությամբ՝ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 208:
[127] Գ. Հովսեփյան, Խաղբակյանք..., էջ 463:

րը հետագայում անվանվում է Գոշավանք: Գոշավանքի կառուցմանը և Գոշի գիտաուսումնական ձեռնարկումները հովանավորում էին Զաքարյան եղբայրները, հատկապես Իվանե Զաքարյանը, իսկ հետագայում նրա որդի Ավագը:

Մխիթար Գոշի և իր հիմնադրած վարդապետարանի մասին հանգամանալի տեղեկություններ է հաղորդում Կիրակոս Գանձակեցին, որը սովորել է հենց այդ ուսումնարանում: Գոշի համբավը տարածված էր, և շատ-շատերն էին գալիս նրա մոտ ուսանելու. «Բազումք էին, որք աշակերտեցան ի նմանէ վարդապետական բանին, քանզի համբաւ իմաստութեան նորա հռչակեցու ընդ ամենայն տեղիս»[128]: Վարդապետական կրթությանն այնքան մեծ կարևորություն էր տալիս Գոշը, որ իր հեղինակած Դատաստանագրքում օրինականացնում է վարդապետական աստիճան ստանալու կարգը: Նա գտնում է և արձանագրում, որ հատուկ հանձնաժողովն է իրավասու քննություն վերցնել սովորող սաներից և ոչ թե սովորողի ուսուցիչը: Գոշի մահվանից հետո նրա աշակերտ Մարտիրոսը հաջողությամբ շարունակեց ուսուցչի գործը, և վարդապետարանը արդյունավետ գոյատևեց. «Եւ բազում եղբարք ժողովեցան վասն հռչականուն տեղւոյն, և բազմաց եղև տեղի սննդեան և ուսման, որ և մեք, իսկ սնեալ և ուսեալ եղաք ի նոյն վանս»[129]:

Գոշի աշակերտներից շատերը այլ վայրերում դպրոցներ բացեցին և շարունակեցին մտավոր գործունեությունը: Այսպես, Վարդան Արևելցին մեկնում է Երուսաղեմ, անցնում է Կիլիկիա, ներկա լինում 1243 թ. Սսի եկեղեցական ժողովին, ապա գալիս է Խոր Վիրապ ու հիմնում վարդապետարան[130]: Վարդան վարդապետի բարձրագույն դպրոցում սովորում էին 40 աշակերտներ: Դավիթ Երեցը 1290 թ. մեկնում է. «յԱրարատեան գաւառն ի վանքն սրբոյն Գրիգոր Լուսավորչին՝ առ հռչակավոր իմաստասէր վա՛րդապետն հայոց Վարդան, որ և դպրոց կարգեալ էր նորա աշակերտօք»[131]: Նրա աշակերտների թվում էին Յովհաննես

[128] Կիրակոս Գանձակեցի, նշվ. աշխ., էջ 217:
[129] Նույն տեղում, էջ 222:
[130] Ա. Ալպոյաջյան, նշվ. աշխ., էջ 241-242:
[131] Յայոց նոր վկաներ, աշխատասիրությամբ՝ Յ. Մանանդյանի և Յ. Աճառյանի, Վաղարշապատ, 1903, էջ 105:

Երզնկացին, Ներսես Մշեցին և նշանավոր այլ անձինք: Վարդան Արևելցին լինում է Յառիճի վանքում, Խորակերտում, Յաղպատում: Նա մահանում է 1271 թվականին, որից հետո հայտնի չէ, թե ինչ ճակատագիր է ունեցել Խոր Վիրապի դպրոցը:

Երզնկա քաղաքում և մերձակա Սեպուհ լեռան սրբավայրերում գործում էին վարդապետարաններ, որտեղ կային նշանավոր մտավորականներ, գիտուններ, որոնց շուրջն էին համախմբվում ուսումնասեր երիտասարդները: Յովհաննես Երզնկացու տաղերին նվիրված ուսումնասիրության մեջ բանասեր Արմենուհի Սրապյանն իրավամբ գրում է. «Այնքան մեծ է եղել Երզնկայի համալսարանների ազդեցությունը և ուժը, որ այնտեղ սովորած և ուսումնական վարդապետի աստիճանի հասած անվանի դեմքերից ոմանք, թողնելով իրենց հայրենի անունը, վերակոչվել են երզնկացիներ: Դրանցից նշանավոր է Գրիգորիս Երզնկացին, որի ծննդավայրը Խարբերդն էր»[132]: Իր մի այլ աշխատության մեջ Ա. Սրապյանը բերում է Մ. Պոտուրյանի հետևյալ խոսքերը. «Երզնկան, որ վանքերով շրջապատված ԺԳ-ԺԴ դարերուն փայլուն անուն մը ուներ, Յայաստանի մեջ գիտական ճեմարան մը կներկայացներ, կարծես ճիգ մը ուներ մրցելու Կիլիկիո հետ, որ ուսումնական վարդապետներուն կենտրոնավայրն էր»[133]: Այդ են վկայում նաև ժամանակի տարեգիրները. «Յառաջինք ամենայն հայոց աշխարհին Սեպուհոյ լերանցն և վանորէցին կուցանկային: Եւ ուսումնասերքն անդ գային յամենայն կողմանց հեռաւոր աշխարհաց, լուսով իմաստութեանց լուսաւորէին և երաժշտական արուեստից և վարդապետական պատուոյ արժանաւորէին և գնացին»[134]:

Յայագետ Կ. Տեր-Մկրտչյանն իր «Մահմեդական լուծը և ծաղկող հայ վարդապետարանները» հոդվածում, հենվելով գրավոր աղբյուրների վրա, գրում է. «Արդեն երկու դար առաջ ԺԴ դարի միջոցներում Երզնկան իւր շրջակայքով եւ Սեպուհ լեռան վանքերով հռչակ էր ստացել իբրեւ հայութեան ուսումնական

---

[132] Կոստանդին Երզնկացի, Տաղեր, աշխատասիրությամբ Արմենուհի Սրապյանի, Երևան, 1962, էջ 32:
[133] Ա. Սրապյան, Յովհաննես Երզնկացի Պլուզ, Երևան, 1993, էջ 26:
[134] Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ, Երուսաղեմ, 1915, էջ 510:

կենտրոններից մեկը»: Ապա նշում է, որ վարդապետարանը գլխավորում էր տաղանդավոր մատենագիր Յովհաննես Երզնկացին: Նա ըստ արժանվույն է գնահատում վարդապետարանների ու նրանց րաբունապետների գիտելիքներն ու վաստակը. «Պատկառանքի եւ երախտագիտութեան նման զգացումներ շատ յաճախ արտահայտուած ենք գտնում մեր ձեռագրերի յիշատակարաններում եւ տեսնում, որ նշանավոր վարդապետարանների ղեկավար վարդապետները շատ բարձր գնահատուած բարոյական մեծութիւններ էին ժամանակակիցների աչքում, և նույնչափ բարձր գին ունեին նոցա աւանդած ուսումը (ընդգծումը մերն է - Վ. Բ.)»[135]: Այդ նույն հոդվածում Կ. Տեր-Մկրտչյանը բերում է համշենցի Յովհաննես րաբունու օրինակը, որն Ավագ վանքի ուսումնարանից բացի Սեպուհ լեռան Կայիփոսի վանքի վարդապետարանի րաբունապետն էր: Վերջին վարդապետարանը մի քանի հիշատակարաններում ուղղակի անվանվում է «համալսարան»:

Յենց միայն այն խոսուն փաստը, որ Մխիթար Գոշը ուսումնառությունն ավարտելուց և վարդապետական աստիճան ստանալուց հետո իր գիտելիքները խորացնելու միտումով մեկնել է Սև լեռան մտավոր կենտրոնները, վկայություն է տեղի դպրոցների բացառիկ հեղինակության մասին: Ուսումնաերաժշտական գրչության նշանավոր կենտրոն էր Դրազարկը, որը հիմնադրվել՛է XII դարում: Այս մտավոր կենտրոնն աչքի էր ընկնում երաժշտական կրթության բարձր մակարդակով: Այստեղ պատշաճ մակարդակի վրա էր դրված նաև լեզուների ուսուցումը: Դրազարկը միաժամանակ դիվանագետներ է տվել Կիլիկիայի հայոց թագավորությանը: Կոնստանդին Լամբրոնացու վանահայրության շրջանը վանքի ամենափայլուն շրջանն էր: «Այս ,ամենը ցույց կուտան,- գրում է Ա. Ալպոյաջյանը,- թէ Դրազարկի վանքը պարզ մենաստան մը չէր, այլ ուսումնարան մը, որ փայլած է ԺԲ դարուն կէսերը»[136]:

Սիսը, որը դարձել էր Կիլիկիայի հայկական պետության մայրաքաղաքը, մտավոր նշանավոր կենտրոն էր: Այստեղ բուռն

---

[135] Գ. Կարապետ արքեպիսկոպոս Տեր-Մկրտչյան. Երկերի ժողովածու, պր. Ա, Ս. Էջմիածին, 2008, էջ 118:
[136] Ա. Ալպոյաջյան, նշվ. աշխ., էջ 209:

զարգացում են ապրել գիտության մի շարք ճյուղեր՝ փիլիսոփայությունը, դպրությունը, աստվածաբանությունը, տրամաբանությունը, ճարտասանությունը, քերականությունը, երաժշտությունը, երկրաչափությունը, գրչության արվեստը, մանրանկարչությունը և այլն: Սիսում հիմնվել է համալսարան, որտեղ դասախոսություններ են կարդացել ժամանակի նշանավոր գիտնականներն ու ուսուցչապետերը: Համալսարանից բացի՝ այստեղ եղել է նաև վարժարան: Հակոբ կաթողիկոսը, որը կրթության ջատագով էր, հրավիրում է Հովհաննես Երզնկացուն (Պլուզ), որը քերականություն էր կարդում: Սսի համալսարանում մեծ էր նշանավոր փիլիսոփա Վահրամ Ռաբունու գիտամանկավարժական վաստակը: Լևոն Ա Մեծագործը, նրա գործը շարունակող Հեթում Ա թագավորը հոգ էին տանում Սսի գիտաուսումնական կենտրոնի նկատմամբ[137]:

Հռոմկլա սահմանային բերդ-ամրոցում, երբ այն դարձավ հայրապետական աթոռանիստ, ստեղծվում է դպրեվանք, որտեղ ուսումնամանկավարժական բեղմնավոր աշխատանք էին կատարում Գրիգոր Գ Պահլավունի փոքր վկայասեր հայրապետը և նրան փոխարինող Ներսես Շնորհալին: Կարճ ժամանակում նրանք դպրեվանքը դարձնում են գիր ու գրականության, մշակույթի նշանավոր կենտրոն: Այս դպրոցը գոյատևեց մինչև 1292 թվականը, մինչև Հռոմկլայի գրավումը և հայրապետական աթոռը Սիս փոխադրելը[138]:

XII դարում Սկևռայի վանքում գործել է նշանավոր ուսումնարան, որտեղ Ներսես Լամբրոնացու մոտ մատենագիտական հմտությամբ աչքի է ընկել նրա աշակերտ Խաչատուրը: Ավելի ուշ այստեղ անուն էր հանել Մխիթար Սկևռացին, ինչպես և Գևորգ Սկևռացին, որը նախապես իր պատրաստությունը ստացել էր Բջնիում, ապա զանազան վանքեր շրջելուց հետո եկել էր Սկևռայի վանքը: Ուսումնարանում գործում էր ուսուցիչների և աշակերտների մի ամբողջ խումբ[139]:

---

137 Լ. Խաչերյան, Հայագիր դպրության ուսումնագիտական կենտրոնները..., էջ 449:

138 Նույն տեղում, էջ 295-298:

139 Ա. Ալպոյաջյան, Նշվ. աշխ., էջ 208-210:

Սև լեռներում ուսումնական կենտրոններ են եղել Պառլահոնում, Արեգում, Ուլինում, Մարաշում, Ընկուզուտում, Շափիրում: Շուղրի ուսումնագիտական միջավայրում են կրթություն ստացել Ներսես Շնորհալին, Գրիգորիսը և ուրիշներ: Այստեղի վարդապետարանը լավ համբավ ուներ[140]:

Կիլիկիայի ուսումնագիտական կենտրոններին հատուկ է եղել լեզուների ուսուցման բարձր մակարդակը: Եվ այդ հասկանալի է, քանի որ աշխարհագրական դիրքը, ծովային առևտուրը օտար լեզուների իմացության անհրաժեշտ պահանջ էին առաջադրում: Կիլիկիայի թագավորները, անգամ թագուհիները մեծապես աջակցել ու հովանավորել են ուսումնագիտական ձեռնարկումները: Մլեհ իշխանը հիմնադրել է Մեծքար ուսումնագիտական կենտրոնը, որի հետագա հովանավորն է եղել Լևոն Բ թագավորը: Այս բնագավառին աջակցել ու հովանավորել են Հեթում Ա թագավորը և նրա կինը՝ Զապել թագուհին: Հեթում Ա-ի պատվերով Վարդան Արևելցին գրել է «Յաղագս մեկնութեան քերականի» երկը: Զապել թագուհու հովանավորության մասին վկայում է Վահրամ Ռաբունին:

Լևոն Գ թագավորը, ինչպես արդեն նշվեց, եղել է ուսման և գիտության հովանավոր: Այդ պատճառով ժամանակակիցները նրան «Գրասեր» պատվանունն են տվել: Սկզբնաղբյուրները վկայում են, որ նա կազմակերպել է բազմաթիվ բնագրեր ժողովելու և թարգմանելու գործը: Ավելին, նա գրչագրեր է պատվիրել և նվիրել ոչ միայն Կիլիկիայի, այլև Հայաստանի ուսումնագիտական կենտրոններին:

Կիլիկիայի հայկական պետությունը հզոր պատվար էր Հայաստանի, նրա մտավոր կյանքի պահպանման ու զարգացման համար: Սերտ համագործակցություն գոյություն ուներ մշակույթի գրեթե բոլոր բնագավառներում, այդ թվում՝ կրթության ոլորտում: Հայրենի երկրում ստեղծագործական աշխատանքի դժվարությունների կամ անհնարին լինելու պարագայում նվիրյալներն անցնում էին Կիլիկիա, այնտեղ ապաստան ու նպաստավոր պայմաններ գտնում: Արևմուտք էին մեկնում նաև բյուզանդական

---

140 Լ. Խաչերյան, Հայագիր դպրության ուսումնագիտական կենտրոնները..., էջ 354-361:

մշակութային ծեռքբերումներին հաղորդակից լինելու նպատակով: Կատարվում էր նաև հակառակը. այստեղից համագործակցելու, մասնագիտանալու կամ տարբեր այլ առիթներով այցելում էին մայր հայրենիք:

Միջնադարյան համալսարաններում կամ բարձրագույն դպրոցներում աշխատում, ուսուցանում էին ժամանակի նշանավոր փիլիսոփաներ, աստվածաբաններ, մատենագիրներ, պատմաբաններ, բնական գիտության ներկայացուցիչներ: Նրանք խոր ու բազմակողմանի գիտելիքներ էին տալիս իրենց սաներին: Այդ դպրոցները միաժամանակ և՛ ուսումնական, և՛ գիտական կենտրոններ էին, եռյակ ու քառյակ ծրագրերով բազմաթիվ մասնագիտություններով ուսուցանելու հետ մեկտեղ գիտական գործունեությամբ էին զբաղվում: Ձեռագրեր էին ուսումնասիրում, արտագրում, սակավ դեպքերում ստեղծում, այլ խոսքով՝ մատենագիտությամբ զբաղվում: Անտիկ հեղինակների գործերից էին թարգմանում, արտագրում, բազմացնում և տարածում: Այդ ամենը կատարվում էր դժվարին, հաճախ շատ ծանր ու անապահով վիճակում, օտարից եկող վտանգի մշտական սպառնալիքի պայմաններում: Ձեռագրերից մեկի հիշատակարանում կարդում ենք.

«Ես Մխիթար գրիչ սորա
թուղթս անկոկ ու գրիչ չկայ
Ամուրքս ցուրտ ու պարզկայ
Չարդախս բարձր ու կրակ չկայ
Դոներս չոր ու սպաս չկայ,
Եւ այս Գլածորն ո՞վ գիտենայ
Ես յոյժ նեղած ու ճար չկայ
Գիրքս յերկար ու եզր չկայ
Եւ ես պանդուխտ ու վեղար չկայ»[141]:

Հայաստանի բարձրագույն դպրոցների մասին լրիվ ու ամբողջական պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է թեկուզ թռուցիկ զուգահեռներ անցկացնել նույն պատմափուլի եվրոպայի ուսումնական հաստատությունների հետ: Եվրոպայում բարձրագույն ուսումնական հաստատությունները երևան են գալիս միևնույն ժամանակաշրջանում՝ XI-XII դարերում: Դրանք օգտ-

---

[141] Ղ. Ալիշան, Սիսական, էջ 135, Գ. Հովսեփյան, Խաղբակյանք..., էջ 266:

վում էին ինքնավարությունից, թեպետև ծևականորեն գտնվում էին Հռոմի պապի ընդհանուր վերահսկողության ներքո: Այստեղ ևս ուսման գործընթացի հիմքում ընկած է «յոթ ազատ արվեստները»: Մեծ նշանակություն էր տրվում անտիկ հեղինակների երկերի մեկնաբանմանը, օգտագործմանը: «Յոթ ազատ արվեստների» վրա կարևորվում էին երեք մասնագիտություններ, որոնք կենտրոնացված էին երեք նշանավոր համալսարաններում, իրավագիտությունը՝ Բոլոնիայում, աստվածաբանությունը՝ Փարիզում, բժշկությունը՝ Սալերնոյում[142]:

Ինչպես Եվրոպայում, այնպես էլ Հայաստանում զարգացած միջնադարում երևան եկավ գիտնականների մի ամբողջ սերունդ, որին վիճակված էր նոր մակարդակի բարձրացնել կրթությունը: Հիրավի, եվրոպական երկրներում,այդ թվում և հատկապես Բյուզանդիայում բարձրագույն դպրոցներում դասախոսում էին երկրի նշանավոր գիտնականները: Նույնը կատարվում էր նաև Հայաստանում: Բարձրագույն ուսումնական հաստատությունները, համալսարանները ստեղծվում են հասարակության զարգացման որոշակի աստիճանում, զարգացած միջնադարում: Այդ դարաշրջանում կրթության ոլորտում ուժեղանում է աշխարհականացման միտումը: Քառյակ ծրագրով ուսուցանվում էին թվաբանություն, երկրաչափություն, աստղաբաշխություն և երաժշտություն, այսինքն՝ աշխարհիկ առարկաներ: Այսպիսով, կրթության ոլորտն առաջադիմում էր դարաշրջանի առաջադրած պահանջների ոգով: Հայաստանում այն ընթանում էր եվրոպական երկրների ուսումնական գործընթացին համահունչ:

Եվրոպական երկրների հետ կար մի էական, վճռորոշ տարբերություն: Կրթական կենտրոններն այնտեղ առաջանում էին երկրի խաղաղ, հետևաբար նպաստավոր պայմաններում: Պետությունն աջակցում, դյուրին էր դարձնում դրանց գործունեությունը: Եվրոպական պետություններից Հայաստանի հարևան Բյուզանդիայում, նրա մայրաքաղաք Կ. Պոլսում բարձրագույն դպրոց կամ համալսարաններ են բացվում ավելի վաղ՝ IX դարում: Նման կրթօջախներ հիմնում էր պետությունը, որոնց մի մասի հիմնական նպատակը պետական ապարատի համար պաշ-

[142] История всемирной литературы, т. 2. М., 1984, с. 501.

տոնյաներ պատրաստելն էր[143]: Տասներորդ դարի բարձրագույն հաստատություններից մեկում դասախոսներին կայսրն աշխատավարձ էր վճարում, իսկ ուսանողներին նյութական օգնություն ցույց տալիս[144]:

Կոստանդնուպոլսում XI դարում գործում էր համալսարան, որն աշխարհիկ կրթության կենտրոն էր, և որը գոյատևեց մինչև 1204 թ.՝ մինչև խաչակիրների կողմից Բյուզանդիայի մայրաքաղաքի գրավումը: Համալսարանն ուներ երկու ուղղություն կամ միանգամայն ինքնուրույն գործող երկու դպրոց կամ ֆակուլտետ՝ իրավունքի և փիլիսոփայության: Այդ ուղղությունների տնօրենները օգտվում էին լայն արտոնություններից, բարձր վարձատրություն էին ստանում և իրենց պաշտոնը վարում ցմահ[145]:

Հայաստանում իրավիճակը միանգամայն այլ էր: Բագրատունյաց պետության անկումից հետո՝ XI դարի կեսերից սկսած, ոչ միայն ազգային պետություն չկար, այլև երկրում իշխում էին սելջուկ թուրքերը, մոնղոլները, որոնք անխնա ավերում էին նաև գիտակրթական կենտրոնները: Բարձրագույն դպրոցները Հայաստանում հիմնականում ստեղծվեցին և գոյատևեցին հենց դժվարին այդ ժամանակաշրջանում՝ XII-XIV դարերում: Նման դժընդակ իրավիճակում վարդապետարանների ստեղծումը և ամեն տեսակ դժվարություններ հաղթահարելու գնով դրանց պահպանումն ավելի քան բարձր արժևորման կարիք ունեն: «Սովորական կարծիք է,– գրում է Ն. Ադոնցը,– որ Բագրատունյաց անկումից հետո հայ կյանքը գահավիժում է և մտնում մի խավար շրջան, գրեթե կանգ է առնում դարեր շարունակ կաշկանդված իր գործունեության մեջ շնորհիվ իր շուրջը բռնացող օտարոտի կարգերին: Սակայն, հակառակ այդ ծանր կացության, որ ստեղծվել էր Հայաստանում և ամբողջ Առաջավոր Ասիայում, հեռու են խուժած նոր ու բարբարոս ժողովուրդների հեղեղումով, անուրանալի է, որ հայ կյանքը չի մահացել: Հայի հեզ աշխատասիրութ-

---

[143] История Византии, т. 2. М., 1967, с. 355.

[144] Культура Византии (вторая половина VII-XII вв.), М., 1989, с. 394-395.

[145] А. П. Каждан. Византийская культура. М., 1968, с. 65; З. В. Удальцова. Византийская культура. М., 1988, с. 129.

յունը, շինարար ոգին և արթուն միտքը շարունակել են փայլփլել զանազան կենտրոններում, ինչպես մշտավառ ճրագներ, և հավետ կենսունակության ապացույցներ տվել քաղաքակրթական նորանոր ճիգերով և ստեղծագործությամբ»[146]:

Հայաստանում կրթության ոլորտում կատարվող առաջադիմությունն ընթանում էր ամբողջ երկիրը համակած մշակութային ընդհանուր վերելքի պայմաններում: Այդ լուսավորության նկատմամբ ժողովրդի հակվածություն, անվերապահ մեծ ձգտում ունենալու ակնառու վկայություն է: Լուսավորական առաջընթացն իրականանում էր ողջ ժողովրդի և ամեն մի դժվարության դիմակայող նրա նվիրյալ զավակների անձնազոհ ջանքերի շնորհիվ:

[146] Գ. Հովսեփյան, Խաղբակյանք..., էջ 462:

# II. ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

## 1.ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի քաղաքական տարանջատվածությունն իր հետևանքներն ունեցավ նաև գաղափարախոսական բնագավառում: Պատմագրության մեջ այս պատմափուլը չտվեց աղբյուրագիտական հարուստ նյութի վրա ստեղծված հայոց ամբողջական պատմությանը նվիրված այնպիսի կոթողային գործեր, ինչպես վաղ միջնադարում Մովսես Խորենացու կողմից: Ստեղծվեցին, հատկապես Բագրատունյաց շրջանում, ավատատիրական առանձին թագավորությունների կամ իշխանությունների պատմությանը վերաբերող, իսկ հետագայում՝ օտարերկրյա իշխողների, մասնավորապես մոնղոլների, նրանց կատարած ավերածությունների մասին աշխատություններ: Առանձին թագավորություններ կամ նահանգների պատմությանը նվիրված այդ երկերը շատ արժեքավոր են ոչ այնքան հեղինակների միտումներին ծանոթանալու, որքան տվյալ ժամանակաշրջանի մասին իրական պատկերացում կազմելու համար:

Հայ ժողովրդի ամբողջական պատմությունն ընդգրկող ծանրակշիռ աշխատություններ հրապարակ չգալով հանդերձ՝ այս պատմափուլում XII դարից առաջ եկավ կատարված իրադարձություններին անմիջական արձագանքող պատմագրության մի նոր ուղղություն՝ ժամանակագրությունը: Ռուսական պատմագրության մեջ այս նոր ուղղությունն առավել որոշակի է և կոչվում է տարեգրություն[147]:

Հայ պատմագրության մեջ հեղինակներն իրադարձությունները ներկայացրել են ժամանակագրական հաջորդականությամբ: Բայց ոչ անպայման ըստ տարիների, այլ ըստ կատարված

---

[147] Ռուսաստանում այս նոր ուղղությունը սկսվել է XI դարից և լայն տարածում է գտել մինչև XVII դարը: Տարեգրությունների կարևոր կենտրոններ են եղել Պսկովը, Նովգորոդը, Ռոստովը, Տվերը, Մոսկվան: Տարեգրությունները որպես պատմագիտական գործեր և գրական երկ, հրատարակվել են 31 հատորով:

դեպքերի, որոնք կարող են մի քանի տարի կամ տասնամյակ ընդգրկել:

Ստեղծվեցին նաև ընդհանուր պատմությանը նվիրված աշխատություններ: Ծանոթանանք այս բնագավառի հիմնական հեղինակների գործերին:

Հովհաննես Դրասխանակերտցի: Հայաստանի IX դարի երկրորդ կեսի և X դարի առաջին քառորդի պատմության հավաստի աղբյուր է կաթողիկոս, քաղաքական գործիչ Հովհաննես Դրասխանակերտցու «Հայոց պատմություն» նշանավոր երկը[148]:

Նա՝ որպես կաթողիկոս (897-929), բազմիցս խաղաղարար միջնորդ է եղել երկրի իշխանների միջև և դրսում՝ Բագրատունյաց թագավորությունն օտարների հարվածներից զերծ պահելու համար: Անգամ կալանքի է ենթարկվել Ատրպատականի ամիրայի կողմից, բայց բանտից փախել, դեգերել է Աղվանքում, Վրաստանում, վերադարձել է Բագրատունիների մոտ, ապա անցել Վասպուրական, որտեղ և 929 թ. կնքել է իր մահկանացուն:

Դրասխանակերտցին իր պատմությունը սկսում է հնագույն շրջանից՝ Համաշխարհային ջրհեղեղից, և հասցնում մինչև իր ապրած տարիները, մինչև 924 թվականը: Նա իր պատմության մեջ հնագույն շրջանը ներկայացնում է՝ օգտվելով, ավելի ճիշտ վերապատմելով նախորդ հեղինակների հաղորդած տեղեկությունները, այդ պատճառով էլ աշխատության առաջին մասը հատուկ հետաքրքրություն չի առաջացնում: Հավաստի և արժեքավոր է IX դ. վերջի և X դարի առաջին տասնամյակների պատմությունը, որին հեղինակը ոչ միայն ականատես է, այլև գործուն մասնակցություն է ունեցել:

Պատմիչը խոր ցավով է նշում երկրում գոյություն ունեցող գժտությունները, անմիաբանությունը. «Իսկ թագաւորք մեր և պետք և իշխանք, զորս ի բնէ նախարարութիւնքն էին՝ ջանային վատարել խլել յիւրաքանչիւրոցն բնակութեանց, և ըստ ախորժից իմն ձեռական և նոր ստեղծանել պայազատս և սպասավարս: Այլև եղբայր ընդ եղբօր և ազգայինք ընդ ազգայինս ընդ-

---

148 Տե՛ս «Պատմագրութիւն Յովհաննու կաթողիկոսի ամենայն հայոց», Երուսաղեմ, 1843 թ., նույն տեղում, 1867 թ. «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ, Պատմութիւն հայոց», Թիֆլիս, 1912:

վզեալ ի նախանձ և չարակնութիւն և ի գրգռութիւն և ի կատարեալ ատելութիւն ընդ միմիեանս բերէին: Եւ այսպէս համագունդ ընդ միմեանս հարեալք՝ հակառակութիւն և ի կռիվ պայքարէին. և միշտ սուր յազդէր ունելով՝ բազում ևս քան զբշնամիսն հեղուին ի միմէանց զարեան ճապաղիս և առ հասարակ զքաղաքս և զգեօղս և զաւանս և զագարակս, այլ և զտունս իւրեանց քանդէին ձեռօք իւրեանց»[149]:

Դրասխանակերտցին զայրույթով է խոսում Գագիկ Արծրունու այն արարքի մասին, երբ Սմբատ թագավորից չստանալով Նախիջևան քաղաքը՝ դիմում է բացահայտ դավաճանության՝ գործարքի մեջ մտնելով արաբների հետ:

Դրան հակառակ պատմիչը դրվատանքով է խոսում երկրի անկախության համար մարտնչող, հայրենիքը շենացնող իշխանների մասին: Նա հպարտությամբ արձանագրում է Աշոտ Ա Բագրատունու կողմից հայկական պետականությունը վերականգնելու փաստը:

Նա Բագրատունիների վարած քաղաքականությանը համահունչ հորդորում, քարոզում է միասնական լինել, միավորվել հանուն հայկական կենտրոնացված պետության ստեղծման:

Կաթողիկոս պատմիչն ամեն առիթ օգտագործում էր հայ եկեղեցու դավանաբանական սկզբունքները պաշտպանելու աղանդավորական տարատեսակ շեղումներից:

Յովհաննես Դրասխանակերտցու հավաստի փաստական նյութով հարուստ աշխատությունն իր ապրած ժամանակաշրջանի պատմության ամենանշանավոր երկն է:

Թովմա Արծրունին ուսյալ և գիտուն վարդապետներից էր, ապրել է IX դարի երկրորդ կեսին և X դարի սկզբին: Թովմա Արծրունին Արծրունիների տան գահերեց իշխան Գրիգոր-Դերենիկի հրամանով գրում է այդ տոհմի պատմությունը[150]: Հետագայում Գագիկ Արծրունին գրել է տալիս իր ապրած ժամանակի հրա-

---

[149] «Յովհաննես կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ, Պատմութիւն հայոց», Թիֆլիս, 1912, էջ 258-259:
[150] «Պատմութիւն տանն Արծրունեաց ի Թովմայ վարդապետէ Արծրունւոյ», Կ. Պոլիս, 1852: «Թովմայի վարդապետի Արծրունւոյ, Պատմութիւն տանն Արծրունեաց», ի լոյս էած Ք. Պատկանյան, Ս. Պետերբուրգ, 1887: «Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց», Թիֆլիս, 1917:

դարձությունները, որի հեղինակն իրեն չի ներկայացնում, ուստի հայտնի է որպես Թովմայի պատմությունը շարունակող Անանուն Արծրունի: Նա Արծրունիների պատմությունը հասցնում է մինչև X դարի 20-ական թվականները:

Հեղինակն իր պատմությունը սկսում է հնագույն շրջանից՝ Ադամից և հասցնում մինչև IX դարի կեսերին կատարված իրադարձությունները: Աշխատության առաջին բաժինը կամ դպրությունը սկսվում է հնագույն շրջանից և ավարտվում Արշակունյաց թագավորության անկումով: Պատմության հին շրջանը շարադրելիս օգտվել է Խորենացուց, Բուզանդից, Եղիշեից և մյուս հեղինակներից: Հ. Դրասխանակերտցու վրա եթե որոշակի է Մ. Խորենացու ազդեցությունը, ապա Թ. Արծրունու վրա՝ մյուս նշանավոր պատմագրի՝ Եղիշեի: Արժեքավոր են աշխատության 2-րդ և 3-րդ բաժինները, որի ականատեսն է եղել հեղինակը: Այդտեղ ներկայացվում են արաբների դեմ մղվող ազատագրական պայքարի դրվագները, սասունցիների կողմից արաբական զորախմբին երկրից դուրս քշելու և եկեղեցու գավիթում թաքնված զորահրամանատար Յուսուֆին սպանելու իրադարձությունները: Ապա հանգամանորեն պատմիչը ներկայացնում է իր դաժանությամբ հայտնի դարձած Բուղայի արշավանքը (850 թ.), նրա կատարած ավերածությունները, հայ իշխանների գերեվարումը, հայերի պայքարը, ներիշխանական գժտությունները: Այդ ամենի հետ մեկտեղ ցույց է տրվում հայերի հարկային-տնտեսական դրությունը, ներկայացվում են ժողովրդի կենցաղը, Վասպուրականում կատարվող շինարարությունը: Հայրենասիրական ոգով նա խարազանում է դավաճաններին:

Լավ ներկայացվում է նաև IX դ. երկրորդ կեսին Բագրատունիների և Արծրունիների՝ արաբական տիրապետությունից ազատագրվելու համառ պայքարը, սակայն ինչպես և պետք էր սպասել, գերադասությունը տրվում է Արծրունիներին: Մ. Աբեղյանն իրավամբ նշում է, որ Թ. Արծրունին տարվել է Արծրունիների տոհմը մեծարելու ձգտումով, բայց իբրև եկեղեցական պարսավում է նրանց հոգևոր ուրացությունը: Ավելին, ինչպես ցույց է տրվել գրականության մեջ, նրանք, հատկապես պատմությունը շարունակող Անանուն պատմիչը, Արծրունիներին պատիվ բերող

փաստերը հաճախ չափազանցնում են, իսկ պարսավելի փաստերը մոռացության են տալիս:

Թովմա Արծրունին հարգանքով է խոսում անկախության առաջին թագավորների՝ Աշոտ և Սմբատ Բագրատունիների մասին, ընդունում նրանց գերիշխանությունը Արծրունիների և մյուս նախարարական տների նկատմամբ: Նրա պատմությունը շարունակող Անանուն պատմիչը, որնականատես էր Նախիջևանի համար Սմբատ թագավորի կողմից Արծրունիների փոխարեն Սյունիքի իշխանավորներին գերիշխանություն տալու փաստին, բացասական գույներով է ներկայացնում Սմբատ թագավորին: Արաբների կողմից թագավոր հռչակված Գագիկ Արծրունուն համարում է ոչ թե Վասպուրականի, այլ թագավոր ամենայն Հայոց: Հ. Դրասխանակերտցու համաձայն՝ Թուխ գետի մոտ Սմբատ թագավորի պարտության պատճառը եղել է Արծրունի Ապումրվան իշխանի դավաճանությունը, բայց պատմիչն այդ փաստի կողքով է անցնում: Ավելին, Արծրունիներին բարձրացնելու նպատակով երբեմն փաստեր են հորինում, զինակից են դարձնում Վահան Արծրունուն[151]:

Այլ խոսքով, Արծրունիներին մեծարելու ձգտումը ինչ-որ չափով ստվերել է պատմական իրադարձություններն իրական ձևով ներկայացնելուն: Պատմագիրը այնպիսի մեծ նշանակություն է տվել դավանանքի հարցին, որ կատարվող իրադարձությունները բացատրել է միմիայն կրոնափոխությամբ: Արաբական տիրապետության դեմ հայ ժողովրդի ազատագրական համառ պայքարը ներկայացվել է սոսկ որպես պայքար հանուն դավանանքի:

Իր միակողմանիությամբ հանդերձ Թ. Արծրունու պատմությունն արժեքավոր սկզբնաղբյուր է Վասպուրականի քաղաքական, տնտեսական պատմության, ժողովրդի կյանքի ու կենցաղի մասին:

**Ստեփանոս Տարոնցին (Ասողիկ):** Ապրել է X դարի երկրորդ և XI դարի առաջին կեսին: Սարգիս Սևանցի կաթողիկոսի (992-

---

[151] Տե՛ս Լ. Հ. Բաբայան, Դրվագներ Հայաստանի զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի պատմագրության, Երևան, 1981, էջ 49-51:

1019) հանձնարարությամբ գրել է «Պատմություն տիեզերական» աշխատությունը[152]:

Հեղինակն ընդհանուր պատմությունը շարադրելու պարբերացման հիմք է դարձրել թագավորական դինաստիաների ժամանակաշրջանները: Գիրքը բաղկացած է երեք հանդեսից կամ մասից: Առաջին հանդեսում ընդգրկվել է հայկազունիների ժամանակաշրջանը՝ հնագույն դարերից մինչև քրիստոնեության ընդունումը: Երկրորդ մասը նվիրված է Արշակունիների պատմությանը, իսկ երրորդ մասը՝ Բագրատունիների: Տարոնցին մեկ առ մեկ նշում է, թե իրեն նախորդած որ հայ և օտար հեղինակների երկերից է օգտվել: Նա գրքի առաջին հանդեսում անդրադարձել է եգիպտոսի պտղոմեոսյանների, պարսիկների, եբրայեցիների, ասորիների, մարերի, հռոմեացիների, հույների, վրացիների և այլ ժողովուրդների պատմությանը:

Երկրորդ հանդեսը սկսվում է Տրդատ Գ-ի թագավորությունից և քրիստոնեության ընդունումից և շարունակելով իրադարձությունների հետագա ընթացքը՝ ներկայացնում է թագավորների, իսկ թագավորության անկումից հետո՝ իշխանների և կաթողիկոսների համառոտ պատմությունը: Աշխատության առաջին և երկրորդ մասերը շարադրելիս հաճախ բառացի, երբեմն էլ անկանոն օգտվել է նախորդ հեղինակներից, ուստի և այդ մասերն առանձին հետաքրքրություն չեն ներկայացնում:

Կարևոր ու արժեքավոր է տիեզերական պատմության երրորդ մասը, որում ընդգրկված է Բագրատունիների ամբողջ պատմությունը Աշոտ Բագրատունու գահակալությունից՝ 885 թվականից սկսած մինչև Գագիկ Ա-ի թագավորության շրջանը՝ 1004 թվականը: Առաջին Բագրատունի թագավորների (Աշոտ Ա, Սմբատ, Աշոտ Երկաթ) մինչև 929 թվականի ժամանակաշրջանի պատմությունը քաղել է Դրասխանակերտցուց: Հետագա 75 տարվա պատմությունը (929-1004) գրված է ժամանակակցի ու ականատեսի կողմից, ուստի և շարադրված է փաստալից ու ճշմարտապատում: Նա ոգեշնչված ներկայացնում է Բագրա-

152 «Տիեզերական Պատմութիւն Ստեփանոս վարդապետի Տարօնեցւոյ», Փարիզ, 1859: «Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885:

տունյաց թագավորության խաղաղ բարգավաճման, երկրի բարեշեն դառնալու իրադարձությունները: Ասողիկն այդ տասնամյակների Հայաստանի վերելքն արձանագրող հիմնական սկզբնաղբյուրն է: Նա, այդ ժամանակաշրջանի անցքերը ներկայացնելով, արժեքավոր տեղեկություններ է հաղորդում նաև Վրաստանի, Աբխազիայի և հատկապես Բյուզանդիայի մասին:

Պատմիչը Բագրատունյաց թագավորության ամրապնդման ջատագով է և խանդավառությամբ է ներկայացնում երկրում ծավալված շինարարությունը, մասնավորապես եկեղեցաշինարարությունը: Նա մեծ տեղ է հատկացնում դավանանքի հարցերին, մեծարում հոգևոր գործիչներին: Դրան հակառակ խարազանում է եկեղեցու դեմ ոտնձգություններ կատարողներին: Մեծարում է ժամանակի գիտուն հոգևորականներին, նշում նրանց ծառայությունները, դրանց թվում՝ նաև Անանիա Նարեկացուն, որը դատապարտել է թոնդրակեցիներին[153]: Նա պայքարում է քաղկեդոնականության պաշտպանների, նրանց գիջումներ կատարողների դեմ: Այլ խոսքով, Ասողիկը հայոց պետության ամրապնդման շահերի հետևողական պաշտպանն էր:

Երևույթների խորքերը չքափանցելու հետևանքով համակրանքով, անգամ ջերմությամբ է արտահայտվում Բյուզանդիայի ու նրա տիրակալների՝ կայսրերի մասին: Նույնիսկ Վասպուրականի թագավորության՝ Բյուզանդիայի կողմից վերացումը (921 թ.) դիտում է որպես հայ բնակչությանը կայսրության տարածքում ապահով տեղ հատկացնելու ձեռնարկում: Պատմիչի պարզամիտ մոտեցումը բացատրվում է նրանով, որ իր ապրած ժամանակ Բյուզանդիայի զավթողական քաղաքականությունը դեռևս շատ որոշակի չէր արտահայտվում:

Ասողիկն արժեքավոր տեղեկություններ է հաղորդում գիտամշակութային կյանքի մասին: Նրա աշխատությունից է հայտնի դառնում, որ Անաստաս կաթողիկոսն Անանիա Շիրակացուն հանձնարարել է Հայաստանում ևս կարգել շարժական տոմար[154]: Նա վկայում է, որ Տրդատ ճարտարապետը եկեղեցի է կառուցել Արգինայում, և նրա նախագծով է վերակառուցվել երկրաշարժից

---

[153] Տե՛ս Ստեփանոս Տարոնեցի, Ս. Պետերբուրգ, 1895, էջ 173-179:
[154] Նույն տեղում, էջ 42:

ավերված Կոստանդնուպոլսի Ս. Սոֆիա նշանավոր տաճարի գմբեթը[155]: «Պատմություն տիեզերականը», գնահատելի աղբյուր լինելով միջնադարյան Հայաստանի որոշակի շրջանի համար, հետաքրքրություն է ներկայացնում նաև Վրաստանի, Աբխազիայի, Բյուզանդիայի և ուրիշ երկրների պատմության համար: Այս առումով հատկանշական է, որ աշխատությունը ժամանակին հրատարակվել է ռուսերեն՝ Մոսկվայում (1864 թ.), ֆրանսերեն՝ Փարիզում (1883 թ.) և գերմաներեն՝ 1907 թ. Լայպցիգում:

Արիստակես Լաստիվերտցի: Այս հեղինակի պատմությունն ընդգրկում է Հայաստանի 70 տարվա՝ 1000-1071 թթ. յոթ տասնամյակները՝[156] Գագիկ Ա-ի թագավորության տարիներից մինչև 1071 թվականի Մանազկերտի բախտորոշ ճակատամարտը: Ժամանակագրական առումով Լաստիվերտցու ընդգրկած տասնամյակները երկրի կյանքում կատարվող իրադարձությունների՝ իրարից միանգամայն տարբեր պատմական երկու փուլեր են: Առաջին շրջանը Բագրատունյաց թագավորության բարգավաճման տարիներն են, երկրորդը՝ սելջուկ թուրքերի ավերիչ ասպատակություններն ու տիրապետությունը:

Պատմիչը հիացմունքով նկարագրում է պատերազմներում մշտապես հաղթող, երկիրը խաղաղության մեջ ու բարգավաճ վիճակում պահող Գագիկ Ա թագավորի գործունեությունը: Ներկայացնում է նրա օրոք երկրում մեծ ծավալ ընդունած շինարարությունը, պատերազմի դաշտում հայերի քաջագործությունները, Գրիգոր Մագիստրոսի և ուրիշների աստվածաբանական, մտավոր գործունեությունը:

Լաստիվերտցին քաջածանոթ է Բյուզանդական կայսրության իրեն հետաքրքրող ժամանակաշրջանի պատմությանը: Համակրանքով է արտահայտվում նրա տիրակալների և նրանց վարած քաղաքականության մասին: Անգամ չի դատապարտում Անի մայրաքաղաքը Բյուզանդիային կտակելու Պետրոս կաթողիկոսի

---

[155] Նույն տեղում, էջ 251:
[156] «Պատմութիւն Արիստակեայ վարդապետի Լաստիվերտցւոյ», ի Վենետիկ, 1884, 1901:
«Պատմութիւն Արիստակեայ վարդապետի Լաստիվերտցւոյ», Թիֆլիս, 1912:
«Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցւոյ», աշխատասիրությամբ Կ. Ն. Յուզբաշյանի, Երևան, 1963:

վարքագիծը: Սեներերիմ թագավորի՝ Վասպուրականը կայսրությանը թողնելու և նրա տարածքը գաղթելու կործանարար ձեռնարկումն արդարացնում է, այն համարում սելջուկյան վտանգից պաշտպանվելու եղանակ: Միայն Անին ուխտադրժորեն Բյուզանդիայի կողմից գրավելուց հետո է խիստ արտահայտվում, դատապարտում Հովհաննես-Սմբատի կտակը, այն համարում «հայերի կորստյան գիր»: Հայոց մայրաքաղաքի անկումը համարում է ոչ թե պատերազմի միջոցով կայսրության կողմից գրավված, այլ խաբեությամբ իրականացված հափշտակում, որին նպաստեցին Պետրոս Գետադարձ կաթողիկոսը և Վեստ Սարգիսը:

Միասնական կենտրոնացված պետության համակիր պատմիչը բացասաբար է վերաբերվում տերության հզորությունը թուլացնող ապստամբական շարժումներին, դավադիրներին: Նա ատելությամբ է լցված իր հայրենի երկիրն ավերող սելջուկ-թուրքերի հանդեպ, ողբում է երկրի այդ վիճակի համար:

«Եւ ելեալ ի գաւառն Վասպուրականի,- գրում է Լաստիվերտցին,- յարձակեցան ի վերայ քրիստոնէից իբրև գայլս քաղցեալս անյագեալս ի կերակրոյ, և եկեալ մինչև ի գաւառն Բասեան, և մինչև ի դաստակերտն մեծ՝ որ կոչի Վաղարշաւան, և քանդեալ ապականեցին գաւառս քսան և չորս սրով և հրով և գերութեամբ: Ողորմագին և բազում ողբոց և արտասուաց արժանի է պատմութիւնս»[157]:

Լաստիվերտցու աշխատությունը, անկախ հեղինակի միտումներից, իր պարունակած փաստական հարուստ նյութով XI դարի Հայաստանի, ինչպես նաև Բյուզանդիայի պատմության շատ արժեքավոր սկզբնաղբյուր է:

Մատթեոս Ուռհայեցին հայ ժամանակագիր պատմիչներից է: Նա ապրել է XI դարի երկրորդ և XII դարի առաջին կեսին: Նրա աշխատությունն սկսվում է 952 թվականի դեպքերից և հասնում մինչև 1136 թվականը: Ուռհայեցու գործը շարունակել է Գրիգոր Երեցը և հասցրել մինչև 1163 թվականը: Այդպիսով, ժամանակագրությունն ընդգրկում է ավելի քան երկու հարյուր տարվա պատմություն: Նա չի ներկայացնում միայն Հայաստանի պատմությունը, այլև Վրաստանում, Աղվանքում, Մերձավոր Արևելքի

---

[157] «Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցւոյ», Երևան, 1963, էջ 65:

երկրներում, Բյուզանդիայում կատարվող իրադարձություններն այնքանով, որքանով առնչվում են հայերի հետ: Այդ մոտեցմամբ պատմիչն անդրադառնում է այդ երկրներում կատարված ռազմաքաղաքական իրադարձություններին: Փաստորեն Ուռհայեցին ներկայացնում է ոչ թե Հայաստանի պատմությունը, այլ հայրենիքի և հարևան պետությունների հայության պատմությունը:

Ժամանակագրության առաջին բաժնում, որն ընդգրկում է մեկ հարյուրամյակ՝ 952-1051 թթ. պատմությունը, Ուռհայեցին հիացմունքով և հանգամանորեն անդրադառնում է 961 թ. Աշոտ Գ-ի թագադրությանը Անի քաղաքում: Հայրենասիրական նույն շնչով գրում է հայ իշխանությունների, ասենք՝ Գող Վասիլի մասին, որը պաշտպան է կանգնում հայերին: Սակայն նա նույն վերաբերմունքին չի արժանացնում Փիլարտոս Վարաժնունու հայկական իշխանությանը միայն այն պատճառով, որ նա թեկուզ և հարկադրված դավանափոխ է եղել: Հպարտությամբ է նկարագրում Անին բյուզանդական զավթումից պաշտպանելու համար Վահրամ Պահլավունու գլխավորությամբ հայերի մղած հերոսական մարտերը: Ոգեշնչված է ներկայացնում հայրենիքում կատարվող բարեշեն ձեռնարկումները, խրախուսում ազգային ավանդների պահպանումը:

Մյուս կողմից վրդովմունքով ու ատելությամբ է խոսում իր երկրի նկատմամբ անիրավություններ, բռնություններ կատարողների, հայրենիքին կորուստներ պատճառողների մասին: Նա խոր ատելությամբ է արտահայտվում հույների՝ Բյուզանդիայի մասին, որը վերացրեց հայկական պետականությունը և դրանով իսկ ուղի հարթեց սելջուկ թուրքերի ավերածությունների, նրանց դաժան լուծը կրելու համար: Ճիշտ է նկատել Լ. Բաբայանը՝ նշելով. «Նախորդ պատմագիրներից շատ ավելի խոր ու պարզ Մատթեոսն է գիտակցել Հայաստանի նկատմամբ Բյուզանդական կայսրության վարած նենգ քաղաքականության էությունը և իր ազդու գրչով մերկացրել է այն»[158]:

Առավել հավաստի ու արժեքավոր են ժամանակագրության երկրորդ և երրորդ մասերը, որոնց ժամանակակից հեղինակն ականատես է կամ ականջալուր: Նա ցավով նշում է այն ավերա-

---

[158] Լ. Հ. Բաբայան, նշվ. աշխ., էջ 151:

ծությունների մասին, որ XI դարի վերջերին և XII դարի սկզբներին Աղվանքում և Հայաստանում կատարել են սելջուկները, մասնավորապես նրանց առաջնորդ Ալփ-Ասլանը, որի հետևանքով սով է սկսվել: Պատմիչը խոր վիշտ է ապրում ոչ միայն հայերի, այլև սելջուկ թուրքերից տուժած բոլոր քրիստոնյաների համար: Ուռհայեցին սահմեդական լուծը թոթափելու հարցում մեծ հույսեր էր կապում եվրոպական երկրների դավանապաշտպան առաքելության հետ: Խաչակիրների մեծաքանակ ուժերի առաջին արշավանքը (1098) նա ոգևորությամբ ընդունեց: Սակայն իր փայփայած հույսերը չարդարացան, և շատ չանցած՝ սկսեց դժգոհությամբ, ավելին՝ ատելությամբ խոսել խաչակիրների մասին: Ուռհայի կոմս Բալդուինը, նշում է պատմիչը, ոչնչացրեց հայկական բոլոր իշխանությունները, թուրք սելջուկներից ավելի մեծ վնասներ պատճառեց հայերին, առհասարակ քրիստոնյաներին: Նա անկեղծորեն խոստովանում է, որ չի համարձակվել խաչակիրների կատարած բոլոր չարագործությունների մասին գրել. «... բայց ոչ համարձակեցաք, զի ընդ իշխանութեամբ նոցա էաք»[159]:

Պատմիչը, ներկայացնելով իր հայրենի երկրի ու ժողովրդի կրած ավերածություններն ու տառապանքները, չի հուսահատվում, ընդհակառակը, ժամանակակիցներին հուսադրելու, քաջալերելու նպատակով ոգեշունչ նկարագրում է հայկական զորքերի ու հայ քաջերի՝ ռազմի դաշտում գործած սխրանքները: Նա միասնական, կենտրոնացված պետության ջատագով է և պետությունը թուլացնող ամեն մի շարժում, ապստամբություն դավաճանություն, անօրինություն է համարում: Հանդիմանությամբ և վրդովմունքով է խոսում Դավիթ Կյուրոպաղատի մասին, որ չէր ցանկանում ենթարկվել Գագիկ Ա-ի օրոք հզորացած Բագրատունյաց պետությանը: Նույն ձևով է արտահայտվում Անիի անկմանը մասնակից Վեստ Սարգսի մասին:

Ուռհայեցին գրել է ժողովրդին հասկանալի, գրեթե իր ժամանակի խոսակցական լեզվով և որոշ դրվագներ շարադրել գեղարվեստական ոճով:

---

[159] Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 339:

Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրությունը» պատմական մեծարժեք աղբյուր է Հայաստանի, ինչպես նաև հարևան երկրների պատմության համար: Նա մնում է միակ սկզբնաղբյուրն իր ընտրած ժամանակաշրջանի մի շարք հարցերում:

Սամվել Անեցի: XII դարի պատմիչ Սամվել Անեցին նույնպես ժամանակագիր է, աշակերտել է նշանավոր Հովհաննես Սարկավագին: Կիլիկիայի Գրիգոր Դ Տղա կաթողիկոսի պատվերով գրել է ժամանակագրական պատմություն՝ «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց» խորագրով երկը, որը հրատարակվել է 1895 թ.: Շարադրանքը սկսվում է Ադամից և հասցվում մինչև 1180 թվականը, այնուհետև դարերի ընթացքում անհայտ հեղինակներ շարունակել են նրա գործը և հասցրել մինչև 1665 թվականը:

Սամվել Անեցին այն բացառիկ պատմագիրներից է, որն ամենայն մանրամասնությամբ նշում է իր օգտագործած աղբյուրները, իրեն նախորդած գրեթե բոլոր պատմիչների գործերը: Գնահատելի է այն, որ նա փորձում է ճշգրտել նախորդ հեղինակների հաղորդած տեղեկությունները Հայաստանի և հարևան ժողովուրդների պատմության կարևոր իրադարձությունների, տարբեր դինաստիաների, կաթողիկոսների, երկրի տիրակալների մասին և տալ նրանց ժամանակագրությունը: Հեղինակը ձգտում է հասնել ստույգության: Ստույգ տեղեկություններ է հաղորդում Սենեքերիմ թագավորի՝ Վասպուրականը բյուզանդացիներին թողնելու ժամանակ երկրի վանքերի, քաղաքների բերդերի, գյուղերի քանակի մասին: Միանգամայն ճիշտ է ներկայացնում Արաբական խալիֆայության անկման պատճառները: Ս. Անեցու ժամանակագրության մեջ է, որ վկայություն է պահպանվել 1126 թ. Անիի հերոսական մարտերի և պատմության մեջ հայտնի դարձած հայ կնոջ՝ Այծեմնիկի խիզախության մասին: Պատմիչը, քննարկելով իրեն նախորդած, մանավանդ հեռավոր անցյալի հեղինակների գործերը, հաճախ հակադրվում է նրանց և ներկայացնում սեփական պատկերացումները: Դրա հետևանքով հաճախ խիստ հակասություններ են ստեղծվում իր պատկերացումների և օգտագործած աղբյուրների միջև: Կարելի է արձանագրել, որ Ս. Անեցին, հեռանալով իր ապրած ժամանակաշրջանից, հեռանում է նաև երևույթները ստույգ ներկայացնելուց: Բազմաթիվ աղ-

բյուրների համաձայն՝ Արշակունյաց թագավորությունը վերացել է 428 թվին, իսկ ըստ Անեցու՝ 451 թվին, Քաղկեդոնի ժողովը տեղի է ունեցել 451 թվին, ըստ մեր հեղինակի՝ 473 թվին, Վարդան Մամիկոնյանը զոհվել է Ավարայրի ճակատամարտում 451 թ., իսկ ըստ Անեցու՝ 476 թվին և այլն[160]:

Ուղղորդելով իր պատկերացումները, մտածումները պատմական երևույթներին վերագրելու մեթոդով՝ հեղինակն ընկնում է նաև հակասությունների մեջ: Անին բյուզանդացիներին հանձնելու գործում նենգություն է համարում Պետրոս կաթողիկոսի և Վեստ Սարգսի գործունեությունը: Այդ չի խանգարում նաև նրանց հասցեին գովեստի խոսքեր շռայլել, կարեկցանքով խոսել, մեծապատիվ անվանել:

Այդ ամենով հանդերձ՝ Սամվել Անեցու գործն իր ապրած ժամանակաշրջանի՝ XII դարի Հայաստանի և Կիլիկիայի պատմության արժեքավոր աղբյուր է: Նրա ժամանակագրության մեջ արժեքավոր նյութեր կան նաև Հայաստանի հարևան երկրների ու ժողովուրդների մասին:

Տասներկուերորդ դարի երկրորդ կեսի պատմիչ Մխիթար Անեցին գրել է «Հայոց պատմություն», որը սկսվում է հնագույն ժամանակներից և հասցվում մինչև Խաչակրաց արշավանքները[161]: Երկը բաղկացած է եղել 3 հատվածից, բայց պահպանվել ու մեզ է հասել միայն առաջին մասի մի հատված, որը մեծ արժեք չի ներկայացնում:

Մ. Անեցու երկը կարևորվում է պատմության մասին հեղինակի դիտարկումներով: Նա պատմության նշանակությունը տեսնում է դաստիարակության, բարոյակրթության մեջ: Նրա կարծիքով հասարակությունը պետք է պատմությամբ դաստիարակվի, քանի որ պատմությունն է մարդուն իմաստուն դարձնում: Պատմության դերի գնահատման հարցում Մ. Անեցու երկն առանձնահատուկ տեղ է զբաղեցնում միջնադարյան հայ պատմագրության մեջ:

---

[160] Տե՛ս Սամուել Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1895, էջ 70, 71:

[161] «Մխիթար Անեցւոյ պատմութիւն», ի լոյս ած Ք. Պ. Ս. Պետերբուրգ, 1879:

Մոնղոլական ժամանակաշրջանի անվանի պատմիչ Կիրակոս Գանձակեցին ծնվել է XIII դարի սկզբին և ապրել մինչև 1271 թվականը: Կրթություն է ստացել նպաստավոր միջավայրում, ուսանել է Վանական Վարդապետ Տավուշեցու մոտ, եղել նրա լավագույն սաներից մեկը: Կիրակոսի դասընկերներից է եղել գիտուն անձնավորություն, պատմիչ Վարդան Արևելցին: Ստեփանոս Օրբելյանը Վանական Վարդապետի շնորհալի սաների մեջ առաջիններից մեկը նշում է Կիրակոս Գանձակեցու անունը: Վանականի սաները մտերիմ կապերի մեջ են եղել և գործակցել իրենց ուսուցչի հետ Գետիկ վանքում, ապա Խորանաշատ մենաստանում և այլուր: Գանձակեցին իր ուսուցիչ Վանականի հետ 1236 թ. գերվում է մոնղոլների կողմից: Վանական Տավուշեցին փրկագնով ազատվում է, իսկ աշակերտին մոնղոլները պահում են որպես գրագիր: Գանձակեցուն հաջողվում է փախչել գերությունից և հաստատվել Գետիկում: Նա հեղինակավոր հոգևորականներից էր, նշանավոր րաբունապետ էր, շփվում էր Յեքում թագավորի և այլ նշանավոր գործիչների հետ:

Նա իր հեղինակած «Յայոց պատմությունը» սկսում է Գրիգոր Լուսավորչի ու Տրդատ Գ-ի ժամանակաշրջանից և հասցնում մինչև իր ապրած շրջանը: Աշխատության առաջին մասը քաղված է նախորդ հեղինակներից և հիմնականում հայ եկեղեցու պատմությունն է: Դրանով հանդերձ նա տարբերվում է անցյալին անդրադարձող շատ պատմիչներից նրանով, որ գնահատելի բնութագրումներ է տալիս առանձքային նշանակություն ունեցող որոշ հարցերի: Կարողանում է ըստ արժանվույն գնահատել գրերի գյուտը՝ նշելով. «ծագեաց լոյս մեծ գիտութեան յաշխարհքս Յայոց»[162]: Դրվատանքի խոսքերով է ներկայացնում 5-րդ դարի հայ մշակույթի անվանի դեմքերին՝ Կորյունին, Ագաթանգեղոսին, Եղիշեին, Ղազար Փարպեցուն: Յայրենասիրական շնչով է խոսում հայոց պետականության վերականգնման առաջամարտիկ Աշոտ Բագրատունու մասին:

---

[162] Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 25. Կ. Մելիք-Օհանջանյանը կազմել է Կ. Գանձակեցու աշխատության գիտական-քննական բնագիրը: Աշխատությանը կցել է առանձին ուսումնասիրության բնույթ ունեցող մեծածավալ առաջաբան, որտեղ հանգամանորեն անդրադարձել է այս երկի հետ կապված բոլոր հարցերին:

Աշխատության երկրորդ մասը սկսվում է XII դարի վերջերից (1197) և ավարտվում 1265 թվականով: Այս մասը, ինչպես և պետք էր սպասել, առավել արժեքավոր է, հեղինակը ժամանակակից է և մանրամասնորեն գրել է իր տեսածն ու լսածը: Աշխատության այս մասն առաջնակարգ նշանակություն ունի հայ, վրաց, աղվան ժողովուրդների, թաթար-մոնղոլների արշավանքների ու նրանց պատմության համար:

Գանձակեցու հաղորդումից է հայտնի դառնում, որ նշանավոր վրաց թագավոր Դավիթ Շինարարը խոր հարգանքով է վերաբերվել Յովհաննես Սարկավագին, խոնարհաբար նրանից օրհնություն խնդրել[163]: Նա ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Ներսես Շնորհալու, Մխիթար Գոշի, մանավանդ Վանական Վարդապետի մասին: Գովեստով է խոսում այն հայ իշխանների մասին, որոնք փրկագնով ազատել են բազմաթիվ գերիների: Ցույց է տվել ազդեցիկ ավատատիրական տների կալվածքների աստիճանական անցումը մոնղոլ իշխանավորներին, ժողովրդի դառը վիճակը, ծանր հարկահանությունը:

Պատմիչի ուշադրությունից չեն վրիպել Կիլիկիայում կատարվող իրադարձությունները: Նրա հաղորդումների մեջ ուշագրավ է Յեթում թագավորի երթուղին դեպի Մոնղոլիա, ապա վերադարձը նոր ուղիով՝ Միջին Ասիայով դեպի Յայաստան ու Կիլիկիա: Յույժ արժեքավոր են Յայաստանում, Վրաստանում, Աղվանքում մոնղոլների ստեղծած սոցիալ-քաղաքական համակարգի, նրանց նիստուկացի, ընտանեկան սովորույթների, կրոնաբարոյական հասկացությունների, լեզվի, անգամ նրանց արտաքին տեսքի մասին հաղորդումները:

Դրա հետ մեկտեղ հեղինակն ունի դավանաբանական կրքոտ ծայրահեղություններ, հասարակական երևույթները ադետներով կամ հրաշքներով վերացնելու դյուրահավատություն:

Այդ ամենով հանդերձ Կիրակոս Գանձակեցու ստեղծագործությունը մնում է որպես հույժ կարևոր սկզբնաղբյուր: «Յետագա սերունդների համար,- գրում է իրավամբ Կ. Մելիք-Օհանջանյանը,- նրա պատմությունը թաթար-մոնղոլական դարաշրջանի Յայաստանի պատմության ամենահավաստի ու արժեքավոր սկզբնաղբյուր-

---

163 Նույն տեղում, էջ 114:

ների մեջ առաջնակարգ տեղ է գրավել: Նա այդ շրջանի ամենահեղինակավոր պատմագիրն է»[164]:

Վարդան Արևելցին (Վարդան Վարդապետ), իր դարաշրջանի՝ XIII դարի բազմակողմանի զարգացած գործիչներից էր՝ պատմագիր, մանկավարժ, փիլիսոփա, մեկնիչ, թարգմանիչ, հասարակական-եկեղեցական գործիչ: Նախնական կրթությունը ստացել է ծննդավայր Գանձակում և Գետիկի վանքում, որտեղ աշակերտել է Մխիթար Գոշին, ապա ուսանել է Տավուշի Խորանաշատ վանքում:

Մեկնել է Երուսաղեմ (1239), վերադարձին Հեթում Ա թագավորի հրավերով այցելել է Կիլիկիա, մասնակցել Անիի՝ 1243 թ. ազգային-եկեղեցական ժողովին: Մի քանի տարի անց կրկին մեկնում է Կիլիկիա, մասնակցում երկրի հասարակական-քաղաքական կյանքին, Հռոմի պապի և Բյուզանդիայի դեմ մղվող դավանաբանական պայքարին: Վերադառնալով հայրենիք՝ դպրոցներ է հիմնում Սաղմոսավանքում, Աղջոնց վանքում, Խորակերտում և այլուր: 1255 թ. հիմնում է Խոր վիրապի դպրոց-վարժապետարանը: Այստեղ նրան աշակերտել են հայ մատենագրության նշանավոր գործիչներ Հովհաննես Երզնկացին (Պլուզը), Գևորգ Սկևռացին, Ներսես Մշեցին, Եսայի Նչեցին և ուրիշներ: Վարդապետարանում ուսուցումը կազմակերպված էր փիլիսոփայական, ճարտասանական, քերականական լայն ծրագրերով:

Վարդան Արևելցին թողել է մատենագրական մեծ ժառանգություն, որի մեջ ամենից ավելի արժեքավորը «Հաւաքումն պատմութեան» երկն է[165], որն ընդհանուր պատմություն շարադրելու նպատակով ձեռնարկված ստեղծագործություն է: Հեղինակը պատմությունը սկսում է Բաբելոնյան աշտարակաշինությունից, Հայկի և Բելի մենամարտից և հասցնում մինչև իր ապրած տարիները, մինչև Կոստանդին Ա կաթողիկոսի մահը (1267): Նա օգտագործել է հարուստ ու բազմաբնույթ սկզբնաղբյուրներ: Օգտվել է պատմիչներ Եվսեբիոս Կեսարացու, Կորյունի, Մովսես Խորենացու, Մատթեոս Ուռհայեցու, Վանական Վարդապետի, Կի-

---

[164] Նույն տեղում, էջ 4:

[165] Վարդան Արևելցի, Հաւաքումն պատմութեան (աշխատասիրությամբ՝ Ղ. Ալիշանի), Վենետիկ, 1862:

րակոս Գանձակեցու և ուրիշների երկերից: Օգտագործել է վիմական արձանագրություններ, դիվանական փաստաթղթեր, զրույցներ, առասպելներ, կարևոր դեպքերի մասնակիցների կամ ականատեսների հաղորդումները: Արժեքավոր են հատկապես իր ապրած ժամանակաշրջանի՝ XIII դարի, ինչպես նաև նախորդ XI-XII դարերի իրադարձությունների նկարագրությունները: Ստուգապատում տեղեկություններ է հաղորդում Անդրկովկասի ժողովուրդների հարաբերությունների, սելջուկ թուրքերի, խաչակիրների, մոնղոլների, եգիպտոսի մամլուքների ընդհարումների, նրանց հասցրած ավերածությունների մասին:

Վարդան Արևելցին միավորված, կենտրոնացված պետության գաղափարի համակիրներից էր: Նա իրական պատկերացում ուներ Բագրատունիների տիրապետության ժամանակաշրջանում Հայաստանում ստեղծված քաղաքական իրավիճակի մասին և Անիի թագավորությանը գերակայություն էր տալիս մյուս թագավորությունների նկատմամբ: Միևնույն մտայնությամբ դրվատանքով էր խոսում Կիլիկիայի Լևոն Բ հայոց թագավորի մասին, իսկ Հայաստանի հարևան երկրի մասին գրում է. «... ի յաւուրս ժամանակաց Թամարայ թագուորին վրաց, զորացան քրիստոնեայք»[166]: Պատմագիրը բարյացակամորեն է խոսում բոլոր նրանց մասին, ովքեր ձգտել են միավորել հայկական ուժերը՝ հանուն ինքնուրույն կյանքի, հանուն անկախության:

Վարդան պատմագիրը՝ որպես լայն գիտելիքների տեր, որպես հանրագիտակ մտածող, ճիշտ էր կողմնորոշվում քաղաքական բնույթի խնդիրներում: Նա լավ էր հասկանում Հռոմի պապի և եվրոպական տերությունների՝ Հայաստանում և Կիլիկիայում դավանանքի հարցում վարած քաղաքականության բուն էությունը և խստորեն դատապարտում էր:

Պատմագրի ժառանգության մեջ արժեքավոր է նաև Միքայել Ասորու «Ժամանակագրության» թարգմանության հիշատակարանը: Նրանում ներկայացնում է մոնղոլների վայրագությունների հետևանքով քաղաքների, եկեղեցիների, ողջ երկիրն ավերելու ստուգապատում մանրամասները:

---

[166] Նույն տեղում, էջ 139:

Վարդան Արևելցու «Պատմությունը» XIII դ. ամենաարժեքավոր երկերից մեկն է: Նա իր ստեղծագործություններով գնահատելի դեր է կատարել հայ հոգևոր մշակույթի հետագա զարգացման գործում:

Մեզ հետաքրքրող դարաշրջանի հայ պատմագրության ամենանշանավոր դեմքերից է Ստեփանոս Օրբելյանը: Նա ապրել և ստեղծագործել է XIII դարում: Ստացել է հիմնավոր կրթություն, լայն գործունեություն ծավալել որպես Սյունյաց թեմի առաջնորդ-մետրոպոլիտ: Իր կարգավիճակով և գործելակերպով ունեցել է ոչ միայն հոգևոր, այլ նաև աշխարհիկ իշխանություն:

Նրա գիտական ժառանգության մեջ կարևոր է «Պատմութիւն նահանգին Սիսական» աշխատությունը[167]: Նա ըստ ամենայնի ներկայացնում է Սյունյաց նահանգի և իշխանական երկու տոհմերի՝ Սիսակյանների, հատկապես Օրբելյանների պատմությունը:

Նշված աշխատությամբ հեղինակն առաջ է անցել իր ժամանակակից և նախորդ դարաշրջանների պատմիչներից և զարգացած միջնադարի փուլում միակն է, որ ընթացել է Պատմահայր Մովսես Խորենացու բացած ուղիով: Աշխատությունը գրելու համար օգտագործել է հայ և օտար հեղինակների երկերը, հայոց թագավորների, Սյունյաց իշխանների, կաթողիկոսների և Սյունյաց եպիսկոպոսների նամակները, հրովարտակները, կալվածագրերը, վիմական արձանագրությունները, գրքերի հիշատակարանները:

Օրբելյանի երկը հարուստ նյութ է տալիս Հայաստանի և Կիլիկիայի՝ մոնղոլների հետ ունեցած հարաբերությունների, վրաց-մոնղոլական, աղվան-մոնղոլական առնչությունների մասին: Պատմիչը քանիցս եղել և լավ ընդունելության է արժանացել մոնղոլ իշխանավորների կողմից, այդ պատճառով էլ վատ չի արտահայտվում նրանց մասին: Աշխատության մեջ լուսաբանվել են Սյունիքի և Հայաստանի իշխանների, նախարարների, կաթողիկոսների ժամանակագրությունն ու գործունեությունը: Հանգամանորեն ներկայացվում են Սյունյաց նահանգի տեղագրությունը,

---

[167] «Պատմութիւն նահանգին Սիսական», արարեալ Ստեփանոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910:

բնական հարստությունները, կլիման, ջրային համակարգը, գլխավոր բերդերը, մշակույթը, սոցիալական և դավանաբանական պայքարը: Օրբելյանի երկի միջոցով մենք շատ բան ենք իմանում VIII դարի նշանավոր մտավորական, մատենագիր, քերական, բանաստեղծ, երաժիշտ Ստեփանոս Սյունեցու մասին: Տեղեկանում ենք Սյունիքի սոցիալ-տնտեսական հարցերի, մասնավորապես գյուղացիական շարժումների մասին: Նա միարարական շարժման թունդ հակառակորդներից էր: Նրա նախաձեռնությամբ գումարվել է եկեղեցական ժողով, ուր մերժվել է Գ. Անավարզեցու՝ Հռոմից եկող կաթոլիկական դավանանքի ընդունումը:

Հեղինակը հիացմունքով է խոսում վրաց Օրբելյանների մասին, որոնք վրացիների հետ միասին մարտնչում են թշնամիների դեմ: Օրբելյանը դատապարտում է Սյունիքի դավաճան և ուրացող իշխաններին, Վասակին և ուրիշների: Միաժամանակ հպարտությամբ է արտահայտվում տոհմի պատիվը բարձրացնող գործիչների մասին: Նա լավատեսորեն է ներկայացնում և դրվատանքով խոսում այն ամենի մասին, ինչ պատիվ է բերում Սյունյաց աշխարհին: Օրբելյանը հայրենասեր մտավորական է, որն արտահայտվել է նրա ամբողջ ստեղծագործության մեջ: Նա՝ որպես լայնախոհ գործիչ, նեղ տեսանկյունից չի դիտարկում իրադարձությունները: Նրա հետաքրքրությունները չեն պարփակվում սոսկ նահանգի շրջանակներում: Խոսում, հպարտությամբ դրվատում է ամբողջ Հայաստանի հաջողությունները, որով նրա հայրենասիրությունը ստանում է համահայկական բնույթ: Նա հովանավորում էր մշակութային ձեռնարկումները: Հայտնի է, թե ինչ ջանքեր էր գործադրել և նպաստել Գլաձորի համալսարանի կայացմանը: Աշխատությունն ավարտվում է XIII դարի վերջերի իրադարձությունների լուսաբանումով:

Ստեփանոս Օրբելյանն աղբյուրների նկատմամբ ունի վերլուծական, քննադատական վերաբերմունք և Պատմահայր Մովսես Խորենացուց հետո երկրորդն է, որ փորձում է գիտականորեն շարադրել նյութը: Հեղինակի մյուս աշխատությունը՝ փոքրածա-

վալ «տարեգրությունը»[168], կարևոր աղբյուր է 1195-1290 թվականների, փաստորեն մեկ հարյուրամյակի իրադարձությունների մասին:

Օրբելյանի երկը հետաքրքրություն է ներկայացնում նաև արևելագիտության և ընդհանուր պատմության համար:

Հեթում պատմիչից մեզ հասած գործերից կարևոր է «Պատմութիւն թաթարաց» (Վենետիկ, 1951) ժամանակագրությունը, որը գրել է Կղեմես պապի հանձնարարությամբ: Հեթում պատմիչը Կիլիկիայի նշանավոր Հեթումյաններից էր, ապրել է XIII դարի երկրորդ կեսին, մահացել 1307 թվականին: Նա գործել է մոնղոլական արքունիքում, մասնակցել է Եգիպտոսի դեմ մոնղոլական արշավանքներին, եղել բազմաթիվ երկրներում, ուստի նրա երկն ականատեսի ու գործող անձի գրչի արդյունք է: Այն ըստ էության, բացի թաթարներից, Արևելքի մեկ տասնյակից ավելի երկրների պատմաաշխարհագրական նկարագրություն է: Եվրոպացի արևելագետ մասնագետները գտնում են, որ Հեթումը, ունենալով ավելի լայն աշխարհայացք, քան Մարկո Պոլոն, լրացնում է նրան, խոսում արևելյան երկրների քաղաքական փոխհարաբերությունների մասին, որոնք դուրս են մնացել Մարկո Պոլոյի տեսադաշտից:

Հեթումի գործի նկատմամբ եվրոպացիների հետաքրքրությունները բացատրվում են նրանով, որ նա ավելի ստույգ տեղեկություններ է հաղորդում մոնղոլների մասին, քան իր նախորդներն ու անգամ հետնորդները: Ռուս պատմաբան Վ. Իկոնիկովը հավաստում է, որ եվրոպական երկրները երկար ժամանակ Ռուսաստանի մասին տեղեկություններ են քաղել Հեթումի պատմությունից[169]: Հեթումի երկը բարձր են գնահատել այնպիսի արևելագետներ, ինչպիսիք են Ե. Դյուլորիեն, Ք. Պատկանովը, Տիզենհաուզենը և ուրիշներ:

Հեթումը մոնղոլական արքունիքում նաև դիվանագիտական խորհրդատուի դեր էր կատարում: Նա հանում Կիլիկիայի

---

[168] Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», XIII-XVIII դդ., հ. 1, Երևան, 1951, էջ 32-64, կազմեց Վ. Ա. Հակոբյանը:

[169] Տե՛ս В. Иконников, Опыт русской историографии, т. 1, кн. 1, Киев 1892, стр. 346:

անվտանգության անհրաժեշտ էր համարում Եգիպտոսին թուլացնելու նպատակով միացյալ ուժերով նրան տնտեսական բլոկադայի ենթարկելը:

Հեթումի «Պատմութիւն թաթարաց» գործը որոշակի արժեք է ներկայացնում մոնղոլական նվաճումների ու տիրապետության, հայ-մոնղոլական հարաբերությունների, Մերձավոր Արևելքի երկրների աշխարհաքաղաքական պատմության և XIII դարի այլ հարցերի ուսումնասիրության համար:

Ազգային պատմության լուսաբանումը միայն պատմիչների ավանդած ժառանգությամբ չի սպառվում: Կան նաև այլ բնույթի աղբյուրներ, որոնք բավականաչափ առատ նյութ են տալիս անցյալի պատմությունն ամբողջացնելու համար:

Դրանցից են վիմական արձանագրությունները: Քարերի վրա փորագրելը, կարևոր եղելության արձանագրելը շատ հնուց, հազարամյակներ առաջ գործադրվող մշակույթ է եղել: Փաստորեն մարդկության գրավոր պատմությունը սկսվել է ժայռերի վրա փորագրությամբ: Ուրարտուի ժամանակաշրջանից և դրանից առաջ սեպագրերով պահպանվել են բազմաթիվ նման հուշարձաններ: Վաղ միջնադարում շարունակվեց այդ ավանդույթն օտար լեզուներով և մեսրոպյան տառերով: Զարգացած միջնադարում կյանքի ընդհանուր առաջընթացը, շինարարության վերելքը մեծապես խթանեցին աղբյուրագիտական այս ճյուղի աննախադեպ ծավալումը: Դրանց թիվը հասնում է հազարների: Արձանագրությունները փորագրվել են աշխարհիկ և հատկապես եկեղեցական շինությունների պատերին, խաչքարերի, տապանաքարերի, բրուտագործական կենցաղային իրերի վրա և այլ տեղերում: Վիմական արձանագրությունները բազմաբովանդակ, որոշակի և ստույգ տեղեկություններ են հաղորդում: Դրանք կարևոր աղբյուր են առաջին հերթին տնտեսական կյանքի՝ հարկերի, հողային տարածքների, անշարժ ունեցվածքի, կալվածատիրության, ավատատիրական տների, առուծախի, նվիրատվությունների, քաղաքական անցքերի, շինարարության և այլ հարցերի վերաբերյալ[170]:

---

[170] Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ 1-9, Երևան, 1960-2012 թթ.:

Հայաստանի, ինչպես նաև հարևան երկրների մասին արժեքավոր աղբյուր են հիշատակարանները: Ձեռագրերի գրիչներն ու պատվիրատուները, կազմողներն ու նորոգողները ձեռագրերի վերջում համառոտ նշումներ են կատարել ժամանակի քաղաքական անցքերի, օտարերկրյա արշավանքների, գերեվարման, արտագաղթերի, ժողովրդի վիճակի, տնտեսության տարբեր ճյուղերի, գրչության կենտրոնների, վարդապետարանների, առհասարակ մշակութային այլևայլ հարցերի մասին[171]:

Հետաքրքիր նյութեր են պարունակում պահպանված (հաճախ առանց հեղինակի) մանր ժամանակագրությունները[172]: Ժամանակակիցներն ուշագրավ տեղեկություններ են հաղորդում ներավատատիրական պայքարի, օտար արշավանքների, նրանց կատարած ավերածությունների, սովի, համաճարակ հիվանդությունների, կենցաղային այլևայլ հարցերի մասին: Ժամանակագիրները թողին են հանձնել մեծ մասամբ իրենց ժամանակի, իրենց գավառի, բնակավայրի ու շրջակա վայրերի երևույթները, ուստի և բարձր է նրանց հաղորդումների հավաստիությունը:

Գրավոր կարևոր աղբյուրներ են թղթերը կամ նամակագրությունը գործող իրավական նորմերի, սովորույթների, իշխող բարքերի և այլ հարցերի մասին: Նրանց հեղինակներն են լինում, որպես կանոն, ժամանակի անվանի դեմքերը: Վերհիշենք, թե Գրիգոր Մագիստրոսի «Թղթերը», Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրական»-ը ինչպիսի հարուստ ու բազմաբովանդակ նյութեր են պարունակում:

Պատմագիտական նյութեր են ընձեռում առակները, վարքագրությունները, վկայաբանությունները, ճառերն ու քարոզները, գեղարվեստական գրականության առանձին կորողներ:

[171] XIV-XV դդ. ձեռագրերի հիշատակարանները 1950-ական թվականներին հրատարակել է Լ. Խաչիկյանը: Հետագա դարերի հիշատակարանները հրատարակել են Գ. Հովսեփյանը, Վ. Հակոբյանը և այլ հեղինակներ:

[172] Տե՛ս Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հ. Ա, Երևան, 1951, հ. Բ, Երևան, 1956:

## 2. ԻՐԱՎՈՒՆՔ

Զարգացած միջնադարի իրավունքի հուշարձանները հայ մշակույթի փայլուն դրսևորումներից են: Նախորդ դարաշրջանում, վաղ միջնադարում, ինչպես և հետագա՝ ուշ միջնադարի և նոր շրջանի պատմափուլերում իրավունքի մնայուն հուշարձաններ չստեղծվեցին: Դրան հակառակ այս դարաշրջանում՝ XII-XIII դարերում, հայ իրավական դաշտը ոչ միայն հարուստ է ստեղծագործություններով, այլև այդ կոթողներից մեկը՝ Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը», մասնագետները դասում են իրավունքի համաշխարհային հուշարձանների շարքում:

Ժամանակագրական առումով առաջինը Դավիթ Ալավկաորդին է անդրադառնում իրավական հիմնահարցերին: Նա ծնվել է Գանձակում XI դարի 70-80-ական թվականներին, մահացել է 1139 կամ 1140 թվին: Նա ժամանակի կրթված անձնավորություններից էր, երկար ժամանակ զբաղվել է մանկավարժությամբ, համագործակցել նշանավոր մտավորականների, այդ թվում և Յովհաննես Սարկավագ Իմաստասերի հետ:

Լինելով ուսյալ մտավորական՝ նրան հետաքրքրել է հասարակական հարաբերություններում կարգուկանոն հաստատելու խնդիրը: Այդ նպատակով ստեղծվում է համակարգված մի օրենսդրություն՝ «կանոններ» կամ «կանոնական օրենսդրություններ» անվանումով: Մասնագետների շրջանում տարակարծություններ են առաջացել այդ կանոնների շուրջ: Մի մասն այն կարծիքն է հայտնել, թե «կանոնները» առանձին արժեք չեն ներկայացնում, և որ հնարավոր չէ դրանք ընդգրկել օրենսդրության համակարգում: Մյուս, ավելի գերակշիռ մասը հակառակ տեսակետն է պաշտպանում: Վերջին դիրքորոշումն է ճանաչում գտել[173]:

Դավիթ Ալավկաորդու կանոնական օրենսդրությունները բաղկացած են 97 կանոնից[174], որոնք կարգավորում են քրեաիրավական հարաբերությունները, որոնցից 25 կանոն նվիրված են միայն ամուսնաընտանեկան հիմնախնդրին: Այս և իրավական

---

[173] Տես Գ. Սաֆարյան, Միջնադարյան հայ իրավունքը և իրավաքաղաքական միտքը (X-XIII), Երևան, 2008, էջ 155:

[174] Տես Ա. Աբրահամյան, Դավիթ Ալավկաորդու «կանոնները», Երևան, 1953:

որոշ այլ հարցերում հեղինակն ունի բավականաչափ առաջադիմական մոտեցումներ: Կանոնական օրենսդրության 27-րդ կանոնի համաձայն՝ ամուսնությունը պետք է լինի փոխադարձ համաձայնությամբ: Ամուսնությունը համարվում է միություն մինչև կյանքի վերջը՝ «ցկյանս միություն»: Հայկական կյանքում վաղուց գործող ու մարմնավորված այդ գաղափարից ելնելով՝ հեղինակը խիստ սահմանափակում է չհիմնավորված ամուսնալուծությունները: Անգամ զավակ չունենալը՝ ամլությունը, չի համարում ամուսնալուծության բավարար հիմք (կանոն 70): Այս ամենից հետևում է, որ Դավիթ Ալավկաորդին էական նշանակություն է տալիս և ջանում է հասարակության մեջ ունենալ կայուն ու հարատևող ընտանիք:

Ամուսնաընտանեկան հարաբերություններում չկան գույքային հարաբերությունները կարգավորող կանոններ, բայց այնտեղ պարզորոշ դրվել է աշխատանքի պաշտպանության հարցը: Օրենսդրության 3-րդ կանոնի համաձայն՝ թյուրիմացություններից խուսափելու համար տերը պարտավոր է ծառային ծանոթացնել աշխատանքի պայմաններին: Ծառային դժբախտ դեպք պատահելու պարագայում տերը պատասխանատվություն է կրում:

Քրեական պատժի հարցում օրենսդրության հեղինակը սահմանում է մեղմ ու մարդասիրական կանոններ: Նա շեշտված բացասական վերաբերմունք է դրսևորել աղանդների՝ թոնդրակյան շարժման, այլակրոնների՝ մահմեդականների նկատմամբ: Այլակրոնների հետ շփվելը, նրանց հետ հարաբերություններ ունենալը համարվում են պատժելի արարք: Նման կանոնը հավանաբար Հայաստանում սելջուկ թուրքերի հալածական քաղաքականություն վարելու և քրիստոնյաների նկատմամբ մահմեդականների թշնամական վերաբերմունքի հետևանք էր, որի ականատեսն էր հեղինակը:

Դավիթ Ալավկաորդու կանոններն իրավական մտքի աշխարհիկ անդրանիկ կանոններն էին հայ իրականության մեջ:

Մխիթար Գոշ. նրա «Գիրք դատաստանի» օրենսգիրքը[175],

---

[175] Մխիթար Գոշ. Գիրք դատաստանի, աշխատասիրությամբ Խոսրով Թորոսյանի, Երևան, 1975:

լինելով միջնադարյան հայ իրավունքի ամենանշանավոր հուշարձանը, ոչ միայն իրավական կոթող է, այլև պատմական հարուստ այնպիսի աղբյուր, որը լույս է սփռում ավատատիրական Հայաստանի կյանքի գրեթե բոլոր կողմերի վրա:

Այդ օրենսգիրքը հայ իրավունքի ամենանշանավոր հուշարձանն է: Գոշը կենտրոնացված պետության ջատագով էր և սահմանում էր դրա պետաիրավական ողջ համակարգը: Նա մեծապես հենվում էր սովորութային իրավունքի վրա, քանի որ պետության բացակայության հետևանքով սովորութային իրավունքը գերակշիռ նշանակություն ուներ Հայաստանում: Ինչպես հայտնի է, սովորույթն ազգային ինքնությունը հատկանշող ծանրակշիռ գործոններից է: Հետևաբար Գոշի «Դատաստանագիրքը» ազգային ինքնության պահպանմանն ուղղված կարևոր կոթող էր:

Երրորդ օրենսգիրքը ստեղծվել է Կիլիկիայում Սմբատ Գունդստաբլի կողմից տեղի հայկական պետության իրավահարաբերությունները կարգավորելու նպատակով: Հեղինակը մեծապես հենվել է Գոշի «Դատաստանագրքի» վրա:

Գոշը ծնվել է Գանձակում XII դարի 20-30-ական թվականներին: Չափահաս դառնալով՝ ձեռնադրվում է կուսակրոն քահանա: Ստացած նախնական կրթությունը լրացնելու ձգտումով ընդունվում է Հովհաննես Տավուշեցու ուսումնարան: Այնտեղ խորացնում է գիտելիքները և ստանում վարդապետի կոչում: Սակայն չի բավարարվում դրանով, գիտելիքները հարստացնելու ձգտումով, ինչպես արդեն նշել ենք, մեկնում է Կիլիկիա՝ Սև լեռան հայտնի կրթօջախները:

Հիմնավոր գիտելիքներով զինված՝ վերադառնում է հայրենի երկիր, զբաղվում ուսուցչությամբ: Տեղի իշխանավորների հետ ունեցած տարաձայնությունների, հետապնդումների պատճառով տեղափոխվում է Կայեն գավառի Գետիկ վանքը: Երկրաշարժի հետևանքով վանքը կործանվում է: Գոշը Զաքարե և Իվանե եղբայրների և Քուրդ անունով հայ իշխանի աջակցությամբ հիմնում է Նոր Գետիկ վանքը, որտեղ և բնակվում է մինչև իր կյանքի վերջը՝ 1213 թվականը: Զաքարե Երկայնաբազուկը, որի խոստովանահայրն էր Գոշը, հաշվի էր նստում նրա կարծիքների հետ:

Գոշի գլխավորած Նոր Գետիկի կրթօջախն աստիճանաբար սկսում է ճանաչվել, հեղինակություն վայելել: Նրա աշակերտներից շատերը նշանավոր դեմքեր են դառնում: Նրանցից էր Վանական Վարդապետը, որը գրեց իր ուսուցչի կենսագրությունը: Ցավոք, այդ աշխատությունը մեզ չի հասել, բայց Վանականի աշակերտ Կիրակոս Գանձակեցին շատ արժեքավոր տեղեկություններ է հաղորդում: Աստիճանաբար աճում է Գոշի հեղինակությունը, մեծ անուն է ձեռք բերում նա որպես հասարակական, եկեղեցական գործիչ, որպես մանկավարժ, որպես շատ գնահատելի գրքերի հեղինակ: Նրա մասին գրվել և պահպանվել են ճառեր, մեկնություններ, թղթեր, աղոթքներ: Նոր Գետիկում է ընթանում Գոշի ստեղծագործական ամբողջ կյանքը: Այստեղ է ստեղծվում նաև «Հայոց Դատաստանագիրքը»: Սկզբում նա գրում է դատաստանագրքի նախագրությունը կամ ներածությունը: «Դատաստանագիրքը» գրելու անհրաժեշտությունը բացատրում է բազմաթիվ հանգամանքներով՝ 12 դրդապատճառներով: Ընդհանրացրած ձևով ներկայացնելու պարագայում այն հանգում է հետևյալին. այլադավանները պարսավում են հայերին՝ դատաստանագիրք չունենալու պատճառով: Կյանքը փոփոխվել է, մարդկանց մեջ ուժեղացել են չարությունը, կաշառակերությունը և այլ անընդունելի վատ բարքեր: Եղած Մովսիսական օրենքները, կտակարանները, մեկ անգամ սահմանված լինելով, մնացել են անշարժ, քարացած վիճակում, ժամանակի ընթացքում կատարված փոփոխությունները, տեղաշարժերը չեն արտահայտում: Ուրիշ խոսքով՝ կյանքի առաջադրած պահանջներով է անհրաժեշտ դառնում դատաստանագրքի ստեղծումը:

Մխիթար Գոշը գտնում էր, որ պետությունն ու եկեղեցին են այն հիմնական հենասյուները, որոնք պահում են երկիրն ու ամբողջ ժողովրդին: Պետությունը պատկերացնում էր թագավորության, կենտրոնացված իշխանության ձևով, միապետի գլխավորությամբ: Դատաստանագրքով սահմանում էր թագավորության պետաիրավական կարգը: Նա քաջատեղյակ էր ազգային պետության, մասնավորապես ոչ հեռու անցյալի Բագրատունյաց դարաշրջանի Հայաստանի իրավիճակին, երբ երկիրը տարաբաժանված էր մանր թագավորությունների և իշխանությունների

միջև: Նույնն էր նաև իր ապրած ժամանակաշրջանում՝ Զաքարյանների օրոք: Այդ պատճառով հզոր պետություն ունենալու միտումով սահմանում էր կենտրոնացված պետության իրավակարգը:

Նա առանձնահատուկ նշանակություն էր տալիս թագավորական գահը ժառանգելու հարցին: Ընդունված, համընդհանուր ճանաչում գտած կարգի համաձայն՝ գահը հորից անցնում էր ավագ որդուն: Գոշը չի ընդունում, շեղվում է արմատավորված այդ սկզբունքից և սահմանում, որ գահը փոխանցվում է ոչ թե անպայման ավագ որդուն, այլ այն ժառանգին, որն ավելի ունակ է երկիրը կառավարելու:

Բնականաբար միտք է ծագում՝ ինչու էր Գոշը նման փոփոխությունների գնում: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ «Դատաստանագրքի» հեղինակը դասեր էր քաղում Բագրատունյաց թագավորության անկման դառը իրողությունից: Ինչպես հայտնի է, Գագիկ Ա-ի օրոք (990-1020) Հայաստանը հասավ իր հզորության գագաթնակետին: Երկիրը միավորելու և միասնական կենտրոնացված պետություն ստեղծելու պայմաններ էին հասունանում: Սակայն բնականոն զարգացման ընթացքն անսպասելիորեն ընդհատվեց: Թագավորի վախճանվելուց հետո նրա երկու որդիների միջև գահի համար պայքար սկսվեց: Գահը վերապահվեց կառավարման ունակություններից զուրկ, կամազուրկ ավագ որդուն՝ Հովհաննես-Սմբատին: Մարտունակ ու եռանդուն կրտսեր եղբայրը՝ Աշոտ Բագրատունին, ստացավ միայն որոշ գավառներ այն պայմանով, որ ավագ եղբոր մահից հետո ինքն է տիրելու գահին: Թագավորության հենց առաջին տարիներին Հովհաննես-Սմբատը անսպասելիորեն Անին, ասել է թե ողջ երկիրը, իր մահից հետո կտակեց Բյուզանդիային: 1040 թվին մահացավ Աշոտը, նրանից կարճ ժամանակ անց՝ ավագ եղբայրը: Բյուզանդիան, հայոց թագավորի կտակը հիմք դարձնելով, մի քանի տարվա պայքարից հետո տիրացավ Անիին (1045 թ.), և վերջ տրվեց Բագրատունյաց թագավորության գոյությանը: Անտարակույս հայկական պետականության վերացման տխուր, միաժամանակ ուսանելի փաստն է թելադրել Մխիթար Գոշին գահի ժառանգության հարցում նման փոփոխություն մտցնել:

«Դատաստանագիրքը» համակողմանի արժևորելու համար հարկ է պարզել, թե ինչ աղբյուրների հիման վրա է ստեղծվել, և թե այդ աղբյուրներից որոնք են էական նշանակություն ունեցել: Ամենից առաջ հեղինակն օգտվել է Աստվածաշնչյան օրենքներից, Մովսիսական օրենքներից, Հին ու Նոր Կտակարաններից, ուրիշ, հատկապես քրիստոնյա ժողովուրդների օրենքներից: Նրա համար էական աղբյուր են ծառայել եկեղեցական կանոնները: Հայտնի է, որ եկեղեցական կանոններն ամփոփվել են VIII դարում Հովհաննես Օձնեցու կողմից: Փաստերը վկայում են, որ հետագա դարերում շարունակել են հավելել այդ կանոնները: Հանգամանորեն քննարկելով այդ հարցը՝ Վազգեն Հակոբյանը գալիս է հետևյալ եզրակացության. «Վերևում շարադրածից հետո կարող ենք ասել, որ X դարի վերջին կանոնագիրքը մեզ ներկայանում է 40 կանոնախմբերով, այն է՝ առաջին մաս՝ Օձնեցու ժողովածուն՝ Ա-ԻԴ, ապա երկրորդ մաս՝ Օձնեցուց հետո ավելացված ԻԵԽ կանոնախմբերով»[176]: Աղբյուրագետ-պատմաբանը հավանական է համարում հետագա դարերում ևս նոր ավելացումներ կատարելը, որոնց նկատմամբ անտարբեր չէր կարող լինել «Դատաստանագրքի» հոգևորական հեղինակը: «Դատաստանագրքի» համար աղբյուր են ծառայել նաև Դավիթ Ալավկաորդու կանոնական սահմանումները:

Մխիթար Գոշը մեծապես հենվել է սովորութային իրավունքի վրա: Ժողովուրդը գործնական կյանքում բանավոր արտահայտում է իր ցանկությունը, իր կամքը: Նույն երևույթի կրկնությունը վերածվում է սովորույթի և դառնում վարքագծի ընդհանուր հատկանիշ, նորմ: Սակայն նույն երևույթը ծնող հարաբերությունները փոխվելով՝ կարող է փոփոխվել նաև սովորույթը: Գոյատևում են սովորույթի այն նորմերը, որոնք չեն առնչվում տվյալ հասարակական հարաբերություններին, ունեն ընդհանուր բնույթ: Արևելքի ժողովուրդների կյանքում սովորութային իրավունքը լայնորեն տարածված է եղել: Հայ ժողովուրդը, դարեր շարունակ զրկված լինելով պետականությունից առաջնորդվել է եկեղեցական կանոններով և սովորութային նորմերով: Ինչպես տեղին նկատել է պատմաբան Բենիամին Հարությունյանը, Գոշը, երբ անդրադառ-

[176] «Կանոնագիրք Հայոց», Բ, աշխատասիրությամբ Վազգեն Հակոբյանի, էջ XXV:

նում է տնտեսական, սոցիալական կամ կենցաղային, աշխարհիկ կյանքի ոլորտին վերաբերող հարցերին, հաճախ է դիմում սովորութային օրենքներին: Գյուղական համայնքներին, շինականների և ավատատերերի փոխհարաբերություններին, շահագործման եղանակներին ու չափերին վերաբերող հոդվածներն ամբողջությամբ հիմնված են սովորութային իրավունքի վրա[177]:

Սովորույթն ազգային ինքնությունը հատկանշող կարևոր գործոններից է: Դրանով է բացատրվում այն պարագան, որ ուշ միջնադարում Լեհաստանի և Ռուսաստանի հայկական գաղութներում իրենց օրենսգրքերի հիմքում դրեցին Մ. Գոշի հայկական «Դատաստանագիրքը»: Լեհաստանում 1519 թ. Սիգիզմունդ Ա թագավորը թույլատրում է հայերի ներքին կյանքում և հայերի հետ ունեցած հարաբերություններում օգտագործել լեհահայոց «Դատաստանագիրքը»: Վ. Բաստամյանը, համեմատելով այդ «Դատաստանագիրքը» Մ. Գոշի օրենսգրքի հետ, գալիս է այն համոզման, որ հիմքում ընկած է Գոշի «Դատաստանագիրքը»՝ լրացված ու փոփոխված տեղական պայմանների ու պահանջների ոգով[178]: Ավելի ուշ՝ 1765 թ., կազմվեց Աստրախանի հայոց «Դատաստանագիրքը», որը նույնպես ստեղծվել էր Մ. Գոշի օրենսգրքի հիման վրա՝ հարմարեցնելով տեղական պայմաններին, սակայն լայն տեղ հատկացնելով սովորութային իրավունքին[179]: Աստրախանի «Դատաստանագիրքը» օգտագործվեց Աստրախանի, Ղզլարի, Մոզդոկի և Նոր Նախիջևանի հայկական գաղութներում մինչև XIX դարի կեսերը: Հայկական գաղութներում ազգային «Դատաստանագիրքն» էին հիմք դարձնում՝ հայրենի բարքերից ու սովորույթներից չկտրվելու և այդ եղանակով ինքնությունը պահպանելու, օտար միջավայրում ձուլվելու վտանգի դեմ պատվար ունենալու համար:

Հայաստանը լեռնային պատնեշներով բաժանված էր նահանգների ու գավառների, որոնց միջև կապերը, շփումները շատ թույլ էին: Առանձին լեռնաշղթաների մեջ պարփակված գավառ-

---

[177] Տե՛ս Армянский сборник Мхитара Гоша (пер. А. Поповяна), Ереван, 1954. Բ. Հարությունյանի ներածական հոդվածը, էջ XX:
[178] Նույն տեղում, էջ XXXIII:
[179] Տե՛ս «Դատաստանագիրք Աստրախանի հայոց», աշխատասիրությամբ Ֆ. Պողոսյանի, Երևան, 1964:

ներում առաջնորդվում էին տեղական սովորույթներով: Այդ իրավիճակն ավելի էր ուժեղացնում երկրի տարբաժանվածությունը: Յայրենի երկիրը միավորելու ձգտումով Գոշը մեկուսի կյանքով ապրող վարչական բոլոր միավորների համար մշակում էր ընդհանուր օրենքներ: Յաճախ սովորութային ընդհանուր բնույթ կրող նորմերը վերափոխում, վերածում էր օրենքի: Դատաստանագրքով նա ընդառաջում էր ցանկալի գալիքին և սահմանում էր ապագա թագավորության պետական կարգը, ձգտում երկրի ներքին ուժերը համախմբել, զորեղացնել: Դրանով նա սատարում էր համազգային շահերին, հայ ժողովրդի ինքնության ու քաղաքական ինքնորոշմանը[180]:

Քրիստոնեությունը պետական կրոն դառնալուց հետո եկեղեցին ևս դարձավ պետականություն կրող և հետամուտ էր ազգային-պետական շահերին: Դատաստանագրքում ամրապնդվում էին եկեղեցու իրավասությունները՝ որպես ազգային շահերի հուսալի պատվար: Եկեղեցին միաժամանակ ավատատիրական կազմակերպություն էր իր տնտեսական կարողությամբ: «Դատաստանագրքում» քիչ չեն եկեղեցու ունեցվածքի պաշտպանությանն ուղղված հոդվածները: Տնտեսական-քաղաքական հողի վրա տևական հակասություններ են եղել աշխարհիկ և հոգևոր իշխանությունների միջև: «Դատաստանագրքում» կարգավորվում էին նրանց իրավասությունների սահմանները: Յոգևորականներին հորդորվում էր զբաղվել միայն հոգևոր գործերով, իսկ աշխարհիկ իշխող դասին՝ չխառնվել հոգևոր գործերին:

Գիտական-աստվածաբանական ոլորտի գործիչները մարդու անազատ լինելու պատճառները որոնել են արտաքին պայմաններում: Մխիթար Գոշն առաջիններից մեկն էր, որ անազատ լինելու պատճառը պայմանավորել է հասարակության ներքին կյանքով, նրա սոցիալ-տնտեսական հարաբերություններով: «Դատաստանագրքի» 21-րդ «Յաղագս դատաստանաց շինականաց» հոդվածում ասվում է. «Ազատ յԱրարչէն եղեւ մարդկայինս բնութիւն, այլ ծառայել տերանց յաղագս պիտոյից եղեւ հողոյ և ջրոյ»: Անազատությունը, ուրիշներին ծառայելն առաջանում է հո-

---

[180] Տե՛ս Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, Խոսրով Թորոսյանի առաջաբանը, էջ է-խէ:

ղից ու ջրից զրկվելու և այդ բնական հարստությունը մի խումբ մարդկանց ձեռքն անցնելու հետևանքով: Շինականը, հողից ու միջոցներից զրկվելով, դառնում է վարձկան: «Դատաստանագրքում» մի շարք հոդվածներ կան վարձկանների մասին, որը դրանց տարածվածության մասին է վկայում: Օրենսդրությամբ պահանջվում է վարձու աշխատողի վճարը հանձնել նույն օրը՝ աշխատանքի ավարտին, քանի որ անհատը միջոցներից զուրկ լինելու պատճառով է վարձկան դարձել: Յոդված 126-ում ասվում է. «Մի զլացիս զվարձս տնանկին եւ զկարաւտելոյ յեղբարց քոց կամ յեկաց քաղաքաց քոց: Նոյն աւրին հատուսցես զվարձս նորա... Յայտ է զի յաղագս աղքատութեան եղեւ վարձկան եւ աւուրն պիտոյից»:

«Դատաստանագրքում» պահանջվում էր հարկերն ու տուրքերը գանձել արդարորեն, իրենց նախնիների գանձման չափով, որից ավելի վերցնելն անօրինական է: Շինականը պարտավոր է շաբաթվա մեջ մեկ օր աշխատել տիրոջ համար, անարդար է, երբ տերը պահանջում է ավելի շատ աշխատել: Տոների առիթով շինականների կողմից կամավոր տրվող նվերներից ավելին պահանջելը դատապարտելի է համարվում: «Դատաստանագրքում» խստորեն կարգ է մշակվում իշխողների կողմից իրենց ծառաներին սպանելու իրավունքի դեմ: Նման քայլ կատարողների նկատմամբ սահմանվում է քրեական պատասխանատվություն: Գոշն օրենսդրությամբ զսպում ու սահմանափակում է ավատատերերին, պաշտպանում շինականներին: Այդ քայլին է դիմում՝ շինականներին հնազանդ պահելու, տիրապետող իրավիճակը պահպանելու, խաղաղ ու համերաշխ մթնոլորտ ստեղծելու նպատակով: Այլ խոսքով՝ տիրող կարգերը հաստատուն դարձնելու միտումով:

Իրավունքի մասին դատողություններում Գոշը յուրահատուկ ձևով ելնում էր նաև բնական իրավունքից: Բնությունը ստեղծել է մարդուն՝ որպես բանականություն ունեցող էակ, որին տրվել են ընդունակություններ՝ բարին չարից, արդարն անարդարից տարբերելու: Յետևաբար մարդը պատասխանատվություն պետք է կրի իր արարքների համար, նա չպետք է թույլատրի իրեն նեղելու, և ոչ էլ ինքն է նեղելու ուրիշներին:

«Դատաստանագրքի» բարձր վարկանիշի մասին է վկայում այն փաստը, որ այնտեղ բացակայում է կրոնական անհանդուրժողականությունը: «Դատաստանագրքի» հեղինակն ականատես է եղել սելջուկ թուրքերի կողմից հայ բնակչության դավանական և տնտեսական հալածանքներին: Նա` որպես քրիստոնեական եկեղեցու ճանաչված դեմքերից մեկը, անշուշտ, չէր հանդուրժում մահմեդական կրոնը, բայց այդ վերաբերմունքը չէր տարածում բնակչության վրա: Մահմեդականի մարդկային արժանապատվությունը չէր վիրավորվում, նա լրացուցիչ հարկ ու տուրք չէր վճարում, այլ վճարում էր այնքան, որքան հայ բնակիչը: Նրա կյանքը, գույքը պաշտպանվում էին օրենքով: Գոշը հանդես է բերում ժողովրդավարական լայնախոհ մոտեցում, բարձր մտավորականին հարիր գաղափարախոսություն:

Ինչպես նշվեց, Գոշն ակնկալում էր երկրի անկախության վերականգնումը և կենտրոնացված պետության ստեղծումը: Նա օրենքներ է մշակում ցանկալի այդ պետության համար: Նա ճանաչում է երկու տեսակ դատարան՝հոգևոր և աշխարհիկ: Աշխարհիկ դատարանը կարող էր վարել թագավորը կամ իշխանը, իսկ հոգևորը՝ եպիսկոպոսը: Բարձրագույն կամ թագավորական դատարանը զբաղվելու էր պետական և այլ ծանր հանցանքների քննարկումով: Յանցագործի նկատմամբ մահապատիժ կարող էր սահմանել միայն թագավորը: Իշխանն իրավասու էր իր ենթակաների նկատմամբ զանազան պատիժներ կիրառել, իսկ մահապատիժ՝ միայն թագավորի թույլտվությամբ: Գոշի ապրած ժամանակաշրջանում՝ XII-XIII դարերում, առևտրի և քաղաքների զարգացումն անհրաժեշտություն էր ստեղծել, և «Դատաստանագրքով» ներքին առևտրի չափ ու կշռի, գների միասնական չափորոշիչներ էին սահմանվում, որը կենտրոնական իշխանության մենաշնորհին էր: Գոյություն ունեցող պետության պահանջներից ելնելով` նա տեղական, հաճախ սովորութային իրավունքների վրա խարսխված օրենքները փոխարինում էր համընդհանուր օրենքներով:

«Դատաստանագիրքը» նաև կարևոր պատմական աղբյուր է X-XII դարերի ժողովրդի ներքին կյանքի, տնտեսական-սոցիալական հարցերի վերաբերյալ, որոնց մասին շատ սակավ տեղեկություններ են պահպանել պատմիչները: Օրենսգիրքը միաժա-

մանակ ներկայացնում էր հայ ժողովրդի հիշյալ դարերի բարքերի, տնտեսական հարաբերությունների պատկերը: «Դատաստանագիրքը», անկախ սոցիալական ուղղվածությունից, պարունակում էր իր ժամանակի համար խորապես առաջադիմական մի շարք գաղափարներ ու մտքեր: Այն՝ որպես իրավական հուշարձան, «առաջնակարգ տեղ է գրավում աշխարհի նույնանման հուշարձանների շարքում»[181]:

Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» պահանջն այնքան էր զգացվում հայ իրականության մեջ, որ պետականության բացակայության պայմաններում այն դարեր շարունակ կիրառություն գտավ ինչպես Հայաստանում, այնպես էլ հայկական գաղթաշխարհում: Այդ «Դատաստանագիրքը» միաժամանակ ազգային ինքնությունը պահպանելու, երկիրը միավորելուն, ազգային կենտրոնացված պետություն ստեղծելուն ուղղված հայտ էր:

Երրորդ օրենսգիրքը ստեղծվել է Կիլիկիայում՝ տեղի հայկական պետության իրավահարաբերությունները կարգավորելու նպատակով: Հեղինակն է Հեթումյանների նշանավոր տոհմից Սմբատ Գունդստաբլը (1208-1276) կամ սպարապետը, որը նշանավոր զորավար էր, դիվանագետ, պատմաբան, իր ժամանակի կրթված անձնավորություններից մեկը: «Դատաստանագիրքն» ավելի քան հարյուր տարի՝ 1265 թ. մինչև պետության անկումը (1375 թ.), գործադրվել է Կիլիկիայում: Սմբատ Գունդստաբլը օգտագործել է բազում աղբյուրներ, որոնց մեջ հիմնականը, առաջին հերթին, եղել է Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը»: Օգտագործել է հայոց կանոնագիրքը, սովորութային իրավունքը, հին ֆրանսերենից իր կողմից հայերեն թարգմանված «Անտիոքի ասիզները», Ն. Շնորհալու «Թուղթ ընդհանրականը» և այլն: Օրենսգրքում անդրադարձներ են կատարվել պետավարչական, եկեղեցական, քաղաքացիական, ամուսնաընտանեկան, ժառանգական և այլ իրավունքներին:

Սմբատ Գունդստաբլի «Դատաստանագիրքը» տարբերվում է Մխիթար Գոշի օրենսգրքից, ինչը պայմանավորված է Կիլիկիայում հայկական պետության գոյության, նրա իրավական հարաբերությունները սահմանելու անհրաժեշտության և տեղական

[181] «Գիրք Դատաստանի», խոսրով Թորոսյանի առաջաբանը, էջ XLL:

առանձնահատկություններով: Ս. Գունդստաբլը «Դատաստանագիրքը» կազմելիս մեծապես նկատի է առել երկրի հասարակական-քաղաքական հարաբերությունները, տեղական պայմանները ու գործնական պահանջները: «Դատաստանագրքի» համաձայն՝ աշխարհիկ իշխանությունը բարձր դիրքերում էր եկեղեցու հանդեպ: Թագավորը և նրան ենթակա իշխանավորներն իրենց ձեռքում էին կենտրոնացրել իրավահարաբերությունների ամբողջ ոլորտը: Եկեղեցուն մնացել էին միայն հավատքի և բարոյականության հարցերը: Եվ այդ այն պարագայում, երբ Գոշի «Դատաստանագրքով» եկեղեցական իշխանությունը բարձր էր դասվում աշխարհիկից: Նա սահմանափակում էր հողատերերի իրավասությունները, իսկ Սմբատի օրենսգրքում այդպիսի բան չկար: Կիլիկիայում եկեղեցին չուներ այն իրավասությունները, ինչ որ Հայաստանում, սակայն այնտեղ ևս ճանաչվում էր եկեղեցու ներքին ինքնավարությունը, եկեղեցին ազատված էր հարկեր վճարելուց:

Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքում» ներկայացված էր իշխող դասակարգերի վասալական կախվածության ամբողջ համակարգը: Այն եվրոպական պետություններում կիրառվող իրավական ընդհանուր մբնոլորտի ազդեցության և Կիլիկիայի հայկական պետության մեջ գոյություն ունեցող իրավիճակի արտահայտությունն էր: Գոշը բնական ազատության ջատագով էր և մարդկանց ազատ չլինելը համարում էր տնտեսական պայմանների արդյունք: Սմբատը ոչ միայն չէր ընդունում մարդկանց ի սկզբանե հավասար լինելու գաղափարը, այլև անհավասարությունն էր համարում բնական և հավերժական:

«Դատաստանագրքում» կարևոր նշանակություն է տրվում ամուսնաընտանեկան հարցին: Սմբատը գտնում է, որ ընտանիքի ամրությունը պետության հզորության գրավականն է: Գերազանցապես սովորութային իրավունքի վրա խարսխված իրավունքի այս բնագավառը նույնանում է Գոշի «Դատաստանագրքի» հետ: Իրավական լուծում է տրվում ամուսնության և ամուսնալուծության, ամուսինների գույքային հարաբերություններին, մինյանց նկատմամբ վերաբերմունքին, ժառանգությանը, երեխաների դաստիարակությանը և այլն: Հատկանշական է, որ Սմբատի «Դատաս-

տանագրքում», հավանաբար Գոշին հետևելով, ժառանգության հարցը լուծում է ստանում ոչ ընդունված ավագ որդուն առաջնություն տալու եղանակով, այլ հօգուտ արժանավոր զավակի: Երկու օրենսգրքերն էլ ուղղված էին ընտանիքը ամուր ու հաստատուն պահելու նպատակին:

Առանցքային տարբերությունը Գոշի «Դատաստանագրքից» այն է, որ Կիլիկիայում ամուսնաընտանեկան ամբողջ համակարգը ոչ թե թողնվում է եկեղեցու իրավասությանը, այլ ուղղակի դրվում է պետության ենթակայության տակ:

Երկու դատաստանագրքում էլ առանցքային նշանակություն էր տրվում երեխաների դաստիարակության, նրանց ուսման խնդրին: Արատ ունեցող անձերին՝ խուլ-համրերին, կույրերին, անբուժելի հիվանդներին օրենքն արգելում էր ամուսնանալ միայն այն պատճառով, որ նրանք ի վիճակի չեն երեխաներ դաստիարակելու: Երկու օրենսգրքում հասունացման և ամուսնության թույլատրելի տարիքն արական սեռի համար համարվում էր 14, իսկ իգականի համար՝ 12 տարեկանը կամ համապատասխանաբար 15 և 13 տարիքը: Արյունակցական կապ ունեցող քաղաքացիների համար ամուսնությունը թույլատրվում էր չորս սերունդ հետո, բայց հետագայում փոփոխվելով՝ արմատավորվեց այն տեսակետը, որ կարող են ամուսնանալ 7 սերունդ անցնելուց հետո: Ամուսնաընտանեկան հարաբերությունների շատ նորմեր սովորույթի իրավունքով արմատավորվեցին կյանքում և սրբորեն պահպանվեցին հաջորդ սերունդների կողմից, երբեմն մինչև մեր օրերը:

Այսպիսով, Սմբատ Գունդստաբլը մեծապես օգտվել է Գոշի «Դատաստանագրքից», բայց օգտվել է ստեղծագործաբար: Իրավական շատ նորմեր մշակել է՝ նկատի առնելով կենտրոնացված միապետության ամրապնդման, հզորացման շահը: Պետություն, որը շրջապատված էր թշնամաբար տրամադրված երկրներով՝ հանձին Բյուզանդիայի, իսկ մյուս կողմից՝ մուսուլմանական տերությունների: Անպայման այդպիսի պայմաններում կարողացավ գոյատևել երեք հարյուր տարի: Ազգային հարցերում, որոնք գերազանցապես խարսխվում էին սովորութային իրավունքի վրա, ընդօրինակել է Գոշին, և դա բնական է:

Հասուն միջնադարում իրավունքի հուշարձանների երևան գալն արդյունք էր հասարակական-քաղաքական մտքի աննախադեպ զարգացման, լուսավորական շարժման, առհասարակ մշակութային ընդհանուր վերելքի:
Երկրի հասարակական-քաղաքական ծանր իրավիճակից դուրս գալու խոր ըմբռնումով էր պայմանավորված այն հանգամանքը, որ կենտրոնացված անկախ պետությունը վերականգնելու գաղափարով էր համակված Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը»:

## 3. ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

Բագրատունյաց Հայաստանում կյանքի բոլոր բնագավառներում կատարվող բուռն վերելքն իր մեջ առավ նաև փիլիսոփայության ոլորտը: Վաղ ավատատիրության համեմատ գիտության այս ճյուղը նոր պահանջների ոգով որոշակի առաջադիմություն ապրեց:
Միստիցիզմը, որը X դարում տարածված ուսմունք էր, փաստորեն քարոզում էր հրաժարվել այն ամենից, ինչը կապված էր երկրային կյանքի հետ, և ամբողջությամբ նվիրվել հոգու փրկության գաղափարին: Հայաստանում միստիցիզմի պայծառ ներկայացուցիչն էր Գրիգոր Նարեկացին: Նա ավելորդ էր համարում եկեղեցու միջնորդությունը մարդու և աստծու միջև և հոգեմտավոր իր ամբողջ կարողություններով ձգտում էր մերձենալ աստծուն, ձուլվել նրա հետ: Նեոպլատոնական այդ գաղափարները սնունդ էին առնում Դավիթ Անհաղթի և Դիոնիսիոս Արեոպագացու կրոնափիլիսոփայական ուսմունքից:
Նա փրկության հույսը կապում էր աստծու հետ: Այդ միտումով հորդորում էր, որ մարդ արարածն ազատվի իր բոլոր մեղքերից և ձգտի նմանվել աստծուն: Իզուր չէ, որ դարեր շարունակ Նարեկացու երկը՝ «Նարեկը», եղել է ապագայի նկատմամբ հույսեր սնուցող ժողովրդի սիրելի, սուրբ համարվող գիրքը:
Ժամանակագրական առումով Նարեկացուն հաջորդեց XI դարի մեծանուն գիտնական Գրիգոր Մագիստրոս Պահլավունին:

Նրա մասին Լեոն գրում է. «Եվ հունական գիտության այս մեծ ազդեցության ամենաբարձր արտահայտությունն է հանդիսանում Գրիգոր Իշխանը: Եթե նրա ժամանակ Շիրակի՝ բազավորության մեջ իսկապես կազմվել է մի դասակարգ, որ այժմյան հասկացություններով կարելի է նույնացնել աշխարհական ինտելիգենցիային, նա ինքն այդ դասակարգի գլուխն էր, մեծ հեղինակություն էր ստեղծում իբրև գիտնական գրող: Նրա մեծությունը հունական լեզվի մեջ այնքան մեծ էր և ընդարձակ, որ նա ուսումնասիրել էր ամբողջ հունական գրականությունը, մասնավորապես դասականը, առավելություն տալով իմաստասիրական (փիլիսոփայական) ճյուղին»[182]:

Մեզ են հասել հոգևոր ու աշխարհիկ գործիչներին ուղղված նրա թղթերը կամ նամակները, որոնք բավականաչափ մեծ նյութ են պարունակում հեղինակի քաղաքական, փիլիսոփայական հայացքների մասին[183]:

Մնալով Դավիթ Անհաղթի նեոպլատոնական գաղափարական մթնոլորտում՝ Մագիստրոսը հակում է դրսևորում դեպի բնափիլիսոփայական հոսանքը: Կարևոր նշանակություն է տալիս բնագիտությանը, մաթեմատիկային, ճշգրիտ գիտություններին: Նա իմաստասիրական մտքեր ունի ուսումնագիտական ծրագրերի, քառյակ գիտության իմացական նշանակության և այլ հարցերի մասին: Նա անհրաժեշտ էր գտնում աստվածաբանական դրույթների հիմնավորումը կատարել գիտական փաստարկներով: Առաջարկում էր դասընթացային ծրագրով նախ յուրացնել բնագիտությունը և մաթեմատիկան, ապա անցնել աստվածաբանությանը:

«Քանզի որք ոչ նախուստ կրթեալք են, բոլորովին ոչ գոյ հնար թևակոխել զայնպիսի աստուածաբանութիւնն, քանզի պարտ է նախ ի բնաբանակէն յուսումնականն ամբառնալ և անտուար աստուածաբանականն»[184]: Ճանաչողության ամենաբարձր աստիճանը համարում էր իրի և մտքի համապատասխա-

---

[182] Լեո, Երկերի ժողովածու, երկրորդ հատոր, Երևան, 1967, էջ 646:
[183] Տե՛ս «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», աշխատասիրությամբ Կ. Կոստանդյանի, Ալեքսանդրապոլ, 1910:
[184] Նույն տեղում, էջ 8:

նությունը: Մեզ շրջապատող արտաքին աշխարհի ճանաչման հարցում հիմնական գործոնը համարում էր միտքը, բանականությունը, թեև չէր ժխտում, և ինչպես արդեն նշել ենք, կարևոր տեղ էր հատկացնում նաև զգայական ճանաչողությանը: Հետևելով Դավիթ Անհաղթի ուսմունքին՝ հաստատում էր, որ իրի, գոյի ըմբռնումը կատարվում է նախ՝ զգայարանների և ապա հաջորդ աստիճանում բանականության միջոցով: Զգայարանների հաղորդումները ստուգվում, ճշգրտվում են բանականությամբ: Մագիստրոսը կյանքի էր կոչում անտիկ աշխարհում ստեղծված գիտամշակութային արժեքները: Նա լուսավորություն տարածելու հետևողական նվիրյալ էր և հետաքրքրություն արթնացրեց դեպի փիլիսոփայությունն ու գիտական միտքը:

Գրիգոր Մագիստրոսի և փիլիսոփայական ուղղություն ունեցող մյուս հեղինակների թողած ժառանգության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ համատարած աստվածաբանության կողքին ու նրա ընդերքում առաջ էր գալիս ու առաջադիմում բնական գիտություններին, փորձին նշանակություն տալու միտումը:

Տասներեքերորդ դարում գործած Հովհաննես Երզնկացին (Պլուզը) միջնադարյան մյուս հեղինակների նման տիրապետել է մի շարք մասնագիտությունների: Նա փիլիսոփա էր, բանաստեղծ, մատենագիր, քերական, մանկավարժ, երաժշտագետ, հասարակական-քաղաքական գործիչ: Պլուզի կյանքին ու գործին ծանոթացել ենք նրա գրականագիտական ժառանգությանն անդրադառնալու առիթով, ուստի այստեղ համառոտակի խոսք է գնալու միայն նրա փիլիսոփայական հայացքների մասին[185]:

Երզնկացին, օգտագործելով և հենվելով անցյալից ժառանգված գիտական մտքի ձեռքբերումների վրա, բնության մեջ կատարվող երևույթները մեկնաբանել է հենց բնական երևույթներով, որը նրա բնափիլիսոփայական տեսության հիմքն է կազմում: Նա գտնում է, որ նյութը բնության մեջ երևան է գալիս բազմազան ձևերով, առանց նյութի բնության մեջ ոչինչ չի կարող գոյանալ: Երզնկացին հանգում է այն մտքին, որ բնությունն անդա-

---

[185] Տե՛ս Գ. Հ. Գրիգորյան, Հովհաննես Երզնկացու փիլիսոփայական հայացքները, Երևան, 1962 և այլ աշխատանքներ:

դար շարժման, փոփոխությունների մեջ է, որի ընթացքում նյութը չի ոչնչանում, միշտ պահպանվում է, բայց փոփոխվում, մի որոշակի ձևից վերափոխվում է մեկ այլ ձևի, մի՛տեսակից անցնում է մեկ այլ տեսակի: Այլ խոսքով՝ զարգացնում է նյութի պահպանման գաղափարը: Էականն այն է, որ նյութի փոփոխությունը, նոր գոյացումները, ըստ հեղինակի, կատարվում են ոչ թե գերբնական ուժերի միջոցով, այլ բնական ճանապարհով:

Արժեքավոր են նրա տիեզերագիտական հայացքները: Գիտական բացատրություն էր տալիս բնության շատ երևույթների՝ Արկտիկայի, Բևեռի, որոտի ու կայծակի, տարվա չորս եղանակների մասին: Երզնկացին տեսնում էր բնական երևույթների փոխադարձ կապը, օրինաչափությունները: Նա գաղափար ուներ մարդու մարմնի և ուղեղի կառուցվածքի, ներքին օրգանների, արյան շրջանառության, հինգ զգայարանների մասին: Ուղեղը համարել է մտածողության, զգացողության կենտրոն:

Յովհաննես Երզնկացին իր ժամանակաշրջանի հայ փիլիսոփայական, բնագիտական ուղղության նշանավոր ներկայացուցիչներից է: Նրա բնափիլիսոփայության մեջ երևան է գալիս մատերիալիստական ուղղվածություն: Նրան հաջողվում է շատ դեպքերում հաղթահարել բնական երևույթները կրոնամիստիկական եղանակով բացատրելու տիրապետող գաղափարախոսությունը:

Յայտնի է, որ միջնադարի մտածողներին զբաղեցնող գլխավոր հիմնախնդիրը եղել է հոգու և մարմնի հարցը: Այստեղ ևս Երզնկացին ունի իր ուրույն մոտեցումը: Մարդու իմացական կարողությունները նա առնչում է հոգու հետ: Երկու տարբեր հատկանիշներ ունեցող հոգին և մարմինը միատեղվում են մի անձի մեջ, սակայն նրանք մնում են անխառն: Յոգին համարում է անմահ, իսկ մարմինը՝ մահկանացու: Նրա իմացական տեսությունը զերծ չէ սխոլաստիկական դեգերումներից, սակայն հարուստ է նաև գիտական արժեք ներկայացնող մտքերով:

Յամակողմանի գիտելիքների տեր Երզնկացու տեսադաշտից դուրս չի մնացել նաև երաժշտությունը: Երաժշտությունը համարել է մարդկային իմացության ձևերից մեկը: Մի ամբողջ ուսմունք է ստեղծել երաժշտի գիտակցության մեջ ծագող ելևէջ-

ների, ծայների մասին: Շարականներ է նվիրել Գրիգոր Լուսավորչի և Ներսես Մեծի հիշատակին:

Հովհաննես Երզնկացին, հենվելով անցյալի փիլիսոփայական մտքի ձեռքբերումների վրա, յուրացնելով անտիկ մշակույթի նվաճումները, եղել է հասուն միջնադարի փիլիսոփայական առաջավոր մտքի կրողներից մեկը և թողել է այնպիսի ժառանգություն, որը ճանապարհ է հարթել Հայաստանում գիտական մտքի հետագա զարգացման համար:

Վահրամ Ռաբունին XIII դարի Կիլիկյան Հայաստանի հեղինակ է: Կրթություն և վարդապետական աստիճան է ստացել Սև լեռան վարժարաններում, ապա ուսումը խորացրել Սսում: Տիրապետել է արևելյան և եվրոպական մի քանի լեզուների: Նրանից պահպանվել են շուրջ երկու տասնյակի հասնող աշխատություններ, որոնք գերազանցապես մեկնողական բնույթի գործեր են: Դրանք Արիստոտելի, Դիոնիսիոս Արեոպագացու, Պորփյուրի, Գրիգոր Նյուսացու աշխատությունների մեկնություններն են: Գրել է Ռուբինյանների պատմությունը, Լևոն Գ թագավորի մասին և կրոնաաստվածաբանական մի քանի աշխատություններ:

Ռաբունին եղավ իր դարաշրջանի նշանավոր նոմինալիստը և փիլիսոփայական այդ հոսանքի առաջին խոշոր ներկայացուցիչը: Նա հայ իրականության մեջ մի նոր աստիճանի բարձրացրեց այդ տեսությունը[186]: Նոմինալիստի դիրքերից նա մերժում է ընդհանուրը եզակիից առաջնային համարելու վարկածը: Ընդդեմ ռեալիստների նոմինալիստը գտնում է, որ եզակին կարող է լինել անկախ ընդհանուրից: Եզակիի ոչնչացումը հանգեցնում է ընդհանուրի վերացման, իսկ հակառակը չի կարող լինել, ընդհանուրի վերացումով եզակին պահպանվում է: Եզակին կարող է լինել ընդհանուրից անկախ, իսկ հակառակը լինել անհնար է: Նա պաշտպանել է Արիստոտելի այն տեսակետը, որ զգայության առարկան նախորդել է զգայունությանը, իմացության առարկան՝ իմացությանը: Ռաբունին նյութի խոր իմացությամբ ներկայացնում է Դավիթ Անհաղթի ճանաչողության տեսությունը, հստակեցնում և ջանում խորացնել նրա մտքերը: Ճանաչողու-

[186] Տե՛ս Ս.Ս. Արևշատյան, Նոմինալիզմի առաջացումն ու զարգացումը միջնադարյան Հայաստանում («Բանբեր Մատենադարանի», N 6, 1962, էջ 80-81):

թյան հարցում Ռաբունին վճռական նշանակություն է տալիս հինգ զգայարաններին՝ աչք, ականջ, քիթ, բերան, ձեռք (շոշափողական զգայարան): Արտաքին աշխարհի մասին մեր իմացությունը կատարվում է այդ զգայարանների միջոցով:

Միջնադարյան հեղինակներին տևականորեն զբաղեցնող հոգու և մարմնի հարաբերության հարցում Ռաբունին ունի իր առանձնահատուկ տեսակետը: Նա գտնում է, որ մարդը հոգու և մարմնի միասնություն է, որոնք առաջ են գալիս միաժամանակ, ուստի անիմաստ է դրանցից մեկին առաջնություն տալու հարցի քննարկումը:

Փիլիսոփայության հիմնական հարցում՝ մտածողության ու կեցության, ոգու՝ դեպի բնությունն ունեցած հարաբերությունների հարցում չի կարողանում հասնել գիտական բացատրություն տալու մակարդակի: Նա ամբողջ աշխարհը համարում է աստծո արարչագործության արդյունք[187]: Այդ պատկերացումների կողքին շատ հարցերում ունի բնագիտական-մատերիալիստական մոտեցումներ: Նոմինալիզմը հենց մատերիալիստական հակումներ ունեցող ուսմունք է: Ռաբունին քանակի, որակի հարաբերության և փիլիսոփայական այլ հարցերի մասին ուշագրավ դիտողություններ ունի: Լինելով նոմինալիզմի հոսանքի առաջին խոշոր ներկայացուցիչը՝ նա հայ իրականության մեջ նոր աստիճանի բարձրացրեց այդ տեսությունը:

Ճանաչողության տեսության հարցերում Ռաբունու ծառայությունները մեծ են նրանով, որ նա պահպանեց և ժամանակի պահանջների ոգուն համապատասխան քարոզեց ու սերունդներին փոխանցեց փիլիսոփայական մտքի անցյալի ժառանգությունը:

Վահրամ Ռաբունու հայացքները, նրա թողած ժառանգությունն ազդել են հետագա դարերի մտածողների, մասնավորապես Հովհաննես Որոտնեցու և Գրիգոր Տաթևացու աշխարհայացքի ձևավորման վրա:

Հայ փիլիսոփա, աստվածաբան, ուսուցչապետ, եկեղեցական գործիչ Հովհան Որոտնեցին (1315-1386) սովորել է Գլաձո-

---

[187] Տե՛ս Գ. Հ. Գրիգորյան, Վահրամ Ռաբունու փիլիսոփայությունը, Երևան, 1969, էջ 104:

րում, փոխադրվել Որոտանի, ապա Տաթևի վանք (1370-ականներին), որտեղ հիմնադրում է Տաթևի համալսարանը: Այստեղ բարձր մակարդակի վրա է դնում աստվածաբանության և փիլիսոփայության դասավանդումը, ունենում բազմաթիվ շնորհալի սաներ: Նա հետևողականորեն պայքար է տարել ունիթորների դեմ, գլխավորել այդ շարժումը: Նրա ջանքերը հայկական եկեղեցու ինքնուրույնությունն ու անաղարտությունը պաշտպանելու ուղղությամբ հայրենասիրական, առաջադիմական պայքար էր հանուն ազգային ինքնությունը, մշակույթը պահպանելու:

Որոտնեցին թողել է գիտական հարուստ ժառանգություն: Նրանից մեզ են հասել հինգ աշխատություն, որոնք Արիստոտելի, Պորփյուրի, Փիլոնի աշխատությունների մեկնություններն են՝ ժամանակի պահանջների ոգով: Շնորհիվ նրա արիստոտելյան ուսմունքը միջնադարյան Հայաստանում հասավ իր զարգացման ամենաբարձր աստիճանին և մեծապես նպաստեց փիլիսոփայական մտքի վերելքին:

Նա բնությունը, առհասարակ նյութը համարում է աստծու կողմից ստեղծված: Այլ խոսքով՝ աշխարհի ստեղծումը կապում է աստծո արարչագործության հետ: Նշանակում է՝ փիլիսոփայության հիմնական հարցին իդեալիստական լուծում է տալիս:

Սակայն Որոտնեցու փիլիսոփայական հայացքների համար էականն իմացաբանության և տրամաբանության հարցերում նրա մոտեցումներն են: Մարդկային բանականության և արտաքին աշխարհի փոխհարաբերությունների հարցում նա ընդունում է մարդու գիտակցությունից անկախ նյութականի, բնության գոյությունը: Մարդու զգացողությունները, գաղափարները, պատկերացումները համարում է օբյեկտիվ աշխարհի արտացոլում: Զգայարանների կատարած հաղորդումների միջոցով բանականությունը ճանաչում է իրերի էությունը: Միտքը, զգացողությունը չեն կարող ինքնաբավ գոյություն ունենալ, նրանք արտաքին աշխարհի արտահայտումն են:

Որոտնեցու իդեալիստական աշխարհայացքում զգացվում է մատերիալիստական հակվածություն, դրա առանձին տարրերի դրսևորում: Մատերիալիստական այդ միտումն արտահայտվում է նաև նրա տրամաբանական հայացքներում:

Որոտնեցին տալիս է հոգու սահմանումը՝ որպես անմարմին, անմահ, երբեք կանգ չառնող, մշտաշարժ երևույթ[188]:

Նա կրոնը համարում է ոչ միայն ուսմունք աշխարհի ու մարդկության մասին, այլև որպես ուսմունք մարդկանց փոխհարաբերությունների, բարոյական նորմերի մասին[189]: Նա հավատը բարոյական կատարելության հիմք է դարձնում, տալիս հասարակական նշանակություն: Միջնադարյան մյուս մտածողների նման նա հավատը չի կտրում մարդու գործունեությունից, նրա վարքից:

Նրա իմաստասիրական բարոյագիտությունն ունի մարդասիրական, առաջադիմական նշանակություն: Նա պարզորոշ ընդունում է նյութական իրերի, արտաքին աշխարհի առաջնությունը մտքի նկատմամբ:

Ամենակարևորը համարում է եզակի իրը, նրանից են կախված մյուս բոլոր կատեգորիաները՝ քանակը, որակը, սեռը, հարաբերությունը և այլն: Ընդհանուրի և եզակիի հարցում առաջնությունը տալիս է եզակիին, որոշակի իրին, անհատին: Նա չի ժխտում ընդհանուր հասկացությունների նշանակությունը, համարում է դրանք ճանաչողության կարևոր արդյունք, իրերի էությունն արտացոլող գաղափարներ: Ընդհանուրի լինելիությունը կախված է եզակիից, նրա քանակից: Ընդհանուրը բաղկացած է եզակի իրերի միավորումից:

Որոտնեցին իր ժամանակի այն մտածողների թվին է պատկանում, որոնց երկերը բարձրանում են այն մակարդակին, որ աստվածաբանությունից փիլիսոփայությունն անջատելու և գիտության ինքնուրույն ճյուղ դառնալու գործընթաց է սկսվում: Աստիճանաբար նրա գործերում տարանջատման այդ ընթացքը հստականում, խորանում է:

Հովհան Որոտնեցու հայացքները, նրա գիտակրթական գործունեությունն էական նշանակություն ունեցան Տաթևի դպրոցի փիլիսոփայական, տեսական մտքի առաջընթացի համար: Նա խոր հետք թողեց միջնադարյան հայ փիլիսոփայական մտքի

---

188 Տե՛ս Գ. Հ. Գրիգորյան, Հովհան Որոտնեցու փիլիսոփայական ուսմունքը, Երևան, 1980, էջ 110:
189 Նույն տեղում, էջ 172:

մեջ: Նրա դպրոցի լավագույն ավանդները շարունակեցին Գրիգոր Տաթևացին և իր մյուս սաները:

Չիրավի, Որոտնեցու գործի արժանավոր շարունակողը եղավ Գրիգոր Տաթևացին (1346-1409): Նրա ժամանակ քաղաքական իրավիճակը փոխվել, վատթարացել էր: Մոնղոլները, որոնց հետ Սյունիքի իշխանավորները համերաշխ հարաբերություններ էին ստեղծել, և նախանցում ստեղծված բարենպաստ պայմաններում ծնունդ էին առել Գլածորի և Տաթևի համալսարանները, թուլացել, հեռացել էին ասպարեզից: Երկիրը կողոպտվում, քայքայվում էր Լենկ-Թեմուրի, Թոխտամիշի ավերիչ արշավանքներից: Այդ դժնդակ պայմաններում Գր. Տաթևացուն հաջողվեց մի քանի տասնամյակ պահպանել համալսարանի կենսունակ գործունեությունը:

Տաթևացին՝ որպես փիլիսոփա, տնտեսագետ, մանկավարժ, եկեղեցական գործիչ, լայն գիտելիքների տեր մտավորական էր և թողել է հարուստ ժառանգություն: Նրա գրչին են պատկանում «Գիրք հարցմանց», «Գիրք քարոզչութեան», «Ոսկեփորիկ» և Պորփյուրի, Դ. Անհաղթի աշխատությունների և որոշ աստվածաբանական գործերի մեկնություններ:

Նա վճռական նշանակություն էր տալիս մարդու ուղղածիգ դիրքին, գտնում, որ աշխատանքն ու մտածողությունն անխզելիորեն կապված են նրա ուղղահայաց կեցվածքի հետ: Տաթևացու տեսության համաձայն՝ բնության գոյության հիմքում ընկած են չորս տարրեր՝ կրակը (հուրը), օդը, ջուրը, հողը: Դրանցից ստեղծված իրերը, ինչպիսին էլ նրանք լինեն, կարող են վերափոխվել, ոչնչանալ, բայց բնական այդ հիմնաhիր տարրերը պահպանվում են մշտապես, նրանք հավերժական են[190]:

Նա գտնում էր, որ գիտության, այդ թվում և փիլիսոփայության առարկան բնությունն է, վերջինիս բազմապիսի երևույթների վերհանումն է: Չավատի առարկան աստվածայինն, գերբնական սկզբունքների ճանաչումն է, հետևաբար հավատը ի զորու չէ խառնվելու գիտության գործերին: Նա սահմանազատեց հավատի և գիտության ոլորտները, աշխարհի ճանաչումը հարաբերեց

---

[190] Տե՛ս Ս. Արևշատյան, Տաթևի փիլիսոփայական դպրոցը և Գրիգոր Տաթևացու աշխարհայացքը (ԲՄ, 1958, N 4):

գիտության, մարդու զգայարանների հետ: Դրանով փաստորեն առաջ էր քաշում բանականության միջամտության հարցը հավատի գործերում: Նման մտահանգումն առաջադիմական ու խիզախ մոտեցում էր, որը հարվածում ու խարխլում էր սնոտիապաշտության դիրքերը: Այդուհանդերձ Գրիգոր Տաթևացին փիլիսոփայության հիմնական հարցին, աստծու և աշխարհի, ոգու և բնության փոխհարաբերության խնդրին մոտենում էր իդեալիստական դիրքերից: Նրա տեսության համաձայն՝ աստվածն է աշխարհի և բնության արարիչը:

Տաթևացու փիլիսոփայության մեջ մատերիալիստական հակումները հստակ արտահայտվում են իմացաբանության մեջ: Նրա տեսության համաձայն՝ զգայարանները կապ են ստեղծում մարդու գիտակցության և արտաքին աշխարհի միջև: Միտքը, բանականությունը միայն զգայարանների միջոցով են կապվում արտաքին աշխարհի հետ: Հետևաբար ճշմարտությունը երևան է գալիս դրանց՝ մտքի և արտաքին աշխարհի համապատասխանության շնորհիվ:

Գրիգոր Տաթևացին անդրադառնում է իր նախորդների կողմից բազմիցս արծարծված ընդհանուրի և եզակիի, մասնավորի հարցին և համերաշխում ու առաջ է մղում այդ խնդրում մինչ այդ եղած առողջ, առաջադիմական հայացքները: Նա գտնում է, որ իրականում գոյություն ունեն միայն առանձնակի իրեր, ընդհանուրը երկրորդային է, քանի որ առաջանում է միայն և միայն անհատների գոյությունից, դրանց միավորումից: Նման եզրահանգման հետ միասին ընդունում է նաև ընդհանուր հասկացությունների կարևոր նշանակությունը: Անդրադառնալով իր նախորդների կողմից նույնպես բազմիցս արծարծված հոգու և մարմնի առաջնության հարցին, գտնում է, որ նրանք ծնվում, առաջ են գալիս միաժամանակ:

Տաթևացու փիլիսոփայական հայացքներին հատուկ է բազմակողմանիությունը: Նա խորացրեց գիտության այդ բնագավառում եղած առաջադիմական շատ հայացքներ, դարձավ նոր գաղափարների հեղինակ: Նրա աշխարհայացքում մատերիալիստական մոտեցումներն ավելի որոշակի դարձան, ասել է թե՝ զարգացում ապրեցին: Նա մանկավարժական իր գործունեությունը

ծառայեցրեց լուսավորությանը և կարողացավ գիտակրթական կենտրոնի գործունեությունը դժվարին պայմաններում դարձնել շարունակական:

Այսպիսով, հայ փիլիսոփայական ուղղությունը այդ ոլորտը հարստացրեց, առաջ մղեց գիտական, հասարակական միտքը: Կյանքի ընդհանուր առաջընթացը, բնական գիտությունների թեկուզ և դանդաղ քայլերով առաջընթացը հիմք ծառայեց բնափիլիսոփայության և բնական գիտությունների առաջացման, մատերիալիստական ըմբռնումների ծլարձակման ու աշխարհիկ մտածողության տարածման համար:

## III. ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### 1. ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՑԸ

Հասուն միջնադարում աշխարհիկ կյանքի աշխուժացումը խթանում էր ազատ մտածողությունը: Պահանջ էր առաջանում ուսումնասիրել, ճանաչել բնությունը, բնական երևույթները: Գիտության զարգացման ընդհանուր մակարդակը հնարավորություն էր ընձեռում, անգամ անհրաժեշտ դարձնում զբաղվելու, ստեղծագործելու գիտության մի քանի ճյուղերում: Փիլիսոփան զբաղվում էր նաև մատեմագիտությամբ, քերականությամբ, մաթեմատիկայով, տիեզերագիտությամբ, երաժշտությամբ և այլն: Նույն կերպ էին գործում մատեմագիր բանասերները և մյուս մասնագետները: Այնպես որ գիտության ամենատարբեր ճյուղերի մասնագետները թողել են ուշագրավ ժառանգություն՝ հետաքրքիր մտքեր, դիտարկումներ բնական տարբեր գիտությունների մասին:

Հայ հասարակական-քաղաքական, գիտալուսավորական ասպարեզում, ինչպես արդեն նշել ենք, վիթխարի էր XI դարի գործիչ, բազմակողմանի գիտելիքների տեր Գրիգոր Մագիստրոսի դերը: Նրա լայն հետաքրքրությունների շրջանակներից դուրս չէին մնում բնական գիտությունները, որոնց նվաճումներին լավ տեղյակ էր: Նա չէր հակվում դեպի զգայապաշտությունը, թեև դրան որոշակի նշանակություն էր տալիս: Էականը նրա համար բնական ճանաչողությունն էր: Դրանով հանդերձ նա գտնում էր, որ որևէ երևույթի, իրողության մասին ստույգ տեղեկություն ունենալու համար բանականությունն իր տրամադրության տակ պետք է անպայման ունենա զգայական ընկալումներ:

Հայտնի են Մագիստրոսի ուշագրավ մտքերն ու դատողությունները կենսաբանության, բժշկագիտության, տիեզերագիտության, մաթեմատիկայի մասին: Իր լայն կապերով, մանավանդ մանկավարժական գործունեությամբ, տարածում էր իր տեսակետները, բնագիտական հայացքները: Մեծ մտածողը հող նախապատրաստեց բնագիտության, բնափիլիսոփայության երևան գալու համար:

Ծիլեր արձակող այդ նոր ուղղությունն առաջ մղեց և բնագիտության, ինչպես նաև բնափիլիսոփայության հիմնադիր դարձավ Հովհաննես Սարկավագ Իմաստասերը (1045-50-1129): Նա իր խոսքն է ասել, ուրույն մտքեր հայտնել տիեզերագիտության, մաթեմատիկայի, կենսաբանության, փիլիսոփայության, աստվածաբանության, երաժշտության և գիտության այլ ճյուղերի մասին: Հովհաննես Իմաստասերը մեծ հակում ուներ դեպի բնությունը, ձգտում էր ճանաչել մեզ շրջապատող բնաշխարհը, իմանալ նրա մեջ կատարվող երևույթները, դրանց գաղտնիքները: Ուսումնասիրողներն ընդգծել են նրա հետաքրքրությունների այդ առանձնահատկությունը: Մանուկ Աբեղյանը վերլուծում է «Բան իմաստութեան» բանաստեղծությունը՝ որպես դրա լավագույն արտահայտություն[191]:

Պոեմը նվիրված է սարյակի և բանաստեղծի երկխոսությանը: 188 տողից բաղկացած չափածո այդ ստեղծագործության մեջ հեղինակն անդրադառնում է արվեստի և բնության կապի խնդրին: Սարկավագը համեմատում է, բնության գրկում կյանք առած, իր արվեստով բնության մի մասը կազմող սարյակին արվեստագետ մարդկանց հետ և առաջնությունը տալիս է առաջինին: Կրթությամբ ձեռք բերած, բայց բնական աշխարհից կտրված, բնությունից հեռացած արվեստն այն ուժգնությունն ու հմայքը չունի, ինչ բնության իրապաշտ երգիչը: Հեղինակն արվեստի աղբյուրը տեսնում է բնության մեջ, որքան արվեստը մոտենա բնությանը, այնքան ավելի կշահի, ավելի հմայիչ ու կատարյալ կդառնա: Նրա մյուս գործերը ևս նվիրված են բնության երևույթների բացահայտմանը:

Հովհաննես Իմաստասերի գիտական ժառանգության մեջ առանձնանում է նրա մեծ վաստակը հատկապես հայոց տոմարի պատմության մեջ: Նա ուսումնասիրել է 15 ազգերի տոմարները, կազմել 532 տարվա աղյուսակը (1084-1615), չորս տարին մեկ մտցրել նահանջ տարվա գաղափարը և ստեղծել հայկական ան-

191 Տե՛ս Մանուկ Աբեղյան, Երկեր, հ. Դ, Երևան, 1970, էջ 82: Տե՛ս նաև Ակ. Գ. Տեր-Պողոսյան, Բիոլոգիական մտքի զարգացումը Հայաստանում, Երևան, 1960, էջ 225: Женя Калантарян, История армянской литературно-теоретической мысли..., стр. 76-81:

շարժ տոմարը, որը հայտնի է «Սարկավագիր տոմար» անունով[192]: Դրանով հստակություն մտցրեց հայկական տոմարի մեջ, որն օգտագործվեց դարեր շարունակ, մինչև XVII դարը: «Իսկ Սարկավագ վարդապետ,- գրում է Ղևոնդ Ալիշանը,- նօրէն աշխատեցավ , տարեկան տօները հաստատուն ըրաւ և Հայու տօմարը ուրիշ ազգաց տօմարներուն հետ բաղդատելով՝ համեմատութիւն ըրաւ, այս կարգաւորութիւնը մերոնք կանուանեն Սարկաւագադիր կարգ» և ապա շարունակում է «Որ յիրաւի մեր պատմութեան և ժամանակագրութեան համար կարևոր և պանծալի բան մ է»[193]:

Սարկավագն այն կարծիքն էր հայտնում, որ երկիրը կլոր է և գտնվում է տիեզերքի կենտրոնում, նա չունի հենարան, կանգուն է մնում օդային և կրակե հողմերի շնորհիվ: Նա տվել է արեգակնային ժամացույցի սխեման, ցերեկվա և գիշերվա տևողությունները, դրանց երկարելու և կարճանալու շարժումը[194]: Տոմարագիտական, ինչպես և տիեզերագիտական հետազոտությունները պահանջում էին մաթեմատիկական հիմնավոր գիտելիքներ: Հայտնի է Սարկավագի «Յաղագս անկիւնաւոր թուոց»՝ մաթեմատիկային նվիրված աշխատությունը, որն օգտագործվում էր հայկական դպրոցներում որպես դասագիրք[195]: Մաթեմատիկական գիտելիքների տարածվածության մասին է վկայում այն փաստը, որ դրանք լայնորեն ուսուցանվում էին բոլոր վարդապետարաններում: Պատահական չպետք է համարել նաև այն փաստը, որ այդ ժամանակ հայերեն թարգմանվեց էվկլիդեսի՝ երկրաչափությանը նվիրված աշխատությունը:

Բնության մեջ տեղի ունեցող երևույթներից Սարկավագն անդրադարձել է երկրաշարժերին, հրաբուխներին, որոնց նվիրել է «Յաղագս շարժման և սասանութեան երկրի» աշխատությունը: Նրա հետաքրքրությունների շրջանակներից դուրս չեն մնացել բնության մեջ կատարվող այլ երևույթներ՝ կայծակը, որոտը և

---

[192] Տե՛ս Բ. Թումանյան, Հայ աստղագիտության պատմություն, Երևան, 1964, էջ 68-73:

[193] Ղևոնդ Ալիշան, Յուշիկք հայրենեաց հայոց, հատոր երկրորդ, Ի. Ս. Ղազար Վենետկայ, 1921, էջ 258, 259:

[194] Տե՛ս Բ. Թումանյան, նշվ. աշխ., էջ 67, 73:

[195] Տե՛ս Կ. Ա. Միրումյան, Հովհաննես Սարկավագի աշխարհայացքը, Երևան, 1981, էջ 81:

այլն: Բոլոր այդ երևույթներին մոտենում և բացատրում է բնագիտական տեսանկյունից, դրանց պատճառը տեսնում հենց բնության մեջ: Սարկավագն անդրադարձել է նաև լայն տարածում գտած աստղագուշակությանը և համարում է այն կեղծ գուշակություն, քանի որ շեղում է մարդկանց բնության մասին ճշմարտացի պատկերացում կազմելու ուղուց[196]:

Բացառիկ նշանակություն ունի Հովհաննես Իմաստասերի՝ մարդկային գիտելիքների հավաստիությունը փորձով ստուգելու գաղափարը: Նա առաջինը հիմք դրեց այդ առանցքային նշանակություն ունեցող սկզբունքին, երբ ավելի քան մեկ ու կես դար անց՝ XIII դարի երկրորդ կեսին, միայն նույն գաղափարին հանգեց եվրոպան՝ հանձին Անգլիայի անվանի փիլիսոփա Ռոջեր Բեկոնի (1214-1294)[197]:

Սարկավագը միջնադարի շատ մտածողների նման այն տեսակետն էր պաշտպանում, որ ամբողջ աշխարհը կազմված է չորս տարրերից՝ կրակ (հուր), հող, ջուր, օդ: Այդ տարրերը չեն ոչնչանում, հավերժական են, քանի որ դրանց հիմքում ընկած է նյութը: Ինչպես ցույց են տվել ուսումնասիրողները, նա մեծ չափերով օգտվել է իր նախորդների, հատկապես Անանիա Շիրակացու՝ տիեզերքի մասին ուսմունքից: Այդ ամենով հանդերձ փիլիսոփայության հիմնական հարցը լուծում է իդեալիստական դիրքերից՝ համոզմունք հայտնելով, թե աստված է ստեղծել բնությունը: Սակայն իմացաբանական հարցերում դրսևորվում են նրա հայացքների մատերիալիստական տարրերը:

Հովհաննես Իմաստասերն ուրույն հայացք ուներ կենսաբանական շատ հիմնահարցերի վերաբերյալ: Հետևելով Դավիթ Անհաղթին՝ քննադատում էր դիցաբանությանը տուրք տվող մասնագետներին: Դրանք համարում էր անիրական, կեղծ գաղափարներ: Նույն եղանակով մերժում է սնոտիապաշտական, առասպելաբանական պատկերացումները: Նա, ըստ ամենայնի գնահատելով մարդու ճանաչողական ունակությունները, անհրաժեշտ էր համարում մերձենալ, ճանաչել շրջապատող աշխարհը: Ճա-

---

196 Նույն տեղում, էջ 66-71:
197 Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, Երևան, 1976, էջ 342: Ավ. Գ. Տեր-Պողոսյան, նշված աշխատությունը, էջ 239:

նաչողությունն աստիճանաբար ծավալվող ու խորացող երկարատև գործընթաց է, որը չիմացությունից ընթանում է դեպի իմացություն: Այն սկսվում է զգայական ճանաչողությունից և անցնում հաջորդ աստիճանին՝ բանական իմացությանը: Ի տարբերություն հայ և արևմտաեվրոպական մասնագետների, որոնք բուսական և կենդանական աշխարհը նկարագրելիս տեղ են հատկացնում առասպելական պատկերացումներին, նա ժխտում է մտացածին, երևակայական կենդանիների իրական գոյությունը: Հայ գիտնականը խոսում է միայն տեսանելի, իրական կյանքում գոյություն ունեցող էակների մասին: Նա այն միտքն է հայտնում, որ բնության մեջ տեղի է ունենում ծնունդի և մահվան մշտական պայքար, որն էլ բնության գոյատևման, նրա պահպանման ու զարգացման հիմնական գործոնն է դառնում[198]:

Սարկավագը բազմիցս անդրադարձել է բժշկագիտական հարցերին և դրսևորել խոր ու համակարգված իմացություններ: Արյան շրջանառության արագության հետ է առնչում մարդու շատ հատկություններ՝ կրքոտությունը, տաքարյունությունը, ցասումը և այլն: Ուշագրավ մտքեր է հայտնում հոգեկան հիվանդությունների, տեսողության, մարսողության մասին: Նյութափոխանակությունը համարում է կենդանի օրգանիզմի կենսունակության հիմքը[199]: Անվանի գիտնականի կենսաբանական, բժշկագիտական հայացքները նշանակալի դեր կատարեցին հայ բնագիտական մտքի փորձնական ուղղության երևան գալու գործում:

Հովհաննես Իմաստասերի ձևավորած բնագիտական ուղղության դիտարկումները և ժամանակի պահանջով ծնունդ առած հարցադրումներն արծարծվեցին ու զարգացան XIII-XIV դարերի մեզ արդեն ծանոթ բնափիլիսոփաների՝ Հովհաննես Երզնկացու (Պլուզ), Վահրամ Ռաբունու, Հովհան Որոտնեցու, Գրիգոր Տաթևացու և ուրիշների գործերում:

Բնական գիտությունների զարգացումն ակնառու դրսևորվեց հատկապես բժշկագիտության բնագավառում:

---

[198] Կ. Միրումյան, նշվ. աշխ., էջ 92-93:
[199] Նույն տեղում, էջ 102-103:

## 2. ԲԺՇԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Բնական գիտությունների նկատմամբ մտավոր շրջանների ընդհանուր հետաքրքրությունը բնականաբար տարածվելու էր նաև մարդու, նրա անատոմիայի և ֆիզիոլոգիայի վրա: Մի ոլորտ, որտեղ ևս բազմակողմանի մասնագիտական ուսումնասիրություններ կատարվեցին: Բժշկագիտության առաջընթացն իրականացել է կատարված փորձի և դիտողականության միջոցով ստացված նյութերի ընդհանրացման հիման վրա:

Այս դարաշրջանում է գործել հայ դասական բժշկության հիմնադիր Մխիթար Հերացին (1120-1210): Նա ծնվել է Հեր գավառում, բայց կրթություն է ստացել, ապրել ու գործել Կիլիկյան Հայաստանում՝ Սիս մայրաքաղաքում և Հռոմկլայում: Տիրապետում էր հունարեն, արաբերեն, պարսկերեն լեզուներին: Նա հետաքրքրություններ ուներ մարդակազմության, ախտաբանության, դեղագիտության, ակնաբուժության և բնագիտաբժշկական այլ հիմնահարցերի նկատմամբ: Նրան հովանավորել, նրա գործունեությանը նպաստել են Ներսես Շնորհալին և Գրիգոր Դ Տղան:

Դաշտային Կիլիկիայի ճահճուտ վայրերում լայնորեն տարածված էին տենդային հիվանդությունները: Գրիգոր Դ կաթողիկոսի պատվերով Հերացին գրում է «Ջերմանց Մխիթարություն» աշխատությունը, որը նվիրված է տենդային հիվանդությունների առաջացման, դրանց դասակարգման, կանխարգելման, բուժման հարցերին: Նա առաջինն առաջադրեց այն միտքը, որ շփումների միջոցով տարածվում է վարակը, ապա նկարագրեց հիվանդության զարգացումը և տվեց բուժման եղանակը[200]: Գիրքը գրված է ժամանակի խոսակցական լեզվով՝ «գեղջուկ և արձակ բարբառով, զի դիւրահաս լիցի ամենայն ընթերցողաց»:

---

[200] Մխիթար Հերացու այդ վաստակն ավելի շեշտված նշվում է նաև բժշկագիտությանը նվիրված օտարերկրյա նշանավոր դասագրքերում: Ասվում է այն մասին, որ նա Ջիրոլամո Ֆրակաստորոյից 300 տարի առաջ տվեց շփման միջոցով վարակը տարածվելու գաղափարը, իսկ Բերնարդո Ռամացինիից հինգ դար առաջ դիտարկեց որոշ հիվանդությունների կապվածությունը մասնագիտության հետ (տե՛ս **Сорокина Т. С.,** История Медицины: учебник для студ. высш. мед. учеб. Заведения, Москва, Издательский центр «Академия», 2005, стр. 236):

Բժշկագիտության հաջորդ նշանավոր դեմքը Գրիգորիսն էր, որն ապրել է XII դարի վերջում և XIII դարի առաջին կեսին, հավանաբար նույնպես Կիլիկիայում: Նա նմանապես տիրապետում էր մի քանի օտար լեզուների՝ հունարենին, ասորերենին, արաբերենին, պարսկերենին: Գրիգորիսն ընդունել է Մխիթար Հերացու «Բորբոսային ջերմերի» տեսությունը վարակի մասին և այն տարածել է մի շարք հիվանդությունների վրա: Նա որոշակի նշանակություն էր տալիս ժառանգականությանը, մարդու նյարդային-հոգեկան վիճակին, կենցաղին, տարիքին և այլ գործոնների: Նա պաշտպանել է օրգանիզմի միասնության, ամբողջականության գաղափարը: Նշել է համրության մի շարք պատճառներ, այդ թվում՝ գլխուղեղի ուռուցքները, որոնք ճնշում են խոսակցական նյարդերի վրա և այլն[201]:

Նշանավոր մյուս դեմքը Ամիրդովլաթ Ամասիացին է, որն ապրել է XV դարում, նույնպես տիրապետել է մի շարք լեզուների: Նա ամենից շատ հետևել է դեղագիտությանը, բայց զբաղվել է նաև ախտաբանությամբ, թերապիայով, մանկաբարձությամբ, քիթ-կոկորդի, նյարդային, հոգեկան, մաշկային հիվանդություններով: Բժշկագիտության զարգացմանը նպաստել են նաև անհայտ հեղինակներ, որոնք թողել են բժշկարաններ, որոնցում ուշագրավ շատ դիտարկումներ կան:

Ձեռագիր մատյանների մանրազնին ուսումնասիրության միջոցով, հենվելով Հովհաննես Երզնկացու (Պլուզ) մի վկայության վրա, Լ. Խաչիկյանը ցույց տվեց, որ քննարկվող ժամանակաշրջանում (XII դարում) Հայաստանում մահապարտներին կենդանահատելու միջոցով դիահերձում էր կատարվում[202]: Հետագայում Գ. Գրիգորյանը փիլիսոփա Վահրամ Ռաբունու մեկնողական աշխատության մեջ հայտնաբերեց այդ փաստը հաստատող ևս մի վկայություն[203]:

---

[201] Տե՛ս Ս. Ս. Կճոյան, Բժշկագիտությունը Հայաստանում XI-XIV դարերում, Երևան, 1968, էջ 79:

[202] Տե՛ս Լ. Ս. Խաչիկյան, Դիահերձումը հին Հայաստանում («Տեղեկագիր», 1947, N 4):

[203] Տե՛ս Գ. Գրիգորյան, Միջնադարյան Հայաստանում դիահերձման գոյությունը հաստատող մի նոր փաստ («Բանբեր Մատենադարանի», Երևան, 1963, N 6):

, կենդանահատումները կատարվում էին ճանաչողական, ուսումնական նպատակներով: Եվ այդ այն պարագայում, երբ արաբական աշխարհում և եվրոպական երկրներում արգելված էին դիահերձումները:

Եվրոպայում միայն XIII-XIV դարերում է կատարվում դիահերձում, այն էլ որպես բացառություն: 1238 թ. իմպերատոր Ֆրիդրիխ II-ը թույլատրում է Սալերնոյի (Իտալիա) բժշկական դպրոցին հինգ տարին մեկ անգամ մեկ դիակ հերձել: 1376 թ. դուքս Լյուդովիկը թույլատրում է տարին մեկ անգամ դիահերձում կատարել Մոնպելյեի (Ֆրանսիա) համալսարանում[204]:

Բժշկարաններում նկարագրվում են մարդու օրգանիզմը և ամեն մի առանձին օրգանի նշանակությունը: Կմախքի մասին ասվում է, որ կատարում է հենարանի դեր, որ առանց դրա մարդը չի կարող կանգնել, քայլել: Նկարագրվում է մարդու մարմնի տարբեր մասերի ոսկորների քանակը: Մարդու ամենակարևոր օրգանը համարվում է ուղեղը, որն արտաքին հարվածներից պաշտպանվում է 7 շերտով:

Մարմնի բոլոր օրգաններն իրար հետ կապում են նյարդերը, որոնց միջոցով գլխուղեղը շարժումներ է իրականացնում մարմնի բոլոր մասերում: Բժիշկները նյարդաբանության մի շարք հարցերի շուրջ ունեցել են գիտական մոտեցումներ: Նույնը կարելի է ասել նաև մարդու անոթների մասին:

Հայ միջնադարյան բժշկագիտությունը զբաղվել և նկարագրել է մարդու ներքին օրգանները: Նրանք սիրտը տեղադրում են կրծքավանդակի ձախ կողմում և կարծիք հայտնում, որ այն մկանային կառուցվածք ունի: Լյարդը տեղադրում են կրծքավանդակի ներքևի աջ կողմում: Լեղապարկը կախված է լյարդից, և որ լեղին մասնակցում է կերակրանյութերի մարսմանը: Փայծաղը տեղավորում են կողերի ներքևի ձախ մասում: Դրա գործառությունը համարում են մարդու օրգանիզմի համար ոչ պիտանի նյութերի կուտակումը: Կրծքավանդակը լցված է նուրբ և քնքուշ մսից բաղկացած թոքերից, որ կատարում է շնչառության ու արտաշնչման գործողությունները:Երիկամները գտնվում են գոտկային շրջա-

[204] **Т. С. Сорокина**, նշվ. աշխ., էջ 258:

նում, որից դուրս է գալիս մի երակ և միանում միզապարկի հետ: Յասկանալի է, որ այդ երակը միզածորանն է[205]:

Բժիշկները (Գրիգորիսը, Ամիրդովլաթը) ճիշտ են որոշել ստամոքսի դիրքը և մարդու մարմնի մեջ դրա գործառնությունը: Նույն ձևով ներկայացրել են աղիքների անատոմիան և ֆիզիոլոգիան: Առավել հանգամանորեն է ուսումնասիրվել աչքը: Մ. Յերացին ունի «վասն շինուածոց և յօրինուածոց աչացն» խորագրով հատուկ աշխատություն: Յեղինակն այն տեսակետն է հայտնում, որ աչքը կազմված է 7 թաղանթից և նկարագրում է ամեն մի թաղանթը և նրա ֆունկցիան: Այնուհետև նա անդրադառնում է աչքի մկաններին և նրանց կատարած դերին: Ապա անցնում է տեսողական նյարդերի քննությանը:

Բժշկարաններում գնահատելի դիտողություններ կան մարսողության, քնի վերաբերյալ, որոնց տրվում է բնական բացատրություն: Այնտեղ հիմնավոր խոսվում է գլխուղեղի մասին, որն ի զորու է շրջապատի մասին գաղափար կազմելու հինգ զգայարանների միջոցով: Այդ զգայարաններից աչքը բոլորից շատ է զբաղեցնում գլխուղեղին: Աչքը գլխուղեղի սպասավորն է, բայց ինչ-որ գլխուղեղն իմանում է, աչքը չի կարող այն տեսնել և իմանալ: Այլ խոսքով՝ գլխուղեղի գործառնություններն ավելի լայն են ու բարդ, քան օրգանիզմի հինգ զգայարաններինը[206]:

Նշանավոր բժշկապետ Գրիգորիսն իր ընդգրկուն աշխատության մեջ այն տեսակետն է զարգացնում, որ մարդու օրգանիզմում գլխավոր դերը պատկանում է նյարդային համակարգին և հատկապես գլխուղեղին: Նա գլխուղեղը համարում է «զգայարանաց զգայարան», ինչպես նաև «գլուխն թագաւոր է ամէն մարմնոյն»[207]:

Գրիգոր Տաթևացին ևս համոզմունք էր հայտնում թե մարդը գլխուղեղի և նրան սպասարկող հինգ զգայարանների միջոցով է ընկալում ու ճանաչում իրեն շրջապատող միջավայրը:

---

[205] Տե՛ս Ա. Կծոյան, նշվ. աշխ., էջ 85-89:
[206] Նույն տեղում, էջ 92-97:
[207] Տե՛ս Գրիգորիս, Քննութիւն Բնութեան մարդոյ և նորին ցաւոց, Երևան, 1962, էջ 4, 51:

Հայ բժիշկների ֆիզիոլոգիական պատկերացումները վերաբերում են նաև նյարդային համակարգին: Նրանց մեջ հատկապես Գրիգորիսը մարդու տարբեր օրգանների կաթվածները բացատրում է գլխուղեղի, ողնուղեղի և դրանից ելնող համապատասխան նյարդերի վնասումներով: Նա իր դարաշրջանի մյուս բժիշկների նման երկարամյա փորձի շնորհիվ մարդու նյարդային հյուսվածքների հատկությունների մասին արժեքավոր եզրակացությունների է հանգել: Միաժամանակ փորձել է գուշակել նյարդային հյուսվածքների ախտահարումների վերականգնման հնարավորությունները[208]:

Շնչառական օրգանների ֆիզիոլոգիական գործունեության վերաբերյալ միջնադարյան բժիշկներն ունեին որոշակի պատկերացումներ: Թոքերի աշխատանքը նրանք նմանեցնում էին «դարբնի փուքսին», որը դրսից դեպի իրեն է քաշում պաղ օդը և մատակարարում սրտին և նրանից դուրս է բերում տաք գոլորշին: Ամիրդովլաթը, կրկնելով Մ. Հերացուն, թոքերի գործունեության մասին գաղափար տալու նպատակով այն համեմատում է լյարդի գործունեության հետ: Ինչպես ստացած սննդից լյարդը արյուն է մշակում և մատակարարում ամբողջ օրգանիզմին, այնպես էլ թոքերը ստանում են օդ և որոշակի մշակելուց հետո տալիս են օրգանիզմին: Ամիրդովլաթը ծանոթացել է մարդու խոսակցական գործունեությանը և գտել, որ այն հնարավոր է դառնում միայն ներշնչման ու արտաշնչման շնորհիվ, թեպետև խոսակցության ընթացքում ներշնչումն ու արտաշնչումն աննկատ են մնում:

Հայ բժիշկները չեն անդրադարձել արյան շրջանառության հարցերին, սակայն նրանք լյարդը համարել են ոչ միայն արյուն մշակող, այլև լեղի պատրաստելու ֆունկցիա ունեցող օրգան: Գրիգորիսը լյարդի մասին հայտնում է ուշագրավ միտք, որ այն նաև արյուն մաքրող օրգան է: Բժիշկները, հատկապես Հերացին, Գրիգորիսը պաշտպանել են ժամանակի համար առաջադիմական՝ մարդու օրգանիզմի միասնականության, տարբեր օրգանների իրար հետ կապված լինելու գաղափարը:

---

208 Տե՛ս Ա. Կճոյան, նշվ. աշխ., էջ 128-132:

Վիրաբուժությունը հասել էր զարգացման բարձր աստիճանի: Հայ բժիշկները տիրապետել են միջին դարերում հայտնի վիրաբուժության բոլոր մեթոդներին: Երկար ժամանակ պահանջվող վիրաբուժական միջամտությունների ժամանակ օգտագործել են հատուկ քնաբեր դեղամիջոցներ, վերքերը կարել են մետաքսաթելով: Մանկաբարձները կատարել են կեսարյան հատման բարդ վիրաբուժական գործողություններ և այլն[209]:

Մխիթար Հերացին իր «Ջերմանց Մխիթարություն» կոթողային աշխատության մեջ օգտագործել է Հիպոկրատից սկսած հունա-հռոմեական դասական հեղինակների գործերը, արաբական բժշկագիտության նվաճումները, ուզբեկ ժողովրդի տաղանդավոր զավակ Իբն Սինայի (Ավիցենա) աշխատությունները: Նա հենվել է նաև բժշկագիտության ոլորտում իր սեփական հարուստ փորձի վրա: Հատկապես Կիլիկյան Հայաստանի դաշտային մասում մալարիայի, տիֆային հիվանդությունների տարածվածությունը մղել են Հերացուն ամբողջ խորությամբ ուսումնասիրելու ջերմային հիվանդությունները, պարզելու դրանց առաջացման ակունքները: Նա ջերմը բաժանում է երեք հիմնական խմբի և ցույց է տալիս, որ ջերմային հիվանդությունները սկիզբ են առնում սրտից և զարկերակների միջոցով տարածվում են մարմնի մեջ[210]: Հեղինակը պարզ ու հասկանալի ձևով աշխատում է բացատրել ջերմերի առաջացման պատճառները: Դրանք բաժանում է երկու խմբի: Արտաքին պատճառներ է համարում ուժեղ տաք օդը, ուժեղ ցուրտը, վատ բաղադրություն ունեցող ջրերում լողանալը, ուժեղ քաղցը, գերհոգնածությունը և այլն: Ներքին պատճառներից է համարում թախիծը, հոգսը, երկյուղը, նախանձը և այլն:

Հերացին հալեմաշ ջերմի (թոքախտի) առաջացման ազդակներ է համարում թերսնումը, մալարիան, հոգեկան ծանր ապրումները և այլն: Ջերմի առաջացումը, դրա երերումները նա կապում է բորբոսների հետ: Նա հիվանդության տարածման, վարա-

---

[209] Նույն տեղում, էջ 263-283:

[210] Ջերմերի առաջին խմբի ծագումը կապում է յարդի, սրտի և ուղեղի հետ: Երկրորդ խումբն առնչում է մարմնի մեջ գոյություն ունեցող չորս հեղուկների (արյուն, լորձ, սև և դեղին մաղձեր) հետ: Երրորդ խումբը պինդ անդամներն են՝ ոսկորները, ջղերը, կռճիկները և այլ մասեր:

կի երեք ուղի է նշում, երբ հիվանդը շփվում է առողջ մարդու հետ, երբ գործածում է հիվանդի իրերը և օդի միջոցով: Նա տենդային հիվանդությունները բուժող բժիշկներից պահանջում է պարզել, թե որտեղից է հիվանդը, կլիմայական ինչ պայմաններում է նա բնակվում: Հերացին, ապրելով Կիլիկիայում, քաջածանոթ էր Դաշտային Կիլիկիայում տարածված մալարիայի հիվանդությունները, որոնք Լեռնային Կիլիկիայում բացակայում էին:

Բժշկագիտությունը տվել է տենդային հիվանդությունների նկարագրությունը և դրանց բուժման եղանակները: Մ. Հերացու աշխատությունը, ինչպես նշվել է, հիմնականում նվիրված է հենց տենդային հիվանդություններին, այդ թվում և մալարիային: Նա տարբերակել է մարդու օրգանիզմի ջերմության աստիճանը թոքախտի և մալարիա հիվանդությունների ժամանակ:

Այսպիսով, բժշկագիտական ուսումնասիրությունները բերում են այն համոզման, որ հայոց բնագիտական-բժշկական ոլորտը, ծանոթ լինելով անտիկ շրջանի և ժամանակակից Եվրոպայի և Արևելքի երկրների այս բնագավառի ծեռքբերումներին, գիտական իր ընդհանուր մակարդակով համընթաց էր ընթանում նրանց հետ: Այդ տեսակետը հավաստի է դառնում, երբ թեկուզ թռուցիկ ծանոթանում ենք դրսաշխարհի գիտական այս բնագավառի իրավիճակին: Միջազգային լայն ճանաչման արժանացած Արևելքի մեծ մտածող, բժիշկ Իբն Սինան (980-1037) գտնում էր, որ բնությունը բաղկացած է չորս տարրերից՝ հող, ջուր, օդ և կրակ[211]: Ինչպես տեսանք, ճիշտ նույն տեսակետին էին հայ փիլիսոփա-բնագետները: Մարդու օրգանիզմից արյուն հանելը Իբն Սինան օգտագործում էր որպես բուժման միջոց: Բուժման այդ մեթոդը լայնորեն կիրառվում էր նաև Հայաստանում: Նույնը պետք է ասել նաև դեղամիջոցների և բուժման մյուս մեթոդների մասին:

---

[211] Տես Ю. С. Арзуметов, К. Ю. Юлдашев, Медицинские взгляды Ибн Сины, Ташкент, 1983, стр. 62, 99.

# ԲԱԺԻՆ ԵՐՐՈՐԴ

# ԱՐՎԵՍՏ

## 1. ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

Երկրի անկախության վերականգնման շնորհիվ ստեղծված բարենպաստ պայմաններում վերելք է ապրում նաև հայոց երաժշտական արվեստը: Մշակույթի այս բնագավառը հարուստ անցյալ ունի, որից լավ ժառանգություն է ստացել զարգացած միջնադարը: Երաժիշտները յուրացնում էին նախորդ դարաշրջանների, հատկապես VII-VIII դարերի երաժշտական ձեռքբերումները և ժամանակի պահանջների թելադրանքով առաջ մղում այն: Զևավորվում ու մշակվում են գեղջկական-գուսանական երգերի տեսակները: Այդ երգերն ապրում են բովանդակային խորացման, հորինվածքների կատարելագործման նշանակալի վերընթաց:

Տաղերը, որ առաջ եկան այս դարաշրջանում՝ Հայաստանի անկախության առաջին տասնամյակներում, էական նշանակություն ունեցան հետագա դարերի երաժշտության առաջադիմության համար: Այս շրջանում առաջ են գալիս տաղ ստեղծողներ և կատարողներ: X-XI դարերի տաղերն առավել ժողովրդական բնույթ ունեն: Երգերն արտահայտում են գյուղացու թե՛ տխրության և թե՛ ուրախության ապրումները, նրա կենցաղը: Ինչպես մշակույթի մյուս ճյուղերը, այնպես էլ տաղերը հիմնականում կենսահաստատ բնույթ ունեն[212]: Վաղնջական ժամանակներից եկող գեղջկական երաժշտության հետքերն առաջին հերթին իրենց արտահայտությունն են գտել «Սասունցի Դավիթ» էպոսում:

---

[212] Տե՛ս **Х. С. Кушнаров**, Вопросы истории и теории Армянской монодической музики, Ленинград, 1958, стр. 129-133.

ժողովրդական-գուսանական արվեստի ազդեցությունը պահպանվել է հետագայի ժողովրդական ստեղծագործություններում, գեղջկական վարուցանքին վերաբերող երգերում, հատկապես «Մոկաց Միրզա» երգում: Երգի առաջին մասում խոսվում է Մոկսի իշխանին՝ Միրզային, բաժին ընկած տխուր իրողության մասին, իսկ երկրորդ մասում գուսանի վերաբերմունքն է: Նա հազար անգամ ափսոսում է Միրզայի հետ պատահածի համար: Այլ խոսքով, հաճախ ժողովրդագուսանական երաժշտությունը երկու տարբեր մոտեցումների միասնությամբ է հանդես գալիս: Գեղջկական երաժշտական արվեստը մեծ հաջողության է հասնում պարային երաժշտության մեջ[213]: Հայ գյուղացիության երաժշտական լիրիկան IX-XIII դարերում հասնում է զարգացման ամենաբարձր աստիճանին[214]:

Հայ երաժշտության պատմության անվանի մասնագետ Նիկողոս Թահմիզյանը հետևյալ կերպ է բնութագրում գեղջկական-գուսանական արվեստը. «Ի դեմս գեղջուկ ժողովրդական և քաղաքային ու գուսանական իրապաշտ արվեստի ունենալով այսպիսի սնուցիչ հող, հայ հոգևոր մասնագիտացված երգարվեստը հասնում է պատմական նվաճումների: Վերջնականապես ձևավորվում է նրա ազգային ինքնատիպ դեմքը, հնարավորին չափով հագենում է ժողովրդաաշխարհիկ առողջ կենսազգացողությամբ և բարձրանալով իր ժամանակի միաձայնային արվեստի ճարտարապետական-գեղարվեստական համաշխարհային մակարդակին, մարդկության մշակութային գանձարանը հարստացնում է մի շարք կոթողային գործերով»[215]:

Երաժշտության բնագավառում X-XI դարերում կատարվող խոշոր տեղաշարժերը կապվում են Գրիգոր Նարեկացու անվան հետ: Այս շրջանում վերելք ապրող տաղերի արվեստը խթանում էր երգարվեստի մյուս ճյուղի՝ շարականների վերստեղծմանը: Գր. Նարեկացին մեծ է նաև երաժշտության մեջ, նա այս բնագավառում ևս նվիրական անուններից է: Պատահական չէ, որ

---

[213] Նույն տեղում, էջ 196, 205:
[214] Նույն տեղում, էջ 164:
[215] Ն. Կ. Թահմիզյան, Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V-XV դդ., Երևան, 1985, էջ 36:

«Մատյան ողբերգության» մի շարք հատվածներ անցել են Մաշտոցների ժամերգության ու պատարագի արարողության մեջ՝ որպես աղոթքներ կամ մաղթանքներ: Աշխատության առանձին հատվածներ երգվել են: Նարեկացու տաղերի տաղաչափական նուրբ հատկանիշների մասին նշել է Մանուկ Աբեղյանը:

Պատարագը քրիստոնեական ծեսերի մեջ կենտրոնական տեղ է զբաղեցնում և ամենահներից է, նրանում տեղ են գտել «Մատյանի» 33-րդ գլխի որոշ հատվածներ: Հանգստյան ժամերի երգեցողության շրջանակներում ժամագրքում որոշ հատվածներ են ընդգրկել գրքի 12, 28, 41-րդ գլուխներից: Հայ եկեղեցու ծիսական կարևոր մատյաններից «Մաշտոց»-ի մեջ է ներառվել գրքի 18-րդ գլուխը: Շարակնոցում մեկ շարական պատկանում է Նարեկացուն[216]: Նարեկացին իր ողջ գիտակցական կյանքում զբաղված է եղել տաղերով, որոնք ձայնակցում են «Մատյան»-ի գաղափարներին:

Միջնադարում մատենագրության մեջ երաժիշտը հաճախ անվանվում էր փիլիսոփա կամ հռետոր: Ն. Մառը նշում է, որ Հայաստանում երաժշտության զարգացումը և բարձր համարումը երևում է նրանից, որ Կիլիկիայում երգեցողության մասնագետը փիլիսոփայի, այսինքն՝ իմաստունների կոչում ուներ: Հաճախ բանաստեղծն ու երաժիշտը միահյուսվում,. հանդես էին գալիս միասին: Նարեկացին իր տաղերը ստեղծել է որպես երաժշտաբանաստեղծական ամբողջական ստեղծագործություն, որպես գուսանական երգ: Նրա բանաստեղծությունները արտահայտվել են գանձերի և տաղերի ձևով: Գանձերը բանաստեղծություն, երգքարոզներ են, որոնք հիմնականում պատմողական-նկարագրական բնույթ ունեն: Տաղերը հոգևոր երգերի ավելի մշակված, փոքրածավալ ու կուռ, կենդանի պատկերներով բանաստեղծություններ են և ունեն երաժշտահուզական բնույթ: Գր. Նարեկացին

[216] Նույն տեղում, էջ 76-89: Նարեկացու երաժշտական ներդրումը հայտնի դարձավ Մխիթարյաններից, նրա տաղերը ներկայացնող «Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Նարեկաց վանքից վանականի մատենագրութիւն» (Վենետիկ, 1940) գրքի հրատարակության շնորհիվ: Նրա ստեղծագործությունը սերտ կապերի մեջ է հայկական մասնագիտացված երգարվեստի նախորդ (V-IX դդ.) և հաջորդ (XI-XV դդ.) փուլերի հետ, այսինքն՝ երաժշտական արվեստի հազարամյա վերելքի ողջ շրջանի հետ (տե՛ս Թահմիզյանի աշխատությունը, էջ 5):

գանձերն ու տաղերը հորինել է՝ նկատի ունենալով Ձորինյաց, Ծննդյան, Տյառնընդառաջի, Քառասուն մանկանց, Յարության, Յամբարձման, Վարդավառի և այլ եկեղեցական տոները[217]: Գրիգոր Նարեկացին ստեղծել է 20-ից ավելի տաղեր, որոնք արտահայտում են իր ապրած ժամանակաշրջանի ոգին, ձգտումները, գեղագիտական ըմբռնումների նոր աստիճանը: Նրա ստեղծագործությունները դառնում են տիրապետող: Նկատի պետք է առնել, որ այս շրջանում երգարվեստն ավելի մեծ ընդգրկումով, քան երբևէ, արձագանքում է իրական կյանքի երևույթներին, արտահայտում մարդու ներքին ապրումները: Միաժամանակ ազգային տենչերի հետ արտահայտում է համաքրիստոնեական գաղափարներ:

Յայաստանը հարաբերվել, շփումների մեջ է եղել եվրոպական և ասիական մերձավոր երկրների ու ժողովուրդների հետ: Նրանց մշակույթները բնականաբար նույնպես շփվել և ունեցել են փոխազդեցություններ: Փոխադարձ շփումներն առկա էին Գր. Նարեկացու ժամանակաշրջանում, բայց ավելի շեշտված դրսևորվեցին XII-XIII դարերում: Պրոֆ. Լ. Զեքիյանը, անդրադառնալով Նարեկացու ժամանակակից բյուզանդացի Սիմեոն Բոգոսլավի ստեղծագործությանը, ցույց է տալիս, որ նա քարոզում էր այն գաղափարը, թե մարդը պետք է սրբության հասնի և հարաբերվի Աստծու հետ սեփական ուժերով, առանց միջնորդի: Յայ և բյուզանդացի հեղինակները մեկը մյուսի ստեղծագործությանը թերևս ծանոթ չէին, սակայն համանման տեսակետներ էին պաշտպանում: Լ. Զեքիյանի կարծիքով նրանց մերձեցնում էր արևելաքրիստոնեական աստվածաբանության ընդհանուր մշակութային դաշտը[218]: Ասել է թե համանմանությունն արդյունք է պատմական միևնույն դարաշրջանի արգասիք հանդիսացող միտումների:

Յայ երաժշտության պատմության անվանի մասնագետ Քրիստափոր Քուշնարյանն այն միտքն է հայտնում, որ մահմեդա-

---

[217] Տե՛ս Գրիգոր Նարեկացի, Տաղեր և գանձեր, աշխատասիրությամբ Արմինե Քյոշկերյանի, Երևան, 1981, էջ 9, 30-31, 39:
[218] Տե՛ս **Л. Зекиян**, Симеон Новый Богослав (Григор Нарекаци и духовная культура средневоковья), Москва, 2010, стр. 299.

կան աշխարհում տարածում գտած մուղամները, ասենք՝ սեգյահը կամ ուրիշները XII-XIII դարերի հայոց երաժշտության հետ նմանություն ունեն, նույնատիպ են: Նիզամու «Խոսրով և Շիրին» պոեմի մուղամներն արձագանքում են նույն դարաշրջանի հայկական տաղերին ու շարականներին[219]: Այստեղ ևս արտացոլվում է այն իրողությունը, որ պատմական համապատասխան փուլի զարգացման ընդհանուր պայմանները հանգեցնում են համանման արդյունքների:

Միջնադարի կարևոր այս փուլում՝ X-XV դարերում, երաժշտության գործիքավորումը հասավ բարձր աստիճանի: Այդ երևում է հենց երգերի կատարումից և պատմիչների (Թ. Արծրունի, Մ. Ուռհայեցի և ուրիշներ) վկայություններից: Օգտագործում էին սրինգ, փող, պարկապզուկ, զուռնա, շեփոր: Նիզամին նշում է նաև քամանչայի մասին: Նշանակում է, որ օգտագործվում էին նաև փողային ու լարային գործիքներ[220]:

Երաժշտությունը զարգանում էր բարձրագույն տիպի դպրոցներում՝ վարդապետարաններում: Քառյակ ուսուցման ծրագրում պարտադիր էր երաժշտության ուսուցումը: Երաժըշտության գիտակ Գր. Մագիստրոսի նամակներից մեկում խոսվում է Սանահինի վարդապետարանի սաների ուսուցման մասին: Հիմնավոր կերպով երաժշտություն էր ուսուցանվում բոլոր բարձրագույն դպրոցներում: Ցավոք, տեղեկություններ չեն պահպանվել վարդապետարաններում երաժշտության ուսուցման ծրագրերի, առհասարակ երաժշտական կյանքի մասին:

Գրիգոր Նարեկացու երաժշտական ավանդների շարունակողն ու զարգացնողը եղավ Ներսես Շնորհալին: Երաժշտական արվեստի նոր առաջընթացը սկսվեց XII դարից Կիլիկիայում: Սկևռան, Արքայազն, Սիսը, Ակները, Հռոմկլան, Կարմիր վանքը եղել են երգարվեստի մասնագիտացված կենտրոններ: Կարմիր վանքում հատուկ ուշադրություն էր դարձվում հայ երաժշտության ավանդներին ու եղած ժառանգությանը, մասնավորապես Նարեկացու տաղային ստեղծագործության յուրացմանը: Նույնը պետք է ասել Սկևռայի մասին, որը XII դարի կեսերից սկսած

[219] Տե՛ս Х. Кушнаров, նշվ. աշխ., էջ 220-221:

[220] Նույն տեղում, էջ 214-218:

շուրջ մեկ ու կես դար արվեստի ու գրչության նշանավոր կենտրոն էր: Այնտեղ բարձր մակարդակով մեկնաբանվել է Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմը: Այս միջավայրում աճել, ստեղծագործել և երգարվեստում խթանիչ դեր է կատարել Ն. Շնորհալին: Կիրակոս Գանձակեցին տեղեկացնում է նրա երաժշտաբանաստեղծական համակողմանի ունակությունների մասին. «Եւ զի էր նա,- գրում է պատմիչը,- այր բանաւոր, բազում ինչ կարգեաց նա յեկեղեցիս քաղցր եղանակաւ, խոսրովային ոճով շարականս, մեղեդիս, տաղս և ոտանաւորս...»[221]:

Բուն Հայաստանի նշանավոր երաժիշտների մի մասը (Վարդան Արևելցի, Հովհաննես Երզնկացի և այլք) կապված են եղել Կիլիկիայի հետ: Կիլիկիայի երգարվեստի շատ մշակներ արդյունավետ կապերի մեջ են եղել Հայաստանի գիտամշակութային շրջանների հետ[222]:

Պատարագն իր երաժշտական ձևավորմամբ գալիս է զարգացած ավատատիրության շրջանից: Դրա հեղաշրջիչ բարեփոխումը կատարվել է XII դարում, որը կապվում է Ներսես Շնորհալու անվան հետ: Նա էական դերակատարում է ունեցել շարականների զարգացման հարցում: Նրա գրչին են պատկանում շուրջ երկու հարյուր շարականներ և հոգևոր երգեր:

Շնորհալին երգարվեստում էական նշանակություն է տվել հանելուկներին, որոնք ընդգրկված են եղել գուսանական երգարվեստի մեջ: Հանելուկներն առնչվում են ինչպես հեքիաթների, աղոթքների, այնպես էլ երգերի հետ: Հանելուկների գերակշիռ մասը հարմար երգելու համար չափածո են: Աշուղները հանելուկների միջոցով երգով արտահայտել են իրենց ասելիքը[223]:

Ն. Շնորհալին ավատատիրական Հայաստանի մասնագետ երգահաններից էր և ճանաչված ու գնահատված ժամանակակիցների կողմից: Նրա մասին միջնադարյան մի գրիչ գրել է.

«Իշխան մի կար յեկեղեցի,
Ի ծայրագոյն աստիճանի,

[221] Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, էջ 119:
[222] Տե՛ս Ն. Թահմիզյան, նշվ. աշխ., էջ 41-43:
[223] Տե՛ս Ն. Կ. Թահմիզյան, Ներսես Շնորհալին երգահան և երաժիշտ, Երևան, 1973, էջ 28-41:

Քան զոր չեղև ոք ավելի,
Երգիչ տաղի շարականի»[224]:

Նա ծանոթ էր բյուզանդական, պարսկական, ասորական երաժշտական աշխարհին և ընդունված նրանց միջավայրում: Շնորհալու ժամանակակից ասորի Միխայիլ պատրիարքն իր «ժամանակագրության» մեջ նրան հիշատակում է «Մեծ կաթողիկոսն հայոց», «Մեծն Ներսես կաթողիկոսն», «Սուրբն Ներսէս» և նմանատիպ արտահայտություններով:

Բյուզանդիայում և Մերձավոր Արևելքում Շնորհալու ճանաչված լինելու մասին վկայում է նաև Կիրակոս Գանձակեցին:

«Այս Ներսէս,- գրում է նա,- առաւելեալ էր իմաստութեամբ քան զյոլովս ի ժամանակի անդ ոչ միայն քան զվարդապետս հայոց, այլ և քան զյունաց և զասորվոց, այնքան՝ մինչ զի համբաւ իմաստութեան նորա տարածեցաւ ընդ ամենայն ազգս...»[225]:

Ներսես Շնորհալու երաժշտական արվեստի ակունքները սկիզբ են առնում VII-VIII դարերից, բայց ավելի սերտորեն կապվում են X-XI դարերի տաղային ստեղծագործությունների և դրանց առանցքային դեմքի՝ Գրիգոր Նարեկացու արվեստի հետ: Նա շարունակեց Նարեկացու ավանդները և դարձավ նրանից հետո երկրորդ հանճարը: Շնորհալին, անցյալի երաժշտական ծեռքբերումներից վերցնելով լավագույնը, իր ժամանակի պահանջների ոգով համաձուլելով այն, ավանդեց հաջորդ սերունդներին՝ խթանելով նրա առաջընթացը:

Նրա երգարվեստն իր տարրողությամբ և արժեքով դուրս է գալիս հայ իրականության սահմաններից և համաքրիստոնեական արժեք է ստանում:

Շնորհալու աշակերտ, նշանավոր մատենագիր, փիլիսոփա, բանաստեղծ, թարգմանիչ Ներսես Լամբրոնացին Կիլիկիայի երևելի երաժիշտներից էր: Նա ներբողական գովեստներ է նվիրել Ներսես Շնորհալուն և Պահլավունյաց տոհմին, կատարել մեկնություններ, թարգմանություններ: Ն. Լամբրոնացին հորինել է բազմաթիվ տաղեր, իսկ նրա ստեղծած ավելի քան քսան շարականները լայն տարածում են գտել: Նա գրել է այդ շարականների

[224] Գ. Զարբհանալյան, Պատմություն հայ հին դպրության, Վենետիկ, 1932, էջ 637:
[225] Կ. Գանձակեցի, Պատմություն հայոց, էջ 118:

բառերը, մշակել եղանակները, և ինքն անձամբ երգել:

Կիլիկիայում իրենց ներդրումն են ունեցել Հակոբ Կայեցին, Կոստանդին Սսեցին և ուրիշներ:

Կենտրոնական Հայաստանում XIII-XIV դարերում շարունակվում էր հետշնորհալիական երաժշտության շրջանը: Երաժիշտների մեջ նշանավոր է Խաչատուր Տարոնացին, որը գործել է Հայաստանի համար բարենպաստ պայմաններում, Զաքարյանների տիրապետության ժամանակաշրջանում: Տարոնացին քաջ ծանոթ է եղել կիլիկյան դպրոցի երաժշտական ձեռքբերումներին և հենվելով դրանց վրա՝ զարգացրել է Հայաստանում: Նա նպաստել է երաժշտության միայնակ և խմբակային կատարմանը: Հորինել է գանձեր, շարականներ, որոնցից պահպանվել է հայոց պատարագի մեջ անցած «Խորհուրդ խորին» տոնական ստեղծագործությունը[226]:

Պատմիչ Վարդան Արևելցին թարգմանիչ, մանկավարժ լինելուց բացի, եղել է երաժիշտ-բանաստեղծ: Նրա գրչին են պատկանում մի շարք շարականներ: Նա իր ուսուցչի՝ Վանական Վարդապետի հետ եղել է Աստվածածնի ծննդյան տոնի տարածման ջատագովներից:

Հովհաննես Երզնկացին (Պլուզ) իր մյուս առաքինություններին հետ նաև երևելի երաժիշտ էր: Նա օգտվել է Ն. Շնորհալու հարուստ ժառանգությունից, թողել աշխարհիկ ու հոգևոր տաղեր և շարականներ: Պլուզը մի ամբողջ ուսմունք է ստեղծել երաժշտական ձայների մասին, կազմել ձայների տեսակների 7 ուշագրավ աղյուսակ: Նա երաժշտությունը համարել է մարդկային կարևոր իմացություններից մեկը, յուրովի մեկնաբանել մարդու հոգու և մարմնի վրա երաժշտության ներգործությունը: Երաժշտությունը տարբերակել է, բաժանել երկու մասի, մի կողմից՝ եկեղեցու կողմից տաճարներում կատարվող հոգևոր, իսկ մյուս կողմից՝ խրախճանքներում կատարվող ժողովրդական երաժշտության: Նա խորացրել է տաղային արվեստի աշխարհականացման միտումը, միաժամանակ իր ներդրումը կատարել հոգևոր երաժշտության մեջ: Երզնկացին շարականներ է նվիրել Գրիգոր Լու-

[226] Տե՛ս Ն. Թահմիզյան, Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը, էջ 261, 279:

սավորչի և Ներսես Մեծի հիշատակին: Նա հանդես է գալիս որպես հայրենանվեր բանաստեղծ-երաժիշտ:

Մխիթար Այրիվանեցին հայտնի է մեզ հասած իր 21 գանձերով, թեպետ և ունի տաղեր, աղոթքներ: Նրա գանձերն ընդունվել և սիրված ու հարգված են եղել որպես երաժշտաբանաստեղծական համաձույլ գործեր: Այդ գանձերն ունեն նաև պատմական սկզբնաղբյուրի հատկանիշներ: Այրիվանեցին հորինել է իր ստեղծած գանձերի, տաղերի, օրհնության երգերի երաժշտությունը[227]:

Առաքել Սյունեցին (1350-1435) տաղերգու, քերական, փիլիսոփա, երաժշտության տեսաբան էր: Կրթությունը ստացել է Տաթևի համալսարանում, աշակերտել է Հ. Որոտնեցուն և Գր. Տաթևացուն: Նա նպաստել է Տաթևի գիտալուսավորական կենտրոնի բարգավաճմանը: Նրա կարևոր գործերից են «Դրախտագիրք»-ը, որը նվիրված է Ադամի և Եվայի ավանդությանը և երկնային դրախտի գաղափարին:

Էական է Սյունեցու՝ Դավիթ Անհաղթի «Սահմանք»-ի մեկնությունը: Հետաքրքիր տեղեկություններ է հաղորդել հայկական միջնադարյան նվագարանների, գործիքների և երաժշտական եղանակների մասին: Նա շահեկանորեն անդրադարձել է հայ նշանավոր շարականագիրներին՝ սկսած Մեսրոպ Մաշտոցից ու Սահակ Պարթևից: Զբաղվել է երաժշտության տեսության հարցերով, ունի հոգևոր տաղեր[228]:

Այս պատմափուլում են ավարտուն տեսք ստանում երգեցողությամբ պարուրված եկեղեցական ծիսամատյանները՝ Շարակնոցը, Ճաշոցը, Մաշտոցը, Տոնացույցը, Ճառընտիրը, Պատարագամատույցը, Ժամագիրքը, գանձարանը:

Երաժշտագետ Աննա Արևշատյանը ցույց է տալիս, որ «Մաշտոց» ժողովածուն, ինչպես և մյուս ծիսամատյանները, կազմավորվել են IX-X դարերում, իսկ հաջորդ երկու-երեք հազարամյակներում կատարվել է դրանց արմատավորման առաջընթացը[229]:

---

[227] Նույն տեղում, էջ 283-294:
[228] Նույն տեղում, էջ 310:
[229] Տե՛ս Ա. Ս. Արևշատյան, «Մաշտոց» ժողովածուն որպես հայ միջնադարյան

Երաժշտագետ Մ. Նավոյանը, հենվելով Ք. Քուշնարյանի և Ռ. Աթայանի ուսումնասիրությունների վրա, այն տեսակետն է հայտնում, որ միջնադարյան մասնագիտացված երգարվեստում ազատ մեղեդիական մտածողության հիմքերն առաջին անգամ դրսևորվել են տաղերում: Ապա իրավամբ այն միտքն է զարգացնում, որ ազատ մտածողությանը բնորոշ դրսևորումները նկատելի են նաև արվեստի մյուս տեսակներում: «Ազատ մեղեդիական մտածողությունը,- գրում է Մ. Նավոյանը,- բացի իր զուտ երաժշտական դրսևորումից, անշուշտ, ունի նաև գեղագիտական, մշակութաբանական կողմերը, որոնք, պայմանավորված լինելով մի շարք հարակից գիտական և արվեստի ոլորտներով, միևնույն ժամանակ այդ ոլորտներում նույնպես թելադրել են յուրահատուկ դրսևորումների ի հայտ գալը, պայմանավորել այդ հարակից ոլորտներում ինչ-ինչ օրինաչափություններ»[230]:

Այսպիսով, X-XV դարերում երաժշտական արվեստը, հենվելով վաղ միջնադարի ժառանգության վրա, շարունակել է այդ ընթացքը և վիթխարի հաջողությունների հասել: Երգի հնագույն շերտը սաղմոսներն են եղել, գրերի գյուտից հետո շարականներն են դարձել տիրապետող: Աստիճանաբար դրանք իրենց առաջատար տեղը զիջել են տաղերին, մեղեդիներին: Սաղմոսների և շարականների գոյության պայմաններում տաղերը երգարվեստի մեջ առաջատար բնագավառ են դառնում IX-X դարերից: Այդ անցումը կյանքի է կոչվել Գրիգոր Նարեկացու ստեղծագործություններով, որոնք մեծարժեք գործեր են նաև համաքրիստոնեական երգարվեստի չափանիշներով:

Երգարվեստի զարգացման երկրորդ փուլը (XII-XIII դարեր), ինչպես նշեցինք, կապվում է Նարեկացու գործի մեծատաղանդ շարունակող Ներսես Շնորհալու անվան հետ: Նա ծավալեց, խորացրեց Նարեկացու ավանդները և հայ երգարվեստը հասցրեց նոր մակարդակի:

Երրորդ փուլում՝ XIII-XV դարերում, հասարակական, մշա-

---

երաժշտական մշակույթի հուշարձան, Երևան, 1991, էջ 36, 45:

[230] Մ. Ռ. Նավոյան, Տաղերի ժանրի ծագումնաբանությունը և ազատ մեղեդիական մտածողությունը հայ միջնադարյան մասնագիտացված երգարվեստում, Երևան, 2001, էջ 175-176:

կութային կյանքի հասունացած պահանջների թելադրանքով և հենվելով Նարեկացու և Շնորհալու ստեղծագործությունների վրա հետագա առաջընթաց ապրեց երգարվեստը: Ֆրիկից սկսվում է աշխարհիկ տաղերի հորինումը: Երգարվեստի այս ուղղությունն ամրապնդվում է Հ. Երզնկացու (Պլուզ), Կ. Երզնկացու և ուրիշների ստեղծագործություններում:

## 2. ԿԵՐՊԱՐՎԵՍՏ

Միջնադարյան Հայաստանի մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում առանձնակի ուժգնությամբ վերելք ապրեց արվեստը, այդ թվում և կերպարվեստը: Արվեստի այս բնագավառում առաջնակարգ տեղ է գրավում մանրանկարչությունը: Վերջինիս աննախադեպ թռիչքը կապված էր ձեռագիր մատյանների կամ գրքի գեղարվեստական ձևավորման արվեստի հետ, որն էլ իր հերթին վկայում է գրի ու գրքի նկատմամբ առանձնահատուկ վերաբերմունքի մասին:

Ամենայն հավանականությամբ մանրանկարչությունը սկիզբ է առել գրերի գյուտից անմիջապես հետո ստեղծված ձեռագրերում, որոնք մեզ չեն հասել: Պահպանված ամենահին ձեռագրերը 862 թ. ընդօրինակված Մլքե թագուհու և Լազարյան ճեմարանի՝ 887 թ. ավետարաններն են: X դարից սկսած՝ պատկերազարդված ձեռագրերի քանակը մեծանում է: Դրանց գերակշիռ մասը պաշտամունքային նշանակություն ունեցող ավետարաններն են, ավելի պակաս՝ ճաշոցներ, Շարակնոցներ, Տոնացույցներ, Մաշտոցներ:

Քաղաքական աննպաստ պայմանների՝ սելջուկների և մոնղոլների ավերածությունների պատճառով Հայաստանի տարբեր երկրամասերում տարբեր հանգամանքների բերումով հնարավոր էր դառնում որոշակի ժամանակահատվածներում խաղաղ անկյուն գտնել և զբաղվել ձեռագրական արվեստով ու դրանց գեղարվեստական նկարազարդումներով:

Բագրատունյաց ժամանակաշրջանից քիչ պատկերազարդ ձեռագրեր են պահպանվել: Անի մայրաքաղաքի մերձավոր Հոռո-

մոսի վանքն էր, որը հռչակված էր մանրանկարչության և գրչության արվեստներով: Այստեղի մանրանկարիչը Իգնատիոսն էր: Նրա՝ մեզ հասած ձեռագիրը Ավետարանն է: Նրա նկարներն աչքի են ընկնում լուսանցազարդերի զուսպ կանոնավորությամբ, խորանների ներդաշնակ գունային համադրությամբ: Սակայն նա միակ մանրանկարիչը չէր: Նշանավոր է Հաղպատի Ավետարանը, որի ծաղկողը Մարգարեն է: Ձեռագիրը շքեղ չէ, բայց արտահայտում է Անիի և նրա շրջակայքի քաղաքային կյանքի մթնոլորտը, նոր բարձրացող քաղաքային խավի գեղագիտական պահանջները[231]:

Բագրատունիները սերտորեն կապված էին Հաղպատի և Սանահինի գիտամշակութային կենտրոնների հետ: Հաղպատը, ինչպես հայտնի է, հիմնել է Աշոտ 3-րդ թագավորի (Ողորմածի) կին Խոսրովանուշ թագուհին, Գրիգոր Մագիստրոսն էլ այդ կենտրոններում լուսավորչական նշանակալի գործունեություն է ծավալել:՝Նշանակում է՝ Հաղպատը և Սանահինը կապված էին Անիի հետ: Էական է ավետարանի «Մուտք Երուսաղեմ» նկարը, որը լուսավոր, կենդանաշունչ գույների շնորհիվ ստեղծում է լավատեսական ընդհանուր մթնոլորտ: Գ. Հովսեփյանը գտնում է, որ այդ նկարի մարդկանց հագուստներում կան այնպիսի տարրեր, որ առկա են XX դ. սկզբի Հյուսիսային Հայաստանի և Թիֆլիսի բնակիչների տարազում:

Հաղպատի Ավետարանի կենսուրախ, լավատեսական տրամադրություն հարուցող նկարներից հետո բոլորովին այլ են Թարգմանչաց Ավետարանի մանրանկարները: Այդուհանդերձ մանրանկարները գունային հակադրությունների և մշակման առումով միասնական են, նման կիլիկյան մանրանկարչության շատ տարրերի[232]:

Բարձր Հայքի ամենամեծ ու շքեղ ձեռագրերը Մշո ճառընտիրն է և Երզնկայի Աստվածաշունչը: Մշո ճառընտիրի տիտղոսաթերթը և խորանը նկարազարդված են գազանների, ցուլի, եղնիկների պատկերներով, որոնք հիշեցնում են XIII դ. հյուսքազարդերի թեթևությունն ու ազատությունը:Թեև տեղ-տեղ գույնե-

---

231 Տե՛ս «Հայ արվեստի պատմություն», էջ 165:
232 Նույն տեղում, էջ 167-168:

րը խունացած են, բայց ամբողջ խորանը ճոխ տպավորություն է թողնում:

Երկրամասի հիմնական կենտրոն Երզնկա քաղաքը XIII դարի երկրորդ կեսին աշխույժ կյանքով էր ապրում: Երզնկայի՝ 1256 թ. Աստվածաշունչը նկարազարդված է մարգարեների, ավետարանիչների պատկերներով, որոնք ունեն դասական համաչափություն: Թե՛ ճառընտիրի, թե՛ Աստվածաշնչի հյուսքազարդերը հիշեցնում են XII-XIII դարերի ճարտարապետական կոթողների, հատկապես խաչքարերի քանդակները: Բարձր Հայքում մեծ էր Կիլիկիայի ազդեցությունը[233]:

Արցախ-Ուտիքի տարածքի գրեթե բոլոր հոգևոր հաստատություններն ունեցել են գրչատներ: Նշանավոր կենտրոններ էին կաթողիկոսանիստ Գանձասարը, 989 թ. հիմնադրված Թարգմանչաց վանքը, Շուշին, Գոշավանքը: Արցախը դարձել էր ապահով մի վայր, որտեղ ձեռագիր մատյաններ էին բերում տարբեր վայրերից: Կիլիկիայի Հռոմկլա բերդից նշանավոր Ավետարանը բերվել է Գանձասար: Հաղպատի Ավետարանը (1211 թ., նկարիչ՝ Մարգարե), Թարգմանչաց Ավետարանը (1232, նկարիչ՝ Գրիգոր) և շատ ուրիշ կոթողներ հանգրվան էին գտել Արցախում:

Արցախի մանրանկարչության լավագույն հուշարձաններից է 1224 թ. Փառիսոս գավառի Խորանաշատ գյուղում ընդօրինակված Ավետարանը, որում աչքի են ընկնում նրբագեղությունն ու չափավորությունը: Այդ Ավետարանում հատուկ ուշադրության են արժանացել ավետարանիչների դիմանկարները: Մանրանկարչության անվանի մասնագետ Լ. Դուռնովոն դրանց մասին գրել է. «Անսովոր տպավորիչ են ավետարանիչների դեմքերը՝ կատարված գրաֆիկային ոճով: Շնորհալի վարպետն իր անունը մեզ չի թողել, սակայն արտահայտման ապշեցուցիչ պարզ միջոցներով ստեղծել է արտակարգ ներշնչված ու խորհող կերպարներ»[234]:

Հայկական մանրանկարչության մեջ, անգամ ողջ քրիստոնեական միջնադարում հազվադեպ է պատահում «Խորհրդավոր ընթրիք»-ի նման ինքնատիպ նկար: Շրջանաձև սեղանի շուրջը

---

[233] Նույն տեղում, էջ 169-170:

[234] Նույն տեղում, էջ 174: Արցախի մասին տե՛ս Հրավարդ Հակոբյան, Արցախի մանրանկարչական արվեստը, Երևան, 1914:

դասավորված 11 գլուխներ Հիսուսին են նայում: Նրանց վրա ազդել է մատնության լուրը: Զգացվում են տարակուսանք, վախ և դրա հետ մեկտեղ ուսուցչին հայացքով ուղղված մի հարց՝ ո՞վ է մատնել Քեզ, Տե՛ր: Նկարի ներքևի անկյունում առաքյալներից անջատվել և սեղանից իր պատառը վերցրած՝ հեռանում է Հուդան: Արցախի մանրանկարչությանը բնորոշ են ընդհանրացումն ու համառոտումը[235]:

Գլաձորի մանկավարժական դպրոցում նշանավոր էին մի շարք ծաղկողներ, որոնց մեջ առանձնանում էին Մոմիկը, Թորոս Տարոնացին, Ավագը:

Մոմիկը բազմակողմանի գիտելիքների տեր, հայ արվեստի եզակի ներկայացուցիչներից է: Նա եղել է գրիչ, նկարիչ, քանդակագործ, ճարտարապետ: Կապված է եղել Գլաձորի գրչության կենտրոնի հետ: Աշակերտել է Ռաբունապետ Եսայի Նչեցուն: Նրա գործունեության թագն ու պսակը Նորավանքի երկհարկանի քանդակազարդ եկեղեցին է (1339):

Մոմիկի կյանքի առաջին փուլը՝ մինչև 1302 թ., կապված է եղել գրչության ու մանրանկարչության, իսկ երկրորդ փուլը՝ քանդակագործության ու ճարտարապետության հետ: Նրա մանրանկարներում զգացվում է քանդակագործի ձեռքը և այդ առումով տարբերվում է Կիլիկիայի մանրանկարչությունից: Գլաձորի դպրոցի այս ծաղկողի նկարներն իրենց ներդաշնակ կառուցվածքով հիշեցնում են Թորոս Ռոսլինի մանրանկարները, բայց ավելի լակոնիկ են: Նշանավոր են Մոմիկի՝ 1302 թ. պատկերազարդած Ստեփանոս Օրբելյանի Ավետարանը և նրա հիշատակին նվիրված խաչքարը[236]:

Գլաձորի մյուս մեծ վարպետից՝ Թորոս Տարոնացուց, մեզ է հասել շուրջ 20 ձեռագիր (1307-1332): Նա ձեռագրերը նկարազարդել է Եսայի Նչեցու համար: Նրա պատկերազարդերը կազմված են բուսական, կենդանաբռչնային մոտիվներից: 1323 թ. Ավետարանի «Մուտք Երուսաղեմ» պատկերում ներկայացված են առաքյալներն ու ժողովուրդը, իսկ դիմահայաց ավանակի վրա նստած է

[235] Տե՛ս Վիգեն Ղազարյան, Հրավարդ Հակոբյան, Հայ միջնադարյան կերպարվեստի պատմություն, Երևան, 2012, էջ 82:
[236] Նույն տեղում, էջ 87:

Քրիստոսը: Ավետարանի խորաններին առընթեր կան լրացումներ. Սուրբ Գևորգը սպանում է օձին, արծիվը որսում է կաքավին և այլն: Գ. Հովսեփյանի բնութագրմամբ, հանձին Թորոս Տարոնացու, գործ ունենք «հույժ բազմակողմանի մի նկարչի՝ մեծ վարպետի» հետ: Նրա գործերում զգացվում են արևմտաեվրոպական ազդեցության որոշ մոտիվներ, շատ ավելի զորեղ է կիլիկյան ազդեցությունը[237]:

Գլաձորի դպրոցի երրորդ նշանավոր վարպետը Ավագն է: Նա ստեղծագործել է XIV դարում (1329-1358): Լ. Դուռնովոն Ավագին համարել է թափառական նկարիչ, քանի որ ստեղծագործել է Սյունիքում, Ատրպատականում, Թավրիզում, Կիլիկիայում և այլուր: Նա կրել է իր երկու նախորդների և հատկապես կիլիկյան մանրանկարչության ազդեցությունը: Անվանի մասնագետ Ս. Տեր-Ներսիսյանը նմանություն է տեսնում Ավագի մի ձեռագրի և Ռոսլինի «Հոգեգալստյան» ձեռագրի պատկերների միջև: Ավագի մաներան նա համարում է ավելի դինամիկ՝ շեշտված գործող անձանց կեցվածքները, ժեստերը և դիմախաղը: Հիրավի, Ավագը բացառիկ հետաքրքրություն է դրսևորել Ռոսլինի ժառանգության նկատմամբ: Նա յուրովի է մեկնաբանում մարդկանց կերպարը, ընդգծում նրանց ուժը, կազմվածքի ամրությունը[238]: «Մուտք Երուսաղեմ» Ավետարանում դասական տարազին ավելանում են մինչև ուսերն իջնող փաթքոցները, որոնք պատկերն ավելի ամբողջական են դարձնում: Նա Պիծակի և Տարոնացու նման իր նկարներում ներկայացնում է ժամանակակից կենդանի մարդկանց պատկերներ, որոնք ստանում են նաև ազգագրական արժեք: Ավագը, ինչպես նաև կիլիկյան և գլաձորյան վարպետները, ունեցել են նուրբ դիտողականություն[239]:

Տաթևի մշակութային կենտրոնը գործում էր տակավին X դարից: Սելջուկյան տիրապետությունը մեծապես վնասեց, սակայն Զաքարյանների ազատագրական հաջողությունները հնա-

---

[237] «Հայ արվեստի պատմություն», էջ 177-178:
[238] Տե՛ս Ա. Ն. Ավետիսյան, Հայկական մանրանկարչության Գլաձորի դպրոցը, Երևան, 1971, էջ 143-145:
[239] «Հայ արվեստի պատմություն», էջ 179:

յավորությունն տվեցին պահպանելու հայ մշակույթի շարունակական զարգացումը:

Տաթևում XIV-XV դարերում զարգացում էր ապրում գիտաուսումնական գործը: Այնտեղ, ինչպես նշվել է, կարևոր դերակատարում ունեցան Հ. Որոտնեցին և Գր. Տաթևացին: Պահպանվել են վերջինիս՝ մեկ տասնյակի հասնող մատյանները, որոնք պատկերացում են տալիս նրա գեղանկարչական ճաշակի մասին: Արժեքավոր է նրա «Խորանների մեկնություն» աշխատանքը: Տաթևացին զբաղվել է գրչության և արվեստի տեսությամբ, ուշագրավ է նրա գույների տեսությունը: Շատ հետաքրքիր ու ինքնատիպ է «Գր. Տաթևացին իր աշակերտների հետ» նկարը: Նա կենտրոնում է մեծադիր, իսկ շուրջը իր բազմաթիվ աշակերտներն ուսուցչին հնազանդ լինելու և մեծարելու արտահայտիչ դեմքերով[240]:

Վասպուրականի մանրանկարչական դպրոցը խոշորագույնն է հայ իրականության մեջ և գործել է XIII-XV դարերում, ինչպես և հետագայում: Գրչակենտրոնների թիվը հասնում է 40-ի, իսկ պահպանված մատյանների թիվը՝ 2500-ի: Այս դպրոցին հատուկ են եղել պարզ և ինքնատիպ ձևերը: Մեծ տեղ է հատկացվել ժողովրդական ավանդական մտածողությանը, կյանքի ու կենցաղի անմիջական տպավորությանը: Սիմեոն Արճիշեցու անվան հետ են կապվում Վասպուրականի մանրանկարչության սկզբնավորումն ու հետագա ընթացքը՝ XIII-XIV դարերում: Նա իր պատկերազարդ մատյաններում տեղ է հատկացնում աշխարհիկ-կենցաղային մոտիվներին: Ֆրանսիացի գիտնական Ֆրեդերիկ Մակլերը (1868-1938), անդրադառնալով աշխարհիկ թեմաներին, նշում է, որ դրանք ոչնչով չեն զիջում կրոնական պատկերներին, ոչ միայն կատարման վարպետությամբ, այլև հետաքրքիր բովանդակությամբ: Այդ մոտիվներն ազգագրական, ճանաչողական որոշակի արժեք ունեն[241]:

---

[240] Նույն տեղում, էջ 182-184:

[241] Նույն տեղում, էջ 185: Վասպուրականում մանրանկարչության զարգացումը շարունակվեց նաև ուշ միջնադարում, հատկապես նոր շրջանի արշալույսին: Տե՛ս Հ. Հակոբյան, Վասպուրականի մանրանկարչությունը, հ. I, Երևան, 1976, հ. II, 1982: Նույնի՝ «Ձեռագիր մատյանների պատկերազարդման արվեստը Վասպուրականում», Երևան, 1997:

Գրիչ-ծաղկողները կապված են մնում, տեղական, հնուց եկող ավանդական հայտնի ձևերին, հին պատկերացումներին: Այդ, եթե կարելի է ասել, ժողովրդական ուղղությանը հատկանշական է մնում ավանդականի պահպանումը: Եվ այդ հատկանիշը ոչ թե հետադիմական բնույթ ունի, այլ ավանդականը չկորցնելու դրական միտում:

«Սիա և «ժողովրդական» ուղղության հատկանշական կողմերից մեկը,- գրում են մասնագետները,- մնում էր հնին հավատարիմ մնալը, պահպանողականությունը: Ավանդականի պահպանումը բնականոն երևույթ է ժողովրդական ստեղծագործության բոլոր մարզերում՝ գրականություն, ճարտարապետություն, երաժշտություն: Միայն թե այդ պահպանողականությունը հանդես է գալիս ոչ թե հետադիմական իմաստով, որպես «կոնսերվատիզմ», այլ հակառակը՝ ավանդականը չկորցնելու միտումով»[242]:

Ձեռագիր մատյանները պատկերազարդողները իրենց բաց թողած մանրամասները հաճախ լրացնում են մակագրություններով, գրավոր խոսքով, որն անմիջապես կապ է ստեղծում նկարի ու դիտողի միջև: Մ. Աբեղյանը գրականության կապակցությամբ այն միտքն է հայտնում, որ աշխատավոր մարդիկ մի քանի բառերով արտահայտում են իրենց զգացումները, ապրումները: Եվ որպես դրա հավաստիացում բերում է հետևյալ ժողովրդական խաղիկ-ստեղծագործությունը.

«Մեր ջուխտ գութան դաշտ կու բանի,
Ձալո Խաթուն հաց կու տանի,
Մին կու քել է, մին կու կայնե,-
Աչքով, ունքով մարդ կու սպանե»[243]:

Նման մոտեցումը հատուկ է եղել Վասպուրականի մանրանկարչությանը, որտեղ լայնորեն ներկայացված են նկարչի ապրած միջավայրը, աշխարհիկ կյանքը, ժողովրդի սովորությունները: Անգամ հեթանոսական շրջանից պահպանված ծիսական արարողություններն են ներկայացվել մանրանկարներում:

Վասպուրականի մանրանկարչությունը հիշեցնում է Մերձավոր ու Միջին Արևելքի երկրների արաբական, պարսկական ար-

---

[242] Վ. Ղազարյան, Հ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 105:
[243] Նույն տեղում, էջ 105:

վեստը: Սակայն նկատվող նմանությունը չպետք է համարել այդ երկրների արվեստի ազդեցության հետևանք: Ինչպես ժամանակին ճիշտ նկատել է Ն. Մառը, հարևան ժողովուրդների արվեստների նմանությունը ոչ այնքան փոխազդեցության հետևանք է, որքան աղբյուրների ընդհանրության, միևնույն աղբյուրից սնվելու: Նույն ժամանակաշրջանի և նույն միջավայրի ու պայմանների ծնունդ են լինում այդ նմանությունները:

Արևելյան երանգ կրող մանրանկարիչներից էին Կիրակոս Աղբակեցին, Յովհաննես Խիզանեցին, Ռստակեսը, Ծերունը և ուրիշներ:

Վասպուրականի գրչության ու մանրանկարչության նշանավոր կենտրոններից էր Ոստանը, որի նշանակությունը նվազում է Արծրունյաց հարստության վերացման և սելջուկյան տիրապետության հաստատման հետևանքով: Սակայն XIV դարից աշխուժանում է ձեռագրերի ընդօրինակման ու պատկերազարդման արվեստը: Ոստանում ապրել ու ստեղծագործել է Ծերուն ծաղկողը: Նա իր ստեղծագործություններում մեծ ուշադրություն է դարձրել պատմական անձնավորություններին: Ուշագրավ է 1391 թ. ընդօրինակված «Մատյան ողբերգության» պրեմի սկզբում պատկերված Գրիգոր Նարեկացու կերպարը: Նա ամբողջ հասակով կանգնած է վարդապետական հագուստով և իր ստեղծագործությունը հանձնում է առջևում ծնկի իջած Սիմեոն անունով՝ մատյանը ստացող անձնավորությանը:

Յովհաննես Խիզանցու մոտ մանրանկարչական ոճը լավ դրսևորում գտավ: Նրա գլուխգործոցը Աստվածաշունչն է, որն իր պատկերազարդման շքեղությամբ եզակի է Վասպուրականի՝ XIV դարի արվեստում: Յարուստ են մատյանի լուսանցազարդերը՝ ծաղիկների, բուսահյուսվածքների դրվագներով: Խիզանցին հմտորեն տիրապետել է գծային ու գունային արտահայտման միջոցներին: Նա պատկերել է նաև ժողովրդական միջավայրից վերցրած դրվագներ: Գրիգոր Խլաթեցին (1349-1425) եղել է ժամանակագիր: Նա պատկերել է ուսուցչին և նրա առաջ հեզ ու խոնարհ կանգնած աշակերտին[244]:

[244] Նույն տեղում, էջ 110-112:

Ներսես Շնորհալին, Գրիգոր Տղան, Գրիգոր Վկայասերը, Ներսես Լամբրոնացին նպաստել են Կիլիկիայում գրքարվեստի կամ գրքային մանրանկարչության զարգացմանը: Ներսես Լամբրոնացու անվան հետ է կապվում XII դարի մի շարք մատյանների (Սկևռայի, Մլիճի վանքերում ստեղծված) մանրանկարչությունը: Այդ նույն դարի նշանավոր ձեռագիր է Սկևռայի Ավետարանը: Կիլիկիայում պատկերազարդում էին ոչ միայն ավետարանները, այլ նաև ուրիշ բնույթի ձեռագրեր:

Ձեռագրերի պատկերազարդումը մեծ բարձրության է հասնում XIII դարում Հռոմկլայում: Գեղարվեստի հուժկու վերելքը, այդ թվում և Թորոս Ռոսլինի արվեստի ծաղկումը կապվում է Կոնստանդին Ա Բարձրաբերդցի (1221-1267) կաթողիկոսի անվան հետ: Նա էր ձեռագրերի պատվիրատուն կամ մտավոր այդ մարզի հիմնական հորդորողը[245]:

Ամենաանվանի նկարիչը Թորոս Ռոսլինն էր: Նրա նկարները վերաբերում են XIII դարի 50-60-ական թվականներին: Ռոսլինի ստորագրությամբ մեզ հասած յոթ ձեռագրերից հինգ մատյանի գրիչն ինքն է: Նա հետևել է Հռոմկլայի դպրոցի իր նախորդներին: Մեծ վարպետությամբ նկարազարդում է խորանները՝ թռչուններով և բուսական ու կենդանական աշխարհի պատկերներով:

Ռոսլինը ստեղծում է հայ արվեստում աննախադեպ խմբային կոմպոզիցիաներ, որտեղ նրանք կապված են ոչ թե պայմանական, սիմվոլիկ ձևով, այլ կենդանի գործողություններով: Փայլուն են խորանների գլխազարդերում Քրիստոսի և Մարիամի կիսանդրիները: Նա իր նկարների ճարտարապետական, կախ-կամարաւոր կառույցներում հմտորեն կիրառում է այն ժամանակվա հայ և բյուզանդական մանրանկարչության մեջ հայտնի հեռանկարի հիմնական ձևերը, «փոքր խորության» սկզբունքը: Վերջապես ավետարանական դրվագները և հայ մանրանկարչության մեջ պատկերազարդելու արվեստը (Վեհափառի Ավետարան՝ X-

---

245 «Հայ արվեստի պատմություն», էջ 195-199: Կիլիկիայի մանրանկարչությանը, նրա գլխավոր երեք դպրոցներին (Սկևռայի, Արքայաեղբայր Հովհաննեսի, Հռոմկլայի) համգամանորեն անդրադարձել է Լ. Ազարյանը: Տե՛ս Լ. Ազարյան, Կիլիկիայի մանրանկարչությունը XII-XIII դդ., Երևան, 1964:

XI դար, Գագիկ Կարսեցու Ավետարան՝ XI դար) Ռոսլինը հասցնում է կատարելության[246]:

Նրա ստեղծագործությունների մակարդակը վկայում է, որ գործ ունենք բացառիկ վարպետի հետ: Նրա ձեռագրերից մեր առջև բացվում են բարդ կերպարների մի ամբողջ աշխարհ, ստեղծագործական բազմերանգ եղանակներ ու բարձր վարպետություն: Նրա մանրանկարները հիանալի են հորինվածքով, գույներով, հուզական հագեցվածությամբ և կատարումով[247]:

Նրա պատկերած մարդկային դեմքերը մեծ արտահայտչականություն ունեն. «վիշտ, սարսափ,- գրում է Լ. Դուռնովոն,- հպարտություն, զայրույթ ու զարմանք կարելի է նշմարել նրա հերոսներից յուրաքանչյուրի դեմքին: Դեպի մարդու հոգեկան աշխարհը ցուցաբերած այդ բացառիկ ուշադրությունը մեծ տեղ է զբաղեցնում Թորոս Ռոսլինի մոտ և բացահայտում է նրան՝ որպես վաղ վերածնության վարպետ»[248]:

Ինչպես տեղին նշում է արվեստաբան Ի. Դրամբյանը, Թորոս Ռոսլինի լայն մտահորիզոնը և վիթխարի կարողությունները հնարավորություն են ընձեռել բնական իրավիճակում ու գեղեցիկ պատկերելու մարդուն՝ ամենատարբեր դիրքերում ու հոգեկան վիճակներում: Խոսելով մարդու հոգեկան ապրումներն արտահայտելու՝ Թ. Ռոսլինի արվեստի մասին՝ Ի. Դրամբյանը գրում է. «...նկարիչը ձգտում է հաղորդել նրանց բնական ապրումները, ուշադրություն է դարձնում նրանց հոգեբանական վիճակներին, և այդ իսկ նպատակով հաճախ խախտում համաչափությունները, մեծացնում գլխի չափերը՝ ուշադրությունը դեմքի վրա կենտրոնացնելու համար»[249]: Ապա հավելում է, որ նրա ֆիգուրների կեցվածքն ու շարժումները բնական են, զուրկ կտրուկ ու շինծու լինելուց:

Թորոս Ռոսլինն իր ստեղծագործությամբ հանրագումարի է բերում Կիլիկյան շրջանի գրքային գեղանկարչության անցած ուղին և այն բարձրացնում իր ժամանակի համար աննախադեպ

---

[246] «Հայ արվեստի պատմություն», էջ 200-203:

[247] Տե՛ս «Հայկական մանրանկարչություն», Երևան, 1967, էջ 205, Լ. Դուռնովոյի առաջաբանը:

[248] Նույն տեղում, էջ 206:

[249] И. Р. Дрампян, Торос Рослин, Ереван, 2000, стр. 264.

բարձր մակարդակի: Ռուլինից հետո նրա ազդեցությունն իշխում էր հետագա արվեստագետների շրջանում, սակայն նրա «նուրբ» դասական ոճը վերածում է ավելի դրամատիկական ոճի, կերպարները դառնում են ավելի եռանդուն, հուզական: Արքունական ձեռագրերում սովորական է դառնում պայծառ գույներով կենդանիներ, թռչուններ ներկայացնելը: Որոշ ձեռագրեր զարմացնում են զարդերի հարստությամբ և գեղարվեստական միջոցների բազմազանությամբ: Հետռոսլինյան շրջանում տերունական նկարներում աչքի են ընկնում ֆիգուրների անկաշկանդ հաղորդակցությունը, նրանց կեցվածքների և ժեստերի աշխուժությունը[250]:

Հեթում Ա թագավորի կրտսեր եղբայր Հովհաննեսը հիմնել էր վանք, դպրոց, փայլուն գրիչ էր և ուներ շնորհալի աշակերտներ, որոնք նկարազարդել են ձեռագրեր: Դրանցից են Ստեփանոս Վահկացին, Գրիգոր Պիծակը, Բարսեղը, Կոստանդինը, որոնք գործել են XIII դարի երկրորդ կեսին[251]:

Կիլիկիայի հայկական թագավորության մայրամուտի՝ XIV դարի մանրանկարչության վերջին մեծ անհատականությունը Սարգիս Պիծակն է: Նրա անունով մեզ են հասել 30-ից ավելի ձեռագրեր, մեծ մասամբ Ավետարաններ: Նկարազարդել է նաև Աստվածաշունչ մատյաններ, Սաղմոսներ, Շարակնոցներ, Մաշտոցներ: Նրա արվեստը նմանություններ ունի Կապադովկիայի ժայռափոր եկեղեցիների պատկերների հետ, թեպետև Պիծակի արվեստն ավելի միասնական ոճ է ներկայացնում, քան Կապադովկիայի որմնանկարչությունը: Նա Թորոս Տարոնացու հետ հայ առաջին մանրանկարիչներից է, որոնք թողել են իրենց ինքնանկարները և ներկայացրել ժամանակակիցների դիմանկարները: Նրանց շնորհիվ մեզ են հասել Լևոն Ե թագավորի, Հակոբ կաթողիկոսի, Մարիան թագուհու, Եսայի Նչեցու դիմանկարները:

Պիծակի մոտ տարբեր ժամանակների դեպքերը միավորվում են մի նկարում, ինչպես և նույն ժամանակ կատարվող դեպքերը ներկայացվում են տարբեր տեղերում: Նրա արվեստն առանձնանում է ոսկու առատ օգտագործումով, իսկ «Ոսկին

---

[250] «Հայ արվեստի պատմություն», էջ 205-209:
[251] Նույն տեղում, էջ 214:

ատոմածային լույսի նկարչական կերպավորումն է» (Վիգեն Ղազարյան): Պիծակի նկարներն իրենց բովանդակությամբ և պատկերավորման ձևերով մոտեցան ժողովրդին՝ իրենց մեջ առնելով ժողովրդական կենսափիլիսոփայության հզոր ուժը: Նրա ստեղծագործությունները դարձան համաշխարհային ճանաչման արժանացած հայ մանրանկարչության ինքնատիպ մնայուն էջերից[252]: «Սարգիս Պիծակի մանրանկարչությունը,- գրում է Վ. Ղազարյանը,- կատարյալ գարնանային խնդություն է ավետում՝ իր հստակ, զրնգուն, մաքուր երանգաշարով, հակառակ Կիլիկյան պետության անկման դժնդակ ժամանակաշրջանի»[253]:

Ինչպես նշել ենք, հայկական նկարազարդ ձեռագրերի մեծագույն մասը ավետարաններն էին: Քիչ էին ճաշոցները, Շարակնոցները, ճառընտիրները: Ավետարանները՝ որպես պաշտամունքային գրքեր, մեծ նշանակություն ունեին միջնադարում և լայնորեն նկարազարդվում և տարածվում էին ամենուրեք: Ավետարանները պատկերազարդվում էին աշխույժ, բանաստեղծական ոգեկոչող սյուժեներով: Հաճախ ընդարձակում էին մանրանկարների շարքը, նկարազարդում ավելի պակաս նշանակության իրողություններ և դրանց մի մասը տեղավորում լուսանցքներում:

Վաղ շրջանի նկարազարդ հուշարձաններում օգտագործվում էր մագաղաթը (հորթի հղկված, պրկված կաշին), որը թանկ էր և օգտագործվում էր խնայողաբար: Էջմիածնի՝ 989 թվականի, Մուղնու՝ XI դարի նշանավոր ավետարանները գրված էին մագաղաթի վրա: Առաջին հայկական թղթե ձեռագիրը IX դարից է, բայց թուղթը տարածված էր հատկապես Վասպուրականում: Թուղթը լավ էր պատրաստվում, այնքան էր հղկվում, որ մոտենում էր մագաղաթին:

Միջնադարյան նկարիչների մտքի թռիչքը, նրանց սահմանները ընդարձակ էին և միաժամանակ շատ բազմակողմանի: Նրանք պահպանում էին նկարի համաչափությունը, պարզությունը, խուսափում խճողումից: Առատորեն բուսական ձևեր օգտագործելուց զատ, նկարներում տեղադրում էին բազմատեսակ, իրական և առասպելական կենդանիներ: Նկարիչը հաճախ փո-

[252] Տե՛ս Վ. Հ. Ղազարյան, Սարգիս Պիծակ, Երևան, 1980, էջ 111:
[253] Նույն տեղում, էջ 124:

խում է նրանց ձևերը, հարմարեցնում իր մտահղացմանը[254]:

Ի վերջո նկարիչները պատկերում էին իրենց շրջապատի կյանքի ու կենցաղի երևույթները: Որսի թատերական, կրկեսային տեսարան, ինքնանկար, հագուստ, կահկարասի, զանազան իրեր, երաժշտական տարբեր տիպի գործիքներ: Հետևաբար, մանրանկարչությունն արվեստի կարևոր ոլորտ լինելուց բացի, տվյալ դարաշրջանի համար պատմաազգագրական հարուստ նյութ մատակարարող անփոխարինելի աղբյուր էր:

Մինչև XI դարը գեղանկարչության մեջ արվեստի շատ մոտիվներ ու սխեմաներ ընդհանուր էին Մերձավոր Արևելքի և ամբողջ Միջերկրականի շուրջը տեղակայված քրիստոնյա երկրների համար: Այդուհանդերձ այդ ընդհանրությունը չէր գերիշխում տեղական գեղարվեստի սեփական ձևեր ստեղծելու վրա: Եվ հետագայում, երբ բյուզանդական արվեստը վերելք ապրեց և հզոր ալիք տվեց դեպի ծայրամասերը, այլևս անզոր էր խեղդել, իրեն ենթարկել Հայաստանի գրքային, ինքնատիպ ու արմատներ գցած արվեստը[255]:

Կիլիկիայի հայկական պետության մեջ XIII դարում, հատկապես երեք գործունյա թագավորների՝ Լևոն Բ-ի, Հեթում Ա-ի և Լևոն Գ-ի օրոք (1187-1289) երկիրը հզորացավ, ստեղծեց իր ինքնատիպ մշակույթը, որը շքեղ արտահայտվեց հատկապես գրքային գեղանկարչության մեջ:

«Հայկական գրքային գեղանկարչության հազարամյա պատմության մեջ,- գրում է Լ. Դուռնովոն,- Կիլիկյան մանրանկարչությունը միանգամայն յուրահատուկ տեղ է գրավում: ՚Միջնադարյան հայկական արվեստի մեջ ոչ մի տեղ և երբեք հնարավոր չէ գտնել այնքան ճոխ դեկորատիվ զարդանկարներ, վառ, բայց միևնույն ժամանակ ներդաշնակ և ազնիվ գույների այնպիսի փայլ, այնպիսի նրբություն և վարպետություն, մարդկային մարմինների ճկունության պատկերման այնպիսի կատարյալ տիրապետում և, ընդհանրապես, ձեռագրերի այնպիսի շքեղություն, ինչպիսիք առկա են Կիլիկիայում XII-XIII դարերում»[256]:

---

[254] «Հայկական մանրանկարչություն», Լ. Դուռնովոյի նշված առաջաբանը, էջ 11:
[255] Նույն տեղում, էջ 12:
[256] Նույն տեղում, էջ 17:

Կիլիկիայում ձեռագրերը ստեղծվել են վանքերում, բայց ոչ այնքան հոգևորականների համար, որքան արքաների, իշխաննե-րի: Այդ մանրանկարների մեջ ներթափանցել են պալատական շրջանների կենցաղը, զբաղմունքները և զվարճալիքներն արտա-հայտող գծեր: Կիլիկիայում ավարտին է հասնում Հայաստանում սկսված ձեռագրերի ձևավորման գործընթացը: Միասնություն է ստեղծվում խորանի, լուսանցազարդի և գլխագրի միջև: Խորան-ները հարստանում են բուսական, որսի, կենդանիների և թռչուն-ների կերպարներով[257]: Կիլիկյան գեղանկարչության ամենամեծ նվաճումը վերաբերմունքն է դեպի մարդը, նրա մեջ տեսնելու մարդու անհատականությունը (Թ. Ռոսլին): Հայկական մանրան-կարչության ընդհանուր բնութագիրը հիմնավոր և ընդգրկուն է ներկայացրել անվանի արվեստագետը՝ Լ. Դուռնովոն:

«Հայկական ձեռագրական գեղանկարչությունն իր բացա-ռիկ ինքնատիպությամբ և ստեղծագործական ներշնչվածութ-յամբ, կոմպոզիցիոն և զարդանկարչական հորինվածքների գե-ղեցկությամբ ու համաչափությամբ, գույների մաքրությամբ և ներդաշնակությամբ, ինչպես նաև կատարման փայլուն վարպե-տությամբ իր ուրույն տեղն ունի գեղարվեստի համաշխարհային գանձարանում»[258]:

* * *

Կերպարվեստի մյուս ճյուղը՝ որմնանկարչությունը, թեև չի ունեցել մանրանկարչության տարածվածությունը, չի հասել նրա բարձունքներին, բայց թողել է ուշադրության արժանի նմուշներ:

Որմնանկարչության՝ X դարի գործերից նշանավոր են Սյու-նիքի և Վասպուրականի մի շարք հուշարձաններ:

Ստեփանոս Օրբելյանը պատմում է Տաթևի Պողոս-Պետրոս եկեղեցու նկարազարդման (հիմնվել է 906-ին, նկարազարդվել՝ 930-ին) մասին: Սյունյաց գահերեց իշխան Սմբատի խնդրանքով կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցին Հակոբին ուղար-կում է Սյունիք որպես առաջնորդ եպիսկոպոս, որը շինարարա-

---

[257] Խորանների մասին տե՛ս Վ. Հ. Ղազարյանի «Մեկնութիւնք խորանաց», Ս. Էջ-միածին, 2004 թ., հիմնավոր ուսումնասիրությունը:
[258] Նույն տեղում, էջ 18:

կան մեծ գործունեություն է ծավալում: Մասնավորապես նա ֆրանկների երկրից (եվրոպայից) հրավիրում է մասնագետներ, որոնք հայ վարպետների հետ համատարած նկարազարդել են եկեղեցին: Ս. Տեր-Ներսիսյանի կարծիքով այդ վարպետների կատարած գործերը բարձրարվեստ են և շատ ինքնատիպ: Նույն Սմբատ իշխանի կինը՝ տիկին Սոփան, բերել է տալիս վարպետներ և նրբակերտ հորինվածքով զարդարում Գնդեվանքի առաստաղն ու պատերը[259]:

Վասպուրականում Աղթամարի որմնանկարներն արվեստասեր հասարակությանն առավել հայտնի դարձան 1960-ական թվականներից Ս. Տեր-Ներսիսյանի կատարած ուսումնասիրությունների շնորհիվ: Մեծանուն արվեստագետը ցույց տվեց, որ եկեղեցու դրսի կողմի, ճակատների հարդարանքները և ներսի որմնանկարները կատարվել են միաժամանակ և ունեն թեմատիկ ընդհանրություններ: Որմնանկարները նվիրված են դավանանքի հարցերի՝ Քրիստոսի օծում, երկրորդ հայտնություն, Ավետում, Ծնունդ և այլն: Ուշագրավ են Ոչտունիք գավառի Ս. Յակոբ եկեղեցու ծիսադավանաբանական թեմաները: Ստեղծված կերպարները շատ նման են Վասպուրականի՝ XIV-XV դդ. մանրանկարչությանը[260]:

Ն. Մառի պեղումների ժամանակ Անիում հայտնաբերվեցին որմնանկարների մնացորդներ, որը նա Զաքարյանների շրջանի հայ քաղկեդոնականների գործ է համարում: Այդ շրջանում Անիի Մայր տաճարը, վանքերը ծածկվում են որմնանկարներով:

Որմնանկարներով հարուստ է Տիգրան Յոնենցի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին: Եկեղեցում որմնանկարները ներկայացնում են 18 տեսարան՝ Գրիգոր Լուսավորչի չարչարանքները, Յռիփսիմեի և Գայանեի նահատակությունը: Շատ թեմաներ նվիրված են Յայաստանում քրիստոնեության դարձին՝ Գրիգորին Խոր Վիրապ՝ օձերի և կարիճների մեջ նետելը, նրա տանջանքները, ապա չվաններով նրան վիրապից հանելը, Գրիգորի և Տրդատի՝ Բագավանում հանդիպելը, ինչպես նաև գլխավոր տոները և

---

259 «Յայ արվեստի պատմություն», էջ 154-155:
260 Նույն տեղում, էջ 160-162:

այլն[261]:

Որմնանկարներով հարուստ է Ախթալայի Աստվածամոր եկեղեցին, որը կառուցել է Կյուրիկե Գ թագավորի դուստր Մարիամը: Չաջորդ վանքը, որտեղ պահպանվել են որմնանկարներ, Քոբայրինն է: Այդտեղ նշմարվում է բյուզանդական, թերևս վրացական ազդեցություն:

Արցախ-Ուտիքում Խաչեն գավառի կրոնամշակութային կենտրոն Դադի վանքը և Կիրանց եկեղեցին ունեն որմնանկարներ[262]:

Չայաստանում որմնանկարչությունը լայն տարածում չգտավ՝ չնայած եկեղեցիների ու վանքերի առատությանը:

Որմնանկարչությունը տարածված էր Եվրոպայի երկրներում և այլուր: Այդ երկրներում հոգևոր կառույցների պատերը սվաղվում ու նկարազարդվում էին: Չայաստանում, տեղի բնական պայմաններից ելնելով, տարածված էր հոգևոր կառույցների քարակոփ ու քանդակազարդ ոճը:

## 3. ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Չայաստանում, ի տարբերություն սլավոնական և որոշ այլ երկրների, ճարտարապետությունը տակավին V-VII դարերից ուներ մեծ ու հարուստ ժառանգություն: Վաղ միջնադարում ստեղծվել էին զուսպ, պարզ ու մոնումենտալ ճարտարապետական կոթողներ: Անկախության շրջանում մշակույթի այս ճյուղը բուռն զարգացում ապրեց, որն իր գեղարվեստական սկզբունքներով ելնում էր V-VII դարերում մշակված դասական ճարտարապետությունից[263]:

Արվեստի այս ճյուղի առաջադիմության մյուս, թերևս ավելի զորեղ գործոնը տնտեսությունն է, որի հետ ճարտարապետու-

---

[261] Նույն տեղում, էջ 156-157:
[262] Նույն տեղում, էջ 156-159, 163:
[263] Տե՛ս А. Л. Якобсон, закономерности в развитии средневековой архитектуры IX-XV вв. (Византия, Греция, южнославянские страны, Русь, Закавказье), Ленинград, 1987, стр. 154-155.

թյունը կապված է անմիջականորեն: Այդ ակնառու է դառնում, երբ համեմատում ենք արաբական տիրապետության ամուլ ժամանակաշրջանը նրան ուղղակի հաջորդող Բագրատունիների դարաշրջանի հետ, երբ Հայաստանի տնտեսական կյանքի բարգավաճումը զուգակցվեց ճարտարապետության բուռն վերելքի հետ:

Տնտեսության առաջընթացը, ինչպես նշել ենք իր տեղում, կատարվում էր վերափոխումների եղանակով: Մի կողմից՝ ձևավորվեցին ավատատիրական խոշոր հողատիրական տնտեսություններ, կալվածքներ: Մյուս կողմից՝ արհեստների և առևտրի, հատկապես միջազգային առևտրի ծավալումը հանգեցրեց քաղաքների առաջացմանն ու զարգացմանը: Խոշոր կալվածատեր իշխանները և մանավանդ քաղաքաբնակ առևտրաարհեստավորական նոր ձևավորվող շերտերն իրենց պահանջների ոգով ազդեցություն էին ունենում կյանքի և կենցաղի բոլոր բնագավառների, այդ թվում և ճարտարապետության վրա:

Այս պատմափուլում նախկին ճարտարապետական ոճերը կրկնելով հեռանում էին հուշարձանների խիստ զուսպ ոճից և մեծ մասամբ դեկորատիվ եղանակով հարստացնում էին կառուցվածքը: Հիմնականում շենքի ճակատային մասը դեկորատիվ ձևերով հարդարելով՝ ճարտարապետները մեծացնում էին կառույցի արտահայտչականությունը: Դեկորատիվ հարդարանքը Հայաստանում մեծ նշանակություն է ձեռք բերում և դառնում ճարտարապետական նոր մոտեցման սկզբունք: Դրա վառ օրինակն Աղթամար կղզու Ս. Խաչ եկեղեցին է, հարուստ հիմնականում աշխարհիկ թեմատիկայի հարթաքանդակներով, որոնք հարստացնում են կառույցի ճարտարապետական դրսևորումը:

Այդ երևույթը նկատվում էր Բյուզանդիայում և Հին Ռուսիայում: Դա ճարտարապետության զարգացման օրինաչափ փուլ էր: Ճարտարապետական այդ նոր ոճը հաջորդ փուլում՝ XII-XIII դարերում, ավելի է արմատավորվում, ծաղկում ապրում[264]:

Քաղաքների ու քաղաքային կյանքի մասին կարելի է գաղափար կազմել Անի քաղաքի օրինակով, որը, ամենանշանա-

[264] Նույն տեղում, էջ 158-159:

վորն ու զարգացածը լինելուց զատ, լավ ուսումնասիրված է, ինչպես նշել ենք, ակադեմիկոս Ն. Մառի և Թ. Թորամանյանի կողմից:

Անին գտնվում է Ախուրյան գետի և նրա վտակի միախառնումով ստացվող բնական պաշտպանվածություն ունեցող եռանկյունաձև հրվանդանի վրա: Վաղ միջնադարում Անիի ամրոցը պատկանում էր Կամսարական նախարարական տանը, իսկ VIII դարի վերջին անցավ Բագրատունիների տիրապետության տակ: X դարում այն արդեն գյուղաքաղաք էր իր բազմաթիվ արհեստանոց-խանութներով: Բնակավայրի վերակառուցման մեջ վճռական էր 961 թվականը, երբ Աշոտ Գ Ողորմած թագավորը մայրաքաղաքը Կարսից տեղափոխեց Անի: Անկախ Հայաստանի մայրաքաղաքը հանգուցավորում էր երկրի քաղաքական, տնտեսական, մշակութային ու հոգևոր-եկեղեցական կյանքը:

Օգտագործելով բնական պաշտպանական հնարավորությունները՝ Աշոտ Գ-ն 963-964 թթ. պարսպապատեց «հին քաղաքի» 7 հ. տարածքը, իսկ Սմբատ Բ Տիեզերակալ թագավորը 989թ. ավելի մեծ տարածքով՝ 2,5 կիլոմետր ձգվող նոր պարսպաշերտով, ամրացրեց քաղաքը[265]: Պարսպի խոցելի մասում կառուցվել էր ջրով լցվող խրամատ, որն ուներ 500 մետր երկարություն:

Քաղաքի պարիսպներն ունեին աշտարակներ և բազմաթիվ բուրգեր, որոնց մեջ կային մատուռներ: Անին համարվել է «հազար ու մեկ եկեղեցիների» քաղաք: Քաղաքն ուներ բարեկարգ փողոցներ, սալահատակված մայթեր, հյուրանոցներ, ծիթհաններ, ջրաղացներ, շուկաներ, արհեստավորական շարքեր: Անին XI դարի առաջին կեսին դարձել էր երկրի ամենանշանավոր, իսկ Մերձավոր Արևելքի նշանավոր քաղաքներից մեկը[266]:

Սելջուկյան տիրապետության օրոք դանդաղեց Անիի բարեկարգումը, ավելի ճիշտ անկում ապրեց, սակայն XIII դարի առաջին տասնամյակներին՝ Զաքարյանների տիրապետության ժամանակ, քաղաքը նոր վերածնունդ ունեցավ: Միջնադարյան

[265] Տե՛ս Մուրադ Հասրաթյան, Անիի ճարտարապետությունը (Անին միջնադարյան Հայաստանի քաղաքական և քաղաքակրթական կենտրոն, զեկուցումների ժողովածու), Երևան, 2012, էջ 32:
[266] Նույն տեղում, էջ 34-35:

Հայաստանի մայրաքաղաքը նշանավոր է եղել հոգևոր և աշխարհիկ շինություններով:

Աշոտ Գ թագավորն Անին մայրաքաղաք դարձնելուց հետո կառուցեց Կաթողիկե տաճարը: Քաղաքի միջնաբերդում Բագրատունիները մի շարք եկեղեցիներ կառուցեցին: Տպավորիչ հուշարձան է Աբուղամրեց Ս. Գրիգոր եկեղեցին, որը 980-982 թթ. կառուցել է իշխան Վահրամ Պահլավունին: XI դարի սկզբներին կառուցվեց Ս. Առաքելոց եկեղեցին, որը քառակուսի հատակագծով կենտրոնագմբեթ կառույց է, որի ծածկը իրականացվել է խաչվող կամարներով: Եկեղեցու գավիթը քաղաքային իշխանությունների համար ծառայել է որպես հավաքատեղի:

Անիի ճարտարապետական հուշարձաններում հույժ կարևոր են նշանավոր ճարտարապետ Տրդատի կառուցած կոթողային շենքերը: Նրա առաջին գործերից է Արգինայի Կաթողիկեն: Տրդատի գլուխգործոցներից է Անիի Մայր տաճարը, որի շինարարությունն ընդհատվեց, քանի որ երկրաշարժի հետևանքով կործանվել էր համաշխարհային ճարտարապետության գլուխգործոցներից մեկի՝ Սուրբ Սոֆիայի տաճարի գմբեթը: Դրա կառուցումն իրականացրեց Տրդատը և մեծ հեղինակություն ձեռք բերելով՝ վերադարձավ հայրենիք և ավարտեց Մայր տաճարի շինարարությունը: Շեղվելով վաղ միջնադարում ընդունված կարգից՝ նա գմբեթը տեղադրեց շենքի կենտրոնում, որով նորովի վերափոխեց շենքի կառուցումը, նրա ինտերիերի և արտաքին ճակատների հարդարանքը: Մայր տաճարում կատարված նորամուծությունները երկու դար հետո դարձան գոթական ճարտարապետության բնորոշ գծերը[267]:

Հայ ճարտարապետության պատմության անվանի մասնագետ Մ. Հասրաթյանն իրավամբ գրում է. «Իր առանձնահատկությունների, կառուցվածքային կատարելության և գեղաշուք հարդարանքի շնորհիվ Անիի Մայր տաճարը համարվում է համաշխարհային ճարտարապետության լավագույն ստեղծագործություններից մեկը»[268]:

Գագիկ Ա թագավորը հանձնարարեց Տրդատին Անիում կա-

[267] Նույն տեղում, էջ 38-39:
[268] Նույն տեղում, էջ 39:

ռուցել Զվարթնոցի տաճարի կրկնօրինակը: Նոր տաճարը կառուցվեց XI դարի առաջին տասնամյակում, սակայն այն ոչ թե ուղղակի, մեխանիկորեն կրկնեց Զվարթնոցին, այլ ժամանակի պահանջների ողով զգալի վերափոխումների ենթարկվեց: Պատերի նիստերն ավելացվեցին, վերամշակվեց հարդարանքը, հարստացվեց բուսական մոտիվներով: Գագկաշեն եկեղեցու ուղղածիգ վերասլացությունն ավելի է շեշտվել: Տաճարի պեղումների ժամանակ հայտնաբերվեց Գագիկ Ա Բագրատունու արձանը՝ ամբողջ հասակով կանգնած՝ տաճարի մանրակերտը ձեռքին: Մյուս եկեղեցիներում կտիտորները պատկերված էին հարթաքանդակի ձևով, իսկ Գագիկ Ա-ի արձանը բոլորաքանդակ էր[269]:

Հայ ճարտարապետության Անիի դպրոցում զարգացավ գմբեթավոր դահլիճի թեման: Անիում Տրդատի երրորդ ստեղծագործությունը Ս. Փրկչի եկեղեցին է: Տրդատի գործունեությունը նշանավորեց մի ամբողջ փուլ միջնադարյան հայ ճարտարապետության մեջ:

Անին ճարտարապետական իր համալիր կառուցվածքով նշանավոր էր ոչ միայն հայկական, այլև Արևելքի միջնադարյան ճարտարապետության մեջ:

Բագրատունյաց Հայաստանի քաղաքական մասնատվածությունը նպաստում էր ճարտարապետական առանձին դպրոցների առաջացմանը: Թեպետև այս շրջանի ճարտարապետությունը խարսխված էր վաղ միջնադարի նվաճումների վրա, սակայն ժամանակի հասունացած պահանջով նոր ձևերի որոնումների ընթացքում երկրի տարբեր շրջաններում առաջանում էին ճարտարապետական արվեստի յուրահատուկ ուղղություններ: Անիի ճարտարապետական ուղղությունից զատ երևան եկան Սյունիքի, Վասպուրականի և այլ դպրոցներ:

Սյունիքում շինարարական կյանքը սկսվել է ավելի վաղ՝ IX դարում: Դարի երկրորդ կեսին կառուցվել են մի շարք պատմամշակութային հուշարձաններ: Սյունիքի հուշարձանները քառախորան և եռախորան կառույցներ են: Սևանի երկու եկեղեցիները՝ Ս. Առաքելոցը և Ս. Աստվածածինը (874 թ.), ունեն ավանդատներ: Կառուցվածքի այդ ձևերը նորություն են, դրանք անհայտ են նա-

---

[269] Նույն տեղում, էջ 40:

խորդ դարաշրջանի ճարտարապետությանը, որը և այդ դպրոցի ավանդն է: Սյունիքում կիրառվել է (IX-XI դդ.) գմբեթավոր դահլիճների հորինվածքը՝ իրենց պատկերաքանդակներով, որոնք կարևոր տեղ են զբաղեցնում հայ ճարտարապետության մեջ[270]:

Վասպուրականի ճարտարապետական դպրոցում հիմնականում կրկնվում էին վաղ միջնադարի ձեռքբերումները, սակայն դրա հետ մեկտեղ հասունանում էր զարգացման նոր որակը: Գագիկ Արծրունու ժամանակ՝ X դարում, անվանի ճարտարապետ Մանվելի կողմից ստեղծվում է ամենանշանավոր ճարտարապետական կոթողներից մեկը՝ Ս. Խաչ եկեղեցին (915-921): Եկեղեցին պատված է պատկերաքանդակներով զարդարված մի քանի գոտիներով: Շատ հարուստ, հաճախ աշխարհիկ սիմվոլիկ թեմաներով, դեկորատիվ հարդարանքներն ուժեղացնում են կառույցի ճարտարապետական արտահայտչականությունը: Դեկորատիվ հարդարանքը X-XI դարերում կարևոր նշանակություն է ստանում և, ինչպես նշեցինք, դառնում է ճարտարապետական նոր մոտեցման սկզբունք[271]:

Տաճարի քանդակազարդ պատին պատկերված է կտիտոր Գագիկ Արծրունու քանդակը Քրիստոսի և հրեշտակների հետ: Վասպուրականի թագավորը ձեռքում պահում է եկեղեցու մանրակերտը: Տաճարի ինտերիերը ծածկված է որմնանկարներով: Յույժ կարևոր է Մանվելի ստեղծած արքայական պալատը, որ կառուցված է երկու զույգ խաչաձևող կամարներով: Այդ միանգամայն նոր երևույթ էր, որը բավականաչափ լայն տարածում գտավ հետագայում[272]:

Տարածում գտավ մեմորիալ ճարտարապետությունը, որի հուշարձաններն աչքի են ընկնում ձևերի բազմազանությամբ: Տաթևի վանքում (906 թ.) և Որոտնավանքում (IX դ.) ստեղծվեցին ճոճվող սյուներ:

IX դարում ստեղծվեց մեմորիալ հուշարձանների մի նոր տիպ՝ խաչքարը: Այն եզակի և էական երևույթ դարձավ միջնադարյան մշակույթում: Խաչքարերի արվեստը սկզբնավորվեց

---

270 Տե՛ս «Հայ արվեստի պատմություն», էջ 90:

271 Տե՛ս А. Якобсон, նշվ. աշխ., էջ 158:

272 Տե՛ս «Հայ արվեստի պատմություն», էջ 93:

շինմակորողներից, բայց աստիճանաբար լայն գործառնություն ունեցավ: Խաչքարերով էին նշանավորում աշխարհիկ և հոգևոր կարևոր կառույցները, երկրի կյանքում կատարվող հիշարժան իրադարձությունները և այլն: Սկզբնական շրջանում խաչքարերն առանձնանում էին զուսպ ու պարզ ձևերով: XI դարում մշակվել էր խաչքարերի ավանդական ձևը, որը պատվանդանի վրա ուղղահայաց կանգնած սալաքար է՝ նուրբ ու ճոխ քանդակազարդերով: Աստիճանաբար խաչքարերը վերածվում են ճարտարապետական կոթողների:

Հայաստանում X-XI դարերում կազմավորվեց շինարարության մի նոր տիպ՝ գավիթը, որն ուներ մի քանի նշանակություն: Այն ծառայում էր տոն օրերին եկեղեցում չտեղավորված ծխականների հավաքավայր, ժողովարան և գլխավորապես տապանատուն, քանի որ հոգևոր կանոնների համաձայն՝ արգելվում էր թաղում կատարել եկեղեցու ներսում: Առաջին գավիթները երևան եկան· Սյունիքում, հետագա դարերում դրանք լայն տարածում գտան[273]:

Ճարտարապետության մեջ սկսվեցին մշակվել շենքերի նոր տիպեր՝ մատենադարաններ, բարձրագույն դպրոցներ, իջևաններ, վանական համալիրներ: Դրանք կատարելագործվեցին ու լայն տարածում գտան հաջորդ դարերում:

Հայ ճարտարապետության երկրորդ վերելքը տեղի ունեցավ XII-XIV դարերում, մասնավորապես XIII դարում: Հայաստանի քաղաքների մեջ ճարտարապետական, քաղաքաշինական առումով դարձյալ առանձնանում էր Անին: Նախկինի նման քաղաքը ներքաշում էր երկրի լավագույն ստեղծագործական ուժերին: Ճարտարապետական նոր ոճով կառուցվեցին պալատներ, հյուրանոցներ, եկեղեցիներ:

Զաքարյանների պալատն իր շքեղ մուտքով, քարե խճանկարով պատած հատակը աչքի էին ընկնում իրենց գրավիչ տեսքով: Տարատեսակ քարերից կազմված այդ խճանկարի արվեստը XIII-XIV դարերում տարածվեց նաև եկեղեցական շինություններում: Դեկորատիվ հարդարանքի այդ ձևը, ինչպես նշում է Ս. Յակոբսոնը, փոխառան Հայաստանից և լայնորեն օգտագործեցին

[273] Տե՛ս նույն տեղում, էջ 94:

սելջուկյան և պարսկական արվեստում[274]: Տիգրան Հոնենցի Ս. Գրիգոր եկեղեցին (1215 թ.) «առանձնանում է այդ ժամանակաշրջանի,- նշում է Ս. Հասրաթյանը,- հայկական հուշարձաններից իր արտակարգ ճոխ ու բարձրարվեստ և՛ արտաքին, և՛ ներքին հարդարանքով»: Եվ ապա «բարձրարվեստ քանդակների ու որմնանկարների շնորհիվ Տիգրան Հոնենցի եկեղեցին XIII դ. հայ ճարտարապետության մեջ արվեստների համադրության գլուխգործոցներից է»[275]: Այն խաչաձև գմբեթավոր եկեղեցի է: Ն. Մառը գտնում է, որ եկեղեցու զարդաքանդակները պատկերում են տվյալ ժամանակաշրջանի կենդանական և բուսական աշխարհը:

Աշխարհիկ կյանքի և մտածողության զարգացումը, որը դրսևորվում էր կյանքի բոլոր բնագավառներում, նոր նախադրյալներ էր ստեղծում ճարտարապետության, այդ թվում՝ առաջին հերթին քանդակագործության մեջ[276]: Այդուհանդերձ ճարտարապետության առաջընթացն արտահայտվեց ոչ միայն եկեղեցիների ճակատները զարդաքանդակներով հարդարելու մեջ, որքան ճարտարապետական-ստեղծագործական նոր ուղղությունների առաջացումով, առաջին հերթին քաղաքացիական, աշխարհիկ ճարտարապետության առաջընթացով: Հասարակական կյանքի շատ երևույթների աշխարհականացումը զորեղացել էր ոչ միայն քաղաքներում, որտեղ կառուցում էին պալատներ, բարվանսարա-հյուրանոցներ, դպրոցներ, գրապահոցներ, արտադրական ձեռնարկություններ (հնձան, ձիթհան), այլև վանքերում, որտեղ կառուցում էին գավիթներ, սեղանատներ, մատենադարաններ և այլն: Առաջադիմությունը կատարվում էր կյանքի նոր խնդիրների, նոր պահանջների առաջացման հետևանքով: Այդ ինքնին նոր հարցեր էր դնում ճարտարապետների առջև, որ պահանջում էր նոր լուծումներ տալ: Իսկ դրանց ստեղծագործական, համարձակ լուծումները հանգեցնում էին այդ դարաշրջանի ճարտարապետության վերելքին:

---

274 Տե՛ս А. Якобсон, նշվ. աշխ., էջ 162:
275 Տե՛ս Ս. Հասրաթյան, նշվ. աշխ., էջ 42, 43:
276 Տե՛ս Ս. Մնացականյան, Հայկական աշխարհիկ պատկերաքանդակը IX-XIV դդ., Երևան, 1976:

Այսպես օրինակ՝ միջազգային-տարանցիկ առևտրի ծավալումը պահանջում էր առևտրական ուղիները կարգավորել, գետերի վրա անցումներ ունենալ: Կառուցվում են քարե կամուրջներ, որոնցից Անի քաղաքի մոտակայքի կամուրջներից մեկն ուներ 30 մետր թռիչք, իսկ Սանահինի կամուրջը (1192 թ.) իր հորինվածքով ճարտարապետական հոյակապ հուշարձան է: Առևտրական մայրուղիներում կառուցում են իջևանատներ՝ քանդակազարդ մուտքերով և վաճառականներին գրավող հրապուրիչ ընդհանուր տեսքով[277]:

Եկեղեցական XII-XIV դարերի շինարարության մեջ զգալի էր աշխարհիկ ճարտարապետության ազդեցությունն իր գեղարվեստական ձևավորումով: Նորավանքի Բուրթելաշեն, Եղվարդի Ս. Աստվածածին և մի շարք այլ եկեղեցիներ աչքի են ընկնում ճոխ հարդարանքով: Նորավանքի քանդակազարդ եկեղեցին, ինչպես նաև Արենիի եկեղեցին նշանավոր ճարտարապետ, քանդակագործ Մոմիկի ստեղծագործություններն են[278]:

Այս դարաշրջանի ճարտարապետությանը հատուկ էր մի բնորոշ գիծ՝ ուժեղացնել մոնումենտալ ճարտարապետության ազդեցությունը: Մոնումենտալ շինությունների ծավալն էր մեծանում, որոնք տեղադրվում էին հրապարակներում և տոն տվող դեր էին ստանձնում թե՛ քաղաքում և թե՛ վանքերի համալիրներում: Այդ օրինաչափ մի երևույթ էր՝ հատուկ այդ դարաշրջանի ավատատիրական արվեստին՝ Բյուզանդիայում, Հունաստանում, հարավսլավական երկրներում, Ռուսիայում[279]:

Այս դարաշրջանի ճարտարապետության մյուս նշանավոր գործոնը զարդաքանդակներն էին: Գորգի նման զարդարում էին կառույցի ճակատային մասը կամ շենքի ամբողջ արտաքինը: Քանդակազարդումը ճարտարապետների համար դառնում է շենքի ձևավորման գլխավոր հիմնախնդիրներից մեկը: Այդ հիմնահարցը կար նաև X-XI դարերում, սակայն XII-XIII դդ. դրա վրա ավելացավ գեղատեսիլությունը, որը և թափանցեց ճարտարապետության մեջ և դարձավ տարածված ոճ:

---

[277] Տե՛ս «Հայ արվեստի պատմություն», էջ 95:
[278] Նույն տեղում, էջ 98:
[279] Տե՛ս А. Якобсон, նշվ. աշխ., էջ 183:

Ինչպես նշում է Ա. Յակոբսոնը, կառույցի միայն գեղատեսիլ հարդարանքով ու դրա շեշտադրումներով չի նշանավորվել XII-XIV դդ. ճարտարապետության մեջ գեղարվեստական առաջընթացը: Գեղատեսիլ արվեստի թռիչքը զուգակցվել է ճարտարապետության վիթխարի վերելքով, իր նոր ու համարձակ գեղարվեստակառուցողական լուծումներով, որը ծնվել է աշխարհիկ բուռն շինարարությամբ, ինչպես ասենք՝ անսյուն շինարարությունը՝ խաչաձևող կամարներով:

«Սակայն ստեղծագործության այդ երկու ուղղությունները,- գրում է Անատոլի Յակոբսոնը,- չի կարելի դիտել իրարից առանձնացված, քանի որ մեկը մյուսի հետ ձևավորել են միասնական, անբաժանելի համաձուլվածք, որի անունն է «միջնադարյան Հայաստանի մեծ (великое) ճարտարապետություն»: Այդ ճարտարապետությունը մնաց համաշխարհային մշակույթի չգերազանցված երևույթ: Բայց այն առանձնահատուկ ու ինքնատիպ է և պարզ արտահայտել է, ինչպես մենք ջանացինք ցույց տալ, ընդհանուր ուղղվածությունն ու միտումները, ընդհանուր օրինաչափությունը միջնադարյան ճարտարապետության զարգացման»[280]:

Այսպես է բնութագրում զարգացած միջնադարի հայ ճարտարապետությունը համաշխարհային ճարտարապետության խոշոր մասնագետը, որն այդ նույն աշխատության մեջ հիմնավոր քննարկել է ինչպես Բյուզանդիայի, Հունաստանի, Սերբիայի, Բուլղարիայի, Ռուսաստանի, Վրաստանի, այնպես էլ Հայաստանի ճարտարապետությունն ու դրանց առանձնահատկությունները: Սակայն ոչ մի երկրի ճարտարապետություն նրա կողմից նման գնահատականի չի արժանացել:

Խոշոր վանքերում կառուցում էին բազմահարկ զանգակատներ, որոնք գերիշխում էին ամբողջ համալիրում: Սանահինում և Հաղպատում եկեղեցիներից անջատ կառուցել էին զանգակատներ, որոնք ինքնաբավ ճարտարապետական միավորներ էին:

Վանական համալիրները XII-XIV դարերի ճարտարապետության մեջ կարևոր տեղ են գրավում: Այս շրջանում մի կողմից

[280] А. Л. Якобсон, նշվ. աշխ., էջ 187:

ընդլայնվում են X-XI դարերի կառույցները, մյուս կողմից հիմնվում են նորերը: Ճարտարապետական գլուխգործոցներից է Սանահինի վանքի համալիրը, որի մի մասը կառուցվել էր X-XI դդ.: Շուրջ երեք հարյուր տարում անընդհատ նոր կառույցներով համալիրը լրացվել, ամբողջացվել է: Սակայն վանքի բոլոր կառույցներն իրար հետ կապված են ներդաշնակորեն՝ կազմելով միասնական ճարտարապետական համալիր: Հաղպատի վանքի համալիրն առանձին ինքնատիպ շինություններից է բաղկացած, որոնք կառուցվել են XII-XIV դդ., որոնց թվում՝ Ս. Նշանի գավիթը, զանգակատունը, սեղանատունը և այլ շինություններ:

Գեղարդի համալիրը կազմված է վերգետնյա և քարանձավային շինություններից: Վերերկրյա են գլխավոր եկեղեցին (1215 թ.), գավիթը և բնակելի շենքերը: Ժայռի ներսում փորված են երկու եկեղեցիներ և ժամատուն: Գետնափոր բոլոր կառույցները կրկնում են վերերկրյա կառույցների ճարտարապետական ձևերը, որով ամբողջ համալիրը դառնում է միասնական[281]:

Գանձասարի վանքի տաճարը և գավիթը մարմնավորել են հայ միջնադարյան արվեստի լավագույն ձեռքբերումները: Ա. Յակոբսոնը Գանձասարն անվանել է «XIII դարի հայ ճարտարապետության հանրագիտարան»[282]:

Վանական շատ համալիրներում դրսևորվել է միջնադարյան հայ ճարտարապետության բնորոշ գծերից մեկը՝ ներդաշնակությունը բնության հետ: Տաթևի, Հաղարծինի, Խծկոնքի, Քոբայրի եկեղեցիները, Նորավանքը, Մակարավանքը կառուցվել են այնպիսի տեղում և այնպես, որ լանդշաֆտը համակառույցի համար կարծես հիմնական ֆոն է ծառայում, իսկ ճարտարապետական հուշարձանները լրացնում, հարստացնում են բնությունը: Այդ ներդաշնակությունն արտահայտվել է նաև այլ կարգի հուշարձանների շինարարությունում: Կիլիկիայում, որը հարուստ է պաշտպանական ամրոցներով ու բերդերով, դրանք կառուցվել են չմշակված վիթխարի քարերով և այնպիսի բարձունքներում, որ ներդաշնակում են շրջակա ժայռերին, բնությանը:

---

[281] Տե՛ս «Հայ արվեստի պատմություն», էջ 99:
[282] Ա. Յակոբսոն, Գանձասար, Երևան, 1987, էջ 14:

# 4. ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ

Կիրառական արվեստի միջոցով ժողովուրդն արտահայտում է իր կոլեկտիվ ստեղծագործության արդյունքը, աշխարհըմբռնումը, գեղարվեստի ճաշակը: Ժողովրդի կյանքի, կենցաղի հետ է կապվում իրերի գեղարվեստական ձևավորումը: Կիրառական արվեստի բարձրարժեք նմուշները պահպանում են ժողովրդի մշակութային ժառանգությունը: Արհեստների բուռն զարգացումը նպաստավոր պայմաններ ստեղծեց կիրառական արվեստի բազմատեսակ հուշարձանների առաջացման համար:

Օտարերկրացիների կողմից հարյուրամյակների ընթացքում կատարված ասպատակությունների, կողոպուտի ժամանակ առաջին հերթին տուժել են նյութական արժեք ներկայացնող կիրառական ստեղծագործությունները: Պահպանված թեկուզ շատ փոքրաքանակ նմուշներն իրական պատկերացում են տալիս արվեստի այս ոլորտի մասին:

Մեզ են հասել փայտի փորագրության, երկաթի, խեցեղենի մշակման և գործվածքի առանձին նմուշներ, որոնց միջոցով գաղափար ենք կազմում բարձր կատարելության հասած ժողովրդական արվեստի մասին:

Փայտի փորագրության՝ X դարի լավագույն գործ է Հավուց թառի «Ամենափրկիչը», որտեղ պատկերված է Քրիստոսին խաչից իջեցնելու տեսարանը: XII դարի բացառիկ կարևոր ստեղծագործություններից է Մշո Առաքելոց վանքի դուռը: Դուռը երկփեղկ է և վարպետորեն զարդարված: Առավել կարևոր է դռան շրջանակը (պարակալը), որը զարդարված է բուսական, կենդանական, մարդկային բազմապիսի պատկերների փորագրությամբ: Ուշագրավ են Սևանի Առաքելոց վանքի, Տաթևի վանքի քանդակազարդ դռները:

Փայտի գեղարվեստական մշակման բարձրարվեստ նմուշներ են Անիի պեղումների ժամանակ հայտնաբերված քանդակազարդ գրակալները:

Կիրառական արվեստի մեջ նշանակալի են մետաղից պատրաստված իրերը: Մետաղյա X-XI դարերի գեղարվեստական իրերի մեջ ինքնատիպ գործ է Աշոտ Երկաթին վերագրվող

երկաթ խաչը: Այն զարդարված էր թանկարժեք քարերով և որպես ռազմական զինանշան՝ պատերազմի ժամանակ տարվել է զորքի առջևից[283]:

Անիում Գագկաշեն եկեղեցու պեղումների ժամանակ գտնվել է պղնձե երկու ջահ: Փոքր ջահն ունեցել է լույսի 17 կետ, իսկ մեծը, որը զարդարված է եղել բազմաթիվ պատկերներով, ունեցել է լույսի 117 կետ: Ջահը վառվելու ժամանակ շքեղ տեսարան էր ստեղծում գույնզգույն ապակուց պատրաստված 117 թասերով[284]:

Արմատացած սովորություն էր դարձել եկեղեցիներին և վանքերին նվիրել ոսկյա կամ արծաթե խաչեր, մասունքի տուփեր և այլ առարկաներ: Բազմաթիվ սրբապատկերներով զարդարված արծաթե մի մասնատուփ պահպանված է էջմիածնի վանքի թանգարանում: Արվեստի նշանավոր գործեր են Դվինում գտնված ոսկյա մանյակը և ապարանջանները[285]:

Մետաղի գեղարվեստական մշակումը XII-XIII դարերում ավելի է կատարելագործվում, լայն կիրառում են գտնում ոսկեզօծումը, ոսկեգույն համաձուլվածքների ստացումը: Հաղարծինի վիթխարի կաթսան ունի փորագրված արձանագրություն և պատրաստման թվականը (1232): Նրա չորս կանթերն առյուծների ամբողջական արձանիկներ են: Գեղարվեստական մեծ արժեք է ներկայացնում «Խոտակերաց Սուրբ Նշանը» ոսկեզօծ արծաթյա պահարանն իր տուփով (1300 թ.): Երբ պահարանի փեղկերը բացվում են, վերևում բազմած է Հիսուսը՝ շրջապատված մարդու և կենդանիների գլուխներով: Բացված դռների վրա դրվագված են Միքայել և Գաբրիել հրեշտակապետերը՝ գլուխները թեքած դեպի ականազարդ խաչը: Երբ փակվում են պահարանի փեղկերը, նրանց վրա տեսնում ենք Գրիգոր Լուսավորչի և Հովհաննես Մկրտչի պատկերները: Ներքևի մասում դրվագված են Պետրոս և Պողոս առաքյալների կիսանդրիները: Պահարանը թե՛ փակ, թե՛

---

[283] Տե՛ս Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դդ., հ. 1, էջ 137:

[284] Տե՛ս И. Орбели, Каталог антиского музея древности выпуск I, С. Петербург, 1910, стр. 34-43.

[285] Տե՛ս Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 172-178:

բացված վիճակում զարմացնում է մակերեսի մշակման նրբությամբ, զարդերի բազմազանությամբ և ներդաշնակությամբ:

Կիլիկիայի արծաթագործ-ոսկերիչների նշանավոր ստեղծագործություններից է Հեթում Բ թագավորի պահարանը (1293), որը պատրաստվել է Սկևռայի վանքում: Բացված վիճակում ձախ թևի վրա ներկայացված են Գաբրիելը, իսկ աջ փեղկի կենտրոնում՝ Մարիամը, ապա Պողոս և Պետրոս առաքյալների կիսանդրիները: Բոլոր պատկերները մշակված են գեղագիտական բարձր ճաշակով ու ներդաշնակությամբ:

Ժողովրդի ստեղծագործական միտքը լավագույն արդյունքների է հասել նաև գործվածքների և գորգերի պատրաստման մեջ: Հասուն միջնադարից քիչ գորգեր են պահպանվել, մեզ են հասել ընդամենը մի քանի նմուշ: Վիեննայում է պահվում մի գորգ, որն ունի 1209 թ. հայերեն արձանագրություն, և որն աչքի է ընկնում զարդանկարների հարստությամբ, ներկերի և գործվածքի բարձր որակով: Վենետիկցի XIII դարի ճանապարհորդ Մարկո Պոլոն, որն անցել է Կիլիկիայով, հիշատակում է, որ Սեբաստիա, Կեսարիա քաղաքներում հայերը և հույները գործում էին աշխարհի ամենալավ գորգերը:

Այս դարաշրջանում գործվածքները, մանավանդ ձեռագրերի կազմերի աստառները դրոշմելու միջոցով, զարդարվում էին մարդու, կենդանիների, կրոնական թեմաներով: Գետիկի նորակառույց վանքի համար Արզու Խաթունը այծի մազից պատրաստում է գեղեցիկ մի վարագույր, որի վրա վառ ներկերի միջոցով պատկերված են եղել տարբեր տեսարաններ Սուրբ գրքից[286]:

Հայ կինը գեղարվեստական նուրբ ու բարձր ճաշակով զբաղվել է ասեղնագործությամբ: Պեղումների միջոցով Անի քաղաքում հայտնաբերվել են փոքրիկ աղջկա մետաքսյա զգեստ, գլխաշոր, ասեղնագործությամբ պատկերված կենդանիներ, իսկ բարձի վրա՝ ճախրող թռչուններ: Բոլորը կատարված են բարձր արվեստով:

Զարգացում ապրեց կիրառական արվեստի հնագույն ճյուղերից խեցեգործությունը: Այն լայն կիրառություն ուներ կենցաղում: Խեցեղենը պատրաստվում էր բազմագույն՝ կարմիր, դեղ-

---

[286] Տես Կիրակոս Գանձակեցի, էջ 215-216:

նավուն, շագանակագույն: Սովորական խեցեղենի գեղարվեստական մշակման այս հին ձևերին ավելացավ դրոշմազարդումը քարե կնիքների միջոցով: Դրոշմազարդ խեցեղենը լայն տարածում գտավ XII-XIV դարերում: Դրոշմազարդվում էին կարմիր ոչ մեծ կարասները, մանավանդ դրանց գոտիները, որոնց վրա դրոշմվում էին կենդանիների, մարդկանց, բուսական պատկերներ:

Գեղարվեստական խեցեգործության մեջ X դարից կյանք մտավ դրա մի նոր ու նշանավոր տեսակը՝ ապակենման շերտով պատված ջնարակած խեցեղենը:

Ջնարակած խեցեղենի մեջ տիրապետող է դառնում տարբեր գույների համադրությամբ գծագիր զարդերի ստեղծումը: Ջնարակած թասերի և ափսեների հատակը, գծանախշից բացի, զարդարում էին նաև մարդկային և կենդանիների պատկերներով: Արտադրության այս եղանակը գերակշռող դարձավ XI-XIII դարերում: Այս դարաշրջանին է վերագրվում ջնարակած հախճապակու արտադրությունը: Դրանց մեջ նշանավոր էին նրբապատ, փորագրված, դիմաքանդակներով հախճապակե թասերը:

Գեղարվեստական ձևավորում ունեցող առարկաներ էին պատրաստում ապակուց: Դրանք զարդարվում էին տարբեր գույներով ու երանգներով, փորագրությամբ: Ապակե զարդերից լայն տարածում էին գտել տարբեր գույների ապարանջանները և ուլունքները[287]:

Այսպիսով, կիրառական արվեստի պահպանված նմուշները վկայում են, որ արվեստի այս ճյուղի ձեռքբերումները համահունչ են մշակույթի մյուս բնագավառների նվաճումներին:

---

[287] Տե՛ս Բ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 256 և հետագա էջերը:

# ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Այժմ փորձենք ընդհանրացնել, որոշ հետևությունների հանգել:

Ամենից էական բնութագրումներից մեկն այն է, որ հասուն միջնադարում հայկական մշակույթը բուռն զարգացում ապրեց իր բոլոր ճյուղերով ու դրսևորումներով: Մշակույթի ընթացքը ոչ միայն նախորդ դարաշրջանից ժառանգություն ստացած ձեռքբերումների սոսկ շարունակությունն էր, այլ նոր բնագծեր նվաճելու աննախադեպ այնպիսի վերելք էր, որի շնորհիվ միջնադարյան հայկական մշակույթը հասավ զարգացման բարձրագույն աստիճանի:

1. Այս պատմաշրջանում ձևավորվեց ժողովրդի համահավաք ստեղծագործական մտքի արգասիքը՝ «Սասունցի Դավիթ» էպոսը: Ի տարբերություն ուրիշ ժողովուրդների դյուցազներգությունների, այն ոչ թե պատմական մի դեպքի կամ իրողության նվիրված ստեղծագործություն է, այլ ժողովրդի ամբողջ պատմության խտացումն է, որում հայ ժողովուրդն արտահայտել է իր դարավոր ձգտումները, մաքառումները, երազանքները: «Սասունցի Դավիթ» դյուցազներգությունը մարմնավորել է համամարդկային ամենաբարձր արժեքները՝ ազատությունը, վեհանձնությունը, աշխատանքի գովքը, ազգային ավանդների պահպանումը, արդարամտությունը, ազնվությունը, ժողովուրդների համերաշխության գաղափարը, կրոնական հանդուրժողականությունը:

Համամարդկային բարձր արժեքների նման լայն ու համակողմանի ընդգրկումը թույլ է տալիս հայկական էպոսը դիտարկել աշխարհի նմանօրինակ ստեղծագործությունների առաջին շարքերում:

2. Հանձին Գրիգոր Նարեկացու հայ պոեզիան այնպիսի վերելք ունեցավ, այնպիսի թռիչք ապրեց, որ միջազգային չափանիշներով ճանաչման ու գնահատման արժանացավ: Հենվելով Նարեկացու ստեղծագործության վրա՝ նրա հետևորդները (Ն. Շնորհալի և ուրիշներ) գրական նոր բնագծեր նվաճեցին:

Գրական կյանքի վերելքը հանգեցրեց միանգամայն նոր ուղղությունների, ժանրերի երևան գալուն: Գրականության հիմնական ժանրերը՝ պոեզիան և արձակը, իրենց իրական բնույթով ձևավորվեցին և հանդես եկան X դարից հետո[288]: Ստեղծվեց առակագրության ժանրը, որը կենդանի ու արտահայտիչ խոսքերով արտահայտում է ժողովրդի նիստուկացը: Հրապարակ եկան հայրենները, որը ժողովրդական մտածողությամբ և խոսակցական լեզվով գուսանաժողովրդական ծագում ունեցող գրական ուրույն մի ժանր է: Առաջացան կաֆաները՝ երգ-բանաստեղծությունները, զրույցները և այլն:

Սիրո, գեղեցիկի հիմնահարցը դառնում է գրականության առաջնային թեմաներից մեկը: Ինչպես նշվեց, Վալերի Բրյուսովը Կոստանդին Երզնկացու՝ գարնան զարթոնքին նվիրված տաղը համարում է գլուխգործոց անգամ նույն դարաշրջանների եվրոպական պոեզիայի համատեքստում:

3. Մեծապես առաջադիմեց կրթության բնագավառը: Հիմնվեցին բարձրագույն դպրոցներ: Ուսուցումը կազմակերպվում էր «յոթ ազատ արվեստների» ձևով, եռյակ և քառյակ ծրագրերով: Լայն տարածում գտած բարձրագույն դպրոցներից մի քանիսը փաստորեն ունեին համալսարանի կարգավիճակ:

4. Պատմագրության մեջ առաջացան նոր ուղղություններ՝ ժամանակագրությունը, ընդհանուր պատմությունը: Ընդարձակվեց պատմագրության աղբյուրագիտական բազան:

5. Հասարակական-քաղաքական միտքն այնքան էր հասունացել, որ խթանում էր գաղափարական կյանքի երևույթները, այդ թվում՝ հայ իրավունքի կոթողային հուշարձանների ստեղծումը: Միայն այս պատմափուլում ծնունդ առան իրավունքի երեք մնայուն գործեր, երբ նախորդ և հետագա դարաշրջաններում՝ վաղ և ուշ միջնադարում, ինչպես և նոր շրջանում հայ իրականության մեջ իրավունքի նման հուշարձաններ չստեղծվեցին:

Գերազանցապես ամուսնաընտանեկան հարաբերություններին և ընտանիքի ամրությանը նվիրված Դավիթ Ալավկա որդու

---

288 Տե՛ս Женя Калантарян, История армянской литературно-теоретической мысли V-XIX веков, Ереван, 2015, стр. 106.

կանոնները իրավական մտքի աշխարհիկ անդրանիկ օրենսգիրքն էր:
Մխիթար Գոշի «Գիրք դատաստանի» օրենսգիրքը հայ իրավունքի ամենանշանավոր հուշարձանն է: Հեղինակը կենտրոնացված պետության ջատագով էր և սահմանում էր դրա պետաիրավական ողջ համակարգը՝ հենվելով առաջին հերթին սովորութային իրավունքի վրա: Սովորույթն ազգային ինքնությունը հատկանշող կարևոր գործոններից է, հետևաբար Գոշի «Դատաստանագիրքը» նաև ազգային ինքնությունը պահպանելու կարևոր կռթող էր:
Մասնագետները այս «Դատաստանագիրքը» դնում են իրավունքի համաշխարհային կոթողների առաջին շարքերում:
Սմբատ Գունդստաբլի «Դատաստանագիրքը» ստեղծվեց Կիլիկիայում և համակարգում էր տեղի հայոց պետության իրավահարաբերությունները:
6. Գիտամշակութային առաջընթացը պահանջ էր առաջադրում ուսումնասիրելու, ճանաչելու բնությունը, բնական երևույթները: Գիտական որոշակի ներդրումներ կատարվեցին կենսաբանության, բժշկագիտության, տիեզերագիտության և այլ բնագավառներում: Գիտական միտքը հասավ նյութի պահպանման օրենքի հայտնագործմանը՝ մարդկային գիտելիքների հավաստիությունը փորձով ստուգելու գաղափարին, երբ եվրոպան այդ գաղափարին հանգեց (Ռոջեր Բեկոն) մեկ ու կես հարյուրամյակ հետո: Բնագիտական – բժշկագիտական ոլորտն իր մակարդակով եվրոպական գիտությանը համաքայլ էր ընթանում:
7. Բնական գիտությունների զարգացումը մեծ տեղաշարժեր կատարեց փիլիսոփայության ոլորտում: Ստեղծվեց բնափիլիսոփայական ուսմունքը: Գիտությունը սկսեց սահմանազատվել հավատից: Փիլիսոփայությունը, առանձնանալով աստվածաբանությունից, գիտության առանձին ճյուղ էր դառնում:
8. Մշակութային կյանքի վերելքն ակնառու դրսևորվեց հատկապես արվեստում:
Կերպարվեստի ոլորտում մանրանկարչությունը, գրքային արվեստն այնքան մեծ ծավալներ ընդունեցին հանձինս Թորոս Ռոսլինի, Սարգիս Պիծակի և ուրիշների, այնպիսի գեղագիտա-

կան քարձունքների հասան, որ արժանացան համաշխարհային ճանաչման:

9. Միջնադարում երաժիշտը համարվում էր փիլիսոփա, հռետոր: Հաճախ բանաստեղծն ու երաժիշտը միահյուսվում, հանդես էին գալիս համատեղ: X-XI դարերում վիթխարի տեղաշարժեր կատարվեցին երաժշտության մեջ, որը կապվում է Գրիգոր Նարեկացու անվան հետ: Նարեկացին տաղերը կյանքի կոչեց որպես երաժշտաբանաստեղծական ստեղծագործություն, որը ձայնակցում էր «Մատյանի» գաղափարներին: Ժողովրդագուսանական երաժշտությունը հասնում է բարձր աստիճանի, միջազգային մակարդակի (Ն. Թահմիզյան):

Երգարվեստի երկրորդ փուլը (XII-XIII դդ.) կապվում է Նարեկացու գործի մեծատաղանդ շարունակող Ներսես Շնորհալու անվան հետ: Նա խորացրեց Նարեկացու ավանդները և հայ երգարվեստը հասցրեց մի նոր մակարդակի, համաքրիստոնեական հնչեղության: Պատարագն իր երաժշտական ձևավորմամբ կապվում է Շնորհալու անվան հետ:

Երրորդ փուլում (XIII-XV դդ.), հենվելով Նարեկացու և Շնորհալու ստեղծագործությունների վրա, հետագա առաջընթաց ապրեց երգարվեստը:

10. Քաղաքների ու քաղաքային կյանքի բուռն զարգացումը, կյանքի նոր պահանջները նոր խնդիրներ էին առաջադրում, որոնց ճարտարապետները (Տրդատ, Մանվել, Մոմիկ) ստեղծագործական համարձակ լուծումներ էին տալիս, ինչը հանգեցնում էր ճարտարապետության նոր ուղղությունների առաջացմանը, նրա վերելքին: Մշակվեցին շենքերի նոր տիպեր, վանական համալիրներ, պալատներ, հյուրանոցներ, իջևանատներ, մատենադարաններ, արտադրական ձեռնարկություններ: Կազմավորվեցին ավանդատներ, գավիթներ, սեղանատներ, շարք մտան խաչքարը, խաչաձևող կամարներով կառույցը: Տարածվեց տարատեսակ քարերից կազմված խճանկարը, որը մասնագետների կարծիքով Հայաստանից ընդօրինակեցին ու լայնորեն օգտագործեցին սելջուկյան և պարսկական արվեստում:

Քանդակազարդումը տարածում գտավ և դարձավ շենքի ճարտարապետական ձևավորման գլխավոր պայմաններից մեկը:

Վանական շատ համալիրներ կառուցապատվում էին՝ սերտորեն ներդաշնակելով շրջակա բնության հետ:

Անիի Մայր տաճարը մասնագետները (Մ. Յասրաթյան) համարում են համաշխարհային ճարտարապետության լավագույն ստեղծագործություններից: Ճարտարապետության ճանաչված մասնագետ Ա. Յակոբսոնն այս պատմափուլի հայկական ճարտարապետությունը դիտարկում է համաշխարհային մշակույթի առաջին շարքերում:

Բնականաբար հարց է ծագում՝ ինչպես է, որ Յայաստանը, ընկնելով թուրք-սելջուկյան և մոնղոլական դաժան տիրապետության տակ, կարողացավ ոչ միայն պահպանել Բագրատունիների ժամանակաշրջանի մշակութային ձեռքբերումները, այլև նոր նվաճումների հասավ: Մանավանդ ոչ հեռու անցյալում՝ օտարի տիրակալության ժամանակաշրջանում, մշակութային դրական նկատելի տեղաշարժ չէր կատարվել: Ակնառու փաստ է, որ շուրջ երկու դար տևած արաբական տիրապետության շրջանում հայկական մշակույթը նկատելի առաջադիմություն չունեցավ: Յարցադրմանը բացատրություն տալու համար նկատի պետք է առնել հետևյալ գործոնները:

Յայաստանում արաբական գերիշխանությունից ազատագրվելուց հետո և անկախության ավելի քան մեկ ու կես հարյուրամյակի խաղաղ, ստեղծագործական աշխատանքի պայմաններում մշակույթը հզոր վերելք ապրեց: Այն խոր արմատներ գցեց, կուտակումներ ունեցավ և առաջադիմության այնպիսի զորեղ խթան տվեց, որ ինչպիսի պայմաններ էլ լինեին, մշակույթի այդ ռիթմը, նրա զարգացման ներքին ընթացքը դժվար էր կասեցնել: Ավելին, անգամ քաղաքական առավել դժվարին կացության պայմաններում մոնղոլների օրոք մշակույթը նոր բնագծեր նվաճեց: Այդ առաջընթացին նպաստում էր պատմական ժամանակաշրջանը: Միջնադարյան քաղաքների առաջացումն ու զարգացումը իրենց դրոշմն էին դնում կյանքի բոլոր բնագավառների, հատկապես մշակույթի վրա:

Յասարակության հասունացումն այն աստիճանի էր հասել, որ մշակույթը լայն տարածում էր գտնում: Դրանից զատ կարևոր մեկ այլ պարագա գործոն նշանակություն ուներ: Քաղաքակր-

թական՝ավելի ցածր աստիճանում գտնվող ժողովուրդների կողմից իրենց նկատմամբ իշխող դիրք ունենալը, կատարվող բռնությունները, նվաստացումները խոցում էին մարդկանց հոգևոր, զգայական ներաշխարհը, շիկացնում ընդհանուր մթնոլորտը: Գիտակցաբար թե ենթագիտակցաբար բնակչությունը մղվում էր ընդդիմության, սեփական առավելությունները վերահաստատելու, ազգայինը պահպանելու ակտիվ գործունեության: Ուրիշ խոսքով, պատմական փուլի զարգացման միտումները և բնակչության ձգտումները նույն ուղիով էին ընթանում, միասնական էին:

Մշակութային շարժմանը մեծապես նպաստում էր Կիլիկիայի հայկական պետության գոյությունը: Նախ՝ այնտեղ պետականություն ունենալը և երկրի առաջնորդների՝ գիր ու գրականության նկատմամբ սերն անկաշկանդ ստեղծագործելու պայմաններ էին ստեղծում, միաժամանակ տարբեր եղանակներով աջակցում բուն Հայաստանում կատարվող լուսավորչական ձեռնարկումներին:

Հայաստանում և Կիլիկիայում կատարվում էին հոգեմտավոր կյանքի աշխարհականացում, բնությանը մերձենալու, բնական երևույթները հասկանալու, մեկնաբանելու քայլեր: Շարժում էր սկսվել դեպի մարդը, բնությունը, գեղեցկությունը, սերը: Լուսավորական շարժումն այնքան էր համակել բնակչությանը, որ նա ամեն կերպ աջակցում, նպաստում էր իր ինքնությունը հաստատելու ուղղությամբ կատարվող մեծ ու փոքր ձեռնարկումներին: Գրիգոր Մագիստրոսը որդուն ուղղած խրատներում հորդորում, պահանջում էր պահպանել մշակույթի հայկական ավանդները, չհանգցնել նախնիներից ժառանգած ճրագի լույսը. «Զլոյս ճրագի նախնւոյն մերոյ ոչ շիջուցանել»:

Տարակույս չի կարող լինել, որ առանց բնակչության աջակցության և օգնության չէր կարող մշակույթը իր բոլոր դրսևորումներով վերելք ապրել: Ցավոք, ժամանակակիցները բնակչության աջակցությունն այն աստիճան սովորական ու բնականոն են համարել, որ անհրաժեշտ չեն գտել գրի առնել: Այդ պատճառով էլ սկզբնաղբյուրներում չկան այդ մասին հիշատակություններ:

Պատմությանը հայտնի են քաղաքական աննպաստ պայմաններում մշակույթի վերելքի համանման իրողություններ: Նման օրինակ տալիս է հենց Հայաստանի հարևան Բյուզանդիայի պատմությունը: Խաչակրաց 4-րդ արշավանքի ժամանակ խաչակիրները 1204 թ. գրավեցին Կ. Պոլիսը, որի հետևանքով վերջ տրվեց կայսրության գոյությանը: Քայքայված կայսրության տարածքի վրա առաջացան չորս պետություններ՝ Լատինական, Նիկեայի, Տրապիզոնի, Էպիրայի: Քաղաքական տարանջատված ու աննպաստ պայմաններում մինչև կայսրության վերականգնումը (1261) բյուզանդական մշակույթը ոչ միայն պահպանվեց այլև առաջադիմեց: Խաչակիրների լատինական պետության միջոցով եվրոպական մշակույթը տարածում չգտավ Բյուզանդիայում, այլ մնաց մեկուսացված: Բյուզանդական մշակույթը շարունակում էր զարգանալ իր ավանդական ներուժով (տե՛ս Г.Г. Литаврин, Культура Византии XIII пер. половине XV вв., Москва, 1991 և այլ աշխատություններ):

Այդ նույն պայմանների բերումով սելջուկյան, մոնղոլական մշակույթների ազդեցությունները շատ աննշան էին, արմատներ չգցեցին Հայաստանում:

Անկախության ժամանակաշրջանում Բագրատունիներին չհաջողվեց ստեղծել միասնական կենտրոնացված պետություն: Զևավորվեցին Անիի կենտրոնական պետությունից անկախ կամ գրեթե անկախ մանր թագավորություններ, իշխանություններ: Դրանցից նշանավոր էին Վասպուրականի և Սյունիքի պետական միավորումները: Քաղաքական մասնատվածությունն իր որոշ ազդեցությունն էր թողնում, սակայն էական նշանակություն չէր ունենում մշակույթի զարգացման ընդհանուր ընթացքի վրա: Արվեստի որոշ բնագավառներում, մասնավորապես ճարտարապետության մեջ, ստեղծվեցին Անիի, Վասպուրականի, Սյունիքի դպրոցներ: Դրանք, ոճերի, շեշտադրումների տարբերություններ ունենալով հանդերձ, զարգանում էին միևնույն հունով, դարաշրջանի ոգուն ու միտումներին ներդաշնակ, որպես մեկ ընդհանուր արվեստի ճյուղեր: Միասնական մշակույթի բաղադրիչներից էր նաև Կիլիկիան, որը կրում էր բյուզանդաեվրոպական ազդե-

ցությունը, բայց իր բոլոր հատկանիշներով հայ մշակույթի անբաժանելի մասն էր կազմում:

Հարևան երկրների ու ժողովուրդների հետ և ոչ միայն հարևան, առևտրի և այլ եղանակներով իրականացվող շփումներն ու կապերը չէին կարող իրենց ազդեցությունները չթողնել կյանքի տարբեր բնագավառների, այդ թվում և մշակույթի վրա: Հայաստանը փոխազդեցությունների մեջ էր արևելյան և եվրոպական երկրների, հատկապես հարևան Բյուզանդիայի հետ, որն իրականանում էր անմիջապես, ինչպես նաև Կիլիկիայի հայկական պետության միջոցով:

Բյուզանդիայի հետ շփումներն ու հոգևոր կապերն ավելի լայն ու համակողմանի լինելով՝ թվում էր, թե նրա ազդեցությունն ավելի զորեղ ու վճռորոշ նշանակություն պետք է ունենար: Բյուզանդիայի ազդեցությունն ավելի զորեղ էր Ռուսիայի, Բուլղարիայի, հարավսլավոնական երկրների, Վրաստանի, քան Հայաստանի արվեստի վրա: Այդ, առաջին հայացքից անհասկանալի թվացող երևույթը պայմանավորված էր մի շարք գործոններով, հատկապես դավանանքների տարբերությամբ (տե՛ս «Գիրք թղթոց»):

Բյուզանդիան ավելի շատ օգտվեց անտիկ աշխարհի ժառանգությունից, քան արևմտաեվրոպական երկրները: Այդ երևույթը պայմանավորված էր նրանով, որ Բյուզանդիան Հին Հռոմի ու Հունաստանի անմիջական ժառանգորդն էր, և երկրի բնակիչներն իրենց կոչում էին հոռոմներ (ռոմեեն): Հայաստանում անտիկ հեղինակների ստեղծագործությունների նկատմամբ ակտիվ հետաքրքրությունները պայմանավորված էին ոչ այնքան բյուզանդական ազդեցությամբ, որքան նախորդ պատմափուլում Հայաստանում լայն տարածում գտած հելլենիստական մշակույթից ստացվող ազդակներով: Դրան հավելենք անտիկ հեղինակների աշխատությունների արդեն կատարված հայերեն թարգմանությունների առկայությունը: Հետևաբար անտիկ ժառանգության ազդեցությունը Բյուզանդիայում ավելի զորեղ էր, քան Հայաստանում: Անտիկ հեղինակների գործերի հետ միասին, բայց նրանից ավելի մեծ չափերով, հայկական մշակույթը սնվում էր վաղ

միջնադարից ստացած հարուստ ժառանգությունից: Եվ ոչ միայն սնվում էր, այլև դրա բնականոն շարունակությունն էր:

Հայ հասարակական-մշակութային կյանքի՝ զարգացման ինքնաբավ ուղի ընտրելու մեջ փոքր չէ եկեղեցու դերը: Հայտնի է, որ միջին դարերում հոգեմտավոր կյանքով գրեթե առանց բացառության զբաղվում էր հոգևորականությունը: Հայ եկեղեցին տակավին V դարից, հակաքաղկեդոնական դիրքորոշում ընդունելով, ինքնուրույն գոյատևման ուղի բռնեց:

Հասուն միջնադարում ևս ուժգին պայքար էր գնում միարարության կամ ունիթորական շարժման դեմ: Այն ուղղված էր ոչ միայն, թերևս ոչ այնքան եկեղեցու անկախությանը սատար կանգնելուն, որքան հայկական մշակույթի առաջընթացն ազգային հիմքի վրա զարգանալն ապահովելուն:

Նշված գործոնները նկատի առնելով՝ միանգամայն արդարացված պետք է համարել հայ արվեստի անվանի մասնագետ Գարեգին Հովսեփյանի հետևյալ կարծիքը. «Անշուշտ ուրանալ չենք կարող, որ բյուզանդական արվեստը որոշ չափով ազդել է հայ արվեստի վրա, բայց ոչ միայն այն չափով, որ գույն ու կերպարանք տար նորա զարգացման ընթացքին, ընդհակառակն, բյուզանդական արվեստը ավելի ստացել է արևելքից, Ասորիքի և Միջագետքի հետ նաև Հայաստանից, քան տվել»[289]:

* * *

Թեպետև այս աշխատությունը, կարծում եմ, հավաստեց, որ Հայաստանի տնտեսական կյանքի և մշակույթի վերելքը համահունչ էր իր դարաշրջանի՝ զարգացած միջնադարի ոգուն, այդուհանդերձ արդարացի չէր լինի անտեսել և չշոշափել վերածնության հարցը: Չէ՞ որ այդ խնդիրը բազմիցս քննարկվել է, սակայն տակավին հանգուցալուծված չէ, գիտական ոլորտում շարունակում են գոյատևել թեր ու դեմ տեսակետները: Մեր օրերում մարքսիստական կաշկանդումներից ազատ մթնոլորտում հնարավոր է զուտ գիտական հիմքի վրա մերձենալ հիմնահարցին:

---

[289] Գ. Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հ. Բ, Երևան, 1987, էջ 316:

Իտալական վերածնությունը սկսեց հետաքրքրություններ շարժել XIX դարի կեսից, իսկ XX դարում աշխույժ քննարկումների նյութ դարձավ: Այդ շարժումը գիտական լայն շրջանառության մեջ մտավ խորհրդային իշխանության տարիներին: Սոցիալիստական առաջին երկիրը ջանում էր միջազգային հանրությանը ցույց տալ, որ ամեն նորի ու առաջադեմի համակիրն առաջին հերթին խորհուրդների երկիրն է, և համաշխարհային չափանիշի որևէ նվաճում խորթ չէ իրեն: Որքան ամրապնդվում էր խորհրդային իշխանությունը, այնքան հասունանում էր այդ մտայնությունը: Այն վերջնականապես ձևավորվեց 1930-ական թվականներին, երբ ի լուր աշխարհի հայտարարվեց, թե խորհուրդների երկրում սոցիալիզմն անվերադարձ հաղթանակել է: Գաղափարական այդ մթնոլորտն արգասավորվեց և հզոր լիցք ստացավ Հայրենական պատերազմից հետո: Ֆաշիզմի դեմ համաշխարհային պատմական հաղթանակ տարած երկրի ու ժողովուրդների համար անհասանելի բնագծեր չկային: Այդ ուղղությամբ տարվող քաղաքականությունը լիցք տվեց մինչ այդ մասամբ շրջանառվող եվրոկենտրոնայնության (евроцентризм) դեմ պայքարին: ԽՍՀՄ-ում հետպատերազմյան շրջանում լայն ընթացք ստացած այդ շարժումը փաստորեն գլխավորում էր ակադեմիկոս Նիկոլայ Կոնրադը: Նա այն տեսակետն էր առաջ քաշում, թե վերածնությունը մշակույթի պատմության հատուկ փուլ է, որը Եվրոպայից բացի կատարվել է նաև Արևելքում, հատկապես Չինաստանում VIII-XIV դարերում:

Վերածնության հիմնահարցին Հայաստանում այնքան աշխույժ ու տարակարծիք անդրադարձներ էին կատարվում, որ Գիտությունների ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքը հատուկ քննարկում կազմակերպեց: 1954 թ. դեկտեմբերի 14-18-ին տեղի ունեցավ «Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման աստիճանը IX-XIII դարերում և վերածնության պրոբլեմը» թեմայով բանավեճ: Զեկուցումներով հանդես եկան մի կողմից՝ Վ. Չալոյանը, հակառակ կողմից՝ Բ. Առաքելյա-

նն ու Լ. Խաչիկյանը[290]: Յնգօրյա բուռն քննարկումների ընթացքում միասնական տեսակետ չմշակվեց, թե՛ զեկուցողները և թե՛ բանավեճի մասնակիցները մնացին տարբեր դիրքերում:

Յետագայում Բ. Առաքելյանը և Աշոտ Յովհաննիսյանը հանդես եկան ընդարձակ հոդվածներով[291], որոնցում, հանգամանորեն քննարկելով նշված ժամանակաշրջանի Յայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի զարգացման մակարդակը, հիմնավոր չհամարելով վերածնության տեսակետի հիմնական տեսաբան Վ. Չալոյանի փաստարկումները, մերժում էին Յայաստանում Վերածնություն տեսնելու գաղափարը:

Տարիներ անց Վ. Չալոյանը ռուսաց լեզվով հրատարակեց «Յայկական վերածնունդ» աշխատությունը՝ առանց ընդդիմախոսների կարծիքներին անդրադառնալու[292]: Նա համառոտակի քննարկում է Յայաստանի տվյալ դարաշրջանի քաղաքական, սոցիալ-տնտեսական հարցերը, ապա անցնում գլխավոր խնդրին՝ վերածնությանը: Երկրի տնտեսական զարգացումը բնութագրելու ժամանակ դրամական շրջանառության ծավալման բարձր աստիճանը ցույց տալու նպատակով, հիմնականում առանց հղումների, նշում էր, թե դրամով գնում էին ջրաղացներ, բաղնիքներ, հյուրանոցներ, անգամ գյուղեր, քաղաքներ: Ֆեոդալական կալվածքները մեկը մյուսի հետևից անցնում էին նոր ձևավորվող առևտրավաշխառուական դասի ձեռքը, որ կատարվում էին բանկային գործառնություններ և այլն: Եվ այդ գործընթացը համարում է ֆեոդալիզմի քայքայման արտահայտություն, որը բնութագրական է կապիտալիզմի նախասկզբնական կուտակմանը (էջ 20-21, 32):

---

290 Տե՛ս «Տեղեկագիր» հասարակական գիտությունների, 1955, N 2: Քննարկումներին ելույթներով մասնակցեցին 13 պատմաբաններ, բանասերներ, արվեստաբաններ, այդ թվում նաև տողերիս հեղինակը:

291 Տե՛ս «Տեղեկագիր» հաս. գիտությունների, 1956, N 5, ՊԲՆ հանդես, 1959, N 1:

292 Տե՛ս В. Чалоян, «Армянский ренессанс», Москва, 1963: Իշխանությունների կողմից խրախուսվող քաղաքականությունը հատկանշող փաստ է, որ Վ. Չալոյանի աշխատությունը (160 էջ) իր մակնիշով հրատարակեց ԽՍՅՄ գիտությունների ակադեմիան. գրքի խմբագիր և վերջաբանի հեղինակ նշանակվեց անվանի արևելագետ, համաշխարհային լայն ճանաչման արժանացած ակադեմիկոս Ն. Ի. Կոնրադը:

Վ. Չալոյանը չափազանց մեծ տեղ է տալիս թոնդրակյան ադանդավորական շարժմանը: Այդ շարժումը համարում է ամենից ավելի զանգվածայինը, որոնց դատողություններում արտահայտվում էր այն ամենը, ինչի մասին երազում էր ժողովուրդը: Այդ շարժումը ժխտում էր հինը և կյանքի կոչում մարդկային նոր հարաբերությունները, սկզբունքները (էջ 44): Թոնդրակյան շարժումը համարում է հզոր հեղափոխական շարժում՝ հայկական ռեֆորմացիա (էջ 53): Բազրատունյաց Հայաստանում կապիտալի նախասկզբնական կուտակումը, նշում է հեղինակը, սրեց հասարակության սոցիալ-դասակարգային հակասությունները, այն հասցրեց հակառակորդ դասակարգերի սուր ընդհարման: Նա հենց այդ տեսակետից է նայում հայկական ռեֆորմացիային, որը բերեց քաղաքային-բուրգերական մշակույթի վերածնունդ (էջ 45-46):

Պրոֆ. Վ. Չալոյանը խիստ ինքնատիպ մեկնություններ է տալիս «Սասունցի Դավիթ» էպոսին: Նա համարում է, որ հայկական էպոսն առաջացել է դասակարգային պայքարի հիմքի վրա, և հատուկ ընդգծում է, թե «հայկական էպոսի համար դա է գլխավորը»: Ապա նշում է, որ դրա առաջացման համար կար ուրիշ հիմք ևս. այդ հայ ժողովրդի պայքարն էր օտարերկրյա զավթիչների դեմ (էջ 64): Հակաֆեոդալական պայքարը հայկական էպոսում, հեղինակի խոսքերով «աշխատավոր ժողովրդի մշակույթի վերածնության այդ կարևորագույն հուշարձանում արտահայտված է բացահայտ ձևով» (էջ 77): Այդ պայքարն արտահայտվում է երկու ձևով՝ պայքար չարի դեմ, պայքար շահագործող դասակարգի դեմ: Իր դասակարգային թշնամուն ժողովուրդը պատկերացրել է վիշապի տեսքով (էջ 78):

Իտալիայում Վերածնության դարաշրջանում խիստ սրվել էին դասակարգային հակասությունները: Հայաստանում Վերածնությունը հիմնավորելու նպատակով Վ. Չալոյանը շարունակ շեշտում է դասակարգային սուր պայքարի առկայությունը՝ առանց որևէ փաստ հիշատակելու: Իրականությունն այն է, որ ժողովուրդն ընդդիմանում և պայքարում էր գլխավորապես օտարերկրյա տիրապետողների դեմ, դասակարգային պայքարը թույլ էր, այդ պատճառով էլ փաստեր գրեթե չկան:

Գրքի հեղինակը գտնում է, որ հայրենասիրությունը՝ որպես սոցիալական երևույթ, ունի միայն դասակարգային բնույթ, և անհրաժեշտ է համարում խստորեն տարբերակել ժողովրդի հայրենասիրությունը իշխող դասակարգի՝ ֆեոդալական վերնախավի հայրենասիրությունից (էջ 82): Խանդութի և Դավիթի սիրո մեջ տեսնում է վերածնության դարաշրջանին բնորոշ սիրո արտահայտություն (էջ 89):

Ն. Շնորհալու «Ողբ Եդեսիոյ» պոեմի ռեալիստական նկարագրությունը, սելջուկների կողմից քաղաքի գրավման, ավերածություններ կատարելու, Անիի կործանման հետ զուգահեռներ անցկացնելու, բնության գեղեցկության նկարագրությունը համարում է վերածնության գաղափարախոսության արտահայտություն (էջ 134): Գրականության բնագավառի հայկական վերածնության առավել նշանավոր դեմքը համարում է Կոնստանդին Երզնկացուն: Նրա ստեղծագործությունների մեջ բնության, մարդու ներքնաշխարհի, հատկապես սիրո ուժգին զգացմունքն այնքան խոր ու պայծառ է ներկայացվում, որ նրա պոեզիան իրենով նշանավորում է Վերածնության լիրիկայի ծաղկումը (էջ 134): Նա Հայաստանի վերածնությունը համարում է ընդհանուր վերածնության մի մասը:

Վ. Չալոյանն անդրադառնում է նաև դարաշրջանի փիլիսոփաների, պատմիչների, իրավագետների աշխատություններին, քննարկում առակները, գուսանական արվեստը և մշտապես վերածնությունը կապում ֆեոդալական կարգերի դեմ պայքարի ելած շահագործվող դասակարգի հետ:

Աշխատությունը ստեղծվել է խորհրդային իշխանության տարիներին: Բնականաբար հեղինակը մարքսիստական աշխարհայացքով ուշադրության կենտրոնում էր պահելու սոցիալ-դասակարգային երևույթները, ինչպես և բացասական գույներով էր ներկայացնելու հոգևոր իշխանության՝ եկեղեցու գործունեությունը: Ցավոք, երկու ուղղություններում էլ այն աստիճան է ընկել ծայրահեղությունների մեջ, այնքան միակողմանի դիտարկել հարցերը, որ իրեն զրկել է իրողությունը ճշմարիտ ներկայացնելու հնարավորությունից: Հենց միայն հայկական էպոսը դասակարգային պայքարի տեսանկյունով բնութագրելը, թոնդրակյան

շարժմանը տված գնահատականները, կապիտալիստական հարաբերությունների սաղմեր տեսնելու նպատակով դրանով գյուղեր, քաղաքներ գնելու մասին պնդումները բավարար են՝ դրանում համոզվելու համար: Աշխատության խմբագիրն ու վերջաբանի հեղինակը, ինչպես նշեցինք, ակադեմիկոս Ն. Կոնրադն է: Վերջաբանում խոսվում է ավելի շատ հարցի պատմության, քան գրքի բովանդակության մասին, հավանաբար նյութին անծանոթ լինելու պատճառով: Նա Չալոյանի աշխատությունը կարևորում է նրանով, որ այն ոչ եվրոպական երկրների վերածննությանը նվիրված առաջին խոշոր ուսումնասիրությունն է, ու հավելում, թե Հայաստանում և Արևելքի մյուս երկրներում վերածնությունը վերջնականապես հիմնավորելու համար անհրաժեշտ է այդ ուղղությամբ առաջիկայում շարունակել աշխատանքները: Այլ խոսքով, խուսափում է Հայաստանում վերածնությունը հաստատող խոսք ասելուց:

Առհասարակ մտորումների տեղիք է տալիս այն հանգամանքը, թե ինչու գիտնականները, ներկա դեպքում՝ Վ. Չալոյանը, այնքան մեծ ջանքեր են գործադրում՝ ազգային պատմության մեջ վերածնություն տեսնելու համար: Ինչպե՞ս կարող էին Հայաստանում նույնությամբ կրկնվել հեռավոր Իտալիայում կատարված երևույթները, երբ երկու երկրների քաղաքական, տնտեսական, սոցիալական պայմանները, մշակույթի աղբյուրները, ազգային ավանդույթները և բազմաթիվ այլ գործոններ եղել են միանգամայն տարբեր: Ամենադժվարին իրավիճակներում հայկական մշակույթը գոյատևել և որոշակի հաջողությունների է հասել՝ մշտապես պահպանելով ազգային ոգին: Մի՞թե անհրաժեշտություն կա եվրոպայում կատարված թեկուզև վիթխարի մի երևույթի հետ համեմատվելու, նմանվելու միջոցով արժեվորելու հայոց կամ մեկ այլ ժողովրդի մշակույթը: Առհասարակ ընդունելի մեթոդ չէ որևէ ժողովրդի մշակութային նվաճումները բնորոշելու համար զուգահեռներ անցկացնել մեծ հաջողությունների հասած այլ ժողովուրդների պատմության հետ և հիմնականում այդ եղանակով արժևորել նրանց առաջընթացը: Յուրաքանչյուր ժողովուրդ ունի միայն իրեն հատուկ առանձնահատկությունները: Նրա պատմությունը սկզբնավորվել ու զարգացել է տեղական բազմաթիվ գոր-

ծոնների ազդեցությամբ, արդարացի՞ է արդյոք այդ ամենը թերագնահատելը կամ հետին պլան մղելը: Մի՞թե գնահատման ավելի մեծ չափանիշ չէ այն պարագան, որ սելջուկ-մոնղոլական դժնդակ տիրապետության պայմաններում հայ մշակույթն իր ներուժով ի զորու եղավ ոչ միայն գոյատևելու, այլև հուժկու վերելք ապրելու:

Եվ վերջապես իտալական Վերածնունդը համաշխարհային պատմության մի այնպիսի փուլ չէ, ինչպես ասենք պատմության ժամանակագրությունը՝ հին շրջան, միջնադար և այլն, որ անցնեն բոլոր ժողովուրդները: Ֆ. Էնգելսը միանգամայն ստույգ բնորոշում է տվել՝ վերածնությունը համարելով «մինչ այդ մարդկության ապրած մեծագույն առաջադիմական հեղաշրջում»: Մի պատմափուլ էր, որը պահանջ ուներ տիտանների, և որը ծնեց մտքի, կրքի, ձգտումի, բազմակողմանիության, գիտության տիտաններ: Այսինքն՝ առանձնահատուկ վիթխարի մի երևույթ էր: Բնական է, որ այն չէր կարող օրինաչափություն դառնալ ու կրկնվել մյուս ժողովուրդների կյանքում, ինչպես չկրկնվեց անտիկ աշխարհը:

Վերածնության հիմնահարցը, ինչպես նշում են մասնագետները, ԽՍՀՄ-ում առաջինը բարձրացրեց վրաց գիտնական Շ. Ի. Նուցուբիձեն[293]: Նա իր ուսումնասիրության նպատակն է համարում ցույց տալ թե ինչպես Վերածնունդը Արևելքից անցել է Արևմուտք: Հատկանշական է, որ հատուկ ընդգծում էր, թե հետազոտության մեջ ընդգրկելու է խորհրդային Արևելքի երկրները՝ Ադրբեջանը, Հայաստանը, Վրաստանը, Ուզբեկստանը, Տաջիկստանը[294]:

Պրոֆ. Շ. Նուցուբիձեն ծավալուն աշխատության մեջ հանգամանորեն քննարկում է Շոթա Ռուսթավելու պոեզիան և գտնում, որ նա ընդգրկեց այն ամենը, ինչ որ ստեղծվել էր վրացական վերածնության աստիճանական զարգացման ընթացքում և հասցրեց այն բարձրագույն աստիճանի: Դրանով իսկ վրացական

